# Վասն
# ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ

1 / 2006

Բուն Հայոց 4498 ամի



# FOR THE SAKE OF
# JUSTICE

1 / 2006

Core Armenian 4498

# (56)

Գլխավոր խմբագիր
**ԼԵՎՈՆ ՍԱՐԳՍՅԱՆ**

Editor-in-Chief
**LEVON SARGSYAN**

**Գիտական խմբագրական խորհուրդ**

**ՌՈՒԲԵՆ ԱՎԱԳՅԱՆ**
Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**ՍԵՆ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ**
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, փիլիսոփայական գիտությունների դոկտոր

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՍԵՓՅԱՆ**
Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**ՄԱՆՈՒԿ ՄԿՐՏՉՅԱՆ**
ՌԴ Սոցիալական և մանկավարժական գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ

**ԳԵՎՈՐԳ ՊՈՂՈՍՅԱՆ**
Փիլիսոփայական գիտությունների դոկտոր

**ՄԵԼՍ ՍԱՆԹՈՅԱՆ**
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**ԳԱՐԻԿ ՔԵՌՅԱՆ**
Քաղաքական գիտությունների դոկտոր

**Scientific Editorial Board**

**RUBEN AVAGYAN**
Doctor of Law, Professor

**SEN AREVSHATYAN**
Academician of the RA National Academy of Sciences, Doctor of Philosophy

**HOVHANNES HOVSEPYAN**
Doctor of Law, Professor

**MANUK MKRTCHYAN**
Associate Member of the RF Academy of Soci Pedagogical Sciences

**GEVORK POGHOSYAN**
Doctor of Philosophy

**MELS SANTOYAN**
Doctor of Philology, Professor

**GARIK KERYAN**
Doctor of Politology

Խմբագիրներ
**ԻՐԻՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ**
**ՍՈՖՅԱ ԲԱԲԱՅԱՆ**
**ՍԹԻՎ ԲԼՈՒՄ**
Համակարգչային ձևավորող
**ԱՐՄԵՆ ՕՍԻՊՈՎ**

Editors
**IRINA HAKOBYAN**
**SOFIA BABAYAN**
**STEVE BLOOM**
Designer
**ARMEN OSIPOV**

«ՎԱՍՆ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ» հանդեսն ընդգրկված է ատենախոսությունների արդյունքների տպագրման համար ընդունելի ամսագրերի ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ցուցակում:

FOR THE SAKE OF JUSTICE is included in the list of reviews appropriate for theses results publication of THE RA HIGH QUALIFICATION COMMISSION.

Журнал “ВАСН АРДАРУТЕАН” (“Во имя справедливости”) включен в список допущенных ВЫСШЕЙ АТТЕСТАЦИОННОЙ КОМИССИЕЙ РА для публикации результатов диссертационных работ.

ՀԱՍՑԵՆ՝ ՀՀ, ք. Վանաձոր, Շիրակացու I նրբ., 2
Հեռ. (+374 322) 2-29-67, Հեռ./ֆաքս (+374 322) 4-47-81
էլ. փոստ vasn@acrpc.am
URL http://www.acrpc.am

ADDRESS: 1 Shirakatsi Lane, Building 2, Vanadzor, RA
Tel. (+374 322) 2-29-67, Tel./Fax (+374 322) 4-47-81
E-mail: vasn@acrpc.am
URL: http://www.acrpc.am

ՀԻՄՆԱԴՐՎԵԼ Է 1989թ.
FOUNDED IN 1989

Գրանցված է ՀՀ Արդարադատության նախարարությունում
Գրանցման վկայական՝ թիվ 1016

Ստորագրված է տպագրության 24.03.2006
Ծավալը՝ 6.5 տպագր. մամուլ, տպաքանակը՝ 200

# ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ


ԿԱՐՄԻՐՇԱԼՅԱՆ Դ. Օմբուդսմենի ինստիտուտի «սկանդինավյան» և «դասական» մոդելները ............ 4

ԿԱՐՄԻՐՇԱԼՅԱՆ Դ. Օմբուդսմենի ինստիտուտը և դատական իշխանությունը ............ 7

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ Ա. «Փրավունք» առարկայաշարի դասավանդման մեթոդիկայի հիմունքները միջնակարգ հանրակրթական դպրոցում ............ 10

МАРУКЯН Э. Свобода собраний в Республике Армения ............ 13

ՅԱՐԱԼՅԱՆ Ռ. Իրանի քաղաքականությունը Հարավային Կովկասում ............ 17

ՄԱՆՈՒԿՅԱՆ Դ. 2005թ. սեպտեմբերի 18-ի Գերմանիայի պառլամենտական ընտրությունների համեմատական վերլուծություն ............ 21

ՆԱՍԻԼՅԱՆ Ի. Վարչահիրամայական համակարգի կառավարման կուլտուրայի մեկնաբանում ............ 25

ԳՐԻԳՈՐՅԱՆ Ա. Ազատական-ժողովրդավարական սոցիոմշակույթի բնորոշ գծերը շուկայական հարաբերությունների համատեքստում ............ 28

ՃՈՐՈԽՅԱՆ Տ. Ժողովրդավարական համախմբման մակարդակները և մշակույթի առաջնայնությունը ............ 33

ԳՐԻԳՈՐՅԱՆ Ա. Ազատականությունը որպես ժողովրդավարական սոցիոմշակույթ ............ 37

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Ե. Դեռահասների վարքի շեղումների հիմնահարցը հոգեբանական գրականության մեջ ............ 42

ՄԱԿ-ի էջ ............ 44

ԱՎԵՏԻՍՅԱՆ Մ. Կանանց սեռադերային և բարոյական վարքի շեղումների հիմնահարցը հոգեբանության մեջ ............ 45

ՄԵԼԻՔՅԱՆ Ա. Պարսկա-հռոմեական հակամարտության և Միսիխիսի պայմանագրով Հայաստանի դե յուրե բաժանման հարցի շուրջ ............ 48

ԱՅՎԱԶՅԱՆ Ն. Արցախ. խոսում են փաստերը ............ 56

ՂԱՐԱԽԱՆՅԱՆ Լ. Ադրբեջանցիների խտրական դիրքորոշումը Ղարաբաղի հայերի միջէթնիկական շփումներում ............ 60

КАРАБЕКЯН Д. Ситуация в зоне азербайджано-карабахского конфликта и процесс урегулирования противостояния в 1992г. ............ 62

ՊԵՏՐՈՍՅԱՆ Վ. Դասալսումը որպես ներդպրոցական վերահսկողության հիմնական միջոց ............ 64

МХИТАРЯН А. Педагогические увлечения современных родителей ............ 67

ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ Ա. Կրկնությունը իբրև խոսքի վերլուծության երևույթ. ընդհանուր ակնարկ ............ 70

ՍԱՐԳՍՅԱՆ Գ. Գեղագիտական ընկալման հոգեբանական խնդրի մի քանի տեսանկյուններ ............ 74

ОГАНЕСЯН Г. О некоторых психологических критериях обучения русскому языку как иностранному детей-армян 5 - 6 лет ............ 76

ՍԱՐԳՍՅԱՆ Ա. Մարտական արվեստների ընդհանուր բնութագիրը ............ 79

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ Է. Տրամաբանության դասավանդման տեսամեթոդական որոշ առանձնահատկություններ ............ 86

ԴԵՄԻՐՃՅԱՆ Ա. Համիդյան ջարդերի արտացոլումը Անդրանիկ Անդրեասյանի «Դեպի մայրամուտ» վեպում ............ 92

ՓԻԼՈՅԱՆ Վ. Շահնուր՝ հակասությունների հանգույց ............ 96

КИРАКОСЯН А. Эстетика как наука о чувственном познании ............ 99

ШАХВЕРДЯН Г. Методика применения упражнений, направленных на развитие выносливости у детей младшего школьного возраста ............ 101

## ԴԱՎԻԹ ԿԱՐՄԻՐՇԱԼՅԱՆ

*Պետական կառավարման ակադեմիայի ասպիրանտ*

# ՕՄԲՈՒԴՍՄԵՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ «ՍԿԱՆԴԻՆԱՎՅԱՆ» ԵՎ «ԴԱՍԱԿԱՆ» ՄՈԴԵԼՆԵՐԸ

Կայուն ժողովրդավարական համակարգ ունեցող երկրներում օմբուդսմենի ինստիտուտի հիմնադրման և հետագա զարգացման վերաբերյալ մեր ուսումնասիրությունները թույլ են տալիս առանձնացնել այս ինստիտուտի կայացման երկու հիմնական ժամանակահատված: Առաջին փուլը՝ նրա զարգացման առաջին 130 տարիներն են, երբ օմբուդսմենի ինստիտուտը գործում էր միայն Շվեդիայում, այնուհետև, շվեդական մոդելի տեղայնացված տեսքով՝ նաև Ֆինլանդիայում:

Այն փաստորեն իրենից ներկայացնում էր արդարադատության Խորհրդարանական կանցլերի մոդելը և գործում էր ավանդական Արդարադատության կանցլերի հետ զուգահեռ, որը նշանակվում էր թագավորի (Շվեդիա) կամ նախագահի (Ֆինլանդիա) կողմից:

Այս ինստիտուտների հիմնադրման հիմքում ընկած էր դատավորների և ողջ դատական համակարգի գործունեության նկատմամբ վերահսկողության անհրաժեշտության հայեցակարգը, ընդ որում՝ այն սկզբում իրականացվում էր թագավորի, իսկ 1809թ., Սահմանադրության ընդունումից հետո՝ նաև Խորհրդարանի կողմից: Գործադիր իշխանության կառուցվածքների նկատմամբ վերահսկողության գործառույթները սկզբնական շրջանում զուտ լրացուցիչ բնույթ էին կրում, սակայն հետագիտե ավելի ու ավելի մեծ նշանակություն ձեռք բերեցին:

Օմբուդսմենի ինստիտուտի այս ելակետային մոդելն, որն, ի դեպ, մեծ հաջողությամբ գործում է մինչ օրս Շվեդիայում և Ֆինլանդիայում, կարելի է պայմանականորեն անվանել «Սկանդինավյան մոդել»:




*Նկար 1. Օմբուդսմենի ինստիտուտի «սկանդինավյան մոդել»*

Երկրորդ փուլը ինստիտուտի զարգացման ժամանակահատվածն է հաստատուն ժողովրդավարական համակարգ ունեցող երկրներում՝ սկսած 1955թ. Դանիայում օմբուդսմենի ինստիտուտի ձևավորումից մինչև հետագայում անգլոսաքսոնական երկրներում և Եվրոպայում նմանատիպ ծառայությունների ստեղծումը:

Այս փուլում օմբուդսմենի ինստիտուտի ստեղծման անհրաժեշտությունն էլ ավելի է կարևորվում եվրոպական երկրների կառավարությունների կողմից, ինչը պայմանավորված էր «համընդհանուր բարեկեցության» համակարգ ստեղծելու նրանց ձգտումներով: Այս գործընթացների իրականացման համար անհրաժեշտ էին վարչական ծառայությունների ճյուղավորված համակարգեր, քանի որ ներգերատեսչական վերահսկողության նախկին համակարգն արդեն ի զորու չէր արդյունավետ վերահսկողություն իրականացնել նրանց գործունեության նկատմամբ:

Այդ երկրներում արտագերատեսչական վերահսկողության համակարգի դերում հանդես էր գալիս դատական համակարգը, ավելի ստույգ՝ նրա մի մասը՝ վարչական արդարադատությունը, որի միջոցով կարելի էր բողոքարկել այս կամ այն պաշտոնյայի գործողությունները կամ որոշումները: Այսպես, Ֆրանսիայում այս համակարգը մտցվեց Նապոլեոնի կողմից դեռևս մինչև նրա կայսր հռչակվելը: Վարչական համակարգերի և այնտեղ աշխատող պաշտոնյաների քանակի արագ աճի արդյունքում այս համակարգը սկսեց շեղումներ տալ, և օմբուդսմենի ինստիտուտը, որպես «վատ կառավարման» և պետական պաշտոնյաների կողմից գործած սխալների բացահայտման միջոց, մեծ կարևորություն ձեռք բերեց:

Մյուս կողմից՝ օմբուդսմենի ինստիտուտը նաև խորհրդարանական վերահսկողության ուժեղացման անհրաժեշտ միջոց դարձավ: Ազդեցիկ խորհրդարանա-

կան վերահսկողության անհրաժեշտությունն աճում էր բյուրոկրատական վարչական մեքենայի աճին համընթաց: Սակայն այդ պահանջի աճի հետ զուգահեռ նվազում էր նաև նման վերահսկողության հնարավորությունը, հատկապես վարչակազմի միջին և ցածր օղակների նկատմամբ: Սա կապված էր ինչպես խորհրդարանականների՝ օրենսդիր գործունեությամբ զբաղվածության, այնպես էլ վարչակազմի աշխատանքի բարդացման հետ, քանի որ արդյունավետ վերահսկողության համար անհրաժեշտ էր տիրապետել վերահսկվող համակարգերի էությանը: Մոտավորապես հենց այդ նույն ժամանակահատվածում, որպես կառավարության ֆինանսական գործունեության խորհրդարանական վերահսկողության մասնագիտացված մարմիններ, ստեղծվեցին Հաշվիչ պալատները: Օմբուդսմենի ինստիտուտը դարձավ Հաշվիչ պալատի այսպես կոչված համակերպը, չնայած էապես ավելի անկախ:

Հենց այս՝ խորհրդատվական գործառույթներով օժտված խորհրդարանական վերահսկողության տեսակը, ի վերջո ավելի ընդունելի դարձավ կոշտ դատախազական հսկողության համակարգի համեմատ, որը բնորոշ էր ավտորիտար պետություններին:

Օմբուդսմենի ինստիտուտի զարգացման այս ժամանակահատվածում դատական իշխանության նկատմամբ վերահսկողության գործառույթը, որը բնորոշ էր ինստիտուտի սկզբնական մոդելին, մերժվեց՝ որպես հակասող իշխանությունների տարանջատման, և դատական իշխանության անկախության սկզբունքին և դատական իշխանության վրա օմբուդսմենի իրավասության տարածման շվեդական և ֆինական փորձը արդեն ընկալվում էր որպես ժամանակավրեպ և ոչ բնական:

Այսպիսով, այս ժամանակահատվածում օմբուդսմենի ինստիտուտի հիմնական նպատակն էր «վատ կառավարման» դեպքերի հայտնաբերումը և կանխարգելումը. որոշ օմբուդսմեններ նույնիսկ «պաշտոնյաների պատշաճ վարքագծի» օրենսգրքեր էին մշակում:

Գործառույթների այս ուղղվածությունն արտացոլվում էր նաև տարբեր ազգային ինստիտուտների անվանումներում, օրինակ՝ վարչակազմի հարցերով լիազոր, հետաքննությունների հարցերով լիազոր և այլն:

Այսպես, մենք կարող ենք արձանագրել, որ «դասական» մոդելի շրջանակներում օմբուդսմենի ինստիտուտը քաղաքական կյանքի հիմնական դերակատարների դաշտում ավելի մոտ է տեղակայված թագավորի կամ նախագահի իշխանությանը, քան դա նկատվում էր սկանդինավյան մոդելի շրջանակներում:

Ուսումնասիրված երկրներում բացակայում էր արդարադատության կանցլերի պաշտոնը, դատախազության համակարգն այստեղ զարգացում չի ստացել. այսպիսով՝ գործադիր իշխանությունը նույնպես զգում է օմբուդսմենի ինստիտուտի պահանջը:

Միաժամանակ նվազել է նրա կախվածությունը խորհրդարանից. պատգամավորները արդեն չեն կարող ցանկացած պահին անվստահություն հայտնել նրան և ազատել պաշտոնից, ինչպես դա արվում է Շվեդիայում:




*Նկար 2. Օմբուդսմենի ինստիտուտի «դասական մոդել»*

Հարկ է նշել նաև, որ աշխարհում «դասական օմբուդսմենի» մոդելի տարածման հետ զուգահեռ զարգանում էր նաև մարդու իրավունքների արժեքների ճանաչման և այն միջազգային ու ազգային օրենսդրություններում ամրագրման գործընթացը:

Այս մասին բազմաթիվ վկայություններ կան մի շարք մենագրություններում և ուսումնական ձեռնարկներում: Հարկ է նշել, որ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո մարդկությունը շատ ավելի խորը գիտակցեց մարդու հիմնարար իրավունքների արժեքը՝ որպես բնական արժեք ընդունելու անհրաժեշտությունը: Դա իրավունք չունի անտեսել նաև ոչ մի օրենսդիր: ՄԱԿ-ի ստեղծումից և Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի ընդունումից, այնուհետև տարածաշրջանային, մասնավորապես Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի ընդունումից և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ստեղծումից հետո շատ երկրներ սկսեցին իրենց սահմանադրությունների մեջ ներառել մարդու իրավունքների արժեքները, ստեղծել մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված կառավարական կամ ազգային մարմիններ, որոնցից են, օրինակ, Մարդու իրավունքների ազգային հանձնաժողովները:

Նշենք, որ վերոհիշյալ հանձնաժողովները հաճախ հիմնադրվում էին արդեն իսկ այդ երկրներում գործող օմբուդսմենի ինստիտուտներին զուգահեռ (օրինակ՝ Դանիայում): Չի կարելի ասել, որ նրանք չեն համագործակցում միմյանց հետ, բայց այնուամենայնիվ տարբեր խնդիրներ հետապնդող ինստիտուտներ են:

Ստորև ներկայացված նկարի վրա ցուցադրված է դասական օմբուդսմենի և մարդու իրավունքների ազգային հանձնաժողովների փոխգործությունը քաղաքական հիմնական դերակատարների հետ:




Քաղաքացիների իրավունքների և ազատությունների իրականացման խթանման խնդիրը մշտապես գտնվում է օմբուդսմենի տեսադաշտում: Մենք համոզված ենք, որ դա իրոք լուրջ խթան է իշխանության օրենսդիր և դատական թևերի համար, որոնք էլ հանդիսանում են մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների երաշխավորները:

---

## THE "CLASSICAL" AND "SCANDINAVIAN" MODELS OF THE OMBUDSMAN INSTITUTE

DAVID KARMIRSHALYAN

Summary

In this article the author explores the main characteristics of two the most worldwide known and used models of the Ombudsman institute: they are the Scandinavian (Sweden, Denmark, Finland and Norway) and the “classical” (the UK, New Zealand, Australia, Hungary, etc.) models. Through schemes the article also introduces the relations of the Ombudsman institute with the different branches of power, as well as with human rights institutions.

## “СКАНДИНАВСКАЯ” И “КЛАССИЧЕСКАЯ” МОДЕЛИ ИНСТИТУТА ОМБУДСМЕНА

ДАВИД КАРМИРШАЛЯН

Резюме

В статье автор рассматривает основные характеристики двух самых распространенных в мире моделей института омбудсмена - скандинавской (Швеция, Дания, Финландия, Норвегия) и “классическая” (Великобритания, Новая Зеландия, Австралия, Венгрия, и. т. д.). Схематично представлены также взаимоотношения института омбудсмена с различными ветвями власти, а также национальными институтами прав человека.

ԴԱՎԻԹ ԿԱՐՄԻՐՇԱԼՅԱՆ

*Պետական կառավարման ակադեմիայի ասպիրանտ*

# ՕՄԲՈՒԴՍՄԵՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ներկայումս օմբուդսմենի ինստիտուտի՝ դատական համակարգի նկատմամբ իրավասության վերաբերյալ տարբեր երկրներում գոյություն ունեն բազմաթիվ կարծիքներ: Որոշ փորձագետներ գտնում են, որ այդ ինստիտուտն իրավասու է մասնակցելու դատարաններում բոլոր գործերին, մյուսները կարծում են, որ օմբուդսմենը նման իրավասություն չպետք է ունենա:

Օմբուդսմենի դասական մոդելը նախատեսում է, որ դատական իշխանությունը գտնվում է օմբուդսմենի ինստիտուտի իրավասության շրջանակներից դուրս: Սակայն, միևնույն ժամանակ, ինստիտուտի ստեղծումը Շվեդիայում պայմանավորված է եղել հատկապես դատական իշխանության նկատմամբ վերահսկողության խնդրի հետ: Միայն հետագայում օմբուդսմենի իրավասության շրջանակները ներառել են նաև գործադիր իշխանության կառուցվածքները: Ժամանակակից Շվեդիան և Ֆինլանդիան իրենց փորձով ապացուցում են, որ դատական իշխանության խորհրդարանական վերահսկողության մեջ, որը ներկայումս էլ այդ երկրներում իրականացվում է օմբուդսմենների կողմից, հակաժողովրդավարական ոչ մի տարր չկա:

Օմբուդսմենի ինստիտուտի զարգացմանը նվիրված գիտական գրականության վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ ինստիտուտի և դատական իշխանության փոխհարաբերությունների թեման ամենևին էլ փակված չէ, այլ ընդհակառակը՝ այն ներկայումս էլ հանդիսանում է բավականին լուրջ գիտական քննարկումների առարկա:

Այսպես, օրինակ, 1999 թվականին հրատարակված օմբուդսմենների Միջազգային ինստիտուտի գրքում հատուկ բաժին է նվիրված դատական համակարգի և օմբուդսմենի ինստիտուտի փոխգործության խնդիրների ուսումնասիրությանը[1]: Ներկայացված հոդվածներում, որոնց հեղինակները Ավստրալիայի, Կանադայի և Ֆինլանդիայի գործող օմբուդսմեններն են կամ նրանց տեղակալները, ինչպես նաև հայտնի գիտնական-քաղաքագետներ, քննարկումները ծավալվում են երկու հիմնական ուղղություններով:

Դրանցից առաջինը օմբուդսմենի ինստիտուտի իրավազորության խնդիրն է քվազիդատական կառուցվածքների նկատմամբ, որոնք վերջերս սկսել են ավելի ու ավելի հաճախ ստեղծվել գործադիր իշխանության տարբեր կառուցվածքների շրջանակներում: Այդ մարմինները, որոնք երբեմն աշխատում են վարչական արդարադատության շրջանակներում, իսկ երբեմն էլ պարզապես կազմված են պետական պաշտոնյաներից, իրենց գործունեության մեջ ներառում են գործի հանգամանքների քննության բաց կամ փակ լսումներ, երբեմն վիճաբանող կողմերի ներկայությամբ, այնուհետև այդ քննարկումների հիման վրա որոշումներ են կայացվում:

Քննարկելով օմբդուսմենի իրավասության խնդիրը նման քվազիդատական մարմինների նկատմամբ՝ պրոֆեսոր Դ. Գիբսոնը[2] և Քվեբեկի հրապարակային պաշտպանի տեղակալ Ժակ Մեյնիերը[3] հանգում են այն եզրակացության, որ չնայած մի շարք կանադական նահանգներում նրանք դուրս են գտնվում օմբուդսմենի իրավասությունից, սակայն դրա համար բավարար հիմքեր գործնականում չկան: Ուսումնասիրված աշխատություններում նշվում է նաև, որ վերջին ժամանակներս գործադիր իշխանության ներսում քվազիդատական մի շարք կառուցվածքների ստեղծման շնորհիվ դատական համակարգի և գործադիր իշխանության միջև նախկինում գոյություն ունեցող հստակ տարբերությունն աստիճանաբար անհետանում է: Այդ իսկ պատճառով օմբուդսմենի իրավասության շրջանակներից դատական իշխանության դուրս գտնվելն այդքան էլ ակնհայտ չէ, ինչպես դա եղել է նախկինում:

Օմբուդսմենների Միջազգային ինստիտուտի անթոլոգիայում այդ խնդրին վերաբերող մնացած երեք աշխատությունները նվիրված են օմբուդսմենի և դատարանների փոխհարաբերություններին: Ֆինլանդիայի օմբդուսմենի տեղակալ Պիրկո Կոսկինեն իր հոդվածում, որը նվիրված է ֆիննական փորձին[4], փորձում է ապացուցել, որ իր ինստիտուտի կողմից ֆիննական արդարադատության հետ կապված հարցերի ուսումնասիրությունը սովորական և նորմալ պրակտիկա է, և որ ֆիննական դատավորները միշտ էլ մեծ ուշադրությամբ են վերաբերվում օմբուդսմենի առաջարկություններին՝ դիտարկելով նրան որպես հնարավոր դատական սխալների կանխման կարևոր մարմին: Այսպիսով, Ֆինլանդիայի, ինչպես նաև հարևան Շվեդիայի փորձը ցույց է տալիս, որ դատական համակարգի նկատմամբ խորհրդարանական վերահսկողությունը չի հակասում ժողովրդավարության սկզբունքներին: Պիրկո Կոսկինենը առաջարկում է դիտարկել երկու տեսակի դատական որո-շումներ՝ նրանք, որոնք կարելի է բողոքարկել, և նրանք, որոնք բողոքարկման ենթակա չեն: Առաջին տեսակի շարքին են դասվում դատարանների «էական նշանակություն» ունեցող բոլոր որոշումները. այդ որոշումներում օմբուդսմենի միջամտությունը, նրա կարծիքով, նպատակահարմար չէ: Որոշումների երկրորդ տեսակին են պատկանում դատական լսումների ընթացքում կայացրած ընթացակարգային որոշումները, որոնց ընդունման ընթացքում հաճախ հնարավոր են սխալներ, որոնք իրենց հերթին կարող են ստվեր գցել արդարադատության վրա: Այս դեպքում օմբուդսմենի միջամտությունը հավանաբար արդարացված է և տեղին:

Ալբերտայի համալսարանի պրոֆեսոր Տիմոտի Քրիստիանը, ընդհակառակը, կարծում է, որ իր երկրի՝ Կանադայի համար օմբուդսմենի իրավասության տարածումը դատական համակարգի վրա անհնարին է, քանի որ դա կհակասի սահմանադրորեն ամրագրված դատական համակարգի անկախությանը: Նա գտնում է, որ դատական իշխանությունն իր երկրում ավանդաբար հանդիսացել է անկախության և սահմանադրության պահպանման երաշխիք՝ իրականացնելով օրենսդիրների նկատմամբ որոշակի վերահսկողական գործառույթներ: Իսկ Կանադայի խորհրդարանական օմբուդսմենը՝ օրենսդիր իշխանության վերահսկողության ձև է գործադիր իշխանության նկատմամբ, և նրա իրավասության շրջանակներում դատական համակարգի ներառումը կնշանակի վերահսկողություն ողջ դատական համակարգի նկատմամբ: Դա կհակասեր խորհրդարանի նկատմամբ դատական վերահսկողության գործառույթին և այդ իսկ պատճառով անթույլատրելի է[5]:

Հակառակ կարծիքի է Քարլտոնի համալսարանի քաղաքագիտության պրոֆեսոր Դոնալդ Ռովաթը[6], որն օմբուդսմանի ինստիտուտի հարցով աշխարհում ամենահայտնի փորձագետներից մեկն է: Նա գտնում է, որ կանադական օմբուդսմենի իրավասության ներքո դատական համակարգի ներառման մերժումը սխալ որոշում է: Բացատրելով իր տեսակետը՝ նա առաջարկում է կատարյալ չհամարել դատական համակարգը և հաշվի առնել, որ դատավորները նույնպես մարդ են, և ոչ մի մարդկային բան նրանց խորթ չէ: Վերջապես, մարդկանց ճակատագրերը հաճախ

կախված են լինում ոչ էական ընթացակարգային որոշումներից, որոնք կայացվում են ոչ թե դատավորների, այլ նրանց աշխատակիցների կողմից: Այս ամենը ցույց է տալիս, որ «վատ կառավարման» դեպքեր դատական համակարգում նույնպես կարող են պատահել: Ուստի Դ. Ռովաքը տրամաբանական է համարում, որ ընթացակարգային որոշումները լինեն օմբուդսմենի քննության առարկա[7]:

Հարկ է նշել, որ դատական համակարգն օմբուդսմենի իրավասության շրջանակներում ներառման դեմ որպես կանոն հանդես են գալիս այն իրավաբանները, ովքեր ելնում են իշխանությունների տարանջատման սահմանադրական սկզբունքներից: Նրանք համարում են, որ առանձին հակասություններն ու սխալները ոչ էական են այնպիսի կարևորագույն և վեհ հասակացությունների համեմատությամբ, ինչպիսիք են պետությունը և իրավունքը: Քաղաքագետները, ընդհակառակը, հենվելով իրականության վերլուծության վրա, տեսնելով հասարակ մարդկանց մոտ առաջացող խնդիրները, որոնց պատճառով նրանք անարդարության զոհ են դառնում, համոզված են, որ օմբուդսմենի միջամտությունն այս դեպքերում տեղին է: Ավելացնենք, որ սույն հոդվածի հեղինակը երկրորդ մոտեցման կողմնակիցն է:

Դատական իշխանության հետ փոխգործության հարցը հետավտորիտար երկրներում օմբուդսմենի ինստիտուտի համար ամենասուր խնդիրներից է հանդիսանում: Դա բացատրվում է նրանով, որ անկախ դատական իշխանության գոյությունը համարվում է ժողովրդավարության հիմնական սկզբունքներից մեկը, և այն ցանկացած պետական իշխանության կողմից վերահսկողության ենթարկելը դիտարկվում է որպես վերադարձ դեպի կառավարման հին համակարգի, այդ իսկ պատճառով՝ անընդունելի:

Մյուս կողմից, այդ երկրներում դատավորները նույն հասարակության անդամներ են, որոնք ապրել և աշխատել են նույն ավտորիտար, իսկ երբեմն նաև տոտալիտար ռեժիմի պայմաններում, երբ դատավորների իրական անկախության և ազատության մասին խոսք լինել անգամ չէր կարող: Ավելին, դատավորների ընտրության գործընթացն այդ երկրներում կախված էր «ղեկավար հրահանգներ» կատարելու ունակությունից: Եվ քանի որ դատախազական ինստիտուտը իրականացնում է նաև դատական մարմինների վերահսկողությունը, ապա հրահանգները կարող էին իջեցվել նաև դատախազության աշխատակիցների կողմից:

Արևելյան Եվրոպայում և ԽՍՀՄ-ում համայնավարական ռեժիմի փլուզումից հետո, երբ հետխորհրդային նորանկախ պետություններում փորձ էր արվում ժողովրդավարական արժեքներ սերմանել, մեծ աջակցության արժանացավ նաև դատարանների անկախության սկզբունքը: Սակայն այնպես ստացվեց, որ ազատվելով «կուսակցության և կառավարության ղեկավար հրահանգներից», դատավորները, ներքին վերահսկողության բացակայության պայմաններում, մերժեցին նաև հասարակության կողմից վերահսկողությունը: Որոշ դեպքերում հենց իրենք դատավորները սկսեցին հանդիսանալ մարդկանց իրավունքների խախտման պատճառ, ընդ որում՝ այդ խախտումները կարող էին ունենալ ինչպես էական, այնպես էլ ընթացակարգային և էթիկական բնույթ: Դատական համակարգի վրա կուսակցական ազդեցության վերացմանը փոխարինելու եկան կրիմինալ կառուցվածքները: Կաշառակերությունը ներխուժեց նաև դատական համակարգ:

Բնական է, որ խախտումների աստիճանը տարբեր երկրներում տարբեր էր: Օրինակ՝ Արևելյան Եվրոպայի երկրներում, որտեղ իրավական պետության և քաղաքացիական հասարակության ավանդույթները քիչ թե շատ պահպանվել են՝ անկախ դատավորի չափանիշներից շեղումները համեմատաբար քիչ էին: Իսկ Հարավային Կովկասի պետություններում և հատկապես Կենտրոնական Ասիայում դրանք բավականին մեծ չափերի են հասել:

Վրաստանի ժողովրդական պաշտպան Սոզար Սուբարիի խոսքերով՝ եթե Է. Շևարդնաձեի նախագահության շրջանում դատական համակարգի հիմնական խնդիրը դատավորների կաշառվածությունն էր, ապա «վարդերի հեղափոխությունից» հետո առաջացել է մի նոր խնդիր. դատավորները շատ հաճախ ուղղակիորեն հաստատում են նոր իշխանության կողմից նշանակված դատախազների առաջարկած դատավճիռները[8]:

Այդ պետություններում ստեղծված օմբուդսմենի կամ մարդու իրավունքների լիազորի ինստիտուտները բոլոր դեպքերում ստիպված էին ինքնուրույն մշակել դատական համակարգի հետ իրենց փոխհարաբերությունները: Ընդ որում՝ Արևելյան Եվրոպայի երկրների մեծ մասը դատարանների մասին օրենքում սահմանում է, որ լիազորի իրավասության ոլորտը չի տարածվում դատարանների վրա (օրինակ՝ Հունգարիա, Ալբանիա, Լիտվա, Սլովակիա, Չեխիա): Լեհաստանի մարդու իրավունքների լիազորի մասին օրենքում նման սահմանափակում չկա:

ԱՊՀ երկրների մեծ մասում, մասնավորապես՝ Ադրբեջանում, Ղազախստանում, Ուզբեկստանում, դատական համակարգը չի գտնվում մարդու իրավունքների պաշտպանների իրավասության շրջանակներում: Իրավիճակն այլ է Ուկրաինայում և Ղրղզստանում, ինչպես նաև Ռուսաստանում. այդ երկրներում մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքներում նշված չէ, որ նրա իրավասությունը չի տարածվում դատական համակարգի վրա:

Այսպես, օրինակ, Ուկրաինայի Գերագույն ռադայի մարդու իրավունքների լիազորը, համաձայն Ուկրաինայի Հանրապետության «Մարդու իրավունքների լիազորի մասին» օրենքի հոդված 13-ի, իրավունք ունի ծանոթանալու վարույթում գտնվող փաստաթղթերին և դատական գործի ընթացքին: Համաձայն նույն հոդվածի 9-րդ և 10-րդ կետերի՝ նա իրավունք ունի մասնակցելու բոլոր ատյանների դատարանների նիստերին, այդ թվում նաև փակ նիստերին, դատարան դիմելու մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանության հայցով, եթե վատ առողջական վիճակի կամ այլ պատճառներով նրանք հնարավորություն չունեն դա ինքուրույն անելու, ինչպես նաև անձամբ կամ իր ներկայացուցչի միջոցով մասնակցելու դատավարության գործ-ընթացին՝ օրենքով սահմանված դեպքերում:

Միևնույն ժամանակ, նույն օրենքում (հոդված 17, կետ 4) նշվում է, որ լիազորը դիմումներ չի ընդունում այն գործերի կապակցությամբ, որոնք արդեն գտնվում են դատարանների վարույթում, դադարեցնում է արդեն սկսված հետաքննությունը, եթե շահագրգիռ անձը հայցով դիմել է դատարան:

Մեր կարծիքով, խնդրո առարկա օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետի և 17-րդ հոդվածի 4-րդ կետերի միջև առկա է որոշակի հակասություն:

Ղրղզստանի օմբուդսմենի մասին օրենքում գոյություն ունեն ուկրաինական օրենքի 13-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ կետերին, ինչպես նաև 17-րդ հոդվածի 4-րդ կետին համարժեք դրույթներ, սակայն ղրղզական օրենքում բացակայում է դատարանում քննվող գործերին ծանոթանալու իրավունքի մասին կետը: Նույն օրենքով սահմանվում է նաև, որ բողոքներն ու դիմումներն օմբուդսմենը քննության է ընդունում միայն այն դեպքում, երբ բողոքարկվում է վերադաս մարմնի, վարչական մարմնի կամ դատարանի կողմից ընդունված և օրինական ուժի մեջ մտած որոշումը, և երբ դիմումները կամ բողոքները վերաբերում են գործի քննության ընթացքում թույլ տրված մարդու իրավունքների և ազատությունների խախտումներին[9]:

Անհասկանալի է միայն, թե Ղրղզստանի օմբուդսմենն ինչպես պետք է քննի գործը, որի կապակցությամբ դատարանն արդեն որոշում է կայացրել, որպեսզի չխախտվի դատարանի անկախության սկզբունքը: Նմանատիպ դրույթ է պարունակում նաև Ռուսաստանի Դաշնության «Մարդու իրավունքների լիազորի մասին» օրենքը: Օրենքում կան նաև մի շարք հոդվածներ, որոնք կարգավորում են լիազորի և դատական համակարգի փոխհարաբերությունները:

Այսպես, բողոքի կապակցությամբ անցկացվող քննության ընթացքում լիազորն իրավունք ունի ծանոթանալու այն քրեական, քաղաքացիական և վարչական իրավախախտումներին վերաբերող գործերին, որոնց կապակցությամբ դատավճիռներն օրինական ուժի մեջ են մտել, ինչպես նաև այն գործերին, որոնց կապակցությամբ քրեական գործի հարուցումը մերժվել է:

Բողոքների քննության արդյունքում՝ լիազորն իրավունք ունի (հոդված 29).

1. դիմել դատարան՝ պետական մարմնի, տեղական ինքնակառավարման մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից կայացված որոշումների, գործողությունների կամ անգործության պատճառով խախտված մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության հայցով, ինչպես նաև, օրենքով սահմանված դեպքերում, անձամբ կամ իր ներկայացուցչի միջոցով մասնակցել դատավարությանը,

2. դիմել դատարան կամ դատախազություն՝ օրինական ուժի մեջ մտած որոշման կամ դատավճռի ստուգման հայցով,

3. իր փաստարկները ներկայացնել պաշտոնատար անձին, որն իրավասու է հանդես գալ բողոքարկմամբ, ինչպես նաև մասնակցել հսկողության կարգով իրականացվող դատաքննությանը:

Այսպիսով՝ մենք տեսնում են, որ Ռուսաստանի, Ղրղզստանի, Ուկրաինայի՝ օմբուդսմենի մասին օրենսդրությունները նախատեսում են դատական համակարգի և այդ ինստիտուտի միջև որոշակի համագործակցության մեխանիզմներ, սակայն այդ համագործակցության նորմատիվ հիմքերը բավականին հակասական են: Իրականության մեջ օմբուդսմենի՝ այս կամ այն դատավճռի բողոքարկման որևէ փորձ հաճախ քննադատության է արժանանում միջազգային փորձագետների կողմից՝ որպես անկախ դատական համակարգի դեմ ուղղված քայլ:

Օմբուդսմենի և դատական համակարգի միջև համագործակցության օրենսդրորեն ամրագրման ևս մեկ փորձ կատարվել է Հայաստանի Հանրապետության «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» օրենքում (հոդված 7. կետ 1, մաս 2): Համաձայն այդ օրենքի՝ պաշտպանն իրավասու չէ միջամտել դատական վարույթին: Նա կարող է տեղեկություններ պահանջել դատաքննության մեջ գտնվող ցանկացած գործի մասին և առաջարկներ ներկայացնել դատարան՝ երաշխավորելով քաղաքացիների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և միջազգային իրավունքի նորմերով նախատեսված դատավարության իրավունքի պատշաճ ի կատար ածումը: Պաշտպանն իրավասու է դիմողին տալ առաջարկություններ կամ խորհրդատվություն՝ դատարանի որոշման վճռի կամ դատավճռի հիմնավորությունը բողոքարկելու վերաբերյալ: Սակայն 2005թ. հունիսի 6-ին ՀՀ Նախագահը դիմեց Սահմանադրական դատարան՝ վերոնշյալ հոդվածի սահմանադրականության հարցը ճշտելու համար: Վերջինս գտավ, որ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 7 հոդվածի 1-ին կետի, 2-րդ մասի 2-րդ պարբերությունը հակասում է Սահմանադրությանը, և այն դիտվում է որպես միջամտություն դատարանի անկախությանը:

Հետավտորիտար երկրներում օմբուդսմենի ինստիտուտի և դատական համակարգի միջև համագործակցության լավագույն տարբերակի փնտրտուքը դեռ չի ավարտվել:

Հետխորհրդային տարածքում օմբուդսմենի ինստիտուտի զարգացման գործընթացը, մեր համոզմամբ, ապացուցում է, որ պետական իրավապաշտպանի իրավասությունից դատական համակարգի դուրս մղումը վաղաժամ է: Շվեդիայի և Ֆինլանդիայի օմբուդսմենների փորձը մեզ իրավունք է տալիս ենթադրել, որ նորանկախ պետությունների, այդ թվում նաև Հայաստանի հասարակության համար ավելի ընդունելի է օմբուդսմենի «սկանդինավյան» մոդելը, որի իրավասության մեջ մտնում է նաև դատական համակարգի նկատմամբ վերահսկողությունը:

---

[1] The International Ombudsman Antology. Selected Writing from the International Ombudsman Institute./ Ed. By Linda C. Reif- The Hague e. a.;Kluwer Law International, 1999, pp. 455-552.

[2] Dale Gibson. Coping with quasi-ness: ombudsmen and quasi-juridical tribumals.-In: The Interenational Ombudsman Anthology. The Hague e. a.: Kluwer Law International, 1999, p. 479-490.

[3] Jacques Meunier. The Special relations of the canadian provincial ombudsmen with the courts and quasi-juridical authorities.- In: The Interenational Ombudsman Anthology. The Hague e. a.: Kluwer Law International, 1999, p. 491-517.

[4] Pikko K. Koskinen. Investigating the Judiciary.- In: The Interenational Ombudsman Anthology. The Hague e. a.: Kluwer Law International, 1999, p. 519-525.

[5] Timothy J. Christian. Why no ombudsman to supervic the courths in Canada?- In: The Interenational Ombudsman Anthology. The Hague e. a.: Kluwer Law International, 1999, p. 539-551.

[6] The ombudsman; citizns defender. Rowar, Donald Cameron, ed.- London: Allen&Unwin, 1968,-284 p.; Rowat D. C. The Ombudsman Plan. Essays on the Worldwide spread of an Idea. – Toronto, 1973.

[7] Donald. C. Rowat. Why an Ombudsman to Surervise the Courts?- In: The Interenational Ombudsman Anthology. The Hague e. a.: Kluwer Law International, 1999, p. 527-538.

[8] Выступление Созара Субари на конференции в Баку, 29-30 ноября 2004.

[9] Уполномоченные по правам человека 2003, с. 109.

## THE OMBUDSMAN INSITITUTE AND THE JUDICIAL POWER

DAVID KARMIRSHALYAN

Summary

The article observes one of the key issues arising in the activities of the Ombudsman institute, i.e. its relationship with the judiciary power. Based on studies made in the practices of the Swedish, Finnish, Canadian, Australian Ombudsmen, as well as on the analysis of scientific literature relating to this problem, the author comes to the conclusion, that the topic of the relationship of these two entities in democratic countries even nowadays causes scientific debates. Thus, taking into account the basic constitutional principles of separation of powers, lawyers think that the jurisdiction of the Ombudsman should not include courts. As to political scientists, guided by the analysis of realia, they think that failing to include the courts within the Ombudsman jurisdiction is wrong.
The author devotes considerable attention to the problem of "Ombudsman versus judicial power" in post-autocratic countries and concludes that particularly in post-autocratic societies (Central Asia, South Caucasus) the Scandinavian model of the Ombudsman, whose jurisdiction includes courts as well, can be more claimed.

## ИНСТИТУТ ОМБУДСМЕНА И СУДЕБНАЯ ВЛАСТЬ

ДАВИД КАРМИРШАЛЯН

Резюме

В статье рассматривается одна из ключевых проблем в деятельности института омбудсмена - его взаимоотношения с судебной властью. На основе изучения практики омбудсменов Шведии, Финалндии, Канады, Австралии, а также анализа научной литературы, посвященной этой проблематике, автор приходит к выводу, что тема взаимоотношений этого института и судебной власти в странах демократии и сегодня является предметом научных споров. Так, юристы, исходя из основных конституционных принципов разделения властей считают, что юрисдикция омбудсмена не должна распростронаться на суды. Политологи же, опираясь на анализ реальной ситуации, считают отказ от включения судебной системы в юрисдикцию омбудсмена ошибочной.

Автор уделяет достаточное внимания проблеме взаимоотношений института омбудсмена с судебной властью в поставторитарный странах и приходит к выводу, что, в частности, в постсоветских обществах (Центральная Азия, Южный Кавказ) скандинавская модель омбудсмена, в юрисдикцию которого входит и судебная система, может быть более востребованная.

ԱՐՏՅՈՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

*ՀՊՄՀ*
*Ընդհանուր մանկավարժության ամբիոնի հայցորդ*

# «ԻՐԱՎՈՒՆՔ» ԱՌԱՐԿԱՅԱՇԱՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Իրավագիտությունը հասարակական գիտություն է, որն ուսումնասիրում է իրավունքը որպես սոցիալական նորմերի հատուկ համակարգ, պետության իրավական ձևերի կազմակերպումն ու գործունեությունը, հասարակության քաղաքական համակարգերն ամբողջությամբ: Իրավագիտական առարկաները պատկանում են հումանիտար առարկաների խմբին: Սա նշանակում է, որ նրանց դասավանդման, ուսուցման մեթոդիկան անհրաժեշտ է ուսումնասիրել հումանիտար առարկաների դասավանդման տեսանկյունից՝ հաշվի առնելով կրթական հաստատության կարգավիճակը (միջնակարգ, միջին մասնագիտական, բարձրագույն):

Իսկ ո՞րն է ուսուցման մեթոդը: «Մեթոդ» տերմինը նշանակում է ուղի, եղանակ: Ուսուցման մեթոդ հասկացության տակ ընկալվում են ուսուցչի և աշակերտների աշխատանքի այն եղանակները, որոնց օգնությամբ հաղորդվում և յուրացվում են գիտելիքներ, զարգանում են սովորողների ճանաչողական հնարավորությունները՝ ձևավորելով նրանց աշխարհայացքը:

Միջնակարգ ուսումնական հաստատություններում մանկավարժական գործընթացի կազմակերպման հիմնական ձևը համարվում է դասը, որի տարատեսակները և մեթոդները ներկայացված են աղյուսակում:

Այսօր դպրոցին անհրաժեշտ են մեթոդներ, որոնք կզարգացնեն սովորողների ճանաչողական ակտիվությունն ու ստեղծագործական կարողությունները, նաև մտածողությունը:

Միջնակարգ ուսումնական հաստատությունների դասավանդողների համար կարող է ընդունելի լինել դասերի կառուցման մոդուլային համակարգը ըստ թեմաների. նոր նյութի դաս-բացատրություն, սովորողների ինքնուրույն աշխատանքի արդյունքում ուսումնական նյութի խոր վերլուծության դաս և սեմինար, լաբորատոր և պրակտիկ պարապմունք-դասեր, դաս և ստուգարք՝ ըստ տարբեր թեմաների, խմբերի, և անհատական, խնդիրների լուծման դասեր:

Խնդիրների լուծումը (աղ. 3.2) կարող է և պետք է նպաստի, որ աշակերտները ոչ միայն պետաիրավական երևույթները սովորեն տեսականորեն, այլև դրա բազայի վրա՝ մեկնաբանեն ու բացատրեն իրավական նյութը, իրավական հարթության վրա գնահատելով մարդու, քաղաքացու, պետական և պաշտոնատար անձանց վարքագիծը, հասարակության և պետության գործողությունները:

Այս խնդիրները ծագում են առօրյա իրականության մեջ, և այդ պատճառով դրանց լուծումը և պատասխանը դյուրին դարձնելու համար պետք է դասանյութը բավարար յուրացվի:

Խնդրին պետք է տրվի իրավաբանական ճիշտ որակում և լուծում, իսկ եթե այդպիսիք արդեն իսկ առկա են, ապա պետք է լուծման օրենքին համապատասխանությունը գնահատվի՝ դրանք հիմնավորելով: Վերջինիս համար պետք է հղում կատարվեն դասագրքին, ինչու չէ՝ նաև օրենսգրքերին և օրենքներին:

Դասավանդողի դասին պատրաստվելու տեխնոլոգիան բաղկացած է նախնական և անմիջական մասերից: Նախնական պատրաստվածությունը ներառում է՝

1. տվյալ առարկայի և հարակից առարկաների ուսումնական ծրագրերի բովանդակության մանրակրկիտ ուսումնասիրում
2. հատուկ, մանկավարժական, հոգեբանական և մեթոդական գրականության ուսումնասիրում
3. այլ դասավանդողների առաջնային մանկավարժական փորձի ուսումնասիրում
4. հիմնային կոնսպեկտների, տարբեր զննական պիտույքների և դիդակտիկ նյութի մշակում, տեխնիկական միջոցների կիրառման մեթոդիկայի յուրացում:

| Դասը որպես ուսուցման ձև (տիպ) | Դասին կիրառվող ուսուցման մեթոդներ |
|---|---|
| 1. Նոր գիտելիքների յուրացման դաս | 1-ին հարթության վրա բացատրություն, ցուցադրում, պրոբլեմային շարադրում |
| 1.1. Դաս-դասախոսություն | 1-ին և 2-րդ հարթության վրա պատմում, բացատրություն, պրոբլեմային շարադրում |
| 1.2. Դաս-զրույց | Զրույց ցուցադրմամբ |
| 2. Կոմբինացված (համակցված) դաս | Պատմում, ինքնուրույն աշխատանք, հարցում, վարժություն |
| 3. Գիտելիքների, ունակությունների, կարողությունների ամրապնդման դաս | Ինքնուրույն աշխատանք, վարժություններ, հարցում, ցուցադրում |
| 3.1. Դասարանային-խմբային պարապմունք | Հարցում, վարժություններ, ինքնուրույն աշխատանք |

| | |
|---|---|
| 3.2. Խնդիրների լուծման դաս | Վարժություններ, ինքնուրույն (ստուգողական) աշխատանք ուսուցչի ղեկավարությամբ |
| 3.3. Գործնական դաս | Վարժություններ հատուկ կահավորված դասարանում, լաբորատորիայում |
| 4. Ծրագրավորված ուսուցման դաս (անհատական ուսուցման դաս) | Ստուգում և ինքնաստուգում: Ինքնուրույն աշխատանք ուսումնական ծրագրով |
| 5. Պրոբլեմային ուսուցման դաս | Պրոբլեմային իրավիճակների լուծում ինքնուրույն և ուսուցչի հետ |
| 5.1. Դաս-բանավեճ | Բանավեճ |
| 5.2. Դաս-սեմինար | Քննարկում |
| 5.3. Դաս-զրույց | Էվրիստիկական (հուշող հարցերով բացատրում) զրույց |

Դասին ուսուցչի անմիջական պատրաստման ժամանակ ուսումնասիրվում են դասի՝ տվյալ թեմայի ուսումնամեթոդական նյութերը, մանրակրկիտ ուսումնասիրվում է աշակերտներին հանձնարարված գրականությունը, պատրաստվում կամ ընտրվում են դասին անհրաժեշտ նյութերը, տեխնիկական միջոցները և դիդակտիկ նյութերը, պատվիրվում են կինո և տեսաֆիլմեր, ուսումնասիրվում են ուսուցիչներին երաշխավորված մեթոդականները և դասի անցկացման պլանը:

Դասի անցկացման մեթոդիկան կարող է լինել զանազանակերպ, բայց ամենատարածվածը ֆրոնտալ (ճակատային, խմբային) մեթոդիկան է, այսինքն՝ կոլեկտիվ աշխատանքի կազմակերպումը: Մեր օրերում մեծ ուշադրություն է դարձվում անհատական ուսուցման մեթոդիկային: Այն լայնորեն կիրառվում է գիտելիքների ամրապնդման, ունակությունների և հմտությունների ձևավորման, ծրագրավորված ուսուցման դասերին և այլն:

Դասին ուսումնական աշխատանքի անհատական ձևը նախատեսում է սովորողների ինքնուրույնության բարձր մակարդակ, որով ուսումնասիրվող նյութն ավելի լավ կընկալվի: Այս դեպքում որպես հիմնական միջոցներ կարող են հանդես գալ հատուկ կահավորված դասարանները և կաբինետներում անհատական պարապմունքները, կամ էլ ուսուցչի գլխավորությամբ աշակերտի անհատական աշխատանքը: Այս դեպքում ուսուցիչը կարող է հանդես գալ և՛ որպես ղեկավար, և՛ որպես օգնական, և՛ որպես ընկեր:

Հիշյալ պարապմունքների հաջողությունը շատ անգամ կախված է աշակերտների համար ուսուցչի նախապատրաստած ուսումնամեթոդական նյութից, անհրաժեշտ գրականության ծավալից, տարբեր դիդակտիկ նյութերից և, իհարկե, ուսուցչի մեթոդական վարպետությունից:

Բայց դասի կազմակերպման ցանկացած ձևի ժամանակ առանձնահատուկ նշանակություն ունի սովորողների և ուսուցչի միջև և սովորողների՝ միմյանց միջև հարաբերությունների բնույթը: Ցանկալի է, որ դրանք հիմնված լինեն մանկավարժական համագործակցության գաղափարի հենքի վրա: Դասարանում և խմբերում առողջ սոցիալ-հոգեբանական մթնոլորտը և հոգեբանական համատեղելիությունը խթանում է ճանաչողական գործունեությունը և նպաստում է պարապմունքի նպատակին ծառայելուն:

Աղյուսակում բերված դասի ուսուցման տիպերից և մեթոդներից ավելի մանրամասն անդրադառնանք 2-ի վրա՝ բանավեճ (5.1) և քննարկում (5.2): Դպրոցականների՝ սեփական իրավունքներն ու ազատություններն իմանալու և պաշտպանելու, կյանքի տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու, սեփական «եսը» ոտնձգություններից պաշտպանելու, շրջապատի նկատմամբ բարեկիրթ վերաբերմունք դրսևորելու համար կայուն ու նպատակային դեր է խաղում «Իրավունք» առարկայաշարի դասավանդումը: Դրանց են ուղղված 8-10-րդ դասարանների «Մարդու իրավունքներ», «Քաղաքացիական կրթություն», «Պետություն և իրավունք» դասագրքերում տարաբնույթ քննարկումները և բանավեճերը: Արդյունքում՝ աշակերտի մոտ զարգանում է առաջադրված հարցերը կիրթ և արդյունավետ լուծելու հնարավորություն, ձևավորվում է վերլուծական և քննադատական որոշակի ոճ, որը նպաստում է ընդհանուր մտահորիզոնի զարգացմանն ու դրսևորմանը: Այստեղ ուսուցիչը, հաշվի առնելով այլևայլ հանգամանքներ և առանձնահատկություններ, ազատ է առաջադրելու ցանկացած թեմա և ոչ թե միայն այն, ինչն առկա է դասագրքերում:

Խմբին, դասարանին ոչ բարդ թեմաներով բանավեճերը կարող են կազմակերպվել ինքնաբուխ ու միանգամից քննարկում և երկխոսություն անցկացնելով:

Օրինակ, 8-րդ դասարանում որպես այդպիսի բանավեճի խիստ արդիական և պրոբլեմային քննարկման թեմա է դավանանքի ազատության հարցը: ՀՀ Սահմանադրության 8.1 հոդվածի 2-3-րդ մասերը նախատեսում են. «ՀՀ-ն ճանաչում է Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում…

ՀՀ-ում երաշխավորվում է օրենքով սահմանված կարգով գործող բոլոր կրոնական կազմակերպությունների գործունեության ազատությունը»:

Սահմանադրության 26-րդ հոդվածը հռչակում է. «Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք…

Այս իրավունքի արտահայտումը կարող է սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է հասարակական անվտանգության, առողջության, բարոյականության կամ այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության համար»:

Վերոհիշյալ թեման ուսումնասիրելուց հետո որպես քննարկման հարց կարող է առաջադրվել. նպատակահարմար չէ՞ արդյոք հաստատել հայ առաքելական եկեղեցու գերակայությունը՝ դրանով իսկ արգելելով դավանանքի ազատությունը, և խստագույնս կանխել կրոնական հարկ է աղանդավորությունըզ: Ե՛վ դրական, և՛ բացասական պատասխանները հիմնավորել:

Այս պարագայում ուսուցիչը պետք է տիրապետի ինֆորմացիային՝ արդյո՞ք դասարանում չկա այլադավան

կամ կրոնական աղանդի պատկանող ընտանիքի երեխա, որպեսզի վերջինս զերծ մնա վիճարարության ընթացքում հնարավոր հոգեբանական տրավմայից:

10-րդ դասարանի աշակերտներին օրենքների, երթևեկության կանոնների միջև համեմատական վերլուծություն իրականացնելու համար քննարկման թեմա կարող է լինել հետևյալը.

1. Որքա՞ն են կարևոր ճանապարհատրանսպորտային նշանները և ինչո՞ւ:

2. Այդ կանոնների խախտումն ինչի՞ կարող է հանգեցնել:

Սրա համար ստանալով իրավիճակային քարտեր՝ աշակերտները բաժանվում են զույգերի: Կարճ քննարկումից հետո ներկայացնում են իրենց տեսակետը, որից հետո ամբողջ դասարանը բաժանվում է 3 խմբի: Անեն մի խմբի հանձնարարվում է մարդկանց վարքի կանոններ գրել որոշակի հասարակական վայրում.

1-ին՝ հասարակական տրանսպորտում

2-րդ՝ փողոցում, զբոսայգում

3-րդ՝ մշակութային օջախում

Խմբերում աշխատելուց հետո նրանք իրենց տարբերակները ներկայացնում են միմյանց և անցնում քննարկման:

Այնուհետև ուսուցիչը երեխաներին բաժանում է քարտեր՝ վարորդի, հետիոտնի և ուղևորի պարտականությունների նշումով: Առաջարկվում է, որ խումբ կազմեն. վարորդի, ուղևորի և հետիոտնի պարտականություններ ունեցողներ և խմբերից մեկական մասնակից ներկայացնում են իրենց տարբերակը: Վերջում եզրափակմամբ հանդես է գալիս ուսուցիչը:

Ինչ վերաբերում է առավել ընդգրկուն, ինֆորմացիայի մեծ ծավալ ենթադրող խնդիրների շուրջ բանավեճերին, ցանկալի է դրանք նախօրոք հանձնարարել, քանի որ անհրաժեշտ է որոշ պատրաստվածության մակարդակ: Ցանկալի կլինի դասարանը բաժանել 2 խմբի, որը ևս պետք է որոշվի նախօրոք: Խմբերն էլ արդեն իսկ կձևակերպեն իրենց կողմ և դեմ փաստարկները, որպեսզի պնդեն իրենց կարծիքը և ընդդիմանան մյուս խմբին:

Որպես այդպիսի քննարկման թեմա 9-րդ դասարանի «Քաղաքացիական կրթություն» առարկայի համար առաջադրենք. ինչպիսի՞ն է ժամանակակից ՀՀ արտաքին քաղաքականությունը, և ինչպիսի՞ կապ կա նրա աշխարհաքաղաքական դիրքի հետ: Այս հարթության վրա՝ որո՞նք են մեր երկրի առանձնահատկությունները:

Ուսուցիչը այստեղ կարող է հանդես գալ զուտ որպես կազմակերպիչ, սահմանելով բանավեճի կարգը, նպատակներն ու խնդիրները, էթիկայի պահպանումը, գնահատման պահը թողնելով մասնակիցներին: Այնուհետև ամփոփվում է աշխատանքը:

Իհարկե, դասի նախապատրաստման և անցկացման մեթոդիկան այսքանով չի սահմանափակվում: Օրինակ՝ դիդակտիկներ Մ. Սկարկինը և Ի. Լերները որպես արդյունավետ մեթոդ ներկայացրել են բացատրական-ցուցադրական, ռեպրոդուկտիվ (վերհիշական), մասնակի, որոնողական և հետազոտական մեթոդներ: Ուսումնաճանաչողական գործունեությունը կազմակերպող և իրականացնող, խթանող, վերահսկող և ինքնավերահսկող մեթոդներ է առաջադրել Յ. Բաբանսկին: Ինչ վերաբերում է Մ. Դանիլովին և Բ. Եսիպովին, ապա նրանք առաջարկեցին նոր գիտելիքների ձեռքբերման գործում հմտություններ և կարողություններ մշակող, ստուգող և գնահատող մեթոդներ:

Մշակված, կյանքով ապահովագրված, ստուգված մեթոդներն այսօր կիրառվում են դպրոցում, բայց դրանցից ո՞ր համակարգն է առավել արդյունավետ. սա դեռ հարց է:

Կախված դասի նյութի առանձնահատկություններից՝ ճիշտ կլինի մեթոդների համակարգը զուգակցել, որով իսկ կլուծվեն ուսումնական առավել խրթին հարցերը:

Վերջին հաշվով՝ մեթոդները կարող են և պետք է կատարելագործվեն ամենօրյա աշխատանքի ընթացքում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Педагогика: Уч. пособие под ред. *П. И. Пидкаситого,* 2-е изд. М. 1996г.

2. *Մ. Սկարվին,* Դպրոցը նոր ծրագրին անցնելու կապակցությամբ ուսուցման արդյունավետության բարձրացման մասին, Երևան 1978թ.:

3. Юредический энциклопедический словарь М. 1984г.

4. Իրավական խճանկար, խմբ. *Գ. Թերզյան,* Երևան, «Ասողիկ», 2005թ.:

5. «Մարդ և հասարակություն», գիտամեթ. ամսագիր, թիվ 1, 2 Երևան 2005թ.:

6. ՀՀ Սահմանադրություն:

7. ՀՀ քրեական օրենսգիրք:

8. *М. В. Короткова, М. Т. Студеникин.* Методика обучения истории в схемах, таблицах, описаниях. М., 1999г.

## BASES OF METHODS OF TEACHING LEGAL SUBJECTS (DISCIPLINE) IN THE SECONDARY SCHOOL OF GENERAL EDUCATION

ARTYOM ABRAHAMYAN

*Competitor for the Department of General Pedagogies APSU*

Summary

Problems of diversity of lessons on legal discipline and methods of conducting them in the 8th - 10th forms of secondary schools are raised in the article. In particular, the question concerns the technology of the teacher's preparation for the lesson and the individual form of teaching. In the author's opinion, the character of relations between the teacher and pupils as well as between the pupils themselves plays a significant role at the lessons.
Special attention is given to two methods of teaching applied at the lessons: debate and discussion.

## ОСНОВЫ МЕТОДИКИ ПРЕПОДАВАНИЯ ПРАВОВЫХ ДИСЦИПЛИН В СРЕДНЕЙ ОБЩЕОБРАЗОВАТЕЛЬНОЙ ШКОЛЕ

АРТЕМ АБРААМЯН

*Соискатель кафедры общей педагогики АГПУ*

Резюме

В статье подняты вопросы о разновидностях урока и методах его проведения по правовым предметам в 8-10-их классах средних школ. В частности, речь идет о технологиях подготовки преподавателя к уроку, об индивидуальной форме учебной работы.

По мнению автора, на уроках важное значение имеет характер отношений между преподавателем и обучающимися, а также между самими учениками.

ЭДМОН МАРУКЯН

*Государственная академия правления РА*
*Магистрант кафедры юриспруденции*
*Член Координационного совета международной сети - Молодежное правозащитное движение*

# СВОБОДА СОБРАНИЙ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

В настоящее время в Армении как на практике, так и в законодательстве весьма проблематичным является вопрос свободы собраний. Это и послужило для меня причиной проанализировать только одну часть статьи 11 ЕКПЧ, так как у нас свобода объединений была весьма проблематичной только до тех пор, пока под сильным влиянием со стороны Совета Европы была зарегистрирована религиозная организация "Свидетели Иеговы".

Сейчас регистрирование общественной, политической или религиозной организации не представляет собой никаких искуственных осложнений в РА. В настоящее время, одним из важнейших требований Совета Европы в этой сфере является принятие нового закона о “Свободе совести и религиозных организаций”, так как действующий закон не соответствует международным стандартам. А проблемы, связанные со свободой собраний, до сих пор актуальны и крайне проблематичны в Армении.

До осуществления конституционных реформ согласно статье 26 старой Конституции РА (принятой 5 июля 1995г.) "Граждане имеют право собираться мирно, без оружия, для проведения собраний, митингов, шествий и демонстраций". В отличие от данной статьи, в статье 29 действующей Конституции РА (с изменениями от 27.11.2005) говорится: "Каждый имеет право на проведение мирных, без оружия собраний". Таким образом, в измененном варианте Конституции свобода на собрание предусмотрена не только для граждан РА, но и для иностранцев и лиц, не имеющих гражданство. Подобное положение вполне оправданно, потому что цель собраний также может быть направлена на защиту прав, свобод и законных интересов или обеспечение свободного выражения для иностранцев и лиц, не имеющих гражданство. Фундаментом демократии является свободная, не подвергнутая цензуре дискуссия граждан, в которой все могут принимать участие на равных правах, подвергая свои аргументы и мнения общественной оценке. Языком этой дискуссии являются, кроме прочего, демонстрации, митинги и шествия. Лишение кого-либо права на демонстрирование постулатов или взглядов является посягательством на саму сущность демократии[1].

Свобода собрания является одним из основных принципов демократии и предполагает возможность проведения всех типов собраний, включая митинги, шествия, парады и демонстрации, при условии, что они носят мирный характер. В этом смысле в измененной Конституции собрания не были ограничены лишь четырьмя типами, что оценивается положительно. Подобная классификация опасна, поскольку может привести к таким заключениям, что виды собраний (к примеру пикеты и собрания в закрытых помещениях), не закрепленные в конституции, не могут иметь конституционных гарантий.

Исходя из сложившейся в Армении практики весьма строгого ограничения проведения собраний, было бы правильно закрепить, что собрания проводятся без разрешения, только на основании предоставленного в разумные сроки осведомления.

Проблемы в области Свободы Собрания на практике и в законодательстве РА

До апреля 2004г. в Армениии не было закона и установленного порядка, регулирующего проведение демонстраций, шествий и митингов, а на прямую существовало Конституционное положение относительно свободы проведения собраний. Но поступавшие к городским властям заявления о проведении собраний, митингов и шествий со стороны опозиции постоянно отклонялись, при этом приводилась весьма абсурдная мотивацая: "... в упомянутом вами месте осуществление митинга находим не целесообразным..."[2]. Но несмотря на эти запреты, во время президентских выборов в 2003-2004гг, опозиция проводила собрания и митинги, за которыми следовали массовые аресты. Участники несанкционированных митингов арестовывались из-за нарушения установленного порядка для участия в демонстрациях, митингах, собраниях и шествиях. После чего без присутствия адвоката, за закрытыми дверями и с многочисленными судебно-процессуальными нарушениями осуществлялся судебный процесс, и арестованные подвергались административной ответственности. Аресты противоречат с обязательствами, взятыми на себя Арменией перед ОБСЕ. Согласно абзацу 7.7 Копенгагенского документа "... государства должны обеспечивать, чтобы закон и государственная политика допускали проведение политических кампаний в атмосфере свобод и честности, в которой никакие административные действия, насилие или запугивание не удерживали бы партии и кандидатов от свободного изложения своих взглядов и оценок"[3]. Но административные методы (аресты, штрафы) производились как во время президентских выборов в 2003г, так и во время митингов и собраниий в месяцах Апрель-Май 2004г..

В дни проведения собраний, организованных опозицией в столице Ереван, власти закрывали междугородные автомобильные трассы, и граждане были лишены возможности совершать поездки из регионов в Ереван. Водители транспортных средств, перевозившие людей из регионов в столицу для участия в собраниях, подвергались избиению и насилию со стороны правохранительных органов.

Обо всем этом свидетельствуют множество фактов, упомянутых как в армянской прессе, так и в отчетах и заявлениях армянских и международных правозащитных организаций.[4] В отчете 2006г. международной правозащитной организации Хьюман Райтс Вотч (Human Rights Watch) отмечено, что руководство Армении не смогло улучшить свои показатели в области Прав Человека. Власти, по мнению авторов отчета, ограничивают проведение собраниий, в частности свободу собраний и митингов опозиции: "в 2005г. ряд неправительственных организа-

ций и политических партий пытались провести митинги. Полиция и неизвестные лица вмешивались, отбирали плакаты и провоцировали беспорядки"[5].

Совет Председателей Судов РА в ответ на заключение Конституционного суда[6] о том, что применение административных арестов по отношению к участникам собраний не соответствует стандартам правового государства, 25-го апреля 2004г. пояснил[7], что порядок проведения собраний и демонстраций установлен законом "О порядке проведения собраний, митингов и уличных шествий в СССР" от 28.10.88г.

Замечу, что подобного закона вовсе и не существует. 28го октября, 1988г. был принят указ председателей Верховного Совета СССР "О порядке проведения собраний, митингов и уличных шествий в СССР"[8]. Верховный Совет Армении 25го сентября 1991г. принял специальный закон о том, чтобы оставить в силе некоторые законодательные акты до принятия нового законодательства. В этот список не был включен вышеупомянутый нормативный акт. Кроме этого, согласно статье 11 договора о создании СНГ от 21.09.1991г., на территории СНГ не действуют нормы третьего государства, включая нормы СССР.

Парламентская Ассамблея Совета Европы (ПАСЕ) в внеочередном порядке рассмотрел политическую ситуацию РА и 28го апреля 2004г. принял 1374 резолюцию (документ 10163), обязуя Армению принять все возможные шаги для исключения неоправданных ограничений[9] и для обеспечения свободы мирных собраний как в законодательстве, так и на практике.

27 апреля 2004г. был принят и 22 мая вступил в силу закон "О проведении собраний, демонстраций, шествий и митингов", который был охарактеризован со стороны ПАСЕ как "сильно ограничивающий". Еще до принятия закона законопроект был сочтен "неприемлемым и не соответствующим европейским стандартам" со стороны ОБСЕ[10], экспертами Венецианской Коммисии Совета Европы (CDL(2004)022), ПАСЕ предложил "привести законопроект в соответствие с принципами и стандартами Совета Европы" (1361 (2004) Резолюция ПАСЕ, 27 января 2004г. (документ 10027)).

Этот закон[11] в реальности не является гарантом свободы собрания, демонстраций, шествий и митингов, а устанавливает полномочия государтвенных органов и ограничивает организацию и проведение публичных мероприятий. Так как:

1. согласно ст. 2, 10, 12 закона РА "О проведении собраний, демонстраций, шествий и митингов" массовые мероприятия, каковыми считаются те, в которых участвуют 100 и больше участников, могут проводиться только после письменного осведомления полномочного органа не менее чем за 3 дня до мероприятия. Таким образом, организация акций протеста с участием 100 и больше участников относительно какого-либо срочного, неожиданно возникшего вопроса становится невозможным.

2. 2 ч. ст. 48 Конституции РА (принятой 5 июля 1995г.) и статьи 43 действующей Конституции РА (с изменениями от 27.11.2005) дают исчерпывающее определение тех основ, согласно которым могут ограничиваться основные права и свободы человека, в то время как закон определяет новые, более широкие основы для ограничения свободы собраний. Согласно ст. 13 закона, полномочный орган т.е. мэр в городе Ереван или глава администраций в регионах, обсуждающий осведомление о проведении массовых публичных мероприятий, может запретить их проведение:

- "- если одновременно в том же самом месте предусмотренно провести иное мероприятие, которое исключает проведение первого". Оценивание возможности проведения мероприятий одновременно оставляется на усмотрение полномочного органа, не разъясняя понятия "исключать";
- "- существуют достоверные данные, что проведение мероприятия представляет собой реальную угрозу для жизни и здоровья других лиц". В положении не даны разъяснения понятия "достоверные данные" или "степень угрозы", что противоречит международным стандартам, согласно которым не приемлемо принимать предположения за основу. А причинение неудобств другим не может комментироватся как ситуация, в которой демонстрация перестает быть мирной;
- "- на территории культурных и спортивных комплексов, государственных особых наиважнейших объектах (каковыми считаются Резиденция Президента, "Атомная Эллектростанция Армении", и т.д.) и от них на таком расстоянии, которую полиция счетает необходимым для обеспечения безопасности...". Подобное положение создает огромную возможность для произвола со стороны полиции, так как именно на их усмотрении оставлено принятие решения об расстоянии между объектом и местом собрания. Представим ситуацию, когда демонстранты организовывая собрание перед Резиденцией Президента с целю предать огласку какому либо вопросу, а полиция требует, чтобы собрание проводилось на расстоянии 500 метров от Резиденции. В этой ситуации проведения демонстрации теряет свой смысол и публичную значимость;
- "- на территории культурных и спортивных комплексов, в случаях проведения там иных мероприятий". Непонятно то, как орган, который рассматривает осведомление, заранее может знать "об ином мероприятии", поскольку для проведения культурных или спортивных мероприятий не требуется осведомление властей. Из подобного положения следует, что культурные или спортивные мероприятия считаются важнее, чем конституционно закрепленная свобода собрания;
- "- из-за проведения собрания нарушается транспортное движение данного населенного пункта или межгосударственной трассы". Из международной практики следует, что если при проведении собрания нарушается транспортное движение данного населенного пункта или межгосударственной трассы, то это обстоятельство не может послужить основанием для запрета или прекращения проведения собрания. Прямой обязанностью полиции является разрешение данной проблемы всеми возможными методами. Стандарты оценивания нарушения движения, закрепленные в этом положении, со стороны ОБСЕ считаются "весьма смутными", а механизмы для принудительного прекращения собраний рассматриваются как "неясные"[12].

Несмотря на то, что во многих положениях данного закона употреблен термин "осведомление", а не "разрешение", тем не менее практика показывает, что это не что иное, как получение разрешения, поскольку для организации и проведения публичного мероприятия необходимо подавать письменное заявление, которое может быть отклонено.

В декабре 2004г. в "Уголовном Кодексе" и в "Кодексе об Административных Нарушениях" РА были

внесены поправки. В результате чего такие действия как "организация и проведение незаконного публичного мероприятия или другого рода публичного мероприятия" или "призывание не подчиняться требованиям решения о прекращении незаконного публичного мероприятия" были включены в "Уголовный Кодекс"[13] РА. А статья, предусматривающая административную ответственность в случаях, если "в предусмотренные сроки не выполняется требование о решении прекратить публичное мероприятие в случаях, предусмотренных законом РА "О проведении собраний, демонстраций, шествий и митингов" была внесена в "Кодекс об Административных Нарушениях"[14] РА. Отмечу, что ни в уголовном, ни в административном кодексах или в других иных нормативных актах Армении не дано понятие "незаконного публичного мероприятия". Эти нормы также подверглись критике со стороны ОБСЕ и Венецианской Коммисии Совета Европы.

Международные Стандарты в области Свободы Собрания

В отличие от Международного Пакта о Гражданских и Политических Правах от 1966г., закрепляющего свободу собрания и объединений в Европейской Конвенции, эти две свободы закреплены в одной статье, что обусловленно взаимосвязанностью этих двух свобод. Свобода объединения не может существовать без свободы собрания, поскольку трудно представить существование какого-либо объединения без встреч и собраний. Свободы собрания и объединений тесно связаны со свободой выражения, совести и религии. Эта связь в первую очередь выражается в том, что свобода собрания и объединений являются средством для эффективной реализации свободы выражения, совести и религии. Свобода собрания гарантирует коллективную реализацию свободы выражения, средством собрания людей, которая формулируется для обмена или выражения идей или защиты неких интересов.

О тесной связи между свободой собрания и объединений и свободы выражения свидетельствуют также прецеденты Европейского Суда. Как правило, обращаясь в Европейский Суд и оспаривая нарушения статьи 11 относительно нарушении свободы собрания и объединений, одновременно заявитель также оспаривает свободу выражения, гарантированной ст. 10 Европейской Конвенции[15]. Это объясняется тем, что "одной из целей свободы мирных собраний и объединений, гарантированной ст. 11, является обеспечение защиты свободы выражения мнения, закрепленного ст. 10 Европейской Конвенции". Среди судебных прецедентов Европейского Суда сравнительно меньшее количество составляют дела относительно нарушения свободы мирных собраний, что объясняется тем, что данная свобода может быть поглощена другими свободами, в частности свободой объединения или свободой выражения.

Понятие "собрания" не дано в ст. 11 Европейской Конвенции, а Европейский Суд не имел повода в связи с рассмотрением какого-либо конкретного дела истолковать содержание данного понятия. Некая трактовка "собранию" дана в отчете Коммитета по Правам Человека ООН по делу Кивенмаан против Финляндии[16]. Согласно этой трактовке "вне сомнения, что специальная защита предоставляется не всем собраниям: защита свободы собрания предоставляется только для намеренных и временных собраний". В определении понятия "собрания" наиважнейшим элементом является общее намерение и цель, объединяющая лиц, собравшихся в одном месте".

Несмотря на то что, свобода собрания еще не заняла свое подобающее место в прецедентном праве Европейского Суда, тем не менее Суд, в нескольких своих имеющих прецедентное значение решениях, установил ряд важнейших принципов, связанных со свободой собрания, в том числе принцип позитивного обязательства государства для обеспечения эффективной реализации свободы собрания. Этот принцип Европейский Суд сформулировал в решении дела ассоциация "Платформа: Врачи за жизнь" против Австрии[17]. Согласно трактовке Австрийского правительства свобода собраний сводится только к обязанности государства не вмешиваться в осуществление свободы собрания: статья 11 просто защищает личности от вмешательства государства. Европейский Суд, отвергнув подобное узкое трактование свободы собрания со стороны правительства ответчика, развил принцип позитивного обязательства государства для обеспечения эффективной реализации свободы собрания. Согласно Европейскому Суду, "...любая демонстрация может раздражать или оскорблять тех, кто выступает против идей или требований, в поддержку которых она проводится. Однако у участников демонстрации должна быть тем не менее возможность проводить ее без опасений подвергнуться физическому насилию со стороны своих противников; такие опасения могли бы воспрепятствовать ассоциациям и иным группам, разделяющим общие идеи или интересы, открыто выражать свое мнение по самым актуальным вопросам, затрагивающим общество". Суд, проанализировав все упомянутые факты, дал следующую имеющую прецедентное значение трактовку свободы собрания: "Обеспечение истинной, эффективной свободы проведения мирных собраний не может сводиться лишь к обязанности государства воздерживаться от вмешательства; чисто негативная концепция государства противоречит предмету и цели статьи 11. Подобно статье 8, статья 11 требует порой совершения позитивных действий, при необходимости даже в области отношений между физическими лицами".

В ряде государств для осуществления собраний используется система получения разрешения или предварительного осведомления. После изучения совместимости этой системы с требованиями ст. 11 Европейской Конвенции, я склонен согласиться с подходом прецедентного права Европейской Комиссии и Суда. Согласно правовой позиции Комиссии "...процедура получения разрешения для проведения публичного собрания само по себе соответствует осуществлению положения, закрепленного в пункте 1 ст. 11 Европейской Конвенции, если оно направлено только на то, чтобы власти имели возможность обеспечить мирный характер данного собрания". Из формулировки Комиссии вытекает, что процедура получения разрешения для проведения публичного собрания совместима со ст. 11 Европейской Конвенции только в том случае, если эта процедура осуществляется ради защиты и эффективной реализации свободы собрания, а не для создания препятствий в процессе осуществления этой свободы. Фактически, прецедентное право Европейского Суда считает совместимым со ст. 11 Европейской Конвенции только такую процедуру получения разрешения для проведения публичного собрания, которую государство в рамках своего собственного усмотрения использует как механизм для реализации своего позитивного обязательства обеспечивать свободу собрания.

Из позиции вышеупомянутого европейского прецедентного права относительно процедуры получения разрешения для проведения собрания можно

предположить, что организация и проведение собрания с нарушением установленного порядка или без разрешения не может привести к ответственности участников собрания, тем более к лишению свободы. Важно заметить, что законодательством многих постсоветских стран, в том числе и армянским законодательством предусмотрена административная ответственность в виде штрафа[18] и арест в уголовном законодательстве[19] для лиц, которые нарушили установленный порядок организации и проведения собраний или участвовали в несанкционированном митинге. Предусмотрение ареста за нарушение установленного порядка проведения собраний, а также существование такой системы административного разрешения осуществления собраний считается несовместимым с ст. 11 Европейской Конвенции и прецедентным правом Европейского Суда. То, что лишение свободы из-за участия в мирном собрании, проведенном с нарушением установленного порядка организации несовместимо с требованиями ст. 11 Европейской Конвенции, вытекает также из контекста решения Европейского Суда по делу Эзелин против Франции (судебное решение от 26 апреля 1991г.).

Свою похожую позицию о соотношении процедуры получения разрешения для проведения публичного собрания и свободы мирного собрания выразил также Комитет по Правам Человека ООН в отчете N0 412/1990 от 31.03.1994г. по делу Кивенмаан против Финляндии. Комитет считает, что требование осведомления, в принципе, совместимо с разрешенными ограничениями, предусмотренными в ст. 21 МПГПП, но подчеркнул, что требование осведомления должно служить только защите государственной или общественной безопасности, поддержанию общественного порядка, охраны здоровья и нравственности населения, а также защиты прав и свобод других лиц.

До настоящего времени из Армении в Европейский Суд отправлено множество дел относительно нарушений свободы собрания. Я надеюсь, что после принятия первых судебных решений против Армении относительно нарушения ст. 11 ЕКПЧ, наше правительство будет вынуждено пересмотреть как законодательство, так и практику в области свободы собрания.

---

[1] Заявление членов Хельсинского Комитета в Польше и членов Правления ХФПЧ относительно запрета Марша Равенства властями Познана. Варшава, Польша 25 ноября 2005 г.
[2] Решение мэра города Ереван N0 01/03-331h
[3] Документ Копенгагенского Совещания Конференции по Человеческому Измерению СБСЕ, 29.06.1990г.
[4] 1361 (2004) Резолюция ПАСЕ, 27 января 2004г. (документ 10027) и 1374 (2004) резолюция ПАСЕ 28 апреля 2004г. (документ 10163), Заявление спикера госдепартамента США Р. Баучера (апрель 2004), "Наблюдатель" 2003 N3-4, "Наблюдатель" 2004 N1-2.
[5] Всемирный Доклад Хьюман Райтс Вотч - 2006г.
[6] Решение Конституционного Суда Армении КСР 412, 16 апреля 2003г.
[7] Решение номер 51 Совета Председателей Судов Армении.
[8] Ведемости Верховного Совета СССР, 1998 N31 ст. 504
[9] 1374 (2004) Резолюция ПАСЕ 28 апреля 2004г. (документ 10163)
[10] Заключение о законе РА "О проведении собраний, демонстраций, шествий и митингов" ОБСЕ/БДИПЧ, 4 апреля, 2004г..
[11] Закон РА "О проведении собраний, демонстраций, шествей и митингов" от 27 апреля 2004г.
[12] См. ссылка 9.
[13] Ст. 225, 225.1 "Уголовный Кодекс" РА.
[14] Ст. 180.1 "Кодекс об Административных Нарушениях" РА
[15] Янг, Джеймс и Уебстер против Соединенного Королевства, судебное решение от 13 июля 1981г., Сингурпур А. Сингурджонссон против Ирландии, судебное решение от 30 июня 1993г., Эзелин против Франции, судебное решение от 26 апреля 1991г., Фогт против Германии, судебное решение от 26 сентября 1995г. и т.д.
[16] Отчет N0 412/1990 от 31.03.1994г. Коммитета по Правам Человека ООН по делу Кивенмаан против Финландии
[17] "Платформа Врачи За Жизнь" против Австрии, судебное решение от 21 июня 1988 г.
[18] Ст. 180.1 "Кодекс об Административных Нарушениях" РА (предусмотрен штрафа в размере от 50.000-100.000)
[19] Ст. 225.1 "Уголовный Кодекс" РА.

---

## ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԷԴՄՈՆ ՄԱՐՈՒՔՅԱՆ

*ՀՀ Պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ամբիոնի մագիստրանտ, «Երիտասարդական իրավապաշտպան շարժում» միջազգային ցանցի համակարգող խորհրդի անդամ*

Ամփոփում

Սույն հոդվածում վերլուծվում է հավաքների ազատությունը Հայաստանի Հանրապետությունում, որում անդրադարձ է կատարվում և օրենսդրությանը, և պրակտիկային, ինչը մինչև այսօր էլ խնդրահարույց հարց է համարվում Հայաստանի՝ Եվրոպայի խորհրդի առջև ստանձնած պարտավորությունների կատարման տեսանկյունից: Միաժամանակ համեմատություն է անցկացվում ներպետական օրենսդրության և երկար տարիների ընթացքում ձևավորված միջազգային չափանիշների, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից ձևավորված նախադեպային իրավունքի հետ:

## FREEDOM OF ASSEMBLY IN THE REPUBLIC OF ARMENIA

EDMON MARUKYAN

*State Academy of Public Administration of RA Chair of Law, ML Student, Member of Coordination Council, International Network - Youth Human Rights Movement*

Summary

This article presents an analysis of the freedom of assembly in the Republic of Armenia, with reflection of both, the legislation and the practice, an issue, which is still considered to be a disputable one from the standpoint of Armenia's implementation of its responsibilities taken before the Council of Europe. At the meantime, a comparison is carried out between the domestic legislation and the international standards developed throughout several years, as well as the case law established by European Court on Human Rights.

ՌՈՒԴԻԿ ՅԱՐԱԼՅԱՆ

# ԻՐԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Իրանի Իսլամական Հանրապետության Հիմնական օրենքի՝ Սահմանադրության հիմքում ընկած է պետության կառավարման իսլամական ձևը («վելայաթ-է ֆաղիհ»): «Մենք հանդիսանում ենք այն կրոնի հետևորդները, որի մեծագույն խորհուրդն է մարդկության փրկությունն այն բոլոր պայմանականություններից, որոնք շղթայում են ձեռքերն ու ոտքերը, միտքն ու բանականությունը[1]…»,- գրում է Իրանի իսլամական հեղափոխության առաջնորդ այաթոլլա Ռուհոլլա Մուսավի Խոմեյնին: Նման համամարդկային արժեք ներկայացնող գաղափարներ հաճախակի են հանդիպում իմամ Խոմեյնիի գաղափարախոսական հենքում: Դրանցով փորձ է արվում ուրվագծել «համաշխարհային իսլամական քաղաքակրթությունը», իսկ վատագույն դեպքում՝ երկխոսության մեջ տեսնել վերածնված իսլամական քաղաքակրթությունն արևմտյան (քրիստոնեական) քաղաքակրթության հետ (վերջին ձևակերպումը վերաբերում է ավելի ուշ շրջանի): Իսլամական գաղափարները մեծապես որոշում են ԻԻՀ արտաքին քաղաքականության ուղղվածութունը, որն իր ցայտուն դրսևորումն ստացել է նաև Հարավ-կովկասյան տարածաշրջանում:

Կրոնապետական Իրանի վերջին երկու տասնամյակների փորձը ցույց է տալիս, որ նրա քաղաքականությունը փոփոխական է և կառչած չէ կրոնական քարացած դոգմաներից: «Նախնական իսլամի մաքրությանը» վերադառնալ նշանակում է՝ վերականգնել հին իսլամական արժեքները, որոնք համահունչ են եղել երբեմնի իրանական քաղաքակրթությանը, բայց չեն կարող համահունչ լինել ներկա ժամանակների ոգուն: Հետևաբար՝ Իրանի իսլամական կառավարության (պահպանողականների) ձգտումները՝ վերադառնալու «նախնական իսլամի մաքրությանը», ոչ միշտ են արդարացված: Վերոհիշյալ միտքը հաստատվում է իմամ Խոմեյնիի «Վելայաթ-է ֆաղիհ» հայեցակարգի վերլուծությամբ. վերջինս ենթադրում է պետության կառավարման այնպիսի ձև, որը կհամապատասխանի «աստվածային օրենքներին» և կդրսևորվի Արդարադատ ֆաղիհի մեկնաբանմամբ[2], այսինքն՝ կրոնական դոգմաները, հարկ եղած դեպքում, կստորադասվեն երկրի քաղաքական պահանջներին կրոնական և քաղաքական առաջնորդի՝ «ռահբարի» նպատակահարմարությամբ:

ԻԻՀ գոյության առաջին տարիներին Իրանի արտաքին քաղաքականության մեջ առանցքային նշանակութուն ունեցող «իսլամական հեղափոխության արտահանման» հայեցակարգն աստիճանաբար կորցրեց իր ակտիվ շրջանառության որակները. հեղափոխական տրամադրություններով առաջնորդվող Իրանը սպառնալիք էր դարձել հարևան մուսուլմանական (արաբական) երկրների համար՝ որպես իսլամական հեղափոխության արտահանման հիմնական աղբյուր: Վերոհիշյալ պետությունների զգուշավորությունը ԻԻՀ հետ բարիդրացիական հարաբերությունների հաստատման համատեքստում հանգեցնում էր Իրանի մեկուսացմանը միջազգային ասպարեզում: Այս հանգամանքն ԱՄՆ («Մեծ սատանա») և ԽՍՀՄ («Փոքր սատանա») հետ մղվող գաղափարական պայքարի պայմաններում առավել ծանր սոցիալ-տնտեսական կացության մեջ գցեց Իրաք-իրանյան պատերազմում (1980-1988թթ.) զգալի կորուստներ ունեցած Իրանի Իսլամական Հանրապետությանը: Սկսած 1990-ական թթ. Իրանը լուրջ քայլերի դիմեց սեփական տնտեսության արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ՝ փորձելով օգտագործել ժամանակակից տնտեսական մոդելները: Ինչպես նախկինում, այնպես էլ այժմ այդ գործընթացին մեծապես խոչընդոտում է ԻԻՀ նկատմամբ ԱՄՆ կողմից գործադրվող տնտեսական պատժամիջոցների քաղաքականությունը, որի դրսևորումներից է Իրանի՝ Համաշխարհային առևտրական կազմակերպության անդամ չլինելը և այլն:

ԽՍՀՄ փլուզումից հետո Մեծ Մերձավոր Արևելքում ստեղծված նոր աշխարհաքաղաքական իրադրության պայմաններում Իրանն այլևս չէր կարող առաջնորդվել «ո՛չ արևմտյան, ո՛չ արևելյան, այլ՝ իսլամական» կարգախոսով. այն այլևս արդիական չէր: Շրջանառության մեջ դրվեց արտաքին աշխարհի հետ հարաբերվելու նոր տեսություն՝ «Քաղաքակրթությունների երկխոսության» գաղափարը, որը դրական գնահատվեց Արևմուտքում: Առաջադեմ երկրները փորձեցին համադրել սեփական աշխարհաքաղաքական ընկալումներն իսլամական կառավարման գաղափարախոսության հետ: Սակայն դա դեռ չէր նշանակում, որ Իրանը պատրաստ է հրաժարվել սեփական երկրի համար կենսական նշանակության սկզբունքներից, որոնք հակասում են Արևմուտքի (ԱՄՆ) աշխարհաքաղաքական ըմբռնումներին (մասնավորապես խոսքը վերաբերում է Իրանի միջուկային ծրագրերի շուրջ տարաձայնություններին): Աշխարհում համընդհանրացման (գլոբալացում) գործընթացներով պայմանավորված նոր արժեքային համակարգը որոշակի պահանջներ առաջադրեց Իրանին՝ որպես կարևոր ռազմավարական նշանակության երկիր, որը կարող էր ազդեցություն ունենալ տարածաշրջանային գործընթացների վրա: ԻԻՀ-ը պետք է ապացուցեր, որ իսլամական կառավարման գաղափարախոսությունը դեռևս չի սպառել իրեն, և նրան խորթ չէ քաղաքական դինամիզմը: «Քաղաքակրթությունների երկխոսության» տեսությունն ասպարեզ եկավ որպես այլընտրանքային տարբերակ իսլամական և արևմտյան քաղաքակրթությունների փոխհամաձայնության ճանապարհին:

Անդրադառնալով Հարավային Կովկասի տարածաշրջանին՝ հարկ է նշել, որ հենց այստեղ են դարեր շարունակ բախվել տարբեր երկրների շահեր: Վերոհիշյալ տարածաշրջանն արդի փուլում ևս պահպանում է իր ռազմավարական նշանակությունը զարգացած երկրների համար: Արդեն ավանդական դարձած Արևելք-Արևմուտք դիմակայությունը (ուղղված ազդեցության գոտիների ստեղծմանը) բոլորովին նոր որակ է ստանում մեկ միասնական սուբյեկտի (ԽՍՀՄ) տրոհմամբ և առանձին սուբյեկտների ձևավորմամբ: ԻԻՀ-ը, որ երբևէ չի հավակնել հանդես գալու որպես ակտիվ սուբյեկտ այս կամ այն կողմի շահերի դիրքերից, ԽՍՀՄ փլուզումից հետո տարածաշրջանային գործընթացներին առավել անկաշկանդ մասնակցություն ցուցաբերելով՝ հնարավորություն ստացավ աշխարհին ներկայանալ որպես առանձին և ինքնուրույն սուբյեկտ, որը, հարկ եղած դեպքում, կարող է հակադրվել ցանկացած ուժի: Այս տեսանկյունից՝ կարևորվում է ԻԻՀ դերակատարումը Հարավ-կովկասյան տարածաշրջանի զարգացման գործընթացներում:

Իրանն իր իսլամական պետական կառուցվածքով, աշխարհագրական դիրքով, ռազմական և տնտեսական ներուժով (հատկապես՝ նավթով) իր վրա է բևեռել քաղաքակիրթ աշխարհի ուշադրությունը: Երկիր, որը մասնակցելով տարածաշրջանային գործընթացներին, փորձում է մեղմել միջազգային ասպարեզում մեկուսացման ամերիկյան քաղաքականությունը: Արդյունքում՝ Իրանն աստիճանաբար ամրապնդում է աշխարհաքաղաքական դիրքերը Մեծ Մերձավոր Արևելքում, Ռուսաստանում և փորձում է բարելավել հարաբերություններն Արևմուտքի հետ: Դեռևս 1997թ. դեկտեմբերին Թեհրանում կայացած «Իսլամական կոնֆերանս» կազմակերպության անդամ

երկրների 8-րդ խորհրդաժողովում ԻԻՀ-ը կարգավորեց հարաբերությունները արաբական երկրների հետ[3]:

1997թ. ԻԻՀ նախագահ Մուհամմեդ Խաթամին հանդես եկավ ի պաշտպանություն բաց դիվանագիտական հարաբերությունների, կոչ արեց հարգել միջազգային օրենքներն ու մարդու իրավունքները, քննադատեց ահաբեկչության ցանկացած դրսևորում: Երկրի ներքին կյանքում իրականություն դարձավ քաղաքական կուսակցությունների ստեղծման խնդրի լուծումը: Կրոնապետական Իրանի քաղաքական դաշտում քանակային առավելությունն աշխարհիկ գործիչներին տալու միտում նկատվեց, որը, սակայն, այդպես էլ մնաց որպես միտում. նկատենք, որ 2003թ. մունիցիպալ ընտրություններով գրեթե ողջ իշխանական լծակները Թեհրանում վերցրին պահպանողականները, իսկ 2004թ. խորհրդարանական ընտրությունների արդյունքները նույնպես գոհացուցիչ չէին աշխարհիկ գործիչների համար: Սա ցույց է տալիս, որ Իրանը չի կորցնում իսլամական էությունը, իսկ ժամանակ առ ժամանակ նկատվող «միտումները» միայն որոշակի փուլում նպաստում են առաջադեմ երկրների բացասական տրամադրվածության նվազմանը ԻԻՀ հանդեպ, ինչը երբեմն անհրաժեշտ է լինում ԻԻՀ-ին: Իրանը պարզապես նորացնում է քաղաքական մոտեցումները որոշ հարցերի նկատմամբ՝ առանց արմատական փոփոխությունների:

Հարավային Կովկասի տարածաշրջանում ԻԻՀ և ՌԴ շահերը թեպետ շատ կողմերով համընկնում են, և նրանք, ըստ էության, ռազմավարական դաշնակիցներ են, սակայն դժվար է կանխատեսել ուժերի հետագա հարաբերակցությունը. Միացյալ Նահանգները ձգտում է վերցնել նախաձեռնությունը տարածաշրջանում, որի պատճառներից մեկն էլ գիտակցումն է այն բանի, որ Իրանը XXI դարում կարող է դառնալ Մեծ Մերձավոր Արևելքի առաջատար երկիր: ԱՄՆ-ը, որպես սեփական ազդեցության ընդլայնման հաղթաթուղթ, գործադրում է հակառուսական և հակաիրանական քաղաքականություն տարածաշրջանում, որի դրսևորումներից է արևմտյան նավթային ընկերությունների գործունեությունը: Վերջիններս ամեն կերպ խուսափում են կասպյան էներգակիրները ՌԴ և ԻԻՀ տարածքներով դուրս բերել արտաքին շուկա, թեպետ դրանք տնտեսապես առավել շահավետ տարբերակներ են[4]: Թուրքմենստանից Աֆղանստանի և Պակիստանի տարածքներով դեպի Արաբական ծովի մերձափնյա շրջաններ գազի խողովակաշարի կառուցման ծրագրերը, հակաահաբեկչական գործողությունները Աֆղանստանում և Իրաքում, շարունակվող տնտեսական ճնշումները ԻԻՀ վրա, Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթային խողովակաշարի կառուցումը (շինարարությունը սկսվել է 2002թ. սեպտեմբերի 18-ին) ամերիկյան ռազմավարական գերակայության հասնելու հեռանկարի բաղկացուցիչ մասն են կազմում: Խողովակաշարերի կառուցումը նաև խնդիր է առաջադրում ապահովելու դրանց անվտանգությունը, որն էլ հանգեցնում է ԱՄՆ ռազմական ներկայությանը տվյալ տարածաշրջանում:

Հարավային Կովկասը հանդիսանում է էթնիկ բախումների անհանգիստ գոտի: Այդ բախումներին միջամտելով՝ հեռավոր և տարածաշրջանային երկրները փորձում են առավելագույնս ազդել դրանց կարգավորման հարցում, քանի որ այդպիսով հնարավորություն է ընձեռնվում մասնակից դառնալու տարածաշրջանային գործընթացներին: Եթե Վրաստանում Թուրքիայի դիրքերն առավել ամուր են, իսկ Իրանի դերն առավել աննշան է վրաց-աբխազական հակամարտության հարցում, ապա հայ-ադրբեջանական հակամարտությունում Իրանն ունի էական դերակատարում: ԻԻՀ-ը խաղաղասիրական նպատակներ է հետապնդում Արցախի հիմնահարցում և պարբերաբար պատրաստակամություն է հայտնում հանդես գալու միջնորդի կարգավիճակով: Չնայած այն հանգամանքին, որ ԻԻՀ պաշտոնական քարոզչությունը մշտապես այն նպատակն է հետապնդում, որ միայն կրոնն է ի վիճակի երաշխավորելու մարդու և հասարակության առողջ բարոյական ոգին, նրանց բարոյա-քաղաքական միասնությունը[5], որի արդյունքում արտաքին աշխարհի հետ հարաբերություններում ԻԻՀ-ը նախապատվությունը տալիս է մուսուլմանական երկրներին, առավել ևս՝ Ադրբեջանին, որը, ինչպես և Իրանը, դավանում է իսլամի շիա ուղղությունը, այնուամենայնիվ, իրատեսական չեն այն կարծիքները, թե Իրանը կարող է տուրք տալ կրոնական զգացմունքներին՝ արհամարհելով մի երկրի շահեր (տվյալ դեպքում՝ Հայաստանի), որը կարող է կապող օղակ հանդիսանալ Իրանի՝ դաշնակից պետությունների հետ լայնամասշտաբ ծրագրերի իրականացման ոլորտում:

Իրանի հյուսիսային նահանգներում բնակվում են ավելի քան 15 մլն ազերիներ, այն դեպքում, երբ բուն Ադրբեջանի բնակչությունը 6 մլն է: Այս փաստն առավել զգուշավոր է դարձնում Իրանին Ադրբեջանի հանրապետությանն առնչվող խնդիրներում, քանի որ վերջինս հարկ եղած դեպքում կփորձի անջատողական տրամադրություններ տարածել իրանական Ադրբեջանում (հիարկե, Արևմուտքի օժանդակությամբ): Չպետք է մոռանալ նաև նավթի գործոնը. Ադրբեջանն իր նավթային պաշարներով առավել գրավիչ է Իրանի համար, քան Հարավ-կովկասյան որևէ այլ պետություն: Այստեղ արդեն ակնհայտ է Ադրբեջանի առավելությունը ՀՀ նկատմամբ: Սակայն ԻԻՀ-ն այս հարցում ունի լուրջ դժվարություններ. երկիր, որն ի վիճակի չէ լիարժեք տնօրինելու սեփական նավթը, պարզ է, որ խնդիրներ կունենա նաև հարևան երկրների էներգակիրների բաշխման հարցում օտարերկրյա ընկերությունների հետ մրցապայքարի պայմաններում:

2001թ. մարտի 11-14 ԻԻՀ նախագահ Մ. Խաթամիի՝ Մոսկվա կատարած այցի շրջանակներում տարածաշրջանային անվտանգության և երկկողմ համագործակցության խնդիրների քննարկման հետ մեկտեղ, երկու երկրներն իրենց դժգոհությունն արտահայտեցին Կասպից ծովի հատակով նավթատար և գազատար խողովակաշարերի կառուցման առնչությամբ՝ դրանք համարելով վտանգավոր բնապահպանության համար[6]: Փաստորեն, Ռուսաստանը և Իրանը պատրաստակամություն դրսևորեցին հակազդելու Արևմուտքի տարածաշրջանային ծրագրերին (առաջին հերթին՝ Թուրքմենստան-Կասպից ծով-Ադրբեջան-Թուրքիա անդրկասպյան գազատարի և Ադրբեջան-Վրաստան-Թուրքիա նավթատարի): Բնական է, որ Ադրբեջանի և Վրաստանի արևմտյան կողմնորոշում ունեցող կառավարությունները չեն նպաստի ԻԻՀ այստեսակ քաղաքականությանը Հարավային Կովկասում, ուստի ԻԻՀ-ին անհրաժեշտ է առավել հուսալի գործընկեր տարածաշրջանում, որը հեռու է կասպյան էներգակիրների յուրացման և փոխադրման շուրջ մղվող պայքարից, և որն իր համեստ նյութական միջոցներով առանձնահատուկ տեղ է զբաղեցնում զարգացած երկրների հետաքրքրությունների ոլորտում: Այդպիսին է Հայաստանը:

Այսպիսով՝ Իրանի Իսլամական Հանրապետությունն ունի ծանրակշիռ պատճառներ ՀՀ հետ բարիդրացիական հարաբերությունների հաստատման համար, որքան էլ դա դժկամությամբ ընդունվի որոշ պետությունների կողմից: Իրան-Հայաստան բարիդրացիական հարաբերությունների ապացույց է 2004թ. սեպտեմբերին ԻԻՀ նախագահ Մ. Խաթամիի առաջին այցը Երևան, որի ընթացքում քննարկվեցին երկու երկրների հետագա համագործակցության մի շարք ծրագրեր:

2004թ. մայիսին Իրանի և Հայաստանի միջև պայմանագիր ստորագրվեց Իրան-Հայաստան գազամուղի անցկացման վերաբերյալ: Համաձայն պայմանագրի՝ գազամուղը շահագործման կհանձնվի 2007թ. հունվարի 1-ին: Այս 200-250 մլն $ արժողությամբ ծրագրով քսան տարվա ընթացքում Իրանից Հայաստան կներմուծվի 36 մլրդ $м^3$ գազ: Ծրագրի կապալառուն հանդիսանում է իրանական «Սանիր» ընկերությունը: Իսկ հայկական տարածքում շինարարական աշխատանքները իրականացնում է «Հայռուսգազարդը»: Հայաստանը վերոհիշյալ ծրագրով օրական 1,5 մլն $м^3$ գազ կստանա: Յուրաքանչյուր $м^3$ գազի դիմաց ՀՀ-ը պետք է 3 կվտ/ժ էլեկտ-

ռաէներգիա մատակարարի ԻԻՀ-ին: Ինչպես նշել է «Գազարդի» վարչության փոխտնօրեն Ալեքսանդր Ռյազանովը, «դա ծանր ծրագիր է Հայաստանի համար», սակայն ոչ անիրագործելի. «Ողջ իրանական գազը կվերածվի էլեկտրաէներգիայի, իսկ Հայաստանի կարիքները կբավարարի հյուսիսից Վրաստանից եկող գազամուղը», -նշել է փոխտնօրենը: Ինչևէ, դա նշանակում է, որ ՌԴ-ը պատրաստ չէ իր մենատիրական արտոնությունը զիջել երկրորդ պետության: Հարավային Կովկասում ուժերի հետագա դասավորության անորոշության կռվաններից մեկն էլ հանդիսանում են նման երևույթները, երբ դաշնակից պետություններն արագորեն վերածվում են մրցակիցների:

Սկսած 1991թ.՝ Իրանի արտաքին քաղաքականության հայեցակարգում «մերձավորարևելյան» ուղղության հետ առաջ քաշվեց նաև «հարավ-կովկասյան» ուղղությունը: Վերջինիս շրջանակներում առանձնահատուկ կարևորություն տրվեց ԻԻՀ հարաբերություններին Վրաստանի հետ: Չնայած այն հանգամանքին, որ Իրան-Վրաստան համագործակցության իրատեսական հեռանկարային ոլորտը վրացական կողմը համարել է տրանսպորտային փոխադրումների կազմակերպման հարցը, որի մասին 1998-1999թթ. պաշտոնապես հայտարարել է Վրաստանի նախագահ Է. Շևարդնաձեն[7], այդուհանդերձ Իրանը ձգտում է ընդլայնել համագործակցության շրջանակները նաև Վրաստանի նոր իշխանությունների հետ: Եթե նախկինում Վրաստանը շահագրգռված էր ռուս-իրանական «հարավ-հյուսիս» տրանսպորտային միջանցքի ստեղծմամբ, որը ՏՐԱՍԵԿԱ-ի հետ մեկտեղ Վրաստանը կդարձներ առաջնային կարևորության երկիր, ապա ներկայումս Վրաստանի արտաքին քաղաքական հայեցակարգում Իրանն ընդհանրապես դուրս է մղված տարածաշրջանային գործընթացներից:

Նախկինում ԻԻՀ-ը հատուկ վերաբերմունք էր ցուցաբերում Աջարիայի Գերագույն խորհրդի նախագահ Ասլան Աբաշիձեի նկատմամբ և Է. Շևարդնաձեից հետո նրան դիտում էր Վրաստանի նախագահական աթոռը զբաղեցնող ամենաիրական թեկնածու: Սակայն Վրաստանում ազդեցություն հաստատելու արևմտյան (ամերիկյան) տարբերակը շատ ավելի կենսունակ գտնվեց, քան այլընտրանքային մյուս տարբերակները: Հատկանշական է, որ Աջարիայում իր համար որոշակի բարենպաստ հիմքեր ստեղծելու իրանական փորձերին ընդդիմացավ նաև Ռուսաստանը, որովհետև Հարավային Կովկասում ազդեցության գոտիներ ձեռք բերելու հարցում Իրանն, այնուամենայնիվ, մնում է նրա հիմնական մրցակիցներից մեկը:

Իրանի նախագահ Հ. Ռաֆսանջանին իր իշխանության տարիներին երկու պաշտոնական այց կատարեց Թբիլիսի, որը վկայում է Վրաստանի հանդեպ Իրանի առանձնահատուկ ուշադրության մասին: 1997-2003թթ. ԻԻՀ-ը բազմիցս շահագրգռվածություն ցուցաբերեց աբխազական երկաթգծի բացման առնչությամբ: 2004թ. փետրվարին Ռուսաստանում Իրանի դեսպան Շաֆեին հայտարարեց, թե Արցախի հարցի կարգավորումը և Հայաստանի ու Ադրբեջանի տարածքներով անցնող երկաթգծի վերաբացումը կարևորագույն պայման են տարածաշրջանի զարգացման համար: Պարզ է, որ վերոհիշյալ խնդիրների լուծումը բարդանում է աշխարհաքաղաքական և տարածաշրջանային գործոններից ելնելով, որոնց ընթացքը կախված չէ Իրանի Իսլամական Հանրապետությունից:

2003թ. վերջին տեղի ունեցած «վարդերի հեղափոխությունն» անակնկալ չէր Իրանի ղեկավարության համար: Թեհրանն առանց արմատական հայտարարությունների դիմավորեց Վրաստանում կատարված հեղաշրջումը, թեպետ Իրանում լուրջ անհանգստություն կար տեղի ունեցած դեպքերի կապակցությամբ: Ամենևին պատահական չէր այդ անհանգստությունը, որովհետև արևմտյան (ամերիկամետ) կողմնորոշում ունեցող Վրաստանի իշխանությունները (Մ. Սահակաշվիլիի գլխավորությամբ) այսօր էլ իրանական գործոնի հետ հաշվի են նստում միայն այն դեպքում, երբ այլևս հնարավոր չի լինում շրջանցել այն:

Վրաստանը շահագրգռված է կասպյան նավթի փոխադրման ուղիների հարցում: Եթե նավթի խողովակաշարերն անցնեն Վրաստանի տարածքով, դրանից նա զգալի եկամուտներ ձեռք կբերի, որն անչափ կարևոր է ֆինանսա-տնտեսական դժվարությունների մեջ գտնվող Վրաստանի համար: Չպետք է անտեսել նաև հարցի քաղաքական կողմը. սեփական երկրում Արևմուտքի քաղաքականությունը սատարող Թբիլիսին Բաքվին, Անկարային և կասպյան ածխաջրածնային պաշարների բաշխման մեջ ներգրավված արևմտյան երկրներին բառացիորեն պարտադրում է իր ծառայությունները՝ որպես նավթի փոխադրման անվտանգության երաշխիք:

Խոսելով իրանա-ադրբեջանական հարաբերությունների մասին՝ չենք կարող անտեսել երկու երկրների միջև առկա խնդիրներն ու տարաձայնությունները, որոնց ակունքները երբեմն խորն են: Իրանը դատապարտված է զգուշանալ իրանական Ադրբեջան նահանգի ազերիների շրջանում անջատողական տրամադրությունների տարածումից: Հիշեցնենք, որ 1918թ. մայիսի 27-ին Թուրքիայի ջանքերով ադրբեջանցիների (պայմանականորեն ասված) պետությունն անվանակոչվեց «Ադրբեջան», որը համաթուրքականության երազանքի իրականացման նպատակ էր հետապնդում, իսկ նախևառաջ՝ Իրանի Ադրբեջան նահանգին տիրելու ձգտում՝ համանվան պատրվակով:

Իրանական Ադրբեջանի խնդիրը հատկապես սուր բնույթ ընդունեց 1992-1993թթ., երբ Ադրբեջանում նախագահում էր Ա. Էլչիբեյը: Այս ժամանակ էր, որ պետական մասշտաբով երկրում քարոզչություն էր տարվում «Մեծ Ադրբեջանի» ստեղծման ուղղությամբ: Սակայն պետք է նկատել, որ Իրանի Իսլամական Հանրապետությունը, ներգրավելով իրանական ադրբեջանցիներին (ազերիներ) երկրի քաղաքական, մշակութային և հոգևոր կյանքում, զրկել է նրանց ազգային (ադրբեջանական) ինքնագիտակցությունից՝ ավելի շատ կապելով այն իրանական պետության հետ: Դա առավելություն է Իրանի համար, որին փորձում է ընդդիմանալ Ադրբեջանը: Այդուհանդերձ, ԻԻՀ-ը քաջ գիտակցում է Արևմուտքի կողմից օժանդակություն ստացող Ադրբեջանի նկրտումները և դրանից բխող հետևանքները:

Նման պայմաններում Իրանը Հարավային Կովկասում իր չափավոր քաղաքականությամբ գերադասում է ջերմ հարաբերություններ հաստատել ՀՀ հետ, ավելին՝ հայ-ադրբեջանական հակամարտության պատճառ հանդիսացող Արցախի հիմնահարցում Իրանը չի դիմել այնպիսի քայլերի, որոնք կոտնահարեին Հայաստանի և հայ ժողովրդի շահերը: Միանգամայն կանխատեսելի է, որ արևմտյան կողմնորոշում ունեցող Ադրբեջանի առավելությունը վերոհիշյալ հակամարտությունում կարող է հանգեցնել Թուրքիայի և Ադրբեջանի միջև անմիջական կապի ստեղծմանը՝ բարձրացնելով անջատողական տրամադրությունների առաջացման հավանականությունն Իրանի Ադրբեջան նահանգում: (Ուշագրավ է այն փաստը, որ 1999թ. Իրանի դեսպանատունը Երևանում առաջին անգամ ԼՂՀ ղեկավարությանը հրավիրեց պաշտոնական ընդունելության իսլամական հեղափոխության 20-րդ տարելիցի կապակցությամբ):

Մերձկասպյան հինգ երկրների (Ռուսաստան, Ղազախստան, Ադրբեջան, Թուրքմենստան, Իրան) առջև ծառացած Կասպից ծովի իրավական կարգավիճակի խնդիրը խորացնում է տարաձայնություններն Իրանի և Ադրբեջանի միջև: Խնդրի լուծման առաջարկված տարբերակներից Ադրբեջանը կողմ է «Սահմանային լճին», ըստ որի՝ Կասպիցը կբաժանվի հինգ մերձափնյա երկրների միջև կենտրոնագծով, որը սկիզբ կառնի ցամաքային սահմանից: Յուրաքանչյուր պետություն իր սեկտորում ձեռք կբերի բնական ռեսուրսների, ջրային մակերևույթի և ընդերքի շահագործման բացառիկ իրավունք: Այս տարբերակն անընդունելի է Իրանի համար, որի սահմաններն ամենակարճն են Կասպից ծովում, հետևաբար, նրան բաժին կհասնի միայն ջրային շերտը՝ առանց ածխաջրածնային պաշարների: Ի սկզբանե ԻԻՀ-ը կողմ էր «կոնդոմի-

նիումին», այսինքն՝ ծովի համատեղ օգտագործմանը բոլոր հինգ մերձկասպյան երկրների կողմից: Իսկ հետագայում շրջանառության մեջ դրվեց Իրանի պահեստային տարբերակը. առաջարկվեց բաժանել Կասպիցը մերձափնյա երկրների միջև՝ յուրաքանչյուրին 20% մասնաբաժնով: Կասպյան հարցի շուրջ Իրանի և Ադրբեջանի հարաբերությունները որոշակիորեն սրվեցին 2001թ. հուլիսին, երբ իրանական ռազմածովային ուժերի ռազմանավը ստիպեց ադրբեջանական գիտահետազոտական նավին լքել Հարավային Կասպիցի Ալով, Արազ, Շարղ նավթօջախները: Դա Իրանի համապատասխան արձագանքն էր Ադրբեջանի տարածքում ամերիկյան ռազմակայաններ տեղակայելու վերաբերյալ ադրբեջանա-ամերիկյան համաձայնության:

Բաքուն ոչ միայն նավթային պայքարում խաղից դուրս թողեց ոչ արևմտյան նավթային ընկերություններին, այլև 1999թ. հունվարից շրջանառության մեջ դրեց Թեհրանի և Մոսկվայի վրա ճնշում գործադրելու առավել հզոր հաղթաթուղթ՝ Ադրբեջանում ԱՄՆ և Հյուսիս-ատլանտյան դաշինքի ռազմակայաններ տեղակայելու խնդիրը, որը վերջնականապես կապահովեր Միացյալ Նահանգների և նրա դաշնակիցների ներկայությունը երկրում:

2001թ. Ադրբեջանը, խուսափելով Իրանի հետ հարաբերությունների հետագա բարդացումից, փորձեց կարգավորել երկու երկրների միջև հարաբերությունները: 2002թ. ապրիլին Իրանում Ադրբեջանի դեսպան Ա. Հասանովը հանգամանորեն ներկայացրեց իրանա-ադրբեջանական հարաբերություններին վերաբերող մի շարք հիմնախնդիրներ՝ նշելով, որ իրանա-ադրբեջանական համագործակցության զարգացման համար մեծ հիմնահարց է Իրանի՝ Հայաստանի հետ համագործակցության մակարդակը[8]: 2002թ. մայիսին Հ. Ալիևը ժամանեց Թեհրան, հանդիպում ունեցավ մի շարք պաշտոնյաների, այդ թվում՝ Իրանի նախագահ Մ. Խաթամիի և հոգևոր առաջնորդ Ա. Խամենեի հետ: Թեպետ այցն ընդհանուր առմամբ անցավ դրական մթնոլորտում, սակայն լարվածություն, այնուամենայնիվ, նկատելի էր երկու երկրների ղեկավարների քննարկումներում:

Շիիզմ դավանող եղբայր պետություններն ունեն լուրջ տարաձայնություններ, և նման պայմաններում դժվար է ակնկալել դրական կտրուկ շրջադարձ նրանց հարաբերություններում, և Հ. Ալիևի այցն Իրան այդ տեսանկյունից բացառություն չէր:

Ադրբեջանում և Վրաստանում ամերիկյան ռազմակայաններ (մոբիլ խմբեր) տեղակայելու խնդիրն այսօր ևս արդիական է: Եթե հարևան երկրներում իրականություն դառնան վերոհիշյալ ծրագրերը, որին ձգտում են տեղի իշխանությունները, ապա դա Հարավ-կովկասյան տարածաշրջանում կարող է հանգեցնել ուժերի հավասարակշռության ակնհայտ խախտման: Նման պայմաններում, երբ աշխարհի տարբեր շրջաններում փոխվել է ուժերի հարաբերակցությունը, ՌԴ և նրա դաշնակիցների համար առանձնահատուկ ռազմավարական նշանակություն ունեցող Հարավային Կովկասի կորուստը կարող է ծանր հետևանքներ ունենալ նրանց համար: Դրանով իսկ վտանգավոր նախադրյալներ կստեղծվեն տարածաշրջանային քաղաքական, էթնիկական և այլ բնույթի խնդիրները մեկ տերության մենաշնորհի դառնալու տեսանկյունից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


[1] Последнее послание. Политико-религиозное завещание великого вождя Исламской революции и основоположника Исламской Республики Иран его светлости аятоллы-озма имама Хомейны, стр. 52, Иран-Тегеран 1997.
[2] Ислам и политика, Москва 2001.
[3] *Н. А. Нартов,* Геополитика, Москва 2002.
[4] Իրանա-ադրբեջանական փոխհարաբերությունների հարցի շուրջ, *Է. Բեգիջանյան,* Երևան 2001:
[5] Իրանն այսօր, *Վ. Բայբուրդյան,* Երևան 1999.
[6] Геополитика Каспийского региона, Москва 2003.
[7] Հանրապետական, թիվ 3, 2004, վրաց-իրանական հարաբերությունների շուրջ, *Սևակ Սարուխանյան:*
[8] Հանրապետական, թիվ 4, 2004, Իրան-Ադրբեջան հարաբերությունների շուրջ, *Սևակ Սարուխանյան:*


## THE POLICY OF IRAN IN THE SOUTHERN CAUCASUS

RUDIK YARALYAN


Summary

Southern Caucasus is not only a region where the interests of the advanced countries collide which can not conduct independent policy refusing from own principles but it’s a region which pursues certain purposes having the certain rate of policy of separate states. As far as will be real those vital principles of self-preservation and development of the above mentioned region greatly depends on politics of the advanced countries and the prospect of the Southern Caucasian countries to incorporate against the world challenges. But the above mentioned idea will not become truth probably. The situation doesn’t have certain conditions for integration of the Southern Caucasian countries yet, so the conception of the incorporation against the world global processes disappears. In such difficult geopolitical situation there is a necessity of trust in own forces.

The international incandescent atmosphere arisen around the Islamic Republic of Iran (in connection with the nuclear program of Iran) and the policy carried out towards Iran can essentially change the arrangement of forces in Southern Caucasus. The role of Southern Caucasus as a direct neighbour of Iran (Armenia, Azerbaijan) grows besides that Iran conducts active policy in Southern Caucasus to soften the policy of isolation by the United States on the international arena.

In the article we try to discuss some aspects of the Iranian politics in Southern Caucasus of the last years which gives a common view about an existing situation in the region.


## ПОЛИТИКА ИРАНА НА ЮЖНОМ КАВКАЗЕ

РУДИК ЯРАЛЯН


Резюме

Южный Кавказ - это не только регион, где сталкиваются интересы развитых стран, регион, который не в состоянии вести независимую политику, легко отказиваясь от собственных принципов, но и часть света, преследующая самостоятельные интересы и определенные политические цели, с точки зрения отдельных государств. На сколько в этих регионах окажутся реалистическими принципы самосохранения и развитие, зависит во многом от политики развитых стран и от перспективы согласованных действий трех кавказских республик против международного вызова. Хотя последнее маловероятно. Во всяком случае существующая ситуация не создает соответствующих условий для интеграции Южно Кавказских государств следовательно и исключается идея совместного вовлечения этих стран в процесс глобализации. В данной сложной геологической ситуации возникает необходимость упования на собственные силы.

Напряженная международная обстановка вокруг Исламской Республики Иран, связанная с ее ядерной программой, а также применяемое в отношении к ней политики, могут значительно повлиять на расстановку сил в Южном Кавказе. Повышается значение и посредственных соседей Ирана - (Армении и Азербайджана) тем более, что Иран своей активной политикой на Южном Кавказе старается смягчить американскую политику изоляции на международной арене. В статье сделана попытка отразить некоторые аспекты Иранской политики последних лет на Южном Кавказе, которая дает общую картину сложившейся ситуации в указанном регионе.

# 2005 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 18-Ի ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՊԱՌԼԱՄԵՆՏԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԴԱՎԻԹ ՄԱՆՈՒԿՅԱՆ

*ԵՊՀ*
*իրավաբանական ֆակուլտետի 4-դ կուրսի ուսանող*

2005թ. սեպտեմբերի 18-ին գերմանացիներն արտահերթ կարգով մասնակցեցին խորհրդարանական ընտրությունների, որոնք, ինչպես ցույց տվեցին իրադարձությունները, հետաքրքիր ելք ունեցան: Ընտրություններից առաջ և դրանց ժամանակ համարյա բոլոր գերմանացիները, մասնավորապես Գերմանիայի նախագահ Հորսթ Քյոհլերը, համոզված էին, որ Գերմանիան կանգնել է լուրջ պրոբլեմների առաջ, և բարեփոխումների կարիք է զգացվում: Քյոհլերը հեռուստատեսությամբ ելույթ ունենալիս նշել է, որ «թարմ» ընտրությունների կարիք կա, քանզի միլիոնավոր մարդիկ գործազուրկ են, նրանցից շատերն՝ արդեն մի քանի տարի, դաշնային և նահանգային բյուջեները, մեղմ ասած, բարվոք վիճակում չեն: Հետաքրքիր է նաև այն փաստը, որ պրոբլեմների շարքում նախագահը նաև առանձնացնում է ծնելիության ցածր մակարդակը և «ծերացող» հասարակության խնդիրը, որն այսօր պրոբլեմ է ողջ Եվրոպայի համար: Բայց վերը նշվածում մեզ համար հետաքրքրություն է ներկայացնում «թարմ ընտրություններ» արտահայտությունը: Ի՞նչ ենթատեքստ կա այս արտահայտության տակ: Արդյո՞ք այդկերպ նախագահն ի ցույց է դնում իր դժգոհությունը սոցիալ-դեմոկրատների քաղաքականությունից: Կարծում եմ, կարելի է ենթադրել, որ նախագահն այս ընտրությունների ժամանակ նախապատվություն է տալիս քրիստոնեա-դեմոկրատներին՝ Մերկելի գլխավորությամբ: Չնայած բազմաթիվ ԶԼՄ-ներ այն կարծիքն են հայտնում, որ գերմանական հասարակությունն ավելի հակված է այն մտքին, որ ո՛չ Մերկելի, ո՛չ էլ Շրյոդերի կառավարությունը չի կարողանա արդյունավետ կերպով պայքարել այս պրոբլեմների դեմ: Եվ եթե խոր մտածենք, հետագայում ընտրությունների արդյունքները (ՔԴՄ-ՔՍՄ դաշինք- 35.2 %, ՍԴԿ- 34.3%) ցույց են տալիս, որ գերմանացիները Գերմանիայի քաղաքական դաշտի երկու հզոր կուսակցություններից և ոչ մեկին լրջորեն չեն վստահում: Իհարկե, Գերմանիան պատկանում է այսպես կոչված «երկուսուկես» կուսակցական համակարգով երկրների թվին, և, ի տարբերություն երկկուսակցական համակարգ ունեցող երկրների (ԱՄՆ, Մեծ Բրիտանիա), այս երկրում, սովորաբար, երկու գլխավոր կուսակցություններից ոչ մեկը բացարձակ մեծամասնություն ձեռք չի բերում և կազմում է կոալիցիաներ «երրորդ» կուսակցությունների հետ (Ազատ դեմոկրատական կուսակցություն, Կանաչներ, Ձախեր և այլն): Սակայն այս դեպքում երկու կուսակցությունների ստացած քվեների միջև տարբերությունը չնչին է, և երկուսն էլ, դատելով նրանց ստացած քվեներից, մեծ վստահություն չեն վայելում հասարակության շրջանում: Փաստորեն, այս ընտրությունների արդյունքում քրիստոնեա-դեմոկրատներն ընդամենը երեք ավելի տեղ ունեն սոցիալ-դեմոկրատներից: Անդրադարձ կատարենք և նշենք, որ Գերմանիայի պառլամենտը բաղկացած է երկու պալատներից՝ Բունդեսրատ (վերին պալատ), որը համազգային ներկայացուցչական մարմին է: Բունդեսրատը բաղկացած է 68 տեղերից, այստեղ ներկայացված են դաշնության սուբյեկտները՝ լանդերը (դրանք 16-ն են): Լանդերի իշխանություններն իրենց կազմից նշանակում են ներկայացուցիչներ, յուրաքանչյուր լանդ ունի 3-6 ներկայացուցիչ: Բունդեստագն ունի 669 տեղ: 2002թ. սեպտեմբերի 22-ի ընտրությունների արդյունքներով Բունդեստագում ներկայացված էին հետևյալ կուսակցությունները.

ՍԴԿ (սոցիալ-դեմոկրատական կուսակցություն) - 298 տեղ

ՔԴՄ (Քրիստոնիա-դեմոկրատական միություն) - 198 տեղ

ՔՍՄ (Քրիստոնիա-սոցիալական միություն) - 47 տեղ

ԱԴԿ (Ազատ դեմոկրատական կուսակցություն) - 43 տեղ

Կանաչներ - 47 տեղ

ԴՍԿ (Դեմոկրատական սոցիալիզմի կուսակցություն) - 36 տեղ:

ՍԴԿ-ի գլխավորությամբ ձևավորվեց կառավարող կոալիցիա, որ ղեկավարում էր Գերհարդ Շրյոդերը: Կոալիցիայի կազմում էին՝ ՍԴԿ, Կանաչներ և ԴՍԿ՝ ապահովելով 381 տեղ Բունդեստագում:

Այսպիսով՝ Գերմանիան հանդիսանում է Եվրոմիության քաղաքականության ազդեցիկ դերակատարներից մեկը, և այստեղ ռեֆորմների անցկացումը հրամայական է ու օրակարգի կարևորագույն խնդիրներից մեկը, ուստի նոր ձևավորված իշխանությունների համար իշխանավարումը, մեղմ ասած, հեշտ չի լինի՝ հաշվի առնելով նաև հասարակության կողմից լուրջ վստահության բացակայությունը: Ողջ ընտրարշավի ժամանակ և դրանից էլ առաջ գերմանական ու արտասահմանյան մամուլը զերծ չէր մնում Գերմանիայում առկա զանազան, մասնավորապես տնտեսական խնդիրների շուրջ խոսելուց: Այդ խնդիրներից կարևորագույնը գործազրկության բարձր մակարդակն էր, և հենց վերջինս էլ դարձավ զանազան քաղաքական շահարկումների առարկա և այն առանցքը, որի շուրջ պիտի կառուցվեր ընտրարշավը: Իշխանության համար պայքարող քաղաքական ուժերից յուրաքանչյուրն առաջարկում էր անհրաժեշտ ռեֆորմների իր փաթեթը, որը պիտի ապահովեր համապատասխան ընտրազանգված:

Այսօր Գերմանիայում գործազուրկների թիվը հասնում է մոտ 5 միլիոնի, որը կազմում է բնակչության 12%-ը: Նշենք, որ գործազրկության նման մակարդակն ամենաբարձրն է Գերմանիայում 1994թ. ի վեր: Գործազրկության համարյա նման մակարդակ (մոտ 11.8%) գրանցվել է 1998թ.: Գործազրկության այս ծավալն իր բացասական ազդեցությունն է թողնում ոչ միայն շարքային գործազուրկ գերմանացու կենսամակարդակի, այլև երկրի ՀՆԱ-ի վրա: Քանի որ տնտեսությունն ի վիճակի չէ աշխատանքով ապահովել բոլոր նրանց, ովքեր ուզում են և կարող են աշխատել, ապա ապրանքների ու ծառայությունների պոտենցիալ արտադրությունն անվերադարձ կորչում է, ինչը հանգեցնում է ՀՆԱ-ի ծավալի կրճատման: Վերջինս նշանակում է, որ ՀՆԱ-ի փաստացի ծավալը պակաս է ՀՆԱ-ի պոտենցիալ ծավալից: Եվ որքան երկար է այս իրավիճակը պահպանվում, այնքան ավելի է վատանում տնտեսության վիճակը: Գործազուրկների 40%-ն աշխատանք չունի արդեն մեկ տարուց ավելի: Գործազրկության պատճառների շարքում հաճախ մատնանշվում է համապատասխան որակավորմամբ մասնագետների պակասը: Նույնն է հաստատում և «Saint-Gobain Ceramics» ընկերության անձնակազմի

ղեկավարը. «Ինչպես տեսնում եմ,աշխատանքի համար դիմողների որակն ավելի ու ավելի է վատանում»:

Ինչևէ, Բունդեստագում տեղերի մեծամասնությանը հավակնող երկու կուսակցություններից յուրաքանչյուրի նախընտրական պլատֆորմում երկրի տնտեսության ոչ բարվոք վիճակը, գործազրկության բարձր մակարդակն անկյունաքարային դեր ունեին: Բնական է, որ կուսակցություններից յուրաքանչյուրն առաջադրում է ռեֆորմների իր փաթեթը. բոլորն են գիտակցում ռեֆորմների անհրաժեշտությունը: Ստեղծված իրավիճակից դուրս գալու համար Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը, արդեն նախկին կանցլեր Շրյոդերն հանձն էին առել հետևյալ ռեֆորմները.

- փոքր ֆիրմաների, ընկերությունների համար ավելի հեշտացնել նոր աշխատակիցների աշխատանքի ընդունելն ու դրանից հեռացնելը,
- հարկերի առումով համակարգն ավելի արդյունավետ դարձնել փոքր ֆիրմաներ հիմնադրելու համար,
- ճնշում գործադրել շահույթ ստացող ընկերությունների վրա՝ բարձրացնելու աշխատավարձերը,
- գործազրկության համար տրվող և այլ սոցիալական հատկացումների կրճատում, և այս ամենն ուղղված է նրան, որ ստիպեն մարդկանց լքել այն, ինչ գերմանացիներն անվանում են «soziale Haengematte»՝ «բարեկեցիկ մահիճը»,
- երկար ժամանակ անաշխատանք մնացած մարդկանց առաջարկվում էին քիչ վճարվող, այսպես կոչված «մեկ եվրոանոց» աշխատանքներ հասարակական ոլորտում, որպեսզի նրանք նորից կանոնավոր աշխատանքին ընտելանան,
- խոստանում էին չբարձրացնել ավելացված արժեքի հարկը և չնվազեցնել հասարակական սեկտորի ծախսերը,
- աշխատանքի տեղավորման գործակալությունները վերակազմավորել ավելի տեղայնացված ծառայություն մատուցելու համար:

Վերը նշված ռեֆորմների արդյունավետության հարցում, սակայն, կուսակցության բոլոր անդամները միաձայն չէին, ավելին՝ նաև հակամարտում էին: Կուսակցության գլխավոր քարտուղար Օլաֆ Շոլցը լրագրողներին տված հարցազրույցում 2003թ. նշել էր, որ Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունն ընդունում է ռեֆորմների փաթեթը և աջակցում է կանցլերի քաղաքականությանը, իսկ այդ փաթեթը ստացել էր «2010-ի օրակարգ» անվանումը: Բարեփոխումների այս փաթեթը քննադատվում էր արհմիությունների և կուսակցության ձախ թևի կողմից: Խմբակցության ձախաթևյան անդամների ղեկավար Անդրեա Նահլեսը նշում էր, որ եթե կառավարությունը չհրաժարվի ռեֆորմներից, ապա հակամարտության առաջ կկանգնեն: Նման վերաբերմունքը կարելի է բացատրել: Իհարկե, արհմիությունները կընդդիմանան այնպիսի ռեֆորմների, որոնցով նախատեսվում է աշխատակիցներին աշխատանքի ընդունելու և ազատելու ավելի հեշտ ու պարզեցված կարգ, և բնական է, որ ձախերը կընդդիմանան այն ռեֆորմներին, որ նախատեսում են սոցիալական հատկացումների կրճատում: Իսկ կուսակցության աջ թևն էլ պնդում է, թե չափից դուրս առատաձեռն սոցիալական համակարգն է, որ նպաստել է տնտեսության անկմանն ու մարդկանց ծուլացմանը: Արհմիություններն էլ խոստանում էին 2003թ. մայիսի 1-ից բողոքի ցույցեր կազմակերպել և անցկացնել: Չնայած այս ամենին՝ Շրյոդերը շարունակում էր ռեֆորմների իրականացումը, որոնք, ըստ նրա, անհրաժեշտ էին Գերմանիան մրցունակ պահելու համար: Իսկ գործարարների ու արդյունաբերական ֆեդերացիաների ղեկավարները հավանություն էին տալիս ռեֆորմներին և պահանջում հարկերի հետագա կրճատում: Ահա այս ռեֆորմների պատճառով Գերմանիայի Սոցիալ-դեմոկրատական կուսակցության վարկանիշը շարունակ ընկնում էր, իսկ պահպանողական ճակատի վարկանիշն՝ աճում: 2004թ. մարտին ZDF հեռուստաընկերությունը, հիմնվելով ամեն շաբաթ անցկացվող «քաղաքական բարոմետր» հասարակական հարցման արդյունքների վրա, նշում էր, որ եթե ընտրությունները տեղի ունենային հենց այդ ժամանակ, ապա ՔԴՄ/ՔՍՄ ճակատը կհավաքեր ձայների մեծամասնությունը:

Քրիստոնեա-դեմոկրատներն էլ գերմանական հանրությանն առաջարկում էին ռեֆորմների իրենց փաթեթը.

- սոցիալական ապահովության համակարգի արդյունավետության բարձրացում,
- աշխատանքի ավելի ճկուն շուկայի ստեղծում,
- տնտեսության հետագա լիբերալիզացիա,
- անտառանյութի մթերման հարկային համակարգի պարզեցում,
- եկամտահարկի 12%-36% դրույքի հաստատում շերտավորված կերպով, ցածր եկամտի դեպքում՝ 12%-15%, միջինի դեպքում՝ 25%, բարձրի դեպքում՝ 35%-36%,
- հարկերից խուսափելու սողանցքների վերացում՝ կապված սեզոնային աշխատողների, ոչ աշխատանքային օրերին և գիշերն աշխատող մարդկանց եկամուտների բացահայտման հետ,
- խրախուսել գործատուներին աշխատանքի ընդունել տարեց մարդկանց՝ փոխարենը խոստանալով 50 և ավելի տարիք ունեցողների հանդեպ չկիրառել այն օրենքները, որոնք պաշտպանում են աշխատողներին աշխատանքից ազատվելուց:

Փորձենք համեմատության կարգով զուգահեռներ անցկացնել այս երկու կուսակցությունների առաջարկած բարեփոխումների միջև: Հետաքրքիր պատկեր է ստացվում. ՍԴԿ-ն, ելնելով իր գաղափարական հիմքից, պետք է որ ավելի հակված լիներ սոցիալական ապահովության համակարգի բարելավմանը, գործազուրկների սոցիալական պաշտպանվածության ապահովմանը, այնինչ այս կուսակցությունը կրճատում է գործազուրկներին տրվող սոցիալական հատկացումները: Բնական է, որ այս նախաձեռնությունը, մեղմ ասած, չէր ողջունվելու հասարակության լայն զանգվածների կողմից, չնայած պետք է նշել, որ սա էլ իր օբյեկտիվ հիմքերն ունի, քանզի հասարակությունն արդեն գնալով ընտելանում է չաշխատելուն, ինչը հանգեցնում է հասարակության որակական փոփոխությունների: Իհարկե, սոցիալական ապահովությունն ու պաշտպանվածությունը ժամանակակից զարգացած երկրների համար կարևոր և պարտադիր չափանիշ են, բայց երբ սոցիալական պաշտպանվածության ու սոցիալական չարաշահման միջև սահմանները վերանում են, հասարակության մի ստվար մասը կորցնում է իր աշխատունակությունը: Ի հեճուկս ՍԴԿ-ի՝ ՔԴՄ-ն շեշտը դնում է սոցիալական ապահովության, եկամտահարկի իջեցման և, բնական է, տնտեսության լիբերալիզացիայի վրա: ՍԴԿ-ն կրճատում է գործազուրկների սոցիալական հատկացումները՝ փոխարենը գործազուրկներին առաջարկելով թեպետ ցածր վճարվող, բայց աշխատանք հասարակական ոլորտում: ՔԴՄ-ն միջոցներ է առաջարկում տարեց մարդկանց ևս աշխատանքով ապահովելու համար, իսկ ՍԴԿ-ն պայմաններ է ստեղծում փոքր ֆիրմաների երևան գալու և կայացման համար՝ թեթևացնելով նրանց հարկային բեռը և հնարավորություն տալով հեշտությամբ աշխատանքի ընդունել և աշխատանքից ազատել աշխատակիցներին: Կարծում եմ, որ ՍԴԿ-ի այս քաղաքականության մեջ տրամաբանություն կա, քանզի սա կարող է արդյունավետ մեթոդ լինել գործազրկության հաղթահարման համար: Գերմանիան այսօր զարգացման այն մակարդակի վրա է, որ կան բազմաթիվ խոշոր ընկերու-

թյուններ, կորպորացիաներ, և նման պայմաններում եթե կա գործազրկություն, ապա լավագույն տարբերակը նոր, փոքր մասշտաբով ֆիրմաների ի հայտ գալու համար նպաստավոր պայմանների ստեղծումն է: Այդ կերպ կարելի է գոնե որոշ չափով կրճատել գործազրկությունը: Սակայն հասարակությունը չի ուզում այնպիսի ռեֆորմներ, որոնք երկարաժամկետ բնույթ ունեն, և որոնց հավանական արդյունքները կերևան համեմատաբար ավելի ուշ:

Նախքան ընտրությունները ՔԴՄ-ի վարկանիշը շատ ավելի բարձր էր, բայց ողջ աշխարհին ականատես եղավ, որ ընտրությունների ժամանակ ՔԴՄ-ն չհավաքեց այնքան քվե, որքան, ըստ մասնագետների, այն կհավաքեր, եթե ընտրությունները տեղի ունենային 2004թ.: Մասնավորապես, ըստ Mannheim Wahlen հասարակական հարցման ինստիտուտի, եթե ընտրությունները կայանային 2004թ. մարտին, ապա ՔԴՄ/ՔՍՄ դաշինքը կհավաքեր քվեների 49%-ը, ՍԴԿ-ի համար այդ նույն ժամանակ ռեալ էր համարվում 28%-ը, իսկ Կանաչների համար՝ 10%-ը: Այնինչ, ՔԴՄ/ՔՍՄ դաշինքն ընտրությունների արդյունքում ստացավ քվեների 35.2%-ը, այսինքն՝ նրանց վարկանիշը զգալիորեն նվազել էր: Այս իրավիճակն ինչ-որ չափով տրամաբանական է, քանի որ դժվար է պահել բարձր վարկանիշը մեկ տարի անընդմեջ, եթե այդ ընթացքում գոնե մի նորույթ չի հրամցվում հասարակությանը, հակառակ դեպքում՝ արդեն առաջարկած ռեֆորմների իներցիայի ուժն այնքան երկար չէր պահպանվի, որ վարկանիշը հետզհետե չնվազեր:

Ի վերջո, 2005թ. սեպտեմբերի 18-ին Գերմանիայում կայացան պառլամենտական ընտրություններ, որի արդյունքում երկու գլխավոր կուսակցություններից և ոչ մեկը բացարձակ մեծամասնություն ձեռք չբերեց: Ստեղծված իրավիճակը, լինելով շատ հետաքրքիր ու միաժամանակ բարդ, բազմաթիվ լրատվամիջոցների ու քաղաքագետների, քաղաքական վերլուծաբանների համար վերլուծություններ, կանխագուշակումներ կատարելու առիթ ստեղծեց: Գերմանիայի քաղաքական դաշտում սկսեցին խմորվել հետաքրքիր քաղաքական գործընթացներ, քանզի գործող քաղաքական ուժերը ձգտում էին շահեկան համաձայնության գալ և կազմել կառավարող կոալիցիա: Երկար բանակցություններից հետո ձևավորվեց այսպես կոչված «մեծ կոալիցիա», որում ընդգրկվեցին ՔԴՄ/ՔՍՄ դաշինքն ու ՍԴԿ-ն: Առաջին անգամ Գերմանիայում կանցլերի պաշտոնը ստանձնեց կին, այն էլ՝ Արևելյան Գերմանիայից: ՍԴԿ-ն ստացավ այնպիսի կարևոր նախարարական պորտֆելներ, ինչպիսիք են արտաքին գործերի ու արդարադատության նախարար-ներինը: Հիմա էլ մեզ՝ քաղաքագետներիս, հետաքրքրում է, թե արդյո՞ք մեծ կոալիցիան կաշխատի, քանի որ նրանում ընդգրկված են երկու՝ միմյանց հակադիր գաղափարախոսությամբ կուսակցություններ, ինչը ստիպում է շատերին թերահավատորեն նայել կոալիցիայի ապագային:

Համառոտ անդրադառնանք Անգելա Մերկել քաղաքական գործչին: Անգելա Մերկելը ծնվել է 1954թ. Համբուրգում, ապրել է Արևելյան Գերմանիայում՝ բողոքականների ընտանիքում: Երկու Գերմանիաների վերամիավորումից երկու ամիս առաջ նա միանում է ՔԴՄ-ին, 1990-ականների կեսերին զբաղեցրել է բնապահպանության նախարարի պաշտոնը: Նա քաղաքական արենայում հռչակ ձեռք բերեց 2000թ., երբ ՔԴՄ-ն մեծ սկանդալի մեջ էր ներգրավվել, կուսակցությանը մեղադրում էին կաշառքներ տալու մեջ, որից հետո նախկին կանցլեր Հելմութ Քոհլը ստիպված եղավ թողնել կուսակցության ղեկավարի պաշտոնը՝ փոխանցելով այն Անգելա Մերկելին, որին նա շատ է օժանդակել կարիերա անելու գործում, ինչն անգամ շատ լրատվամիջոցների տեղիք էր տալիս Մերկելին անվանել Քոհլի «protégé», բայց դա չխանգարեց Անգելա Մերկելին սկանդալի ժամանակ հրապարակայնորեն «հրաժարվել» Քոհլից: Փաստորեն, Անգելա Մերկելը շատ կարճ ժամանակամիջոցում քաղաքական գործչի կարիերա արեց՝ 2002-ին դառնալով կուսակցության թեկնածուն կանցլերի պաշտոնի համար: Քաղաքական առումով նա բավական ցենտրիստական դիրքորոշում ունի այնպիսի սոցիալական խնդիրների շուրջ, ինչպիսիք են աբորտը, հոմոսեքսուալ զույգերի իրավունքները:

ՔԴՄ-ում կան երեք թևեր՝ ձախ թևը, ուլտրա-պահպանողական թևը և դեպի շուկա կողմնորոշված թևը: Հենց երրորդ թևին էլ հարում է Մերկելը: Այս թևը կողմնակից է ավելի ցածր հարկերի և ավելի պարզեցված հարկային համակարգի: Արտաքին քաղաքականության ոլորտում այս թևը հակված է դեպի ԱՄՆ և Մեծ Բրիտանիա: Կարճ ասած՝ երրորդ թևը դասական լիբերալիզմի ավանդույթին է հարում, տնտեսապես էլ մնում է կապիտալիստ: Սպասվում է, որ Մերկելի կառավարման ժամանակ միջուկային էներգիայի արտադրման խնդիրը նորից արդիական կդառնա, քանի որ Շրյոդերի կառավարման ժամանակ Գերմանիան հրաժարվել էր միջուկային էներգիայի արտադրությունից (Կանաչների պահանջով)՝ օգտվելով էներգիայի այլընտրանքային աղբյուրներից և էլեկտրաէներգիա գնելով հարևաններից, մասնավորապես՝ Ֆրանսիայից:

Արտաքին քաղաքականության ոլորտում, եթե Շրյոդերը ձգտում էր որքան հնարավոր է մերձենալ Չինաստանին ու Ռուսաստանին, ինչը կարող էր գեոպոլիտիկ առումով հանգեցնել այս երեք կոնտինենտալ երկրների հզոր ալյանսի, որը կկարողանար դիմակայել, գեոպոլիտիկայի տերմիններով ասած, ծովային ուժին՝ ԱՄՆ-ի գլխավորությամբ: Անգելա Մերկելն այն քաղաքական գործիչներից է, որ կտրականապես դեմ է հանդես գալիս Եվրոմիությանը Թուրքիայի անդամակցությանը: Այս առումով նա կվայելի գերմանական հասարակության մեծամասնության համակրանքը: Այսօր Եվրոպայում թուրքական ամենամեծ համայնքը Գերմանիայում է, բայց և Գերմանիան այն երկիրն է, որ ամենից շատ թուրքեր է տարեկան դեպորտացիայի ենթարկում: Եթե Թուրքիան անդամակցի Եվրոմիությանը, ապա դա դեմոգրաֆիական առումով պրոբլեմներ կստեղծի Եվրոպայի, մասնավորապես Գերմանիայի համար, քանզի եվրոպացիներն այսօր հակված չեն շատ երեխաներ ունենալուն, ինչի հետևանքով եվրոպական հասարակությունը ծերանում է, իսկ թուրքերը շատ արագ են բազմանում, և Թուրքիայի՝ Եվրոմիությանն անդամակցելու դեպքում Եվրոպան ավելի «կհարստանա» աղքատ մահմեդականներով. ողջ Եվրոպայում մի քանի տարի հետո ժողովրդագրական պատկերը կփոխվի, և Եվրոպայում հնարավոր կլինի տեսնել այնքան զտարյուն եվրոպացի, որքան, ասենք, Թուրքիայում: Սա, իհարկե, հայտնագործություն չէ, և եվրոպական, մասնավորապես գերմանական իշխանական էշելոններում այս ամենը հասկանում են, ահա թե ինչու խնդրին մեծ կարևորություն է տրվել նաև Մերկելի կողմից ու արտացոլվել նրա նախընտրական պլատֆորմում:

Այսօր ՌԴ-ն ողջ Եվրոպայի, այդ թվում Գերմանիայի համար չափազանց կարևոր հարևան է, քանզի Ռուսաստանը Եվրոպայի համար էներգիայի և հումքի ամենամեծ աղբյուրն է, այսինքն՝ ողջ Եվրոպան էներգետիկ կախվածության մեջ է Ռուսաստանից, և քաղաքական անգրագիտություն կլինի նման հարևանին անտեսելը: Գ. Շրյոդերի օրոք Գերմանիան Ռուսաստանի հետ պահպանում էր բավական սերտ հարաբերություններ, բայց տիկին Մերկելն այնքան էլ հակված չէ Ռուսաստանի հետ ջերմ հարաբերությունները պահպանելուն, չնայած փայլուն տիրապետում է ռուսերենին, ինչը և գուցե նպաստի նրա և Բուշի վարչակազմի, մասնավորապես

Քոնդոլիզա Ռայսի միջև ջերմ հարաբերություններին: Անգելա Մերկելը բազմիցս նշել է, որ Ռուսաստանի հետ հարաբերությունների հարցում նա կխորհրդակցի Լեհաստանի կառավարության հետ: Բնական է, որ Գերմանիան պիտի համահունչ դարձնի իր արտաքին քաղաքականությունը Լեհաստանի հետ, որը լարված հարաբերություններ ունի ՌԴ-ի հետ: Իսկ Լեհաստանն ու Գերմանիան ընդհանուր շահեր ունեն: Մասնավորապես, Գերմանիան լեհական արտահանողների համար շատ մեծ շուկա է (լեհական արտահանվող ապրանքների 70%-ը բաժին է ընկնում Եվրոմիությանը, որից կեսը՝ միայն Գերմանիային), նմանապես և Լեհաստանը Գերմանիայի համար մեծ շուկա է իրենից ներկայացնում, հատկապես արևելյան Գերմանիայի ընկերությունների համար: Դեռ նախընտրական քարոզարշավի ժամանակ Մերկելը հայտարարեց, որ եթե ինքը դառնա կանցլեր, ապա Պուտինի հանդեպ զգույշ և քննադատական դիրքորոշում կընտրի, այնինչ Շրյոդերն անգամ անձնական սերտ հարաբերությունների մեջ էր Պուտինի հետ: Տիկին Մերկելը նշում էր Ռուսատանի հետ ստրատեգիական համագործակցության կարևորության մասին՝ իհարկե հարաբերություններում ներառելով կասկածի և քննադատության էլեմենտներ: Փաստորեն, ապրելով կոմունիստական Արևելյան Գերմանիայում՝ նա քննադատորեն է վերաբերվում Ռուսաստանին, չնայած իրեն համարում է «ռուսաց լեզվի ու ռուսական մշակույթի ընկերը»: Ինչ վերաբերում է ԱՄՆ-ին, ապա այստեղ իրերի ընթացքն այլ է, քանզի Անգելա Մերկելն ավելի հակված է դեպի ԱՄՆ և ՆԱՏՕ, չնայած որ Մերկելի և Բուշի միջև տարաձայնություններ կլինեն Եվրոմիությանը Թուրքիայի անդամակցության շուրջ: Ինչպես հայտնի է, պաշտոնական Վաշինգտոնն այս հարցում աջակցում է իր դաշնակից Անկարային: Դեռ 2003թ. պահպանողականները զերծ չմնացին Շրյոդերին քննադատելուց այն բանի համար, որ նա ժակ Շիրակի հետ միասին մերժեց Բուշի առաջարկը և չմիջամտեց իրաքյան պատերազմին, ոչ մի զինվոր չուղարկեց Իրաք: Հավանաբար, Մերկելը, գալով իշխանության, կմիանա ԱՄՆ-ին Իրաքի վերակառուցման և «դեմոկրատական» իշխանություն հաստատելու գործում: Փաստորեն, արտաքին քաղաքականության ոլորտում ՍԴԿ-ի և ՔԴՄ-ի դիրքերն անհամատեղելի են: Բայց ամենահետաքրքրականն այն է, որ քրիստոնեա-դեմոկրատ Մերկելի կառավարությունում արտգործնախարարի պաշտոնը սոցիալ-դեմոկրատ է զբաղեցնում, ուստի խիստ կասկածելի է, որ մեծ կոալիցիան կկարողանա արդյունավետ կերպով գործել և չմտնել փակուղի: Այսօր մեծ կոալիցիայի ապագայի մասին տարբեր ԶԼՄ-ներում տարբեր կարծիքների կարելի է հանդիպել: Հաճախ է հնչում այն կարծիքը, որ մեծ կոալիցիան փակուղի կմտնի, քանզի Անգելա Մերկելն իր կուսակցության ներսում անգամ ընդդիմադիրներն ունի և չի կարողանա պահել կոալիցիան, որում «միավորվել» են երկու քաղաքական ուժեր, որոնք հակառակ քաղաքական կուրսեր են որդեգրել: Բայց կա ևս մեկ հետաքրքիր կարծիք. գերմանացիները համընդհանուր բարիքի համար կարող են «ամուսնանալ» ըստ անհրաժեշտության, անգամ՝ առանց սիրո:

Կարծում եմ, որ եթե մեծ կոալիցիան չփլուզվի էլ, կոալիցիայում ընդգրկված երկու քաղաքական ուժերի միջև հաճախակի կլինեն տարաձայնությունները տարբեր քաղաքական խնդիրների շուրջ, հատկապես արտաքին քաղաքականության ոլորտում, իսկ ինչ վերաբերում է տնտեսական խնդիրներին, ապա դրանց համար պատասխանատվությունը կրելու է հենց ՔԴՄ-ն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

The Economist Online / 9 September, 2005.
http://bbc.co.uk BBC News / 10 October, 2005.
Deutche Welle / 5 September, 2003.
Heruld Sun / 10 October, 2005.
Financial Times / 15 July, 2005.
Spiegel Online / 25 August, 2005.
The Weekly Standard/ 26 September, 2005.
Expatica / 5 March, 2004.
Expatica/ 8 March, 2004.
Financial Times/ 5 July, 2005.

## COMPARATIVE ANALISIS OF PARLIAMENT ELECTION IN GERMANY ON SEPTEMBER 18 2005

DAVID MANOUKYAN
*A Student of the Fourth Course of the Juridical Faculty, YSU*

Summary

So, in the result of the last german elections, the difference of votes between two major parties was petty.A grand coalition has been formed,which includes CDU and SPD.They have different ideological platforms and viewpoints on many issues,that's why a lot of scholars argue that grand coalition will not work.

## СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ ПАРЛАМЕНТСКИХ ВЫБОРОВ В ГЕРМАНИИ 18 ДЕКАБРЯ 2005г.

ДАВИД МАНУКЯН
*Студент IV курса юридического факультета ЕГУ*

Резюме

И так, в результате последных выборов в Германии различия голосов между двумя основными партиями было мелким. Была сформирована большая коалиция, которая включает СДПГ (Социально-демократическую партию Германии) и ХДС (Христианско-демократический союз). Эти партии имеют разные идеологические платформы и точки зрения во многих вопросах, и по этому многие теоретики считают, что большая коалиция не сработает.

# ՎԱՐՉԱՀՐԱՄԱՅԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄ

ԻՆԳԱ ՆԱՍԻԼՅԱՆ

Կառավարման համակարգում կորպորատիվ կուլտուրայի ձևավորման և կառավարման հարցն արդիական է և ուսումնասիրում է պահանջում: Բազմաթիվ մասնագետներ առանձին հետազոտման առարկա են դարձրել կորպորատիվ կուլտուրայի ազգային առանձնահատկությունները՝ առաջարկելով տարբեր մոդելներ, որոնց սկզբունքում ընկած են ազգային մտածելակերպի բացահայտումը և կիրառումը: Ազգային մտածելակերպը ազգին բնորոշ պատմականորեն ձևավորված այն հատկանիշներն են, որոնք պահպանվում են դարերով՝ ժառանգաբար փոխանցվելով սերնդից սերունդ:

Հայկական կորպորատիվ կուլտուրայի ձևավորման համար անհրաժեշտ են ազգային կառավարման պատմական փուլերի ուաումնասիրություն և ազգին բնորոշ հատկանիշների բացահայտում, նրանց ազդեցության հաշվառում ժամանակակից կառավարման համակարգի ստեղծման փուլում [1, էջ 310-314]:

Այս տեսակետից առանձին հետաքրքրություն է ներկայացնում հայկական մտածելակերպի բացահայտումը խորհրդային ժամանակաշրջանում: Ըստ Լ. Ալբաստովայի՝ վարչահրամայական համակարգում՝ կենտրոնացված պլանավորման պայմաններում, կազմակերպություններում սեփական կորպորատիվ կուլտուրայի ստեղծման հարցադրում տեղի չէր ունենում: Կորպորատիվ կուլտուրայի այն ժամանակվա բազմաթիվ գծերը նույնն էին, չէին տարբերվում յուրօրինակությամբ, թելադրվում էին «վերևից» և, որպես կանոն, անձնակազմի սոցիալական և ստեղծագործական արդյունք չէին [4, էջ 107]:

Եվ չնայած հրահանգային կառավարման ոճին՝ խորհրդային համակարգում տնտեսագետները անդրադառնում էին ղեկավարման ոճի և կառավարման կուլտուրայի հարցերի հետազոտմանը: Թեև խորհրդային վարչահրամայական տնտեսական համակարգը, չդիմանալով ժամանակի փորձություններին, փլուզվեց, այդ դարաշրջանի կառավարման կուլտուրայի ուսումնասիրումը ոչ միայն հետաքրքիր է, այլ նաև անհրաժեշտ հետևյալ պատճառներով՝

-մեր ժամանակներում շարունակում են աշխատել և ղեկավարել մասնագետներ, որոնց ղեկավարման ոճը ձևավորվել է խորհրդային ժամանակաշրջանում, և կան արժեքներ, որոնք շարունակում են ընդունվել և արդյունավետ կիրառվել.

-վարչահրամայական համակարգի որոշ արժեքներ արդիական են նաև շուկայական հարաբերությունների պայմաններում և կարող են շարունակաբար օգտագործվել.

-խորհրդային ժամանակաշրջանի կառավարման որոշ արժեքներ համապատասխանում են հայկական մտածելակերպին, ստուգված են ժամանակի ընթացքում և կարող են կիրառվել մեր ժամանակների կառավարման համակարգում:

Ուսումնասիրման համար առավել հետաքրքիր է Ի. Սիզովի «Էկոնոմիկայի և արտադրության կառավարման հիմունքները» դասագիրքը (1974թ.), որտեղ մի ամբողջ գլուխ նվիրված է ղեկավարման ոճին և կառավարման կուլտուրային [150, էջ 480-493]: Անցկացնելով զուգահեռներ երկու համակարգերի միջև՝ կփորձենք բացահայտել կառավարման արժեքավոր տարրերը:

Ի. Սիզովը նշում է, որ ինչպես չկան երկու միանման մարդիկ, այնպես էլ չկա բացարձակ միանման ղեկավարման ոճ, որը մշակվում է ղեկավարների և ենթակաների հաղորդակցման ընթացքում, նրանց փոխգործողության մեջ: «Ղեկավարման սոցիալիստական ոճի համար բնորոշ են դեկորատիզմը, կոլեկտիվիզմը, բարձր պատասխանատվության և քաղաքական գիտակցականության դրսևորումը»- գրում է նա: Իհարկե, վիճելի է խորհրդային ժամանակի կառավարման «դեկորատիզմը», իսկ ինչ վերաբերում է «կոլեկտիվիզմին», ապա այն իրականում գոյություն ուներ և համապատասխանում էր հայկական մտածելակերպին: Ճիշտ է նաև այն դրույթը, որ ղեկավարի աշխատանքի արդյունավետությունը պետք է չափվի վերջնական արդյունքներով: Եվ դրա համար մշակված էին բազմաթիվ նորմատիվ ակտեր: Նման մոտեցումը ապահովում է շահադրդման թափանցելիությունը, սակայն գնահատման որոշ նորմերի քաղաքականացվածությունը համակարգի փլուզման պատճառներից մեկն էր: Այդ սկզբունքով են ձևավորված ղեկավարին ներկայացվող մարդկային հատկանիշների պահանջները, որոնք Ի. Սիզովը խմբավորել է հինգ մեծ խմբերում:

Դրանք են `

- քաղաքական հասունություն (կուսակցականություն)
- կարգապահություն և վերաբերմունք աշխատանքի նկատմամբ
- գիտելիքների մակարդակ
- կազմակերպչական կարողություններ
- կառավարման արդյունավետ համակարգ ապահովելու կարողություն (այստեղ կորպորատիվ կուլտուրային վերաբերվող պահանջներն են՝ հարցերի միասնական (կոլեգիալ) քննարկում, գործերի մասին համառոտ և պարզ խոսելու կարողություն, գործարար նամակներ, հրամաններ և այլն, գրելու կարողություն, ղեկավարին և ենթականերին ունկնդրելու կարողություն և այլն):

Ամփոփելով այս հարցը՝ Ի Սիզովը նշում է. «Ղեկավարի գործարար և բարոյա-քաղաքական հատկությունների գնահատման պրակտիկան ցույց է տալիս, որ առաջին տեղում են կոմունիստական համոզվածությունը, հանձնարարված գործի նկատմամբ անձնական պատասխանատվության զգացումը, ազնվությունը, բարեխղճությունը, մարդկանց նկատմամբ զգայուն և ուշադիր վերաբերմունքը: Շատ բարձր են գնահատվում հիմնավորված որոշման ինքնուրույն և արագ ընդունման կարողությունը, անձնական կարգապահության, աշխատասիրության, կազմակերպչական ունակությունները, կոլեկտիվում կարգապահության կազմակերպման և պահպանման կարողություն» [150, էջ 483]: Որպես ղեկավարի տարբերակ՝ Ի. Սիզովը ներկայացնում է վարպետի գործարար կերպարը (մշտական հոգատարություն բանվորի մասին, նոր ընդունվածների ներգրավում կոլեկտիվում, հոգածություն բանվորների աշխատավարձի վերաբերյալ, վերահսկում, խնդրանքների առաջարկում, հարաբերությունների պարզություն, որոշակիություն, տույժերի արդարացի համակարգ):

Ներկայացվում են պահանջներ նաև ղեկավարի վարքագծի կուլտուրայի վերաբերյալ՝

- ղեկավարը պետք է կարողանա այնպես լսել զրուցակցին, որպեսզի գործի մասին ստանա առավելագույն օգտակար տեղեկություն.

- կարևոր է կարողանալ ստեղծել պայմաններ անկեղծ զրույցի համար, բացառել կողմնակի մարդկանց ներկայությունը, սահմանափակել հեռախոսային զանգերը և այլն.
- անթույլատրելի են գռեհիկ խոսելը, գոռալը և այլն: Ղեկավարի անձնական հեղինակությունը շատ բանով կախված է այն բանից, թե նա ինչպես է արտահայտում իր մտքերը, տիրապետում խոսքին.
- կարևոր է ղեկավարի գրելու կարողությունը (գործում էր սկզբունք):

Ղեկավարման ոճը ենթադրում էր կառավարման կուլտուրայի որոշակի տարրերի տիրապետում:

Ի. Սիզովը այդ հարցը մեկնաբանում է Վ. Լենինի խոսքով. «Չենց կուլտուրայի մասին եմ այստեղ հարց դնում ես, քանի որ այդ գործերում նվաճված պետք է համարել միայն այն, ինչը մտել է կուլտուրայի մեջ, կենցաղի մեջ, սովորության մեջ»: Նշվում է նաև, որ Լենինը կառավարման գիտական կազմակերպման հաջողությունները կապում էր մշակույթի բնագավառի նվաճումների հետ:

Կառավարման կուլտուրայի տարրերը վարքի կանոններն են (իրավական և էթիկական), որոնք որոշվում են համապատասխան նորմերով: Իր աշխատանքում ղեկավարը պետք է կողմնորոշվի դեպի էթիկայի այնպիսի նորմերի, ինչպիսիք են մարդասիրությունը, քաղաքավարությունը, փոխադարձ օգնությունը և այլն: Ի. Սիզովի նկարագրած էթիկական նորմերն են՝

- անթույլատրելի է կեղծ տեղեկություն ներկայացնել վերադաս կազմակերպություններին, խախտել պետական ստանդարտները.
- հատուկ նշանակություն ունի այս պարտավորությունը՝ ասացիր, խոստացար, նախատեսվածը կատարիր ճշգրտորեն, նշանակված ժամկետում.
- ենթականերին հավասարապես արդարացի վերաբերվիր, օբյեկտիվորեն գնահատիր աշխատանքը.
- անթույլատրելի է ենթակաների կատարած աշխատանքը իրենց վերագրել, անհաջողությունները՝ նրանց վրա բարդել:

Կառավարման կուլտուրային է անդրադարձել անգամ կոմունիստական կուսակցության համագումարը: «Կառավարման կուլտուրայի մեջ օրգանապես մտնում են նաև ուշադիր, հոգատար վերաբերմունքը աշխատավորների կարիքների ու հոգսերի նկատմամբ: Մեր յուրաքանչյուր հիմնարկում պետք է իշխի բարոյացակամության, մարդու հանդեպ հարգանքի մթնոլորտ»: Եվ այս հարցի կարևորությունն գրավական դարձավ համագումարում ընդունված «Կոմունիզմ կառուցողի բարոյական կոդեքսը», որը ներառում էր այնպիսի բարոյական սկզբունքներ, ինչպիսիք են՝ նվիրվածություն կոմունիզմի գործին, սերը սոցիալիստական հայրենիքի, սոցիալիզմի երկրների նկատմամբ, բարեխիղճ աշխատանք հասարակության բարօրության համար,հոգատարություն հասարակական ունեցվածքը բազմապատկելու նկատմամբ,հասարակական պարտքի բարձր գիտակցություն, անհանդուրժողականություն հասարակական շահերի խախտումների նկատմամբ, կոլեկտիվիզմ և ընկերական փոխօգնություն, մարդասիրական հարաբերություններ և փոխադարձ հարգանք մարդկանց միջև՝ մարդը մարդուն բարեկամ է, ընկեր և եղբայր, ազնվություն և ճշմարտացիություն, բարոյական մաքրություն, պարզություն և համեստություն հասարակական և անձնական կյանքում, փոխադարձ հարգանքը ընտանիքում, հոգատարություն երեխաների նկատմամբ, անհաշտություն՝ անարդարության, պորտաբուծության, անազնվության, կարիերիզմի, շահամոլության նկատմամբ. ԽՍՀՄ բոլոր ժողովուրդների բարեկամություն և եղբայրություն, անհաշտություն կոմունիզմի թշնամիների նկատմամբ, համերաշխություն բոլոր երկրների աշխատավորների հետ»:

Մինչ այս սկզբունքների մեկնաբանումը՝ նշենք, որ Ի. Սիզովը ուշադրություն է բևեռել նաև կառավարման կուլտուրայի այնպիսի տարրերի վրա, ինչպիսիք են՝ ժամանակի խնայողությունը, փաստաթղթերի գործավարությունը, զանգվածային միջոցառումների (ժողովներ, խորհրդակցություններ, նիստեր, սեմինարներ և այլն) անցկացման կուլտուրան, աշխատակիցների հանգստի կառավարումը և այլն, որոնք հիմնականում չեն կորցրել իրենց արդիականությունը մեր ժամանակներում:

Ինչպես նշվեց, խորհրդային ժամանակաշրջանում կառավարման կուլտուրայի ուսումնասիրման նպատակն է ճշտել, թե որ տարրերը և սկզբունքները կարող են օգտավետ լինել հայկական ազգային կորպորատիվ կուլտուրայի ձևավորման համար, և որոնք, ինչպես ցույց է տվել պատմական փորձը, անհամատեղելի են մեր ազգային մտածելակերպին:

Այս խնդրի լուծման համար անհրաժեշտ է պատասխանել հետևյալ երեք հարցերին.

1. Խորհրդային ժամանակաշրջանի կորպորատիվ կուլտուրայի կառավարման ո՞ր սկզբունքներն են հակասում գիտական սկզբունքներին.

2. Ո՞ր արժեքներն են անընդունելի հայ ազգի համար և պետք է հանվեն կառավարման համակարգից.

3. Ո՞ր արժեքներն են ներդաշնակ մեր ազգային մտածելակերպին և նպաստել են տնտեսական զարգացմանը:

Խորհրդային Միությունը բազմազգ պետություն էր, որում ապրում և գործում էին տարբեր պատմական, կրոնական, մշակութային, մտավոր և այլ մակարդակ ունեցող ազգեր: Եվ պարզ է, որ նրանք բոլորը չէին կարող ընդունել նույն բարոյական կոդեքսը:

Այդ ժամանակի բարոյական մթնոլորտի գլխավոր չափանիշ էր՝ քաղաքական հասարակությունը (կուսակցությունը), որի ճնշման տակ բոլորին պարտադրվում էր կոդեքսի բոլոր նորմերի կատարումը: Եվ այս պայմաններով էր բացատրվում տնտեսապես զարգացածության տարբեր մակարդակ ունեցող ազգային հանրապետությունների առկայությունը:

Այսինքն՝ այն ազգերը, որոնք իրենց մտածելակերպով կարողանում էին տեղավորվել կուսակցության բարոյականության սահմաններում, կարողանում էին նաև տնտեսապես բարգավաճել:

Ինչպիսի՞ն էր Հայաստանի տնտեսական իրավիճակը այդ համակարգում:

Լ. Անանյանը այսպես է նկարագրում հետպատերազմյան Խորհրդային Հայաստանը: «Հետպատերազմյան շրջանում հայաստանում արտադրության մասշտաբների ընդլայնումն ուղեկցվել է սոցիալ-տնտեսական խոշոր փոփոխություններով, տնտեսության մեջ նոր համամասնությունների սահմանումով: Խոսքը, անենից առաջ, վերաբերում է արդյունաբերության ճյուղային կառուցվածքում կատարվող տեղաշարժերին:

Կառուցվածքային առաջադիմական տեղաշարժերը հնարավորություն են ընձեռում արագացնել գիտատեխնիկական առաջընթացը, բարձրացնել արտադրության արդյունավետությունը» [3, էջ 193]:

Արտադրողական ուժերի տեղաբաշխման կատարելագործումը սոցիալ-տնտեսական լուրջ տեղաշարժեր առաջացրեց փոքր քաղաքներում և գյուղական բնակավայրերում, նպաստեց բնակարանային-կոմունալ տնտեսության, մշակույթի օջախների, առևտրի, կենցաղսպասարկման զարգացմանը, բնակչության կուլտուր-տեխնիկական մակարդակի բարձրացմանը:Հեռավոր շրջաններում արդյունաբերական ձեռնարկությունների մասնաճյուղերի ստեղծումը կարևոր նշանակություն ունեցավ ոչ միայն զբաղվածության ռացիոնալ կառուցվածքի ապահովման, բնակչությանը տեղում ամրացնելու, այլև տնտեսական զարգացման մակարդակների համահարթման տեսակետից:

Հայաստանը նշված շրջանում ուներ արդյունաբերական արտադրության ամենաբարձր խտությունը միութենական մյուս հանրապետությունների շարքում: Փոքր տարածքի վրա տեղաբաշխվեցին մեքենաշինության, գունավոր մետաղագործության, քիմիական արդյունաբերության, էլեկտրաէներգիայի, շինարարական ինդուստրիայի, թեթև ու սննդի արդյունաբերության հարյուրավոր ձեռնարկություններ: «Այստեղ, ի տարբերություն այլ հանրապետությունների, մեծ էր սեփական բնական ռեսուրսների վրա հենվող ճյուղերի տեսակարար կշիռը» [3, էջ 193-195]:

Գոյություն ունեին նաև ակնհայտ թերություններ: Անձնակազմի կուսակցականացված կառավարումը շատ անգամ մերժում էր մասնագիտական և այլ տվյալների վրա հիմնված գնահատման տարբերակները` ստեղծելով անարդարության մթնոլորտ, և, ինչպես բնորոշ է հայ ազգի մտածելակերպին, արտագաղթ: Չնայած գիտության զարգացման բարձր մակարդակին` հիմնականում այն ծառայում էր ռազմական արդյունաբերությանը, իսկ ժողովրդական տնտեսությունում նորամուծությունը ցածր մակարդակում էր (նոր ապրանքների արտադրումը երկարաժամկետ գործընթաց էր):

Կենտրոնացված պլանավորումը հաշվի չէր առնում պահանջարկը շուկայում, և որպես դրա արդյունք` առկա էր ապրանքների անընդհատ դեֆիցիտ: Շուկայական պայմաններում նոր մեկնաբանումներ են պահանջում կոդեքսում հռչակված անհաշտության, անարդարության, պորտաբուծության, անազնվության, կարիերիզմի, շահամոլության դեմ պայքարի կոչերը: Դրանց կիրառման սահմանները պետք է համապատասխանեն կազմակերպությունում ընդունված արժեքներին: Սակայն կարիերիզմը և շահամոլությունը պետք է նորովի մեկնաբանվեն: Խորհրդային ժամանակաշրջանում վատ էր գնահատվում մարդու ձգտումը դեպի պաշտոն, կարիերիզմը և շահամոլությունը դատապարտվում էր, հարուստ լինելը դիտվում էր որպես անազնիվ եկամուտների հետևանք: Մեր ժամանակներում չեն բացառվում անազնիվ եկամուտները, սակայն անհրաժեշտ է ստեղծել հարգանք գործարար մարդու հանդեպ, ցույց տալ, որ հարստությունը կարող է ստեղծվել և օրինական գործունեության շնորհիվ, որ ձգտումը դեպի պաշտոնը պետք է լինի ինքնահաստատման, երկրին, հասարակությանը ծառայելու արդյունք: Վատ չի լինի, եթե այս գործում օրինակ ծառայեն մեր պատմությունից հայտնի մեծահարուստ հայ գործարարները, նրանց` ազգի համար արած ծառայությունները, որոնք մինչև այսօր շարունակվում են սփյուռքից:

Կոդեքսում հասարակության հանդեպ բոլոր նախատեսված նորմերն այսօր կարելի է տեղավորել կազմակերպության աշխատանքային սոցիալական պարտավորությունների պահանջների սահմաններում: Իսկ բոլոր երկրների բարեկամության և համերաշխության կոչերը միշտ էլ արդիական են:

Ինչպես ցույց տվեց պատմական փորձը, հայ ազգի համար առավել հոգեհարազատ են հետևյալ նորմերը` կոլեկտիվիզմը, ընկերական փոխօգնությունը, մարդասիրությունը, մարդասիրական հարաբերությունները, փոխադարձ հարգանքը, ազնվությունը և ճշմարտացիությունը, բարոյական մաքրությունը, փոխադարձ հարգանքը ընտանիքում, հոգատարությունը երեխաների նկատմամբ: Խորհրդային ժամանակաշրջանի Հայաստանի նվաճումները հնարավոր են եղել շնորհիվ նաև ազգի հատկությունների: Անհրաժեշտ է այս արժեքները չկորցնել և կորպորատիվ կուլտուրայի ձևավորման ժամանակ օգտագործել այս նորմերի կիրառման յոթանասնամյա փորձը:

Խորհրդային ժամանակահատվածը բացահայտեց և հաստատեց հայերին բնորոշ ևս մեկ կարևոր հատկություն: Լինելով կենտրոնախույս ազգ` հայերը միշտ համախմբվել են գաղափարի շուրջ: Խորհրդային Հայաստանը հայերի համար ոչ թե կոմունիզմ կառուցելու նպատակ էր, այլ ազգի անվտանգությունը ապահովելու, դարերով երազած քրիստոնյա ռուս ազգի հետ համատեղ ապրելու պայման: ԵՎ այդ պայմանում նա կարողացավ ապրել ազգին բնորոշ ստեղծագործական կյանքով և ունենալ տնտեսական հաջողություններ: Ելնելով դրանից` յուրաքանչյուր կազմակերպություն պարտավոր է աշխատանքային կոլեկտիվը համախմբել ընդհանուր, բոլորի համար հոգեհարազատ գաղափարի (առաքելության, նպատակների) շուրջը, որի իրագործման համար հաշվի առնել նաև ազգին բնորոշ այլ հատկանիշները:

---


1. *Ի. Նասիլյան*, Կորպորատիվ կուլտուրայի ազգային առանձնահատկությունները: Հայաստանի Հանրապետության սոցիալ- տնտեսական արդի հիմնախնդիրները (գիտական հոդվածների ժողովածու), Եր.: 2004, էջ 310-314:

*2. Սիզով Ի. Ի.,* էկոնոմիկայի և արտադրության կառավարման հիմունքները, Եր.: 1974-547 էջ:

*3. Անանյան Լ. Ջ.*, Հայաստանի տնտեսական պատմության ուրվագծերը: Եր. 2003.-226 էջ:

4. *Լ. Ն. Ալբաստովա,* Արդյունավետ մենեջմենթի տեխնոլոգիան:


---

## ANALYSIS OF THE CORPORATIVE CULTURE ADMINISTRATIVE - COMMAND MANAGERIAL SYSTEM

INGA NASILYAN


Summary

Corporative culture is one of the most important elements of modern management. But the formation of the corporative culture demands a thorough study of national mentality and connected with it the study of the development of historical stages of the whole system of management.

In the article we try to show the peculiarities of cultural management of the administrative-imperative time period. Here some elements of Armenian mentality have been conveyed which may be used productively in the system of management.


## АНАЛИЗ КОРПОРАТИВНОЙ КУЛЬТУРЫ АДМИНИСТРАТИВНО- КОМАНДНОЙ СИСТЕМЫ УПРАВЛЕНИЯ

ИНГА НАСИЛЯН


Резюме

Корпоративная культура является одним из основным элементом современного менеджмента. Однако формирование корпоративной культуры требует изучения национального менталитета и в этой связи исторических этапов развития системы управления. В данной статье изучены особенности корпоративной культуры в эпоху административно-командной системи управления и выявлении элементов корпоративной культуры соответствующие национальному менталлитету с целью эффективного применения их в армянской системе управления.

ԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# ԱԶԱՏԱԿԱՆ-ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՍՈՑԻՈՄՇԱԿՈՒՅԹԻ ԲՆՈՐՈՇ ԳԾԵՐԸ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Հասարակական կյանքի կազմակերպման ազատական մշակույթի հիմքում ընկած են անհատական ազատությունների, ազատ մրցակցության և անհատի առաջնայնության նախապատվությունները: Այդ նախապատվությունները համարվում են տնտեսական գործունեության արդյունավետության և մարդկանց սոցիալական բարեկեցության նախապայմաններ: Նոր ժամանակների պատմության փորձը վկայում է, որ շուկայական հարաբերությունները և անհատի առաջնայնության սկզբունքը էապես փոխեցին պետության և հասարակության փոխհարաբերությունների բնույթն ու բովանդակությունը: Ավատատիրական պետությունների կամքից ու քմահաճույքից կախյալ հասարակությունները, շուկայական հարաբերությունների մշակույթի տարածմանը զուգահեռ, վերաճեցին քաղաքացիական հասարակությունների: Այդ նոր տիպի հասարակությունների ամենաբնորոշ առանձնահատկություններից մեկն այն է, որ մարդիկ իրենց տնտեսական կյանքը կազմակերպելու և պահանջմունքների բավարարման համար սկսած գործունեության ընթացքում այլևս պետության կարիք չունեն:

Ի տարբերություն ավանդական ու ժամանակակից ամբողջատիրական, կոլեկտիվ-փակ հասարակությունների՝ ազատական-ժողովրդավարական հասարակությունները ունեն մի շարք քաղաքական հիմնարար սկզբունքներ, որոնք ընկած են կյանքի կազմակերպման ու կանոնակարգման ազատական մշակույթի հիմքում.

- անհատականության սկզբունք, ըստ որի՝ մարդկային որակներն այնքան բազմազան են, որ նրանք միաժամանակ չեն կարող ունենալ միասնական ապրելակերպ ու միասնական տեսլական: Այդ պատճառով էլ հնարավոր չէ մշակել վարքի կարգավորման միասնական կանոններ: Իսկ դա նշանակում է, որ քաղաքականության հիմնական խնդիրներից մեկը դառնում է այնպիսի կանոնների մշակումը և այնպիսի ինստիտուտների ձևավորումը, որոնք, անկախ բարիքի մասին մարդկանց պատկերացումների տարբերություններից, նրանց հնարավորություն կտան արդյունավետ կերպով իրագործել իրենց անձնական ծրագրերն ու նախագծերը.
- ազատականության մյուս կարևոր քաղաքական սկզբունքը մարդու իրավունքներն են: Այն մարդկանց հնարավորություն է տալիս դրսևորել ու իրացնել իրենց էութենական ուժերը և միաժամանակ սահմանափակում է հասարակական կյանքին միջամտելու պետության հնարավորությունները.
- ազատական մշակույթի մյուս կարևոր սկզբունքը սեփականության իրավունքն է, ինչը հանդիսանում է մարդու անհատականության և ազատությունների դրսևորման կարևորագույն նախապայմանը.
- ազատականության կարևորագույն սոցիոմշակութային սկզբունքներից մեկն էլ քաղաքացիական հասարակության գաղափարն է, ինչը հստակ սահմանազատում է հասարակական կյանքի քաղաքական ու սոցիալական ոլորտները, և սահմանափակում քաղաքական իշխանության ազդեցությունը հասարակական հարաբերությունների վրա.
- իրավունքը դիտարկելով որպես հասարակական հարաբերությունների կարգավորման հիմնական մեխանիզմ՝ ազատականությունը ելնում է Կանտի այն կանխավարկածից, որ օրենքը պետք է լինի ընդհանուր և կողմնորոշվի ոչ թե դեպի բարեկեցությունը, այլ անհատական նպատակների իրացման համար ազատությունների ապահովումը.
- ազատականությունը ընդունում է միայն երկու կարգի հավասարություն՝ օրենքի առաջ բոլորի հավասարություն և հնարավորությունների հավասարություն.
- ազատական մշակույթի մեջ առանձնահատուկ նշանակություն ունի նաև իշխանությունների տարանջատման սկզբունքը, ըստ որի՝ իշխանության թևերից որևէ մեկը մյուսին չի կարող օգտագործել որպես միջոց:

Այս սկզբունքների թվարկումից իսկ պարզ է դառնում, որ դրանց իրագործումը հնարավոր է միայն իրավական պետության շրջանակներում: Այս պնդման հիմքում ընկած է այն գաղափարը, որ մարդն ի ծնե օժտված է անօտարելի իրավունքներով ու ազատություններով, և պետության խնդիրը դրանց ապահովումն է: Այսինքն՝ իրավունքի աղբյուրը ոչ թե պետությունն է, այլ՝ անձը:

Տնտեսական կյանքում ազատականության բերած կարևոր նորությունն այն էր, որ հստակեցվեցին տնտեսական ու քաղաքական իշխանությունների գործառույթները, դրանք տարանջատվեցին, և ձևավորվեցին դրանցից յուրաքանչյուրի գործունեության արդյունավետությունը որոշող շուկաներ:

Տնտեսական կյանքում աստիճանաբար ձևավորվեց մասնավոր շահի սկզբունքով գործող տնտեսական շուկա (շուկայական հարաբերություններ), իսկ քաղաքական կյանքում ձևավորվեց հասարակական շահի սկզբունքով գործող քաղաքական շուկա (իրավաքաղաքական հարաբերություններ):

Մարդկային փոխհարաբերությունների կարգավորման շուկայական սկզբունքի համաձայն՝ առանց պետության անհարկի միջամտության, յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է մտածել իր մասին: Իսկ դա նշանակում է, որ ազատականությունը և շուկայական սկզբունքն ապաքաղաքականացնում են մարդկանց ապրելակերպը: Այս առնչությամբ ֆրանսիացի մտածող Բենժամեն Կոնստանը իրավացիորեն նկատում է, որ ազատականության հիմնական նպատակը մասնավոր կյանքի անվտանգության ապահովումն է[2]:

Հասարակական կյանքը կազմակերպելու և կարգավորելու ազատական մշակույթն ավատատիրությանը բնորոշ փակ բնատնտեսությանը և մարդկանց միջև անձնական կախվածության հարաբերություններին հաղորդեց շարժունություն, արդյունաբերական ապրելակերպ, լարվածություն և մրցակցություն[3]: Այդ իմաստով կարելի է ասել, որ շուկան ու ազատականությունը դարձան «բաց հասարակության» ձևավորման նախադրյալներ: Մանրամասն չանդրադառնալով «բաց հասարակության» առանձնահատկությունների քննարկմանը՝ նշենք, որ շուկայական ազատությունները, նախաձեռնության և ձեռներեցության հնարավորությունները ոչ միայն նպաստեցին տնտեսական կյանքի զարգացմանը, այլև սրեցին ներհասարակական հակասություններն ու կոնֆլիկտները: «Վայրի կապիտալիզմի» կործանարար հետևանքները սահմանափակելու անհրաժեշտությունը բերեց նրան, որ քաղաքական կյանքում անխուսափելի

դարձան ժողովրդավարական բարեփոխումները: Ասվածից հետևում է, որ ազատականությունն ու շուկայական տնտեսությունը կարող են արդյունավետ զարգանալ միայն այն դեպքում, եթե կարգավորված են քաղաքացիական իրավունքներն ու ազատությունները, ճշգրտված են տնտեսավարող սուբյեկտների համագործակցության «խաղի կանոնները» և այլն: Իսկ դա նշանակում է, որ շուկայական ազատականությունը, ներքին ինքնակարգավորման տրամաբանությամբ, նպաստում է քաղաքացիական հասարակության ձևավորմանն ու զարգացմանը:

Ամփոփելով ասվածը՝ կարող ենք նշել, որ ազատականության սկզբունքներով ղեկավարվող հասարակության զարգացման ներքին նախադրյալներից մեկը տնտեսական շահն է: Այդ իմաստով շուկայական հասարակությունը տնտեսակենտրոն է, ըստ որի՝ մարդու «բնական վիճակը» առավել արդյունավետ դրսևորվում է տնտեսական գործունեության մեջ: Ազատական հասարակության ծագման արշալույսին շուկայական հասարակության առաջին տեսաբանները (Հոբս, Լոկ, Մոնտեսքյու և այլք) գտնում էին, որ «խելամիտ էգոիզմով» ղեկավարվող ազատ քաղաքացիները, որքան էլ հակված լինեն դեպի անձնական շահը, իրենց գործունեությամբ չեն կարող հակադրվել համընդհանուր բարեկեցությանը, քանի որ տնտեսական գործունեությունը միշտ և ամենուրեք ղեկավարվում է ռացիոնալիզմի սկզբունքներով: Այս լավատեսությունը որոշ չափով է միայն հիմնավորված: Ինչպես Լոկը, այնպես էլ «բնական մարդու» տեսության մյուս ներկայացուցիչները, ըստ էության, ցանկալին գիտակցաբար նույնացնում էին փաստականի հետ: Հակառակ դեպքում նրանք չէին կարող հիմնավորել անհատի առաջնայնության և շուկայական հարաբերությունների սկզբունքների առաջադիմական բնույթը: Նկատենք, սակայն, որ «բնական մարդուն» վերագրած նորմատիվ հատկանիշները միայն մտացածին չէին:

Բանն այն է, որ ազատական հասարակության ձևավորման դեռևս նախնական շրջանում արդեն իսկ ստեղծվել էր իրավահավասար գործընկերների փոխհարաբերության անհրաժեշտություն, քանի որ արևմտյան մի շարք երկրներում շուկա կազմավորող և տնտեսական անկախության ձգտող երրորդ դասը (բուրժուազիան) սկսել էր գիտակցել, որ չի կարող հասնել տնտեսական հաջողության, եթե չձևավորվեն և իրավական ուժ չստանան շուկայական խաղի կանոնները: Եվ, իրոք, եթե ազատական տնտեսությունը գործընկերների համարժեք փոխանակման դաշտ է, նշանակում է այդ գործունեությունը պետք է ենթարկվի իրավական կարգավորման: Այլ կերպ ասած՝ «տնտեսական մարդը» ստիպված էր դառնալ նաև «իրավական մարդ», քանի որ միայն իրավունքը կարող էր շուկան դարձնել կանխատեսելի տարածություն և մարդկանց տնտեսական ռիսկը ապահովագրել «բնական մարդու» ուժային գործողություններից:

Բանն այն է, որ ազատական հասարակությանը բնորոշ՝ տնտեսական շահով ղեկավարվող ձեռներեց խավը կողմնորոշված է «նվազագույն պետության» գաղափարին, համաձայն որի՝ քաղաքացիական հարաբերությունները չպետք է ենթարկվեն քաղաքական անհիմն միջամտությունների: Պատահական չէ, որ ըստ Լոկի՝ «բնական կարգ» կարելի է ստեղծել ոչ թե իշխանության, այլ փոխշահավետ գործընկերություն հաստատելու օգնությամբ, իսկ իշխանությունն ընդամենը պետք է կատարի «գիշերային պահակի» գործառույթ:

Ազատականության բնութագրման հարցում էական ճշգրտումներ կատարվեցին հատկապես 19-րդ դարի վերջին տասնամյակներում: Ամենից առաջ պարզվեց, որ շուկայական ինքնակազմակերպման ու ինքնակարգավորման մեխանիզմները չունեն հուսալիության կայուն երաշխիքներ: Գնալով խորացող տնտեսական ճգնաժամերը ցույց տվեցին, որ շուկայական հարաբերությունները ներքնապես հակասական են: Այդ ճգնաժամերի մասշտաբներից և տնտեսության կազմալուծման վտանգներից խուսափելու կամ դրանց հետևանքները նվազագույնի հասցնելու նպատակով տնտեսավարող սուբյեկտները սկսեցին ավելի ու ավելի հաճախ դիմել պետական միջամտության: Բացի այդ, տնտեսական ճգնաժամերի հիմնական ծանրությունը կրող անպաշտպան խավերը ևս ներքաշվեցին քաղաքականության մեջ: Այս ամենի հետևանքով ավանդաբար տնտեսակենտրոն հակվածություն ունեցող ազատականությունը սկսեց դառնալ նաև քաղաքակենտրոն:

«Ազատականություն» հասկացությունը օգտագործվում է երկու իմաստով: Առաջին՝ որպես սովորույթներից, ավանդույթներից ու կարծրատիպերից ազատ և ինքնակողմնորոշվող մտածողության ձև: Երկրորդ՝ որպես գաղափարաքաղաքական ուսմունքների ամբողջություն, որպես տնտեսական ու քաղաքական այնպիսի ծրագիր, որի հիմքում ընկած է անհատական շահի առաջնայնության սկզբունքը: Գաղափարական իմաստով ազատականությունը պաշտպանում է այնպիսի արժեքներ, ինչպիսիք են հումանիզմը, անհատականությունը, ազգային ու դասակարգային նախապաշարումներից մարդկանց ազատագրումը և այլն: Իսկ քաղաքական իմաստով ազատականության գլխավոր սոցիոմշակութային արժեքներ են համարվում մարդու իրավունքները, գործադիր և օրենսդիր իշխանությունների տարանջատման սկզբունքը, մրցակցությունը, ազատ տեղաշարժվելու սկզբունքը և այլն: Տնտեսության բնագավառում ազատականությունը պաշտպանում է ազատ նախաձեռնությունը, մասնավոր ձեռնարկչատիրությունը, սեփականության անձեռնմխելիությունը և այլն:

Պետք է նկատել, սակայն, որ ազատական մշակույթը միատարր չէ, բաժանվում է արմատական ու պահպանողական թևերի: Թեև նրանք ձևավորվել են միևնույն սոցիոմշակութային արժեքների հիմքի վրա և ունեն նույն նպատակները, ձգտում են կառուցել իրավական պետություն և քաղաքացիական հասարակություն, բայց տարբերվում են նպատակին հասնելու միջոցների և եղանակների հարցում: Մասնավորապես արմատական ազատականությունը գտնում է, որ սոցիալ-տնտեսական կյանքում պետության դերը պետք է հասցնել նվազագույնի, իսկ պահպանողական ազատականությունը պետության գործունեության ու գործառույթների հարցում երկակի մոտեցում ունի: Մի կողմից՝ պահպանողական ազատականությունը համաձայն է, որ պետությունը նվազագույն միջամտություն պետք է ունենա սոցիալ-տնտեսական կյանքի վրա, մյուս կողմից՝ գտնում է, որ պետությունը պետք է ակտիվ միջամտություն ունենա կարգի պահպանման հարցերում:

Զանդրադառնալով ազատականության մեջ քաղաքական մշակույթի դերի բարձրացման հարցերին՝ նշենք, որ շուկայական սկզբունքը, այնուամենայնիվ, էապես փոխեց քաղաքակրթության զարգացման բնույթն ու բովանդակությունը: Տնտեսագիտության բնագավառում Նոբելյան մրցանակի դափնեկիր, հայտնի տեսաբան Ֆ.Հայեկը դիպուկ կերպով նկատում է, որ արդի մրցակցային աշխարհում ազատ շուկայի համակարգն իրենից ներկայացնում է անկանխատեսելի պայմաններին անվերջ հարմարվելու գործընթաց: Դա հնարավոր է դառնում շնորհիվ այն բանի, որ շուկան օժտված է ազատ մրցակցության մեխանիզմներով: Իսկ մրցակցությունը, ըստ Ֆ.Հայեկի, նոր երևույթների ճանաչման անվերջ արարողակարգ է, որի ժամանակ մարդը պարտավոր է հաշվի առնել ոչ միայն իր ցանկությունները, այլև հարմարվել փոփոխվող իրավիճակներին[4]:

Դրամատիրությանը բնորոշ ազատականությունը և շուկայական տնտեսությունն արմատապես փոխեցին բոլոր կարգի սոցիալական հարաբերությունների և

դրանց կարգավորման սոցիոմշակութային արժեքների բնույթն ու բովանդակությունը: Համակարգային արմատական փոխակերպումների հետևանքով, մի կողմից, տեղի ունեցավ մարդկանց մասնագիտական վերաբաշխում, մյուս կողմից՝ արմատապես փոխվեց մարդկանց տնտեսական դրությունը, տնտեսական հարաբերությունների ձևն ու բովանդակությունը և, հետևաբար, նաև մարդկանց հոգեբանությունը: Շուկայական հարաբերությունների ու մրցակցության ազատական մշակույթը՝ տնտեսական հարաբերություններում, իսկ ժողովրդավարական մշակույթը՝ սոցիալ-քաղաքական հարաբերություններում հիմնովին փոխեցին մարդկանց կյանքը: Խոսքի և մամուլի ազատությունը, բազմակուսակցական համակարգը և, վերջապես, սեփական շահերի պաշտպանության նոր հնարավորությունները մարդկանց դարձնում են ազատ քաղաքացիներ, որոնց փոխհարաբերությունների հիմքում ընկած են միասեռ սոցիոմշակութային արժեքներ: Այս իմաստով ազատական ժողովրդավարական մշակույթի բնորոշ գծերից մեկը միասեռությունն է և դրան համապատասխան կյանքի ոճը: Այդ ոճի ձևավորման հարցում մեծ դեր են խաղում ազատական հասարակության այն ինստիտուտները, որոնք ձևավորվում են ազատական-ժողովրդավարական մշակույթի հետ և ծառայում այդ մշակույթի ամենօրյա վերարտադրությանը: Ի դեպ, ամեն մի հասարակության մեջ այդ ոճի բովանդակությունը և դրսևորման ձևը պայմանավորված է տվյալ մշակույթը կրող սոցիալական խավի իրավական ու տնտեսական դիրքով: Այս տեսակետից, օրինակ, ամերիկյան հայտնի սոցիոլոգ Վեբլենը նկատում է, որ ցանկացած հասարակության տիրապետող մշակույթին ու ոճին բնորոշ է ցուցադրականությունը: Եթե ավատատիրական հասարակարգում արտոնյալ խավին պատկանելը դրսևորվում էր «ցուցադրական կենցաղով», ապա ազատական հասարակություններում՝ «ցուցադրական սպառումով»[5]: Շարունակելով այս միտքը՝ Վեբլենը նկատում է, որ կապիտալիստական հասարակությունում տիրապետող խավի թելադրած ոճը, սոցիոմշակութային չափորոշիչները, սոցիալական վարքի կաղապարները մագնիսական էֆեկտ են տալիս, քանի որ սոցիալական ցածր խավերը սկսում են նրանց ընդօրինակել՝ ձուլվելով միասնական արժեքային ու կենսակողմնորոշումների մեջ: Դրանով իսկ վերին խավերի առաջարկած մոդան աստիճանաբար դառնում է մասսայական միասեռ մշակույթ: Այս հանգամանքը խիստ կարևոր է, քանի որ ողջ հասարակությունը սկսում է զարգանալ ու գործառնել որպես միասնական մշակութային համակարգ: Ի տարբերություն ավատատիրական հասարակության, ուր մշտական լարվածություն և հակասություններ կան հասարակության արտոնյալ և ունեզուրկ դասերի միջև, ինդուստրիալ մշակույթը ստեղծում է սոցիալական շարժուն ամբողջականություն, որի շրջանակներում մշակույթն այլևս դեր ու դիրք պայմանավորող մեծություն չէ, և մարդիկ, ըստ տնտեսության պահանջների, կարող են ազատ տեղափոխվել՝ դրանով իսկ նպաստելով հասարակության սոցիոմշակութային միասեռության ձևավորմանն ու տարածմանը: Այլ կերպ ասած՝ կապիտալիստական արտադրական հարաբերությունները, շուկայական տնտեսությունը և անհատի առաջնայնության սկզբունքն աստիճանաբար ձևավորում են այդ նոր քաղաքակրթությանը բնորոշ սոցիոմշակութային իմպերատիվների մի ամբողջ համակարգ, որի շրջանակներում գործառնում ու զարգանում է կյանքի կազմակերպման ու կանոնակարգման ազատական մշակույթը:

Էռնեստ Գելները, քննարկելով ինդուստրիալ հասարակության զարգացման առանձնահատկությունները, նկատում է, որ այդ նոր մշակույթում առաջին հերթին փոխվում է աշխատանքի բնույթը և աշխատանքի արժևորման չափանիշը: Աշխատանքը դառնում է «ինտելեկտուալ», ինչն էապես փոխում է հասարակության մեջ շրջանառող խորհրդանիշների ողջ համակարգը: Առաջին հերթին այդ խորհրդանիշները դառնում են միասեռ ու միանշանակ և այլևս պայմանավորված չեն հաղորդակցվող սուբյեկտներից և նրանց կարգավիճակից: Հաղորդակցման ունիվերսալ համակարգը պահանջում է շրջանառել այնպիսի խորհրդանիշներ, որոնք չունեն ենթատեքստ ու նույնքան ունիվերսալ են: Մի հանգամանք, որը պահանջում է ունիվերսալ դարձնել նաև կրթությունը: Այս իմաստով արդյունաբերական քաղաքակրթությունը պատմության մեջ առաջին անգամ բարձր մշակույթը դարձնում է համահասարակական ու համընդհանուր՝ այն միաժամանակ դարձնելով ձևայնացված ու կաղապարված:

Ի դեպ, եթե այս տեսանկյունից դիտարկենք քաղաքակրթության, որպես սոցիալական էվոլյուցիայի քիչ թե շատ ավարտուն ձևի, զարգացման Շպենգլերի տեսությունը[6], ուր նա փորձում է բացահայտել պատմության տրամաբանությունը, ապա դժվար չէ նկատել, որ ազատական քաղաքակրթությունը, նույն պատմության տրամաբանության համաձայն, քանի դեռ ձևավորվում է որպես մշակույթ, հակված է ներքին շարժունության, բազմազանության, ստեղծագործության: Այս շրջանում տեղի է ունենում ժողովրդի հոգևոր վիճակի ինքնորոշում (ազգ-պետությունների ձևավորում և այլն): Բայց այն պահից սկսած, երբ ազատական մշակույթը ձեռք է բերում հասարակական կազմակերպման քաղաքական համակարգի տեսք, և ձևավորվում են հասարակական հարաբերությունները կարգավորող ինստիտուտային համակարգերը, ազատականությունը մշակութային գործոնից վերաճում է քաղաքակրթական գործոնի: Որպես հասարակության քաղաքական-ինստիտուտային կազմակերպման որոշակի եղանակ՝ ազատական քաղաքակրթությունը կարող էր արդյունավետ գործառնել միայն համասեռ ու ձևայնացված մշակույթի պարագայում: Բայց բազմազանության ու բազմաձևության հաղթահարման արդյունքում կատարվում է մի շատ կարևոր իրադարձություն՝ անհատի փոխարեն ազատական-ինդուստրիալ քաղաքակրթության կենսական նախահիմք է դառնում մասսան: Միատիպ ու միակերպ պահանջներին համապատասխան ձևավորվող զանգվածը, Շպենգլերի բնութագրմամբ՝ մեծ քաղաքի գործնական ու ռացիոնալ բնակիչը, իր հերթին, դառնում է սոցիալական բազմազանության միջինացման գործիք, քանի որ հենց ինքն էլ խուսափում է նորարարությունից, բարոյական պայմանականություններից և գերադասում է, զգայական մշակույթի հաճույքներն ու պարզությունը[7]:

Ազատական կյանքի մշակույթի ստանդարտացման ու տարածման կարևոր պատճառներից մեկն էլ դառնում է այն, որ շուկայական տնտեսության պայմաններում հասարակության կազմակերպվածության արդյունավետության չափորոշիչ է դառնում ոչ այնքան բարեհաջողությունը, որքան մշտապես աճող բարեկեցությունը: Իսկ դա նշանակում է, որ ազատական հասարակություններում տևական ու պարբերական կատարելագործումը դառնում է տվյալ սոցիալական կարգի բնորոշ գիծը: Սա կարևոր հանգամանք է, քանի որ տնտեսական աճը և քաղաքական ազատությունների ընդլայնումն առաջին անգամ դառնում են տվյալ հասարակարգի և նրա քաղաքական համակարգի օրինականության չափորոշիչներ:

Առաջին հայացքից կարող է թվալ, որ բարեկեցության հարաճուն աճի սկզբունքը որևէ կապ չունի ազատականության սոցիոմշակութային արժեքների համահասարակականացման և համապատասխան իմպերատիվների ձևավորման գործընթացների հետ: Բայց դա այդպես չէ: Բանն այն է, որ շուկայական ու մրցակցային

հարաբերությունների պայմաններում հասարակությունը չի կարող ունենալ կայուն դերային կառուցվածք, ինչը նշանակում է, որ մարդիկ պետք է տիրապետեն տեխնիկական հմտություններին, մշտապես հարստացնեն իրենց գիտելիքների պաշարը: Կյանքի այս պահանջն ազատական հասարակությունը դարձնում է հավասարարական: Փակ հասարակություններում, ինչպիսին էր, օրինակ, խորհրդային համակարգը, մարդկանց սոցիալ-քաղաքական վարքի կողմնորոշիչները հարաբերականորեն կայուն էին, և մարդկանց պահանջմունքներն ու հավակնությունները հիմնականում համընկնում էին հասարակության մեջ նրանց ունեցած դերին ու դիրքին: Մինչդեռ շուկայական հարաբերություններին և արդյունաբերական հասարակությանը բնորոշ ներքին շարժունությունը հարուցում է հավասարության և համարժեք հնարավորությունների ակնկալիքներ, ինչն աստիճանաբար դառնում է սոցիոմշակութային նորմ ու ազդում հասարակության հետագա կյանքի վրա: Ինչ-որ իմաստով կարելի է ասել, որ շուկայական բաց հասարակություններում մարդկանց միջև սոցիալ-տնտեսական տարբերությունները որոշվում են ոչ թե նրանց նախասահմանված կարգավիճակով, այլ` անհատական որակներով: Այդ անհավասարությունը մարդկանցից որևէ մեկը չի համարում իր ներքին ես-ին ներքնապես բնորոշ որակ: Կյանքի ձևայնացված նորմերն ու կանոնները, հնարավորությունների հավասարությունը, ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական կյանքում, մարդկանցից պահանջում են ունենալ միանման մշակույթ: Համասեռ ու համընդհանուր մշակույթը դառնում է սոցիալական համակարգի գործառնության, տեղեկատվությունը միակերպ հասկանալու անհրաժեշտ ու կարևոր պայմանը: Այդ մշակույթի կարևոր առանձնահատկություններից մեկն այն է, որ ցանկացած պահի մարդը կարող է ներառվել նրա մեջ, անկախ դերից ու դիրքից: Տնտեսական ճկուն համակարգը, քաղաքական իրավունքների հավասարեցումը, ինչպես նաև մշակութային արժեքների համազգայնացումը սոցիոմշակութային համակարգին տալիս են մարդկանց նույնականացմանը նպաստող այնպիսի գործառույթներ, ինչպիսիք չունեն անգամ սոցիալական կառույցները: Պատահական չէ, որ արևմտաեվրոպական հետազոտողների մեծ մասը եվրոպական ազգերի (ազգ-պետությունների) ձևավորումը կապում է ազատական մշակույթի ձևավորման հետ: Օ. Բաուերը, օրինակ, վերլուծելով կապիտալիստական արտադրական հարաբերությունների ներգործության տակ միասնական մշակութային դաշտի ձևավորման առանձնահատկությունները, նկատում է, որ կապիտալիզմը ոչ միայն ձևավորեց նոր տնտեսական հարաբերություններ, այլև մարդկանց ներառեց մեկ միասնական մշակութային հանրույթի մեջ` նպաստելով ազգային նույնականության ձևավորմանը[9]:

Ազգերի ու ազգ-պետությունների ձևավորման հարցում առանձնապես մեծ է համախմբման տնտեսական գործոնների դերը: Կապիտալիստական ձեռնարկատիրական գործունեության արդյունքում ձևավորված ներազգային շուկան առաջին հերթին միավորեց տվյալ էթնիկ հանրույթի կենսագործունեության տարածությունը` այն դարձնելով տնտեսական տարածություն, ինչը, իր հերթին, վերաճում է մարդկանց ազգային ինքնանույնացման տնտեսական խորհրդանիշի: Ազգային կյանքի տնտեսական կառուցվածքի ձևավորմանը զուգահեռ ձևավորվում են նաև ազգային-կառուցվածքային սոցիալական խավեր ու շերտեր: Այս հանգամանքն, իր հերթին, նպաստում է ազգային տնտեսությանը համապատասխան ձևայնացված մշակույթի, կրթական համակարգի, հարաբերությունների կարգավորման իրավական ու ինստիտուտային համակարգերի ձևավորմանը: Այլ կերպ ասած` տնտեսական կազմակերպված ու համախմբված համակարգն ազգի սոցիոմշակութային համակարգի համար դառնում է արտաքին այն միջավայրը, որի թելադրանքով կազմակերպման ու համախմբման գործընթացներ են սկսվում նաև մշակույթի, սոցիալական հարաբերությունների և քաղաքականության բնագավառներում:

Ռացիոնալ տնտեսավարման սկզբունքների հիման վրա տնտեսական ամբողջացումը (ինտեգրումը) ներազգային կապերի ձևավորման սոցիոմշակութային գործընթացներին նոր բովանդակություն է հաղորդում: Մասնավորապես, էթնիկ կենսատարածությունը ձեռք է բերում տնտեսական փոխպայմանավորված գործառնական ամբողջականություն, ձևավորվում են ազգային տնտեսական, քաղաքական ու սոցիալական միասնական շահեր, մարդկանց համար ազգային նույնականությունը կոնկրետ բովանդակություն է ստանում: Այս ամենին զուգահեռ` ազգային շուկան դրսևորում է միջազգային շուկա մտնելու հավակնություններ, ինչն ավելի է արագացնում ազգի տնտեսական ու քաղաքական հավակնությունների դրսևորումները: Սա կարևոր հանգամանք է, քանի որ նպաստում է ազգ-պետության համախմբմանն ու հզորացմանը:

Ազատական-ժողովրդավարական մշակույթի մյուս առանձնահատկությունը բազմակարծությունն է: Այս սկզբունքի էությունն այն է, որ մարդիկ ընդունում և ճանաչում են միմյանց շահերի, արժեքների ու տեսակետների օրինականությունը: Քաղաքացիական հասարակություններում մարդիկ բաժանված են առանձին խմբերի, որոնցից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատուկ շահը: Չկան և չեն կարող լինել այնպիսի խմբեր, որոնց շահերն ու սոցիոմշակութային արժեքներն արտահայտեն ողջ հասարակության շահերը: Կարծիքների ու շահերի բազմազանությունը, իր հերթին, ենթադրում է ներկայացուցչական ժողովրդավարություն, ինչը քաղաքական ինստիտուտների այն համակարգն է, որի միջոցով կարգավորվում են ներհասարակական հարաբերությունները և դառնում կայունության ու կարգավորվածության ամենօրյա քաղաքական արտադրություն: Ըստ էության` բազմակարծությունը, այլընտրանքայնությունը և սեփական շահերը քաղաքական մակարդակում պաշտպանելու նպատակով ստեղծված ժողովրդավարական ինստիտուտները հենց այն մեխանիզմներն են, որոնց օգնությամբ ձևավորվում ու գործառնում են սոցիալական բաց համակարգերը: Բայց դրանք ինչ-որ իմաստով կարելի է դիտարկել որպես համախմբման մեխանիզմներ, որոնց օգնությամբ ազատական մշակույթը փորձում է նվազագույնի հասցնել բաց հասարակությանը բնորոշ անկայունության ու դինամիզմի բացասական հետևանքները: Այս առնչությամբ անհրաժեշտ է նկատել, որ շուկայական տնտեսության ու անհատի առաջնայնության սկզբունքի վրա ձևավորված ազատական մշակույթն իրենից ներկայացնում է սոցիալական տարբեր կարգի արժեքների ակտիվ փոխանակման համակարգ (տնտեսական, քաղաքական, հոգևոր ու սոցիալական): Ինքնին հասկանալի է, որ ներհամակարգային սոցիալական փոխարկումների այդ «շուկայում» առանց երկխոսության, այլոց կարծիքների հետ հաշվի նստելու և շահերի համամասնության պահպանման հնարավոր չէ պահպանել համակարգի դինամիկ հավասարակշռությունը[10]:

Երկխոսության, այլոց կարծիքների հետ հաշվի նստելու և, ընդհանրապես, այլընտրանքային կարծիք ունենալու սոցիոմշակութային արժեքը համահունչ է ինդուստրիալ-ազատական հասարակությանը բնորոշ տեխնոլոգիական ռացիոնալիզմին: Տեխնոլոգիական ռացիոնալիզմի և այլընտրանքային մտածողության հասարակությունը կամ դրանց համատեղելու դժվարությունները չի կարելի բացատրել միայն հասարակության

բարոյական մթնոլորտի աղտոտմամբ: Ինչպես արդեն նշել ենք, ինդուստրացումը, շուկայական տնտեսությունը, տնտեսական ճգնաժամերը և նմանատիպ այլ երևույթներ ազատական-ժողովրդավարական մշակույթի մեջ գնալով մեծացնում են պետության դերն ու գործառույթները (Ջ. Քեյնս): Այդ տեսակետից, մինչ համաշխարհայնացման հաղթարշավը, ինդուստրիալ հասարակության ազգ-պետություններն ունեին սոցիալական լուրջ ծանրաբեռնվածություն և կոչվում էին սոցիալական պետություն կամ բարեկեցության պետություն: Շնորհիվ սոցիալական որոշակի ծառայությունների և հատկապես արտադրողականության աճի միջոցով սոցիալական պայմանների բարելավման՝ պետությունը ստանում է կարգի, անվտանգության ու բարեկեցության ապահովման լրացուցիչ հնարավորություններ: Կայունությունը, ապահովվածությունը, բարեկեցությունը դառնում են ավելի կարևոր սոցիոմշակութային արժեքներ, քան ազատությունները, տնտեսական ու քաղաքական իրավունքները: Բարեկեցիկ կյանքի մասսայական պահանջարկը և պետական միջոցներով դրա ապահովումը նվազագույնի է հասցնում ազատության սպառողական արժեքը: Այս հանգամանքն, իր հերթին, բացասաբար է անդրադառնում այլակարծության դրսևորման վրա, քանի որ ընկալվում է որպես հաստատված կարգին ու բարեկեցությանը սպառնող վտանգ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


[1] Տե՛ս *Plant R.,* Modern Political Thought Oxford, UK, Cambridge, USA, 1992, p. 134-135.

[2] Տե՛ս *Костан Б.,* О свободе у древних в сравнении со свободой современных людей. - Полис, 1993, т. 2, с.98.

[3] Տե՛ս Տես *Պոպեր Կ.,* Բաց հասարակությունն ու դրա թշնամիները, էջ 191:

[4] Տե՛ս *Хайек Ф. А.,* Погубная самонадеянност: ошибки социализма, с. 38.

[5] Տե՛ս *Veblen Th.,* The Essence of the Work and Thought of the American's Great Original Minds, New York, 1976, p.75.

[6] Տե՛ս նույն տեղը, էջ 27-30:

[7] Տե՛ս *Геллер Эрнест,* Пришествие национализма. Мифы нации и класса. В кн.: Нации и национализм, М., 2002, с. 155-156.

[8] Տե՛ս *Шпенглер О.,* Закат Европы. т. 1. Образ и действительность, Новосибирск, 1993.

[9] Տե՛ս նույն տեղը, էջ 398.

[10] Տե՛ս *Бауэр Отто,* Национальный вопрос и социаль-демократия. ВКН.: Нации и национализм, с. 64-65.

[11] Տե՛ս Անցումային հասարակության սոցիոմշակութային փոխակերպումները, Եր., 2005, էջ 84:


---

## THE FREE - DEMOCRATIC SOCIO - CULTURAL FEATURES IN MARKET INTERRELATIONS

ANNA GRIGORYAN

Summary


In the basis of free culture of organizing of society life are the preferences of individual freedoms, free competition, human superiority. The experience of the modern history proves that the principle of market relations and superiority of a person essentially changed the content and way of interrelations between government and society. In economical life the important news, that was brought by freedom, is that it made clear the business of economical and political governments, the markets that decide the results of business, were discriminated and formed.

In economical life the economic market that works with the principle of individual benefit was gradually formed (market relations) and in political life the political market, that worked with the principle of social benefit, was formed (law - political relations).


## ХАРАКТЕРНЫЕ ОСОБЕННОСТИ ЛИБЕРАЛЬНО-ДЕМОКРАТИЧЕСКОЙ СОЦИОКУЛЬТУРЫ В КОНТЕКСТЕ РЫНОЧНЫХ ОТНОШЕНИЙ

АННА ГРИГОРЯН

Резюме


В основе либеральной культуры организации общественной жизни лежит приоритет первичности личных свобод и свободной конкуренции. Опыт новейшей истории свидетельствует, что рыночные отношения и принцип первичности личности существенно изменили характер и содержание отношений между государством и обществом. Важнейшей новостью внесенной либеральностью в экономическую жизнь стали определенность функций экономической и политической властей, дифференцировались и сформировались рынки определяющие эффективность деятельности каждой из них.

В экономической жизни постепенно образовался действующий по принципу личного интереса рынок (рыночные отношения), а в политической - политический рынок действующий по принципу общественного интереса (правовые и политические отношения).

ՏԻԳՐԱՆ ՃՈՐՈԽՅԱՆ

# ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԽՄԲՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԸ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՌԱՋՆԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

20-րդ դարի վերջին քառորդն ընդունված է դիտարկել որպես գլոբալ ժողովրդավարացման դարաշրջանի սկիզբ, որն ընկալվում է որպես ազատական ժողովրդավարական արժեքների համաշխարհային հաղթարշավ: Եվ իսկապես, այդ տարիներն անցան իրենց «նոր ժողովրդավարություններ» հռչակած մի շարք երկրներում նախկինում անսասան թվացող ավտորիտար և հետտոտալիտար վարչակարգերի փլուզման և ժողովրդավարական ինստիտուտների ու փործառության աստիճանական կայացման լույսի ներքո: Այդ ժամանակաշրջանում շատերը համոզված էին, որ գլոբալ ժողովրդավարացման «երրորդ ալիքի» հայեցակարգը[1], կարող է ապահովել ժողովրդավարական անցման գործընթացների արդյունավետությունը:

Նախորդ ժողովրդավարական ալիքների համեմատ ներկայիս ալիքը տարբերվում է մի շարք առանձնահատկություններով, որն ստիպում է մեզ մտածել. արդյո՞ք մենք չենք դիտարկում քաղաքական արդիականացման տարբերակներ, որտեղ փոփոխությունները տեղի են ունենում գրեթե համաչափ, սակայն բոլորովին տարբեր և դժվար համեմատելի համատեքստերում՝ ոչ միանման մեկնարկային տվյալների ու իրադարձությունների շարքի պայմաններում, որի արդյունքում գործընթացները ենթարկվում են տարբեր օրինաչափությունների:

Նախկինում որպես վեկտորային ընկալվող համաշխարհային քաղաքական զարգացումը մեկնաբանվում էր ժողովրդավարացման փուլերի հարացույցի ներքո, որի համաձայն՝ բոլոր անցումային երկրները պետք է ունենան անցման միասնական կերպ. ավտորիտարիզմի քայքայում և փլուզում, վարչակարգային ազատականացում, ինստիտուցիոնալ ժողովրդավարացում, ոչ համախմբված ժողովրդավարություն և, վերջապես, ժողովրդավարական համախմբում[2]:

Սակայն այսօր արդեն ակնհայտ է, որ ժողովրդավարական անցումը, որպես քաղաքական զարգացման մոդել, միարժեք պատասխան չունի այն հարցին, թե «անցումը կավարտվի ժողովրդավարությամբ, թե՞ հին կամ նոր դիկտատուրայով: Նոր ժողովրդավարությունը կայո՞ւն կլինի, թե՞ ոչ: Ինչպիսի՞ սոցիալական ինստիտուտներ պետք է կազմեն նրա հիմքը»[3]: Այսինքն՝ թեպետ մոդելի տրամաբանությանը համաձայն՝ անցմանը տրվում է ժողովրդավարության տեսք, սակայն դա դեռևս չի ենթադրում ժողովրդավարության կայացում՝ իբրև մոդելի ցանկալի ելք: Անցման մոդելի հիմնական առանձնահատկությունը նրա արդյունքի անորոշությունն է, որը ռուս քաղաքագետ Վ. Գելմանը համարում է մի իրավիճակ, «... երբ քաղաքական ինստիտուտների համակարգը և քաղաքական գործընթացի արդյունքները կրում են ժամանակավոր բնույթ... եթե ընտրանին քաղաքական կամք չի ցուցաբերում իր կողմից իրականացվող ժողովրդավարական բարեփոխումները համակեցության նորմերի և սոցիալական երկխոսության սկզբունքների հաստատմանը նպատակամետորեն ուղղելու համար»[4]:

Անցումային հասարակությունների կերպափոխությունների փորձը վկայում է, որ ինստիտուցիոնալ կայացումը և վարչակարգային համախմբումը ինքնին դեռ չեն հանգեցնում ազատական ժողովրդավարության համախմբմանը: Վերջինս ենթադրում է այնպիսի պայմանների ստեղծում, որոնց դեպքում գոյատևում են միայն ժողովրդավարական կառույցները՝ բացառելով բնաշրջումը և ոչ ժողովրդավարական ելքերի հնարավորությունը, և որն ընկալվում է որպես the only game in the town (միակ խաղը քաղաքում):

Ժողովրդավարական անցման անհաջողությունների և ժողովրդավարական համախմբման ձախողումների բուն էությունն ուսումնասիրելու համար առանձնացնենք այն մակարդակները, որոնցում, ըստ Ֆ. Ֆուկույամայի, ընթանում է ժողովրդավարական համախմբումը[5].

1. *Գաղափարախոսություն:* Սա ժողովրդավարական ինստիտուտների և շուկայական կառույցների նպատակահարմարության կամ աննպատակահարմարության մասին նորմատիվ համոզմունքների մակարդակն է: Մի կողմից՝ ակնհայտ է, որ ժողովրդավարական ինստիտուտները չեն կարող երկար գոյատևել լեգիտիմության բացակայության պայմաններում, մյուս կողմից՝ ժողովրդավարության լեգիտիմության նկատմամբ հավատը կարող է ուղեկցվել նաև ժողովրդավարական ինստիտուտների ստեղծման կամ համախմբման անկարողությամբ: Այս մակարդակն, ըստ էության, ռացիոնալ ինքնագիտակցության ոլորտ է, որտեղ լեգիտիմության ընկալման փոփոխությունները կարող են լինել բավական անսպասելի:

2. *Ինստիտուտներ:* Այս ոլորտը ներառում է սահմանադրությունները, դատական և կուսակցական համակարգերը, շուկայական կառույցները և այլն: Ինստիտուտների փոփոխությունը տեղի է ունենում ոչ այնքան արագ, ինչպես նրանց լեգիտիմության մասին վերաբերմունքը, սակայն պետական քաղաքականության միջոցով կարող են ենթարկվել մանիպուլյացիաների: Սա այն մակարդակն է, որտեղ վերջին ժամանակներում ընթանում էր քաղաքական պայքարը. երբ նոր ժողովրդավարական պետությունները փորձում էին մասնավորեցնել պետական գույքը, հիմնել նոր սահմանադրություններ, համախմբել կուսակցություններ և այլն:

3. *Քաղաքացիական հասարակություն:* Այն իրենից ներկայացնում է պետությունից անկախ տարերայնորեն ստեղծված սոցիալական կառույցների ամբողջություն, որոնք կազմելու են ժողովրդավարական քաղաքական ինստիտուտների հիմքը: Այս կառույցները հաստատվում են ավելի դանդաղ, քան քաղաքական ինստիտուտները, շատ ավելի քիչ են ենթարկվում մանիպուլյացիաների՝ հաճախ գտնվելով հակադարձ համեմատականության մեջ պետական իշխանության հետ (ակտիվանում են պետության նախանջով և՝ հակառակը):

4. *Մշակույթ:* Այս խորագույն մակարդակը ներա-

ռում է այնպիսի երևույթներ, ինչպիսիք են՝ էթնիկ ինքնության համակարգը, ընտանիքի կառուցվածքը, կրոնը, բարոյական արժեքները, քաղաքացիականությունը և պատմական ավանդույթները: Եվ ինչպես ժողովրդավարական ինստիտուտներն են հիմնված առողջ քաղաքացիական հասարակության վրա, այնպես էլ քաղաքացիական հասարակությունն է իր հերթին թիկունք գտնում մշակույթի մակարդակում: Չնայած այն որոշակիորեն ենթարկվում է երրորդ մակարդակում ընթացող իրադարձությունների ազդեցությանը, այնուամենայնիվ, մշակույթն ընդունակ է փոփոխությունների միայն ամենացածր տեմպով:

Ս. Հանտինգտոնի կողմից շրջանառության մեջ դրված ժողովրդավարությանն անցման երրորդ ալիքը հիմնականում գործի դրվեց առաջին՝ գաղափարախոսության մակարդակի շնորհիվ: Այս կամ այն պատճառով, ժողովրդավարության լեգիտիմության վերաբերյալ ընկալումներն սկսեցին լուրջ փոփոխությունների ենթարկվել 1970-80-ականներին, որը հանգեցրեց Լատինական Ամերիկայում շուկայական կողմնորոշում ունեցող նախարարների նշանակմանը, կոմունիստական աշխարհում ժողովրդավարամետ շարժումների ձևավորմանը և ավտորիտարիզմի կողմնակիցների ընդհանուր բարոյազրկմանը: Գաղափարախոսության մակարդակում փոփոխությունների այսպիսի չափերը արագացրին նաև փոփոխությունների անհրաժեշտությունը երկրորդ՝ ինստիտուտների մակարդակում և հանգեցրին բազմաթիվ դեբատների՝ «սկզբնական փուլում տնտեսական բարեփոխումներ թե ժողովրդավարություն» տիպի թեմաների շուրջ:

Երրորդ՝ քաղաքացիական հասարակության մակարդակում փոփոխությունները համեմատաբար դանդաղ էին ընթանում առաջին հերթին այն պատճառով, որ այստեղ փոփոխությունների տեմպը մեծապես կախված է չորրորդ՝ մշակույթի մակարդակի բնույթից: Քաղաքացիական հասարակությունը համեմատաբար արագ ձևավորվեց Լեհաստանում, Հունգարիայում, Չեխիայում և մերձբալթյան երկրներում, որտեղ առկա էին ուժեղ այլընտրանքային ընտրանիներ՝ պատրաստ փոխելու հին կոմունիստական ընտրանիներին, և անցյալում ունենալով համապատասխան փորձ ու նպաստավոր ինքնության համակարգ՝ արագորեն ձևավորելու ժողովրդավարական քաղաքական հարաբերությունների հիմքերը՝ սոցիալական կառույցներ (իրենց շահերը գիտակցող սոցիալական խավեր և համապատասխան հասարակական կառույցներ), դրանով իսկ նպաստելով քաղաքացիական հասարակության սոցիոմշակութային հիմքերի ձևավորմանը: Եվ հակառակը, քաղաքացիական հասարակությունը հաստատման դժվարին ճանապարհ սկսեց Բելառուսում, Ուկրաինայում և Ռուսաստանում, որը կապված էր նոր ինստիտուտների հիմնումը հին կոմունիստական ընտրանիներին լիազորելու հետ: Տարբերություններն ակնհայտորեն առնչվում են մշակույթի ոլորտին, որի փոփոխությունների տեմպը մեծ մասամբ պայմանավորեց նաև վերջին տարիներին աշխարհի տարբեր ծագերում նկատվող ժողովրդավարացման երրորդ ալիքի անկումը, հետևաբար և ժողովրդավարական համախմբման ձախողումը: Նորմատիվ համոզմունքների գրեթե ակնթարթային փոփոխությունները (ավանդական ընտանիքի քայքայում, ազատ ժամանակի առկայություն, ունիվերսալ մոդայի տարածում և այլն) հանգեցրին բնակչության սպասելիքների աճի, որոնք չէին կարող արդարանալ առավել խորը մակարդակներում փոփոխությունների վարման անհետևողականության պայմաններում: Հետևաբար, ազատական ժողովրդավարության հիմնական խնդիրները կապված են երրորդ և, հատկապես, չորրորդ մակարդակի հետ: Այսօր մեծ տարաձայնություններ գրեթե չկան առաջին և երկրորդ մակարդակներում. դժվար է գտնել հավանական գաղափարախոսական ընդդիմադիրներ, և կարելի է արձանագրել քիչ թվով այլընտրանքային ինստիտուտներ, որոնք ընդունակ են խանդավառություն առաջացնել: Իրականում, անցյալ հարյուրամյակի փորձը ցույց տվեց, որ «ժողովրդավարական» պետություններում ինստիտուտների պատվամոլ և անհավասարակշիռ կերպափոխումները հաճախ առաջացնում են ավելի շատ խնդիրներ, քան լուծում դրանք: Ժամանակակից «ժողովրդավարական» երկրներում կյանքի որակի վրա ազդող իրական դժվարությունները վերաբերում են սոցիալական և մշակութային ոլորտին, որոնք, հավանաբար, վեր են ինստիտուցիոնալիստական որոշումների, ասել է թե՝ պետական քաղաքականության հնարավորություններից:

Փիլիսոփայության պատմությանը հայտնի է ունիվերսալիաների (ընդհանուր հասկացությունների) բնության մասին վեճը՝ նոմինալիստների և ռեալիստների միջև: Նոմինալիստները գտնում են, որ ընդհանուրը իրենից ներկայացնում է սոսկ մասնավորի գումար և իրականում չունի գոյաբանական բովանդակություն: Սոցիալական փիլիսոփայության մեջ խոսքը վերաբերում է անհատին՝ որպես ինքնիշխան սուբյեկտի, որն իր որոշումները կայացնում է՝ ելնելով բացառապես սեփական շահերից կամ պատկերացումներից: Նոմինալիզմի կարգախոսն է՝ ոչ թե անհատն է հասարակության համար, այլ հասարակությունը՝ անհատի, որը, Պանարինի կարծիքով, ավելի շատ նորմատիվային բնույթ ունի, քան իրական[6]: Կարելի է տարբեր կերպ մեկնաբանել նոմինալիզմի դրույթները, սակայն մեկ բան ակնհայտ է. ժողովրդավարական ընթացակարգերն իմաստ ունեն միայն այն դեպքում, երբ անհատները մասնակցում են ընտրական գործընթացին որպես սեփական, այլ ոչ՝ այս կամ այն կոլեկտիվ կամքի կրողներ: Այս իմաստով ժողովրդավարությունը նոմինալիստական համակարգ է, որտեղ միասնական կոլեկտիվ ճակատագրի սպասելիքներն ու արժեքները, ինչպես նաև մասնավորն ընդհանուրին և անհատական ողջամտությունը կոլեկտիվ կամքին ենթարկելու սկզբունքները հենարան չունեն: Պատահական չէ, որ ժողովրդավարական արժեքները դժվարությամբ են պատվաստվում այն մշակույթներում, որտեղ արմատացած են «անձնազոհ ծառայության» էթիկան և կոլեկտիվ իդեալները: Ժողովրդավարությանը հակացուցված չեն հերոսությունն ու անձնազոհությունը, սակայն այնտեղ դրանք անհատական ընտրության հետևանք են, այլ ոչ՝ «կույր հավատարմության և հավատի»: Այսինքն՝ անհատները խաղում են սեփական սոցիալական միջավայրին խիստ կապված «ազատ էլեկտրոնների» դեր՝ փոխելով խմբային պատկանելությունը՝ կախված շահավետի և արժանիի մասին անձնական պատկերացումներից:

Ժողովրդավարության հիմնարար գաղափար է հանդիսանում տնտեսական և քաղաքական գործառույթների առանձնացման սկզբունքը, առաջին հերթին այն պատճառով, որ տնտեսվարման ոլորտի և քաղաքացիական կյանքի ինքնուրույնությունը մասնավոր իրավունքով պաշտպանված ինքնիշխան անհատի ձևավորման գրավականն է: Տնտեսվարման ոլորտում դա նշանակում է, որ արտադրողն այլևս կախում ունի ոչ թե իշխանությունից, այլ՝ սպառողից: Գոհացնելով

սպառողին՝ մասնավոր սեփականատերը զարգացնում է սեփական հարստությունը: Առաջանում են փոխանակման գործընկերային հարաբերություններ: Այսպիսով, իշխանական հիերարխիկ համակարգի ուղեկցությամբ առաջանում և աստիճանաբար մեծ տարածում է գտնում գործընկերային հարաբերությունների համակարգը, իսկ հարստացումը դադարում է լինել զուտ իշխանության գործառույթ: Շուկայական փոխանակման համակարգի մեջ մտնող մասնավոր սեփականատերին սովորական դեպքերում իշխանությունը չի հովանավորում: Այսպես ձևավորվում է միայն իր վրա հույս դնող ինքնուրույն անհատը, որը մասնակցության հայտ է ներկայացնում նաև քաղաքական բնագավառում:

Նախկինում անցումը ժողովրդավարությանը ենթադրում էր որոշ ավանդույթներից հրաժարում, որոշների պահպանում, որի արդյունքում ծնունդ էր առնում նոր հասարակությունը՝ այդպիսով ապահովելով հասարակության պատմական ժառանգականությունը: Սակայն ներկայիս ժողովրդավարական վերաձևումներից շատերն անցում են ավանդական հասարակության հետ գրեթե աղերս չունեցող կոմունիզմից, որն այնքան է նստվածք թողել հասարակական կյանքի բոլոր ոլորտներում, որ այդ համակարգի փլուզումից հետո յուրաքանչյուր երկրի բնակչության ճնշող մեծամասնությունը զարգացումը տեսնում է զրոյից սկսելու ռազմավարության մեջ[7]: Իհարկե, արդիականացման շատ հարցեր լուծվեցին կոմունիզմի օրոք (հասարակության ուրբանիզացում, բնակչության կրթության մակարդակի աճ, տրանսպորտային կոմունիկացիաների կառուցում), որոնցից չարժե հրաժարվել, քանի որ մեծապես կպարզեցնեն ժողովրդավարական համակարգին անցման գործընթացը: Սակայն բաց հասարակությանն անցման հիմնական սոցիո-տնտեսական պայմանների թվում առաջնային տեղը գրավում է ոչ թե ուրբանիզացիայի ու կրթության բարձր մակարդակը, այլ մասնավոր սեփականության ճանաչումը, որը թույլ է տալիս քաղաքացիներին ապահովել ազատության և պատասխանատվության առողջ համահարաբերակցություն:

Այնուամենայնիվ, հետսոցիալիստական տարածաշրջանի երկրներն, ի տարբերություն արևելաասիական օրինակների, ի սկզբանե վերցրին քաղաքական կերպափոխումների գերակայության և առաջնայնության կուրս, որի արդյունքում հասարակությունը «վերնաշերտային մակարդակում» արագ ժողովրդավարացվեց և արևմտականացվեց՝ զգալիորեն ետ թողնելով տնտեսական հիմքերի ձևավորումը:

Արդյունքում՝ այսօր նախկին սոցիալիստական պետություններում բարեփոխումների հիմնական խնդիրը կապված է ամուր հաստատված «իշխանություն-սեփականության» սկզբունքի ճնշման հետ: Մասնավորեցման գործընթացները շատ պետություններում իրականացվում են այնպես, որ սեփականությունն անցնի նախկինում իշխանություն ունեցած մարդկանց (նոմենկլատուրային մասնավորեցում): Այսինքն՝ «իշխանություն-սեփականության» նախկինում գործող կենտրոնացված համակարգին ուղղակի փոխարինում է ապակենտրոնացված իշխանություն-սեփականությունը: Նոմենկլատուրային սեփականատերերին աջակցում և հովանավորում են պահպանված իշխանական կապերը, որի հետևանքով զգալիորեն հետաձգվում է անցումը գործընկերային հարաբերություններին և շարքային սպառողից արտադրողի կախվածությանը:

Այսօր էլ նոմենկլատուրային սեփականատերերի ճակատագիրը մեծ հաշվով կախված է ոչ թե շուկայական սպառողից, այլ իշխանական ատյաններից (վարկերի տրամադրում մատչելի պայմաններով, մուտք տարբեր շուկաներ, այդ թվում՝ և արտաքին, պետբյուջեից վնասների հատուցում և այլն): Եվ քանի դեռ մասնավորեցումը հիմնվում է չափազանց նեղ սոցիալական բազայի (նոմենկլատուրայի) վրա, այդչափ թերևս անորոշ է մնում ժողովրդավարության համախմբման ճակատագիրը:

Փաստորեն, հետխորհրդային հասարակություններում ձևավորված քաղաքական համակարգերը արևմտյան հասարակության նմանօրինակը ստեղծելու նպատակով, որպես կանոն, հիմնական ուշադրությունը կենտրոնացնում են ժողովրդավարության գաղափարախոսությանը համապատասխան ինստիտուտների ստեղծման վրա: Հասկանալի է, որ համակարգային կերպափոխումների հատկապես առաջին փուլում ժողովրդավարությանը բնորոշ ինստիտուտները խիստ կարևոր դեր են կատարում նախորդ համակարգի գաղափարական ու իրավաքաղաքական հիմքերը խարխլելու և վերացնելու գործում: Սակայն վերակառուցվող հասարակությունների փորձը ցույց է տալիս, որ ո՛չ ժողովրդավարության գաղափարախոսությունը, ո՛չ էլ ժողովրդավարության ինստիտուտներն ինքնին, առանց էթնոմշակութային միջավայրի, ոչ միայն ցանկալի արդյունք չեն տալիս, այլև հարուցում են նոր խնդիրներ և, որպես կանոն, արժեզրկվում[8]:

Դասական իմաստով՝ քաղաքական համակարգը պարտավոր է սահմանափակել հասարակական կյանքի վրա անհարկի միջամտությունները, քանի որ մարդիկ իրենց կողմնորոշումների ու պահանջմունքների մեծ մասը կարող են բավարարել ինքնագործունեության միջոցով՝ օգտվելով քաղաքացիական հասարակության և շուկայական հարաբերությունների ընձեռած հնարավորություններից: Մինչդեռ անցումային հասարակությունների քաղաքական համակարգերը, որպես կանոն, ղեկավարվում են էլիտարիզմին բնորոշ «սոցիոմշակութային պարտադրանքների» սկզբունքով, գտնելով, որ արդի քաղաքակրթության բարդ ու հակասական գործընթացներում հասարակության «պահպանողական մեծամասնությունը» չի կարող ճիշտ կողմնորոշվել և համապատասխան որոշումներ կայացնել: Այստեղ, բնական է, խոսքը վերաբերում է ոչ այնքան ժողովրդավարությանը, որքան ազատականությանը, որն ինքնին համակարգաստեղծ ժողովրդավարական արժեք չէ: Այն այդպիսին կարող է դառնալ կամ քաղաքացիական հասարակության ձևավորման դեպքում, երբ սոցիալական տարաբնույթ կառույցներն ու կազմակերպությունները, որոնք քաղաքական պատվերով չեն ստեղծվել և չեն գտնվում քաղաքական ուժերի վերահսկողության տակ, օրենքի իշխանության պաշտպանվածությամբ կարող են հակազդել ազատականության «վայրի» դրսևորումներին, կամ էլ այն դեպքում, երբ ազատականությունն ու շուկայական տնտեսությունը վերահսկվում են որոշակի գաղափարական ուղղվածություն ունեցող ուժեղ քաղաքական իշխանության կողմից (չինական փորձի հիման վրա): Արդյունավետ սոցիալ-քաղաքական համակարգ ստեղծելու և ներպետական ու ներազգային կայունություն և կարգավորվածություն հաստատելու վերոհիշյալ երկու հնարավոր տարբերակներից որն էլ ընտրվի որպես ազատականության չափավորման միջոց կամ եղանակ, դրական արդյունք կարող է տալ միայն այն դեպքում, երբ այդ քայլերը համապատասխանում են տվյալ

էթնոկեցության սոցիոմշակութային առանձնահատկություններին:

Եթե ժամանակակից արևմտյան քաղաքական միտքը ձգտում է կառուցել արդար սոցիալական կարգ՝ վերից վար՝ հիմնվելով առաջին և երկրորդ մակարդակների վրա, ապա ասիական ավանդական մշակույթները սկսում են չորրորդ և երրորդ մակարդակներից և բարձրանում դեպի վեր: Կոնֆուցիականությունը անհատներին սոցիալիզացնում է՝ ենթարկելով չինական հասարակության ակյունաքարային բջջին՝ անհատական ընտանիքներին: Ավելի խոշոր քաղաքական կառույցները բաղկացած են ստորին մակարդակի այդ տարրերից: Այսպիսով, ճիշտ չէ ասիական այլընտրանքը նույնացնել կոնկրետ ինստիտուտների՝ խորհրդարանի առկայության կամ անհատի որոշ իրավունքների բացակայության հետ: Այլընտրանքի էությունը այն հասարակությունն է, որը հիմնված է ոչ թե անհատի իրավունքների պաշտպանության, այլ հասարակության մեջ խորապես արմատացած բարոյական օրենսգրքի (կոդեքսի) վրա: Այսպիսի հասարակությունը կարող է գոյություն ունենալ ինչպես ժողովրդավարական (Ճապոնիա), այնպես էլ ավտորիտար (Սինգապուր) պետություններում:

Այնուամենայնիվ, և՛ արևելյան հասարակականի առաջնայնության, և՛ արևմտյան անհատի առաջնայնության ծայրահեղ դրսևորումները ներպետական կյանքի կազմակերպման և կարգավորվածության ամենօրյա արտադրության արդյունավետ եղանակներ չեն, եթե չունեն սոցիալական համակեցության արժեքային ու բարոյահոգեբանական կայուն համակարգեր: Առանց էթնիկ ինքնության կարևորության գիտակցման, միայն արտաքին միջոցներով (ուժեղ քաղաքական իշխանություն) կամ ինքնագործունեությամբ (քաղաքացիական հասարակության կառույցներ) հնարավոր չէ կառուցել համախմբված ժողովրդավարություն և ապահովել համակարգի կայունությունն ու մարդկային փոխհարաբերությունների կարգավորվածությունը: Այնտեղ, ուր կայունության սոցիոմշակութային դաշտը (ընտանիք, ավանդույթներ, եկեղեցի և այլն) լիովին չի մասնակցում համակեցության պահպանմանը, միայն քաղաքական լծակներով հնարավոր չէ հաստատել կայունություն և օրգանական համերաշխություն:

Այսպիսով, պարզ է դառնում, որ իրական պայքարը, որը կօգնի պարզել ազատական ժողովրդավարության ճակատագիրը (համախմբում թե բնաշրջում), կընթանա ոչ թե ինստիտուտների մակարդակում, որի շուրջ աշխարհում շատ թե քիչ արդեն ձեռք է բերվել կոնսենսուս, այլ առավել խորը՝ քաղաքացիական հասարակության և մշակույթի մակարդակներում:

---

[1] Ժողովրդավարացման երրորդ ալիքը մեկնարկել է 1974թ. Պորտուգալիայում սալազարյան բռնապետության անկմամբ, տարածվել Հարավային Եվրոպայի մյուս՝ Իսպանիայի և Հունաստանի բռնապետությունների վրա: Այնուհետև այն մուտք է գործել Լատինական Ամերիկայի, Հարավ-Արևելյան Ասիայի մի շարք երկրներ և, վերջապես, ԽՍՀՄ-ում վերակառուցման փորձերի ազդեցության տակ, ընդգրկել Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներն ու ողջ հետխորհրդային տարածքը:

[2] Տե՛ս *Մարգարյան Մ.,* Անցումային հասարակությունների ժողովրդավարացման գործընթացի առանձնահատկությունները (տեսամեթոդաբանական վերլուծություն) // 21-րդ դար «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հանդես, N 4, 2004:

[3] *Пшеворский А.,* Демократия и рынок. Политические и экономические реформы в Восточной Европе и Латинской Америке, Пер. с англ./ Под. ред. проф. *Бажанова В. А.,* М., “Российская политическая энциклопедия”, 2000, с. 11.

[4] *Гельман В.,* Как выйти из неопределенности // Pro et contra, т.3, N 3, 1998: *Гельман В.,* Постсоветские трансформации (Наброски и теории) // Полис, N 1, 2001.

[5] Տե՛ս *Fukuyama F.,* The Primacy of Culture, Journal of Democracy, 1995, vol. 6.1, p. 7-14.

[6] Տե՛ս *Панарин А. С.,* Политология: учебник, издание второе, М., 2001. с. 42-43.

[7] Տե՛ս *Avineri S.,* The Return to Hostory: The Breakup of the Soviet Union, Brooking Review 10, Spring 2002, p. 30.

[8] Տե՛ս *Հարությունյան Է.,* Քաղաքական համակարգի զարգացման հիմնախնդիրը անցումային հասարակությունում, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, Երևան, 2003, էջ 4-5:

---

## THE LEVELS OF DEMOCRATIC CONSOLIDATION AND THE PRIMACY OF CULTURE

TIGRAN TSHOROKHYAN

Summary

The subjects under discussion in this article are the main reasons of inefficiency of the concept of "The Third Wave of Democratization" and failure of the process of democratic consolidation. The research is conducted in the context of the levels of the process mentioned above offered by F.Fukuyama. In the result of the analysis of transforming societies, it proved to be the case that either democratic ideology (I level), or its institutions (II level) without considering ethnocultural factors (IV level) on which is constructed civil society (III level) not only do not lead to consolidation of democracy, but also raise new problems. Thus, the main problems of democratic consolidation are concentrated on the levels of the civil society and particularly the culture.

## УРОВНИ КОНСОЛОДАЦИИ ДЕМОКРАТИИ И ГЛАВЕНСТВО КУЛЬТУРЫ

ТИГРАН ЧОРОХЯН

Резюме

В статье рассматриваются главные причины неэффективности концепции “Третьей волны демократизации” и неудача процесса консолидации демократии в контексте уровней, предложенные Френсисом Фукуямы, на которых должна произойти высшеуказанный процесс. В результате анализа трансформированных обществ выявляется, что ни демократическая идеология (I уровень), ни его институты (II уровень) сами по себе, без учета этнокультурной среды (IV уровень), на которых, вызводится гражданское общество (III уровень), не только не ведут к консолидации демократии, а порождают новые проблемы, и как правило, обесцениваются. Таким образом становится ясно, что борьба, которая поможет определить судьбу либеральной демократии, будет вестись не из за природы институтов, а на уровнях гражданского общества и особенно культуры.

ԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# ԱԶԱՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՍՈՑԻՈՄՇԱԿՈՒՅԹ

Հասարակության քաղաքակրթական ու մշակութային զարգացման պատմությունը ցույց է տալիս, որ սոցիալական համակարգը պատմական տարբեր փուլերում դրսևորում է ինքնակազմակերպման ու կյանքի կանոնակարգման տարբեր, հաճախ իրարամերժ միտումներ: Սկզբունքորեն բաց համակարգ լինելով հանդերձ, սոցիալական համակարգը երբեմն վերաճում է փակ համակարգի՝ փորձելով արտաքին ներգործություններին հակազդելու միջոցով պահպանել իր ամբողջականությունն ու կայունությունը: Այդ տեսակետից սոցիալական համակարգերի բնույթն ու բովանդակությունը վերլուծելիս մասնագիտական գրականության մեջ վերջին շրջանում լայն տարածում են ստացել «փակ» և «բաց» հասարակություններ հասկացությունները: Բավական է նշել, որ Կ. Պոպերը այդ հասկացությունները դիտարկում է որպես ժամանակակից ազատական գաղափարախոսության բնութագրման տեսական հիմունքներ, գտնելով, որ փակ հասարակությունից բաց հասարակության անցումը մարդկության պատմության մեծագույն հեղափոխություններից մեկն է[1]: Նկատենք, սակայն, որ սոցիալական համակարգի ինքնազարգացման ու ինքնակարգավորման տեսակետից փակ և բաց հասարակությունները բնութագրում են ոչ միայն տարբեր հասարակարգերի առանձնահատկությունները, այլև միևնույն հասարակարգի զարգացման տարբեր փուլերի գործառնական վիճակները:

Չանդրադառնալով փակ հասարակությունների բնորոշ առանձնահատկություններին՝ նկատենք միայն, որ ժամանակակից հասարակությունը ավանդական հասարակության բազմակողմանի մոդեռնացման (փոխակերպման) արդյունք է: Այն ավանդականից արմատապես տարբերվում է նրանով, որ կողմնորոշված է դեպի նորարարությունը, սոցիալական կյանքն ունի հստակ արտահայտված աշխարհիկ բնույթ, զարգացումը ոչ թե փուլային է, այլ հաջորդական, հասարակությունը հիմնականում կողմնորոշված է դեպի ինստրումենտալ արժեքներ, իշխանությունը ժողովրդավարական է, մշակված է դեպի ապագան միտված պահանջմունքների համակարգ, ստեղծվել է մասսայական կրթության համակարգ, գիտական ու տեխնոլոգիական գիտելիքն աշխարհիայացքայինի նկատմամբ առաջնահերթություն ունի և այլն:

Ժամանակակից հասարակության միջուկն անհատականությունն է: Այն ձևավորվեց նորարարության, ապասրբազանեցման և ժողովրդարացման գործընթացների խաչմերուկում: Այս ամենի հետևանքով ժամանակակից է դառնում ոչ միայն հասարակությունը, այլև մարդը: Փոխակերպվում է ոչ միայն հասարակությունը, այլև մարդը: Այդ իմաստով փոխակերպումները (մոդեռնիզացիան) կարելի է դիտարկել որպես սոցիալական նոր համակարգին համապատասխան մարդկանց նույնականության փոփոխությունն ապահովող ինստիտուտների, հարաբերությունների, նորմերի ու արժեքների ձևավորման գործընթաց: Ասվածից հետևում է, որ համակարգային փոխակերպումները, որի հետևանքով հասարակությունը ենթարկվում է մոդեռնիզացիայի, ընդգրկում են կյանքի բոլոր ոլորտները: Սոցիալական ոլորտում ձևավորվում են նոր ինստիտուտներ, նորմեր ու սովորույթներ, քաղաքական ոլորտում ձևավորվում է իշխանության կազմակերպման նոր եղանակ, մշակութային ոլորտում՝ նոր արժեքներ և կարծրատիպեր, տնտեսական ոլորտում՝ նոր սկզբունքով գործառնող շուկա և այլն: Հարկ է նկատել, որ նշված ոլորտներից յուրաքանչյուրը փոխակերպումների ընթացքում տարաբնույթ դրսևորումներ կարող է ստանալ, ինչը նշանակում է, որ ավանդականից ժամանակակից հասարակության անցումը չունի նախապես կանխորոշված ելք: Սա իր հերթին նշանակում է, որ պատմության զարգացումը միագիծ չէ, թեև մոդեռնիզացիան ունի նաև տիպական գծեր ու օրինաչափություններ, որոնք ընդհանուր են արդի բոլոր հասարակությունների համար:

Լուսավորչության դարաշրջանից սկսած՝ արդարության ու հավասարության գաղափարները դարձան նոր տիպի մշակույթի ձևավորման չափանիշներ: Բայց արդեն 19-րդ դարի կեսերից արդարության համար պայքարը ձևավորեց հասարակական կյանքը կազմակերպելու մի նոր հոգևոր ու քաղաքական նախագիծ, որով և սկսվեց մոդեռնի դարաշրջանը: Այդ դարաշրջանն ունի պատմական, սոցիալական ու մշակութային առանձնահատկություններ: Պայմանականորեն մոդեռնը նույնացվում է ինդուստրիալ հեղափոխության (շուկայական տնտեսության համակարգի ձևավորում), ժողովրդավարական կարգերի հաստատման (իրավական պետության համակարգի ձևավորում) և գիտակրթական նոր մշակույթի ձևավորման հետ:

Անհատը, շուկան և իրավական պետությունը հանդիսանում են ժամանակակից արևմտյան քաղաքակրթության շարժիչ ուժերի խորհրդանիշները: Իսկ այդ քաղաքակրթության շարժիչ ուժն արդյունաբերական ու գիտական հեղափոխություններն են: Այդ իմաստով մասնագիտական գրականության մեջ մոդեռնը դիտարկվում է որպես նորարարության, առաջընթացի, հնից նորի անցման հոմանիշ[2], որի ժամանակ մարդն ու հասարակությունը դառնում են տեխնիկայի զարգացումից կախված սուբյեկտներ[3]: Արդի հասարակությունը դիտարկելով որպես ոչ միագիծ և նախասահմանված ընթացքով զարգացող հասարակություն՝ Ֆ. Հայեկը նկատում է, որ ազատական հասարակությունների բնորոշ գծերից մեկը մրցակցությունն է, ինչը փոխում ու հաճախ վերացնում է այն կարծրատիպերը, որոնք խանգարում են անորոշության պայմաններում գտնել ու գործադրել նոր մեխանիզմներ ու սկզբունքներ: Այդ իմաստով մրցակցությունը փոքրամասնության իրավացիության ապացուցման գործընթաց է[4]:

Եվրոպական հասարակության արդիականացումն արդեն 19-րդ դարում էապես փոխեց հասարակական կյանքն ու մարդկային փոխհարաբերությունների բովանդակությունը: Այն, մասնավորապես, ստեղծեց «մասսայական հասարակություն», որը շուկա նետեց բազմաթիվ անդեմ անհատներ, որոնց միջև չկան նաև կայուն միջանձնային հարաբերություններ, արժեքային կողմնորոշիչներ: Դա, այսպես կոչված, «մասսայի մարդու» հասարակություն էր, որին բնորոշ էր կրոնական, քաղաքական ու սոցիալական երբեմնի կայուն համոզմունքների վերացումն ու գոյության բոլորովին նոր պայմանների և նոր արժեքային կողմնորոշիչների ստեղծումը[5]: Եթե ազատական ու ժողովրդավարական մշակույթների ձևավորման ու տարածման սկզբնական շրջանում

համընդհանուր իրավունքը և շուկայական հարաբերությունները ընկալվում էին որպես իդեալներ, որոնցից զանգվածները առանձնապես չէին օգտվում, ապա 19-րդ դարից սկսած զանգվածները սկսեցին դրսևորել քաղաքական ակտիվություն: Հասարակության զանգվածացումը և զանգվածների քաղաքական ակտիվության բարձրացումը պայմանավորված էր այն հանգամանքով, որ, առաջին՝ նրանք աստիճանաբար հասան այնպիսի բարձր կենսամակարդակի, ինչպիսին մինչ այդ կարող էին ունենալ միայն հասարակության արտոնյալ խավերը, երկրորդ՝ զանգվածները աստիճանաբար դուրս եկան հասարակության արտոնյալ փոքրամասնությանը ենթարկվելու կարգավիճակից և մտան ակտիվ քաղաքականության մեջ: Հարկ է նկատել, որ զանգվածային հասարակությունը կարող է դրսևորվել ինչպես ազատականության, այնպես էլ ամբողջատիրական ձևով: Ազատական և ամբողջատիրական մասսայական հասարակությունների միջև սկզբունքային տարբերությունը մարդկային գործունեության կազմակերպման բնույթի մեջ է: Առաջին դեպքում անհատները ունեն սոցիալական գործունեության բնույթը որոշելու ընտրության հնարավորություն, իսկ երկրորդ դեպքում այն ածանցյալ է համակարգից:

Ժամանակակից զանգվածային հասարակության առանձնահատկություններից մեկը կառուցվածքային յուրահատկությունն է: Բնականոն գործառնող հասարակությունն ունի սոցիալական հարաբերությունների երեք հիմնական մակարդակ: Առաջին մակարդակում ընտանեկան ու անձնային փոխհարաբերություններն են, երկրորդ մակարդակում ընթանում են քաղաքացիների միջև փոխհարաբերությունները, իսկ երրորդ մակարդակում ընթանում են ընտանիքի և պետության միջև բոլոր կարգի կազմակերպված փոխհարաբերությունները՝ համայնքային, տեղական ինքնակառավարման, հասարակական կազմակերպությունների և այլն: Այս տեսակետից զանգվածային հասարակության կառուցվածքային առանձնահատկությունն այն է, որ երրորդ մակարդակի փոխհարաբերությունները ունեն ապագործառնական բնույթ, որի պատճառով էլ անհատները մեծամասամբ կողմնորոշված են դեպի պետական հաստատությունները:

Ավանդականից ազատական-ժողովրդավարական սոցիոմշակութային համակարգին անցնելու և տնտեսական, քաղաքական ու մշակութային արմատական փոխակերպումների նախադրյալներ են հանդիսանում ժողովրդավարական ինստիտուտների ձևավորումը, շուկայական տնտեսությունը և դրանց հիման վրա համընդհանուր բարեկեցության հասարակության ձևավորումը: Անհատական մակարդակում ազատական-ժողովրդավարական նախագիծը ենթադրում էր նոր հնարավորությունների, նոր կապերի ու սոցիալական նոր տիպի խառնվածքի ձևավորում: Բայց այս ամենը կարելի է անվանել մոդեռնիզմի իդեալական նախագիծ, որը, իրականում, բոլորովին այլ դրսևորումներ ունի (գործազրկություն, միաչափություն, օգտապաշտություն, հանցագործությունների աճ և այլն): Հաշվի առնելով այս երևույթները՝ ազատական-ժողովրդավարական հասարակարգի մի շարք տեսաբաններ առաջ քաշեցին սոցիալական պետության գաղափարը:

Եվ այնուամենայնիվ, շնորհիվ ազատական-ժողովրդավարական հասարակության ներքին փոխակերպումների, ինդուստրիալ հասարակությունը հասավ մարդկանց կենսամակարդակի անհերքելի աճի, համընդհանուր կրթական նվաճումների և համահասարակական բարեկեցության: Հենց այդ նվաճումների շնորհիվ որակական փոփոխության ենթարկվեց հասարակության սոցիալական կառուցվածքը, և վերաիմաստավորվեցին սոցիալական անհավասարության մասին երբեմնի պատկերացումները:

Մասնավորապես, նյութական պայմանների կտրուկ բարելավման հետևանքով ապաավանդականացվում են դասակարգային պատկանելության և համապատասխան ապրելակերպի մասին պատկերացումները. մարդիկ նյութական բարեկեցությունը սկսում են գիտակցել որպես անձնական նվաճում, դասակարգային նույնականացման փոխարեն առաջին պլան են մղվում անհատական ինքնադրսևորման որակները և այլն: Այս ամենի հետևանքով մարդիկ աստիճանաբար ազատվում են ինդուստրիալ հասարակության սոցիալական ձևերի ավանդական կապերից: Եվ ամենակարևորը: Սոցիալական հարաբերությունների ողջ կառուցվածքում տեղի ունեցող արմատական փոխակերպումների արդյունքում սոցիալական անհավասարությունն այլևս չի ընկալվում որպես մեկընդմիշտ տրված կարգավիճակ ու ապրելակերպ: Շուկայական դինամիկ հարաբերությունների ներգործության տակ անհատները հակված են գործել ավելի ակտիվ և տնօրինել իրենց ճակատագիրը: Քաղաքականությունը և քաղաքական կյանքը ձեռք են բերում շուկայական օրինաչափություններով ղեկավարվող համակարգ՝ ենթարկվելով ընտրողի կամքին:

Այդ գործընթացների բնորոշ գծերից մեկն էլ, սակայն, այն է, որ մրցակցային նոր պայմաններում մարդիկ կորցնում են պաշտպանվածության ու ապահովվածության զգացողությունը: Այս նոր պայմաններում նրանք դառնում են միայնակ, և նրանց կյանքի ապահովությունը և հուսալիությունը պայմանավորված է ոչ թե սոցիալական կարգավիճակից, այլ գործադրած ջանքից ու ակտիվության աստիճանից: Ահա թե ինչու ավանդականից ժամանակակից հասարակության անցման բնորոշ գծերից մեկը դարձավ «փախուստ ազատությունից» ախտանիշը[6]: Դասական ազատականությունը նախապես պայքարում էր մարդու ազատությունների համար՝ այն դիտարկելով որպես ազատ ստեղծագործության նախապայման: Բայց, ինչպես ցույց տվեց ազատական հասարակությունների զարգացման հետագա ընթացքը, տեխնիկայի ու տեխնոլոգիայի կցորդ դառնալու ռեալ իրողությունը մարդուն աստիճանաբար զրկեց ստեղծագործելու և այդ ամենի համար տքնաջան աշխատելու ցանկությունից՝ այն փոխարինելով անհատական հաճույքներով: Ըստ էության՝ այս երևույթը դառնում է ժամանակակից բաց հասարակությունների գործառնության «արժեքային կենտրոններից» մեկը: Բանն այն է, որ ամեն մի դարաշրջան ունի մի յուրահատուկ արժեքային կենտրոն, որը կանխորոշում է տվյալ ժամանակաշրջանի հոգևոր իրավիճակը:

Արժեքային նման կենտրոններից մեկն էլ մարդկանց սոցիալական վարքը կարգավորող «ազատ մրցակցության» սկզբունքն է: Կասկածից վեր է, որ տնտեսական կյանքում ազատ մրցակցության սկզբունքը նպաստում է ընդհանուր տնտեսական հավասարակշռության հաստատմանը և հասարակության օպտիմալացմանը: Այդ իմաստով ռացիոնալ և տնտեսական գործունեությունների ոլորտները համընկնում են, և ամեն մի բանական գործողություն միաժամանակ տնտեսական գործողություն է: Եվ որովհետև ամեն մի ռացիոնալ գործողություն առաջին հերթին անհատական գործողություն է, նշանակում է՝ մտածում են միայն առանձին անհատները[7]: Բայց մարդկանց տնտեսական ազատությունները ենթադրում են համապատասխան հասարակական կազմակերպվածություն: Այն պարզ պատճառով, որ հնարավոր չէ ստեղծել բացարձակ իդեալական հասարակական կազմակերպություն, այդ պատճառով միշտ էլ մնում են ազատությունների սահմանափակման ու ազատություններից փախչելու նախադրյալներ ու պատճառներ: Այլ

կերպ ասած՝ ինչպես սոցիալական, այնպես էլ տնտեսական կարգավորիչ մեխանիզմները ժամանակակից ազատական հասարակություններում մշտապես սահմանափակում են վարքի կարգավորման ռացիոնալ մեխանիզմների դրսևորման հնարավորությունները: Ազատական մշակույթի ներքին հակասականությունը նրանում է, որ, մի կողմից, ասպարեզ է բացում ազատ անհատականությունների ինքնահիրացման և նորարարական հակումների դրսևորման համար, մյուս կողմից՝ նրա գործառնության արդյունավետությունն անհնար է առանց պետական, քաղաքացիական ու վարչարարական կարգի ու կարգավորվածության: Այդ իմաստով կարելի է ասել, որ արևմտյան մշակույթի ողջ էներգիան ուղղված է արտաքին աշխարհի, այդ թվում՝ նաև մարդկանց ճանաչողությանը: Այսինքն՝ այդ ճանաչողության նպատակն ուրիշների «շահագործումն է»՝ սկզբում տեսականորեն, իսկ ապա նաև գործնականում: Պատահական չէ, որ Ֆ. Բեկոնն առաջ քաշեց «գիտելիքը իշխանություն է» հայտնի կարգախոսը: Այդ իմաստով արևմտյան ողջ գիտությունը կարելի է բնութագրել որպես կառավարման գիտություն: Փաստորեն հասարակական կյանքի ազատականացումը, ի վերջո, պետք է ավարտվեր համընդհանուր կարգավորվածությամբ, ինչը նշանակում էր, որ հասարակական կյանքում ամեն ինչ պետք է դառնար կառավարելի ու կարգավորելի: Արևմտյան այս մտածելակերպն իր մեջ պարունակում է որոշակի պարադոքս, քանի որ ամբողջատիրական կարգավորումը, ի վերջո, վերաճում է մեծ անկարգության ու ճգնաժամերի: Պատահական չէ, որ Է. Գիդդենսը, վերլուծելով այս պրոբլեմը, գրում էր, որ մոդեռնի հակառակ կողմում կարող է հայտնվել վթարված ու վնասված մարդկային հասարակությունը[8]: Արդի հասարակություններում ազատական-շուկայական մշակույթի ազդեցության տակ տեղի ունեցող կյանքի անհատականացումը բերել է նրան, որ հասարակության և անհատի միջև գործառնական կապերն ու հարաբերությունները ենթարկվել են արժեքային դեֆորմացիայի: Ստեղծվել է այնպիսի իրավիճակ, ասես հասարակական կյանքն անհատական կեցությունների մեխանիկական գումար լինի: Առաջին պլան են մղվել անձնական հաջողության, բիզնեսի, համակրանքի ու հակակրանքի, ձեռներեցության և նմանատիպ այլ արժեքներ, ինչի հետևանքով սոցիալական ինստիտուտներն աստիճանաբար կորցնում են վերահսկման ու կարգավորման իրենց գործառույթները[9]:

Հասարակության ազատականության տիպական հատկանիշներից մեկը փոխակերպվելու, արտաքին ու ներքին փոփոխություններին արագ արձագանքելու, մշտապես շարժուն լինելու կարողությունն է: Քաղաքական ու գաղափարական իմաստով բաց հասարակության հիմունքները համընկնում են ազատականության այնպիսի սկզբունքների հետ, ինչպիսիք են ազատությունը, հանդուրժողականությունը, հավասարությունը, մասնավոր սեփականությունը, մրցակցությունը, արդարությունը և այլն: Այս սկզբունքները «բնական ազատությունների» այն ամբողջական համակարգն է, որը ազատականության դասականները համարում էին մասնավոր նախաձեռնության, տնտեսական գործունեությունը պետական հովանավորչությունից ազատելու և ազատ ձեռներեցություն ծավալելու նախապայմանը: Ազատականության այս սկզբունքներն էապես փոխեցին նաև հասարակական հարաբերությունների բարոյական հիմունքները, քանի որ բաց և սոցիալական տեղաշարժերին արագ արձագանքող հասարակությունն այլևս չէր կարող կյանքը կանոնակարգել բնույթով պահպանողական ավանդույթներով և սովորույթներով: Ազատական մշակույթը կարող էր արդյունավետ գործառնել միայն այն դեպքում, եթե մարդիկ ամենօրյա կյանքում ղեկավարվեին արագացող սոցիալական ռիթմին համապատասխան սկզբունքներով (նախաձեռնություն, անհատապաշտություն, ինքնահաստատման ձգտում, կուռքապաշտության մերժում և այլն):

Եթե տնտեսական ոլորտում ազատականությունը դրսևորվում է շուկայական հարաբերությունների ձևով, ապա պետականության ու քաղաքականության մեջ այն դրսևորվում է ժողովրդավարական գործընթացների ձևով: Այս իմաստով բաց հասարակությանը բնորոշ կյանքի կազմակերպման մշակույթի մեջ առանձնահատուկ տեղ ունի քաղաքացիական հասարակության ինստիտուտային համակարգը: Ազատականության ինքնակազմակերպման ու վերարտադրության տեսակետից քաղաքացիական հասարակության նորմատիվ համակարգը շուկայական հարաբերությունների կարգավորման, տնտեսական ու քաղաքական իշխանությունների տարանջատման սկզբունքի պահպանման, հասարակության և պետության միջև գործընկերային հարաբերությունների հաստատման ու պահպանման կարևոր գրավականն է: Պատահական չէ, որ Մ. Վեբերը, հանգամանորեն քննարկելով «կապիտալիստական մշակույթի» ու «կապիտալիզմի ոգու» հիմնախնդիրը, գտնում էր, որ դրա հիմքում ընկած է տնտեսական վարքի նորմատիվ համակարգը, ինչը պարտադիր պետք է լինի բոլոր տնտեսավարող սուբյեկտների համար: Այդ իմաստով ազատական մշակույթը ոչ միայն սոցիալական ողջ համակարգի, այլև ներհամակարգային հարաբերություններ, կարգի ու կարգավորվածության, սոցիալական կառույց ձևավորելու մշակույթ է[10]:

Մասնագիտական գրականության մեջ ազատական մշակույթի ձևավորման հարցը, որպես կանոն, քննարկվում է «շուկայական հարաբերությունների» համատեքստում: Պետք է նկատել, սակայն, որ արևմտյան տնտեսագետների մոտ շուկան հաճախ նույնացվում է ազատ ձեռնարկչատիրական տնտեսությանը և քննարկվում որպես զուտ կապիտալիստական ֆենոմեն: Մինչդեռ, ինչպես իրավացիորեն նկատում է Թոֆֆլերը, շուկան ընդամենը փոխանակման համակարգ է և ծագել է շատ ավելի վաղ, քան կապիտալիզմը: Շուկան գործել է այն պահից ի վեր, ինչ արտադրողն ու սպառողը իրարից հեռացան ու տարանջատվեցին[11]: Այդ «տարանջատման» հետևանքով ներհամակարգային որոշակի կապերը դարձան պրոբլեմային, ինչը կարող էր լուծել շուկան և համապատասխան քաղաքականությունը:

Տնտեսական ու քաղաքական վարքի նորմատիվ համակարգերը մշակույթի համատեքստում սոցիալական, տնտեսական ու քաղաքական շահերի համագոյակցման, փոխըմբռնման ու կոնֆլիկտների հաղթահարման առավել ժողովրդավարական մեխանիզմներ են, քան, ասենք, «բնական մարդու» տնտեսական էգոիզմն ու պահանջմունքները: Սոցիալական կառույց ձևավորելու և ներհամակարգային հարաբերությունները կարգավորելու «տնտեսական վարքի նորմատիվ համակարգը» կարելի է անվանել «ժողովրդավարական բարոյականություն»:

Մ. Վեբերի ձևակերպած «կապիտալիստական մշակույթը» վերաճում է ժողովրդավարական բարոյականության շնորհիվ այն բանի, որ դուրս է գալիս գործընկերների միջև նորմատիվ պայմանականությունների շրջանակից և տարածվում հասարակության ինստիտուտային կառույցների փոխհարաբերության վրա: Այդքանով էլ այն դառնում է հասարակական հարաբերությունների կարգավորման քաղաքական բարոյականություն: Այս իմաստով կյանքի ազատական մշակույթը նորովի է մեկնաբանում իշխանության օրինականության հարցը, քանի որ դնում է սոցիալական և քաղաքական կարգերի արդարության հարցը:

Հասարակության կորպորատիվ բաժանման հետևանքով ավատատիրական Եվրոպայում հասարակական տարբեր ինստիտուտների միջև գործառութային հստակ բաժանում չկար, և նրանցից յուրաքանչյուրը փորձում էր, հնարավորության դեպքում, ընդլայնել իր իրավասությունների շրջանակները: Բայց ազատական մշակույթի տարածմանը զուգահեռ՝ աշխատանքի բաժանմանը փոխարինում է գործառնական բաժանումը, որի դեպքում առաջին պլան են մղվում մարդկանց անհատական որակներն ու շահերը: Այս հանգամանքը խիստ կարևոր է, քանի որ ծագում են պետության ու հասարակության փոխհարաբերությունների կարգավորման, անհատական, խմբային ու հասարակական շահերի համամասնության պահպանման մեխանիզմների ստեղծման ու գործառնության ապահովման խնդիրներ: Այս ամենն աստիճանաբար փոխում է հասարակական համակեցության նախկին նորմատիվ համակարգը, և ծագում են հասարակական կարգի ապահովման ընդհանրական նշանակություն ունեցող իրավաքաղաքական նոր մեխանիզմներ: Կարելի է ասել, որ ազատականությունը հասարակական հարաբերությունների կազմակերպման և կարգավորման այնպիսի մշակույթ ձևավորեց, որը, առնվազն, լուծեց մի շարք կարևոր խնդիրներ:

Առաջին՝ մարդկանց քաղաքական իրավունքներն ընդլայնելու միջոցով ձևավորեց քաղաքացիների միջև իրավապես միջնորդավորված համագործակցություն և համերաշխություն: Այլ կերպ ասած՝ հասարակական հարաբերությունների կարգավորման քաղաքական բարոյականության շնորհիվ հասարակության մեջ ձևավորվեցին մարդկանց սոցիալական ինտեգրացիայի անհրաժեշտ պայմանները, և ամրապնդվեցին մարդկանց սոցիալական կապվածության իրավական հիմունքները:

Երկրորդ՝ եթե ավատատիրության շրջանում թագավորի իշխանության օրինականությունը նախասահմանված էր ժառանգաբար փոխանցվող, ապա ազատական մշակույթի և քաղաքական բարոյականության պայմաններում իշխանության օրինականության խնդիրը ձեռք բերեց նոր իմաստ: Այս դեպքում արդեն սոցիալական մակարդակում իշխանության օրինականությունը պայմանավորված է նրանով, թե իշխանության սոցիալական-տնտեսական գործունեությունը որքանով է համապատասխանում հասարակության շահերին ու ակնկալիքներին:

Երրորդ՝ ծագում է նաև իշխանության հրապարակայնության (լեգալության) խնդիր: Ազատական հասարակություններում իշխանությունը դառնում է հրապարակային, քանի որ ընտրվում է ժողովրդավարական սկզբունքներով: Նշված խնդիրների համար ընդհանուրն այն է, որ իրավական պայմաններ են ստեղծվում քաղաքական հարաբերություններում ղեկավարվելու արդարության սկզբունքով: Քաղաքականության մեջ այդ սկզբունքի էությունն այն է, որ ստեղծվում են ազատամետ կարգի ինստիտուտներ, որոնք թեև սահմանափակում են մարդկանց բնական ազատությունները, բայց ստեղծում են ազատության իրավունքի երաշխիքներ:

Պետք է նկատել, սակայն, որ ազատականության և ժողովրդավարության փոխհարաբերությունը ներքնապես հակասական է: Ժողովրդավարությունը հնարավոր է այնտեղ և այն ժամանակ, երբ հասարակությունն ունի սոցիալական շարժուն կառուցվածք, կան խմբային շահեր և դրանց օրինական պաշտպանության հնարավորություններ, տնտեսությունը շուկայական-մրցակցային է և այլն: Մյուս կողմից, արմատական ազատականությունը և ծայրահեղ շուկայական հարաբերությունները հասարակության համար ստեղծում են այնպիսի պրոբլեմներ, որոնք խիստ սահմանափակում են ժողովրդավարության սոցիոմշակութային բազան: Այս երևույթն առավել ցայտուն դրսևորումներ է ունենում հատկապես արմատական փոխակերպումների շրջանում, երբ, օրինակ, հետխորհրդային երկրներում տնտեսական բարեփոխումների ու տնտեսության ազատականացման բացասական հետևանքների ազդեցության տակ հասարակության անպաշտպան խավերը բացասաբար տրամադրվեցին նաև ժողովրդավարական գործընթացների նկատմամբ[12]: Այս առնչությամբ հարց է ծագում, թե արդյո՞ք տնտեսական ազատականությունը ենթադրում է նաև քաղաքական ազատականություն, և քաղաքական ժողովրդավարությունը որքանո՞վ պետք է ենթարկվի տնտեսական ազատականության տրամաբանությանը:

Ազատական-ինդուստրիալ հասարակության ձևավորման սկզբնական շրջանում ժողովրդավարության առանցքը տնտեսակենտրոն մարդն էր, որի արժեքային համակարգի հիմքում ընկած էին նյութական շահերը: Այդ իմաստով մարդկային փոխհարաբերություններին բնորոշ էին գործնական-փոխշահավետ երկխոսության ու փոխզիջման սկզբունքները, ինչը նշանակում է, որ տնտեսական հարաբերությունների ժողովրդավարացումն ընթանում է ոչ միայն ինստիտուտային մակարդակում, այլև՝ սոցիոմշակութային: Վերջին դեպքում ժողովրդավարացումն իրականացվում է ի հաշիվ մարդկանց բարոյական ու հոգևոր համոզմունքների, ինչը նաև նշանակում է, որ տնտեսական ազատականության թելադրանքով մարդկային փոխհարաբերություններն ապաբարոյականացվում և ձևայնացվում են: Թեև ազատականությունը, այնուամենայնիվ, ժողովրդավարական մշակույթ է, բայց, ինչպես նկատում է հայտնի սոցիոլոգ և մշակութաբան Դ. Բելլը[13], ազատական-ինդուստրիալ հասարակության քաղաքացիական հասարակությունը, որի գլխավոր նպատակը խմբային ու անհատական շահերի պաշտպանությունն է, սոցիոմշակութային իմաստով դեռևս օրինական (լեգիտիմ) չէ, քանի որ մշակույթը հոգևոր արժեքները խմբային շահերից վեր է դասում: Եթե ազատական-ինդուստրիալ հասարակության զարգացման սկզբնական շրջանում քաղաքացիական հասարակության գործարարի շահերն ու նպատակները դեռևս ձևավորվում էին տվյալ հասարակության սոցիոմշակութային արժեքների շրջանակներում, ապա արդեն տեղեկատվական հասարակության պայմաններում, ուր առաջնային նշանակություն ունեն կառավարչական գործոնները, ժողովրդավարությունը սոցիոմշակութային հակասություններ ունի ոչ միայն ազատական-շուկայական սկզբունքների հետ, այլև՝ բյուրոկրատիայի:

Ինչպես արդեն նշեցինք, ազատական մշակույթը ինչ-որ իմաստով կարելի է բնութագրել որպես «ժողովրդավարական բարոյականություն», քանի որ այն պարզապես գործընկերների միջև նորմատիվ-ձևական պայմանականություն չէ: Տնտեսական, սոցիալական ու քաղաքական կյանքում այդ մշակույթը խարսխված է ոչ միայն խաղի ձևական կանոնների վրա, այլև ունի արժեքային լուրջ ծանրաբեռնվածություն: Բանն այն է, որ ազատականության նորմատիվ համակարգը չի կարող լիովին կատարել իր գործառնական խնդիրները, եթե չունենա համահասարակական արժեքների այնպիսի համակարգ, որն ամենօրյա մարդկային հարաբերությունների կարգավորմանը կտա տևականություն և սոցիոմշակութային իմաստ: Հասարակական հարաբերությունների կարգավորման «խաղի կանոնները» ձևավորվում են միայն այն բանից հետո, երբ ձևավորվում է տվյալ սոցիալական կարգի արժեքային համակարգը: Համակարգաստեղծ ու համակարգապահպան գործոնները ոչ միայն կանխորոշում են տվյալ սոցիալական կարգի արժեքային ուղղվածությունը, այլև՝ կայունության ու կարգավորվածության մեխանիզմների բնույթն ու նորմատիվ բովանդակությունը: Այդ տեսակետից, օրինակ, ազատական-բաց հասարակությունների ձևավորման հատկապես առաջին փուլում արդա-

րության, ազատության, քաղաքացիական համերաշխության, ժողովրդավարության և նմանատիպ մյուս արժեքները դարձան ոչ միայն նոր կարգի հաստատման սոցիոմշակութային հիմունքներ, այլև կանխորոշեցին հասարակության ինստիտուտային կառույցների փոխհարաբերությունների նորմատիվ սկզբունքների բովանդակությունը:

Ակնհայտ փաստ է, որ ազատական ու ժողովրդավարական հասարակություններում մարդիկ ունեն տարբեր տնտեսական, սոցիալական ու քաղաքական շահեր, որոնք անխուսափելի են դարձնում ներհամակարգային հակասություններն ու կոնֆլիկտները: Ազատականության վերոհիշյալ սոցիոմշակութային սկզբունքները, ինչ խոսք, ամեն մի կոնկրետ դեպքում չեն կարող անմիջապես մասնակցել ու կարգավորել այդ հակասությունները: Բայց այդ սկզբունքները կազմում են այն սոցիոմշակութային կարգը և այն բարոյական տարածությունը, որի շրջանակներում նորմատիվ վարքը կարող է լինել այլընտրանքային: Այլ կերպ ասած՝ համերաշխության, արդարության, ազատության և նմանատիպ այլ խնդիրները այն իմաստով են դառնում քաղաքականություն, որ ինստիտուտուցիոնալ կարգավորումներն ընթանում են համակարգաստեղծ գործոնների սոցիոմշակութային բովանդակության շրջանակներում: Ամեն մի քաղաքակրթություն, օրինակ, մշակում է սոցիալական պարտքի մի համակարգ, որը թույլ է տալիս, առանց անցյալին անդրադառնալու, որոշ արարքներ գնահատել ընդունելի, ուրիշները՝ ոչ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

[1] Տե՛ս *Պոպեր Կ.*, Բաց հասարակությունն ու դրա թշնամիները, հատ. 1, էջ 190:
[2] Տե՛ս *Федотова В. Г.* Типология Модорнизаций и способов их изучения, с. 27.
[3] Տե՛ս *Козловский П.* Культура посл. модерна, М., 1997, с. 7.
[4] Տե՛ս *Хайек Ф.* Познание, конкуренция и свобода, СПБ, 1999, с. 48.
[5] Տե՛ս *Ле Бон Г.* Психология толп. М., 1998, с. 125-126.
[6] Տե՛ս *Фромм Э.* Бегство от свободы, Минск 1998., с. 56.
[7] Տե՛ս *Мизес Л.* Индивид, рынок и правовое государство, СПБ, 1999, с. 47.
[8] Տե՛ս *Гидденс Э.* Постмодерн. ВКН.: Философия истории, антология, с. 347.
[9] Տե՛ս *Бек У.* общество риска на пути к другому модерну, М., 2000, с. 145.
[10] Տե՛ս *Ионин Л. Г.* Социология культуры: путь в новое тысячелетие, М., Логос, 2000, с. 51.
[11] Տե՛ս *Тоффлер Элвин* Третья влона, с. 82-83.
[12] Տե՛ս *Ги Сорман* Выйти из социализма, М., 1991, с. 11.
[13] Տե՛ս *Bell D.* the Cultural Contradictions of Capitalism, London, Heinemann, 1979, p. 137.
[14] Տե՛ս *Jevona F.* Introduction to the History of Religion. London, Mathuen, 1992, p. 86.

---

## LIBERTY AS DEMOCRATICAL SOCIO - CULTURE

ANNA GRIGORYAN

Summary

The history of civil and cultural development of society shows that in different stages system has different, sometimes contradictions aims of self-determination and principles of life. The nowadays society is a result of all - round modernization of traditional society.
The interchange of passing from slave-holding system and economical, political and cultural radical changes include the forming of democratical institutions, market economy and on the basis of there the forming of general lifestyle of society.

## ЛИБЕРАЛЬНОСТЬ КАК ДЕМОКРАТИЧЕСКАЯ СОЦИОКУЛЬТУРА

АННА ГРИГОРЯН

Резюме

История культурного и цивилизационного развития общества показывает, что социальная система на разных исторических этапах проявляет различные, порой взаимоисключающие тенденции самоорганизации и саморегуляции жизни. Современное общество есть результат всесторонней модернизации (трансформации) традиционного общества.

Предпосылками перехода от феодальной к либерально-демократической социокультурной системе являются формирование демократических институтов, рыночная экономика и на их основе - формирование общества всеобщего благосостояния.

ԵՎԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

*ՀՊՄՀ*
*Հոգեբանության ամբիոնի դասախոս*

# ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ՎԱՐՔԻ ՇԵՂՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Երեխաների և դեռահասների վարքի խաթարումների հիմնախնդիրը բոլոր ժամանակներում եղել և մնում է հասարակության ուշադրության կենտրոնում: Այն մտահոգել է հասարակության տարբեր շերտերի՝ առաջադեմ մտածողներին, իրավաբաններին, հոգեբաններին, մանկավարժներին:

Պատմական զարգացման տարբեր ժամանակաշրջաններում հասարակության վերաբերմունքն այս հիմնախնդրի նկատմամբ միանշանակ չի եղել: Այսպես, օրինակ, հին Անգլիայում վարքի շեղում ունեցող երեխաների նկատմամբ խիստ պատիժ էր իրականացվում: Ըստ հին անգլիական քրեական օրենսգրքի՝ խիստ պատժվում էր այն երեխան, որը վիրավորել էր ուրիշին, կատարել մանր գողություն կամ մեկ այլ զանցանք: Այդ օրենսգրքի 924-939 հոդվածներով 12 տարին լրացած կամ մի փոքր ավելի մեծ, մանր գողություն կատարած՝ 8 և ավելի պենս գողացած երեխան ենթարկվում էր մահապատժի: Տարիներ հետո անչափահաս իրավախախտների և հանցագործների նկատմամբ պատիժները մեղմացան, և 16-ից ցածր տարիք ունեցողը մահապատժի չէր ենթարկվում, եթե չէր դիմադրում իշխանություններին [8]:

Միջնադարում իրավական գիտության պատմության հայկական հուշարձաններից մեզ հայտնի է, որ քրեական օրենսգրքերում հատուկ ուշադրության էին արժանացել անչափահասների իրավախախտումների և հանցագործությունների վերաբերյալ հոդվածները, նրանց մեղսունակության և անմեղսունակության, քրեական պատասխանատվության և պատժի չափերի խնդիրները: Օրինակ, Դավիթ Ալավկա որդու [2] աշխատությունում տարբերվում էին ոչ դիտավորությամբ, դիտավորությամբ կատարված հանցագործությունները: Յատկապես խիստ կարևորվում և մեկնաբանվում էին ուղղակի և անուղղակի կանխամտածվածության հարցերը հանցարարքի կառուցվածքում և հոգեբանական գործոնների առկայությունը հանցավոր արարքում ու սուբյեկտի հանցավոր գործունեության մեջ:

Կանխամտածված հանցագործության խնդիրներին անդրադարձներ կան նաև Սմբատ Սպարապետի և Մխիթար Գոշի Դատաստանագրքերում [2], որոնցում անչափահասների իրավախախտումների և հանցագործությունների համար կիրառվող պատժաչափերն արդեն էականորեն մեղմացված և անհատականացված էին:

Այսպիսով՝ ոչ ադապտիվ, օրինազանց և օրինախախտ երեխաների հիմնախնդիրը սկիզբ է առնում հեռավոր պատմական ժամանակներից, բայց դարերի ընթացքում ոչ դրա այժմեականության և ոչ էլ պատճառականության մեջ էական փոփոխություններ չեն կատարվել: Փոփոխվել և վերաիմաստավորվել են հիմնախնդրի նկատմամբ հասարակական, պետական, հատկապես օրենսդրական մոտեցումները: Յազարամյակներ առաջ երեխաների իրավախախտումներն ու հանցագործությունները հույժ կարևոր հոգս են եղել հասարակության համար, օրենսդիրը դաժան պատժամիջոցներ է նախատեսել դրանց համար:

Յոգեբանական գրականության մեջ անչափահասների վարքի շեղումներին առաջին անգամ լրջորեն անդրադարձել է իտալացի հոգեբան և քրեագետ Չ. Լոմբրոզոն [3]: Նա ուշադրություն է դարձրել հանցագործների անտրոպոլոգիական տվյալներին: Լոմբրոզոն հրատարակել է ինչպես անչափահասների, այնպես էլ չափահասների հանցավորության պատճառների լուսաբանմանը նվիրված մի շարք աշխատություններ: Մասնավորապես «Վենետիկյան 400 հանցագործների անտրոպոմետրիա» գրքում նա առանձնացնում է ելակետային 4 դրույթ.

1) հանցագործությունը բնական և անհրաժեշտ երևույթ է. 2) հանցավորության պատճառները պետք է փնտրել հանցագործի անձնավորության, նրա ֆիզիկական կառուցվածքի յուրահատկություններում. 3) գոյություն ունի մարդ-հանցագործի հատուկ տիպ, այսինքն՝ բնածին հանցագործ. 4) արտաքին միջավայրի (ֆիզիկական կամ սոցիալական) մեծ կամ փոքր չափով սադրիչ դերի ընդունումը կենսաբանորեն հանցավոր տրամադրվածությամբ մարդկանց հանցավոր վարքի բացահայտման մեջ: Իտալացի քրեաբանի հայացքները զարգացրել է նրա հետևորդ Է. Ֆերրին [3], որը մանկական հանցագործությունների իրավախախտ վարքի պատճառների մեջ ներառել է նաև մարդաբանական տարրը և առանձնացրել է հանցավորությանը նպաստող երեք տիպ՝ մարդաբանական կամ անհատական, ֆիզիկական, սոցիալական:

Զարգացնելով Չ. Լոմբրոզոյի մոտեցումները՝ հոգեբան Դ. Աբրահամսենը [3] պնդում է, որ հանցագործ դառնում են դեռևս չծնված, իսկ նրա հետևորդներից Թ. Զիբենսը նշում է՝ անչափահաս իրավախախտները հիմնականում ատլետիկ կազմվածքով, արտահայտված մկանային համակարգ ունեցող (ըստ Ու. Շելդոնի՝ «մեզոմորֆ») երեխաներ են:

Ի տարբերություն վերը նշված մեկնաբանությունների՝ ռուս հոգեբան է Դ. Դրիլը [3] մանկական հանցավորության վարքի խաթարման պատճառները կապում է հանցագործություն կատարողի հոգեբանական խաթարվածության, հակումների, արտաքին անբարենպաստ պայմանների հետ: Նա մեծ նշանակություն է տալիս հատկապես հանցագործի ներաշխարհին:

Մեկ այլ նշանավոր ռուս հոգեբան՝ Վ. Մ. Բեխտերովը [3] նշում է՝ հանցագործություններին նպաստող գործոնների մեջ կարևորվում են ինչպես սոցիալ-տնտեսական, այնպես էլ կենսաբանական գործոնները:

Դեռահաս հանցագործների անձի հուզական-իրավական ոլորտին նվիրված հետաքրքիր հետազոտություններ են կատարել Պ. Բելսկին և Ս. Պոզնիշևը [3]: Բելսկին գտնում էր, որ հանցագործների վարքի դրդապատճառները հեռու են նորմալ սկզբունքային դատողություններից. «եթե չես բռնվի, գողանալ կարելի է», «գողանալ չի կարելի, որովհետև բանտարկում են»: Ըստ նրա, որպես դեռահասների հանցավորության պատճառ՝ կարող է հանդես գալ նաև դեռահասների հուզական ոլորտի անհասունությունը կամ ձևափոխությունը: Պոզնիշևը գտնում էր, որ քրեական հոգեբանության առարկան հանցագործի անձն է, և, հետևաբար, պետք է ուսումնասիրել վերջինիս կյանքի պատմությունը՝ ծնված պահից մինչև հանցարարքը:

Անչափահաս իրավախախտների անձի ուսումնասիրության մեջ առավել հետևողական տեսակետ ունի Պ. Լյուբլինսկին [3]: Նա առանձնացնում է գործոնների երկու հիմնական խումբ. ա) անհատական, որում արտահայտվում է անձի հոգեֆիզիոլոգիական ոլորտը, բ) սոցիալական՝ արտաքին միջավայրի գործոնները: Յենց այս երկու գործոնների խումբ է պայմանավորված մարդու ասոցիալ վարքը: Յիմնվելով իր հետազոտությունների արդյունքների վրա՝ Ս. Կորոտկովան [3] դեռահասների վարքի շեղում-

ների նպաստող գործոններ շարքում առաջին պլան է մղում սոցիալական միջավայրը՝ իրական և բացասական ազդեցություններով, ուր և՛ ապրում, և՛ դաստիարակվում է դեռահասը: Նա հաշվի է առնում նաև տարիքային և անհատական առանձնահատկությունները, փորձում է առանձնացնել սոցիալ վարքի երեք դրդապատճառներ. ա) պայմանավորված տարիքով՝ կապված ֆիզիկական ակտիվության բարձրացման հետ, (կռվարարությունը, ունեցվածքի փչացումը և այլն), բ) բացասական բնույթի հաստատուն զգացմունքներ (ցասում, չարություն, որոնք առաջանում են իրադրության հետ, հետո նրա հետ էլ անհետանում ), գ) բացասական բնույթի հաստատուն զգացմունքներ, որոնք առաջանում են կյանքի անբարենպաստ պայմանների տևականության արդյունքում:

Մեր համար առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում Գ. Մինկովսկու [3] մոտեցումները: Նա առանձնացրել է իրավախախտ դեռահասների տիպաբանությունը՝ վերջինիս հիմքում դնելով անձի ուղղվածությունը, կողմնորոշումների աստիճանական զարգացումը: Նա առանձնացնում է դեռահաս իրավախախտների չորս խումբ, որոնց համար օրինազանցությունները հանդիսանում են. ա) պատահականություն, բ) անձնային ուղղվածություն՝ հիմնված ընդհանուր անկայունության վրա, գ) անձի ընդհանուր բացասական կողմնորոշման արդյունք, դ) անձի հանցավոր դիրքորոշումների արդյունք:

Հարկ է նշել, որ վերջին ժամանակներս անչափահասների վարքի շեղումների հիմնախնդիրն ավելի ու ավելի է հետաքրքրում նաև հոգեբույժներին: Այսպես, Մ. Ռատտերը [9] «Օգնություն դժվար երեխաներին» մեծածավալ աշխատության մեջ, անդրադառնալով դեռահասների վարքի խաթարումներին և հանցագործություններին, ենթադրում է, որ դրանք հոգեկան խանգարվածության ախտանիշներ են: Նա գտնում է, որ և՛ հոգեկան դժվարությունները, և՛ ժամանակավոր էմոցիոնալ խաթարումները, և՛ վարքի շեղումները հաճախ են հանդիպում երեխաների մեծ մասի մոտ: Դա զարգացման գործընթացի անքակտելի մասն է կազմում: Ըստ որում, ինչպես հայրենական, այնպես էլ արտասահմանյան հոգեբանները գտնում են, որ այդ ռիսկային խմբի երեխաների թիվը գնալով մեծանում է: Հոլանդացի հետազոտող Մ. դե Վինտերը բերում է տվյալներ, ըստ որոնց՝ 1970-ական թվականներից մինչև 1990-ական թվականներն այս խմբի երեխաների թիվն անընդմեջ աճել է և այժմ կազմում է մինչև տասնութ տարեկան անչափահասների ու երիտասարդների ընդհանուր թվի քսան տոկոսը: Նույն աճը տեղի է ունենում նաև այլ զարգացած երկրներում [10]:

Հոգեբույժներ Ա. Լիչկոն [7] և Մ. Բույանովը [4] քննարկել են ինչպես տղաների, այնպես էլ աղջիկների մոտ նկատվող հոգեախտաբանական երևույթներ և ընդգծել էական տարբերությունները՝ կապելով դրանք ֆիզիկական և հոգեկան հասունացման տարբերությունների հետ: Նրանք հաստատում են այն փաստը, որ վարքի շեղումների պատճառներից կարող են լինել մի շարք հոգեկան հիվանդություններ, որոնք հանդիպում են հատկապես այդ տարիքում: Օրինակ՝ ըստ «Психологическая газета» թերթի 1998 թվականի տվյալների՝ Ռուսաստանում անչափահասների հանցագործությունների ութսուն տոկոսը կատարել են հոգեկան խանգարումներ, չբացահայտված հոգեկան պաթոլոգիաներ ունեցող դեռահասները: Նրանց մոտ հոգեկան հիվանդությունների տարածվածությունը բացատրվում է նրանով, որ հոգեկան շեղումները որոշակի պայմաններում նպաստում են օրինախախտումների կատարմանը, իսկ անբարենպաստ սոցիալական ազդեցություններն իրենց հերթին պատճառ են հանդիսանում հոգեկան անոմալիաների առաջացման համար (1998թ. թիվ 4) [6]:

Այս խնդրին անդրադարձել է նաև Ն. Վերցինսկայան [5] «Դժվար երեխաներ» աշխատության մեջ, ուր քննարկել է «դժվար երեխաների» ձևավորումն ու զարգացումը՝ հատուկ ուշադրություն դարձնելով դեռահասների բարոյական զարգացման պրոբլեմներին, որոնք խթան են հանդիսանում հատկապես բարոյական վարքի շեղումների համար:

Անչափահաս-օրինախախտի անձի ձևավորման պրոբլեմներին են նվիրված նաև Ս. Արզումանյանի [1] ուսումնասիրությունները: Նա լուրջ վերլուծության է ենթարկել անձի սոցիալական դեֆորմացիայի գործընթացը, երբ օբյեկտիվ անբարենպաստ ներգործությունների տակ անձնային որակները դեֆորմացվում են՝ ընդունելով ասոցիալ բնույթ: Նրա կողմից մշակվել է հանցածին դիրքորոշումների հոգեբանական հիմնադրույթը, որտեղ հանգամանորեն բացահայտված են հանցածին դիրքորոշումների ձևավորման և զարգացման օրինաչափությունները, օրինախախտ վարքագծի դիրքորոշումների դրսևորումներն ու փոփոխությունները, ինչպես նաև վաղ հոգեբանական կանխարգելման ուղիներն ու միջոցները:

Այսպիսով՝ հոգեբանական գրականության վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ, չնայած դեռահասների վարքի շեղումների հիմնախնդրին անդրադարձել են շատ հոգեբաններ, կան բազմաթիվ աշխատություններ, սակայն այն կարիք ունի առավել մանրակրկիտ հոգեբանական ուսումնասիրության:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1 *Արզումանյան Ս. Զ.,* Դեռահասների վարքագծի խաթարումների հոգեբանամանկավարժական պատճառները և դրանց հաղթահարման ուղիները, Երևան,1991թ.
2 *Ավագյան Ռ. Հ.,* «Հայ իրավական մտքի գանձարան,, Երևան 2001թ.
3 *Арзуманян С. Дж.* Микросреда и отклонении в поведении детей и подростков Москва 1982г.
4 *Буянов М. И.,* “Основы психотерапии детей и подростков” Киев 1990г.
5 *Верцинская Н. Н.* Трудный ребенок. Минск 1989г.
6 Зона особого внимания, “Психологическая газета” 1998г, N 4
7 *Личко А.* Эти трудные подростки Москва 1983г.
8 *Мельникова Э. Б.,* Правосудие по делам несовершеннолетних; история и современность., Москва 1990г.
9 *Раттер М.* Помощь трудным детям. Москва 1987г.
10 *Рожкова М. И.* Воспитание трудного ребенка. Дети с девиантным поведением. Москва 2001г

## THE BRIEF LITERARY SERVEY ABOUT THE CHILDREN WITH DEVIATED BEHAVIOUR

EVA HOVHANNISYAN

Summary

In the article the brief literary servey about the children with deviated behaviour is given. Generally we paid attention to the view points the thinkers of different times gave about the reasons of deviations in children's behaviour in the phsycological literature.

## ПРОБЛЕМА ОТКЛОНЕНИЙ ПОВЕДЕНИЯ ПОДРОСТКОВ В ПСИХОЛОГИЧЕСКОЙ ЛИТЕРАТУРЕ

ЕВА ОГАНЕСЯН

Резюме

В статье дается краткий литературный обзор о проблеме отклонений поведения подростков и в основном обращается внимание на то, как в психологической литературе мыслители разных времен высказывали свое мнение по поводу этой проблемы.

# ՄԱԿ-Ի ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՆՈՐ ԵՎ ԱՎԵԼԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԱՐՄՆԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

**Փետրվար 24, 2006:**

Ձգտելով հիմնովին փոխել մարդու իրավունքների պաշտպանությունն ամբողջ աշխարհում՝ փետրվարի 23-ին Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի նախագահը Մարդու իրավունքների խորհրդի նոր նախագիծ առաջադրեց, որն ավելի բարձր կարգավիճակ և ավելի մեծ պատասխանատվություն ունի, քան բուռն քննադատության արժանացած Մարդու իրավունքների հանձնաժողովը, որը նիստեր է գումարում յուրաքանչյուր տարի մեկ անգամ Ժնևում:

«Մինչ կհիմնվենք Հանձնաժողովի դրական նվաճումների ու լավագույն փորձերի վրա, մեր ձեռքի տակ ունեցած որոշ տարրեր Մարդու իրավունքների խորհուրդը կդարձնեն հիմնովին նոր և տարբեր մի մարմին՝ միանգամայն նոր ելակետով»,- հայտարարեց Շվեդիայի ներկայացուցիչ Յան Էլյասոնը, երբ ներկայացնում էր աշխարհի առաջնորդների կողմից 2005-ի սեպտեմբերին Նյու Յորքի գագաթնաժողովի ժամանակ առաջ քաշած Խորհրդի որոշման նախագիծը:

Համաձայն պրն Էլյասոնի՝ առաջարկված Խորհրդի էական բարելավումն այն պահանջն է, ըստ որի՝ Ասամբլեայի կողմից անհատականորեն ընտրված անդամների մասին դատեն ըստ մարդու իրավունքների վերաբերյալ նրանց գրառումների՝ պայմանով, որ կասեցվի նրանց գործունեությունը՝ խոշոր և կանոնավոր խախտումներ կատարելու դեպքում:

«Մենք ձգտում են նրան, որը իրական ուժ ցուցաբերվի խիստ բռնությունների դեպքում»,- ասաց նա առաջարկի վերաբերյալ ՄԱԿ-ի կենտրոնական գրասենյակում անցկացվող ասուլիսի ժամանակ՝ նախագիծը ներկայացնելուց հետո: Նա հույս հայտնեց, որ այս նախաձեռնությունը հիմնականում կհաստատվի և խելացիորեն կօգտագործվի Ասամբլեայի անդամների կողմից:

Պրն Էլյասոնը նաև նշեց, որ նոր Խորհուրդը, որպես Գլխավոր ասամբլեայի օժանդակ մարմին, ավելի բարձր կարգավիճակ կունենա, կհանդիպի ամբողջ տարվա ընթացքում, ի տարբերություն Հանձնաժողովի տարեկան վեցշաբաթյա նիստերի, և կիրականացնի բոլոր պետությունների «համընդհանուր, պարբերական ստուգումներ» մարդու իրավունքների նորմերին համապատասխան՝ սկսած Խորհրդի անդամների վերահսկումից:

Ի լրումն՝ պրն Էլյասոնն ասաց, որ նախագիծը հաշվի է առել Մուհամեդ մարգարեի ծաղրանկարների շուրջ ծագած բռնությունները, ներառելով մի նախաբան քաղաքակրթությունների, մշակույթների և կրոնների միջև երկխոսության և փոխըմբռնման անհրաժեշտության վերաբերյալ:

Գովաբանելով առաջարկված ծրագիրը՝ Գլխավոր քարտուղար Քոֆի Անանն ասաց. «Ամբողջ տարին հանդիպելու հնարավորությունը և անհրաժեշտության դեպքում ավելի երկար ժամանակահատվածով, քան Հանձնաժողովի դեպքում էր, Խորհրդին հնարավորություն կտա ահազանգել և մարդու իրավունքների հույժ կարևոր ճգնաժամերը ներկայացնել աշխարհի հանրության ուշադրությանը»:

Միևնույն ժամանակ պրն Անանն ասաց. «Խորհուրդը կպահպանի Հանձնաժողովի լավագույն գծերը, ներառյալ՝ անկախ զեկուցագրերի կիրառումը և ոչ կառավարական կազմակերպությունների հնարավորությունը՝ իրենց էական դերը խաղալու Կազմակերպության մարդու իրավունքների բնագավառի աշխատանքների վրա»:

Նա ընդգծեց, որ Նախագահի տեքստը համաձայնության հասնելու շատ ամիսների ջանքերի արդյունք է, և քանի դեռ ոչ մի պատվիրակություն չի հասել նրան, ինչին իրոք ձգտում է (պրն Անանն ասաց, որ ինքն անձամբ կնախընտրեր, որ պետությունները ընտրվեին 2/3-ի մեծամասնությամբ), Խորհուրդը նախահիմք կհանդիսանա մարդու իրավունքների պաշտպանության առավել արդյունավետ հիմքի համար:

Ըստ պրն Էլյասոնի՝ առաջարկի վերաբերյալ որոշումը կլինի ոչ ուշ: Պրն Անանը անդամ երկրներին կոչ արեց՝ փութորեն հավանություն տալ սույն նախագծին:

«Բայց դա միայն առաջին քայլը կլինի վերափոխման և նորացման գործընթացում»,- հայտարարեց նա,- ոչ մի տեխնիկական ամրագրում տարբերություն չի մտցնի»:

«Թե որքանով իրոք տարբեր կլինի Խորհուրդը Հանձնաժողովից, կախված կլինի մեծիմասամբ նրանից, թե անդամ պետություններն ինչ կհանձնառեն այն բարելավելու համար, և թե նրանք, համաձայն այդ հանձնառությունների, ինչպես կգործեն գալիք շաբաթներին և ամիսներին»,- եզրափակեց նա:

# ԿԱՆԱՆՑ ՍԵՌԱԴԵՐԱՅԻՆ ԵՎ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՎԱՐՔԻ ՇԵՂՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ


ՄԵՐԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

*ԵՊՄՀ*
*Հոգեբանության ամբիոնի դասախոս*


Հասարակական կյանքի տարբեր ոլորտներում ընթացող աննախադեպ զարգացումներն իրենց ազդեցությունն են թողնում նաև բարոյական գիտակցության, կանանց և տղամարդկանց սեռադերային վարքագծերի փոփոխության վրա:

Հայտնի է, որ սեռադերային վարքագիծն ու նրա հետ կապված սոցիալական դիրքորոշումները կարգավորվում և փոխազդում են փոփոխված հասարակական գիտակցության խորը հոգեբանական մեխանիզմներում: Սոցիալ-տնտեսական պայմանները ևս պայմանավորում են սոցիալական շերտերի համակարգում տեղի ունեցող փոփոխությունները, որոնք հաճախ չեն համընկնում տղամարդկանց և կանանց մասին ավանդական պատկերացումներին: Արդյունքում՝ թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց մոտ ձևավորվում են այլ պատկերացումներ իրենց իրավունքների ու բարոյական որակների վերաբերյալ:

Ներկայումս շարունակաբար տեղի ունեցող անբարենպաստ փոփոխությունները, քաղաքական և տնտեսական ճգնաժամը, արժեքային համակարգերի փլուզումը հանգեցրին մեր իրականությանը խորթ այնպիսի երևույթների, ինչպիսիք են մարմնավաճառությունը, կին-հանցագործների թվի աճը, կավատությունն ու թրաֆիքինգը (մարդկանց վաճառքը կամ «սպիտակ ստրկությունը»):

Եվ պատահական չէ, որ վերջին տասնամյակներում հոգեբանների, սոցիոլոգների, քրեագետների ուշադրությունը սևեռվել է գենդերի հիմնախնդիրների վրա. ներկայացվում են բազմազան տեսական դրույթներ ու մոտեցումներ, մշակվում են բազմաթիվ հոգեբանական մեթոդներ: Սակայն միանգամայն պարզ է, որ վերջիններիս տեղափոխումն ու կիրառումը մեր իրականության մեջ ենթակա է լուրջ փոփոխությունների ու ադապտացման:

Գիտության մեջ և կյանքում կան այսպես կոչված մշտական հարցեր, որոնք միշտ առկա են մենագրություններում, թերթերի ու ամսագրերի էջերում և քննարկումների մշտական առարկա են: Այս հարցերից է նաև կնոջ դերի ու տեղի հարցը ժամանակակից հասարակությունում:

Որպես կանոն՝ քրեական պատասխանատվության ենթարկված անձինք տղամարդիկ են: Սակայն քիչ թիվ չեն կազմում նաև կանայք: ՀՀ վիճակագրական տվյալներով՝ 2003թ. դատապարտված անձանց միայն 5,7%-ն են կազմում կանայք. այս թիվը վերջին երկու տարիների ընթացքում զգալիորեն աճել է [1]: Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ կնոջ հանցավորությունը բացասական երևույթ է հասարակության համար, հասարակությունն առավել քննադատաբար է վերաբերվում հատկապես կանանց կատարած հանցագործություններին:

Պետք է ընդունել, որ կանանց հանցավորությունը ուսումնասիրվում է քրեաբանների կողմից, իսկ հոգեբանական վերլուծությունները սակավ են: Հոգեբանությունն իր հերթին բավական հաճախ է անդրադարձել անձի բարոյական զարգացման, բարոյագիտակցության և իրավագիտակցության ձևավորման ու զարգացման առանձնահատկություններին: Ուշագրավ է վերջին տարիներին Ս. Արզումանյանի կողմից իրավաբանական հոգեբանության մեջ սոցիալական ախտաբանություն բաժնի առանձնացումը, որն ուսումնասիրում է անձի բարոյագիտակցության և իրավագիտակցության զարգացումն ու դրանց հնարավոր խաթարումները, առանձնացնում վերջիններիս առաջացման օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառները՝ մեծ տեղ հատկացնելով ընտանիքին և ողջ դաստիարակչական համակարգին, նախանշում կանխարգելման ուղիները [2]: Սակայն հասարակական գիտակցության այս երկու կարևոր բաղադրամասերը սեռային տարբերությունների ասպեկտով դեռևս չեն դիտարկվել:

Այս հանգամանքներով է պայմանավորված նաև մեր գիտական հետաքրքրությունը կանանց սեռադերային և բարոյական վարքի շեղումների հիմնախնդրի առնչությամբ:

Մեր նպատակը կանանց բարոյազանց վարքի ու սեռադերային վարքի շեղումների ուսումնասիրումն ու հոգեբանական վերլուծությունն է:

Մենք ելնում ենք այն ենթադրությունից, որ անձի բարոյական զարգացման մակարդակը և սեռադերային նույնականացման տիպը կապված են միմյանց հետ:

Մեր առջև դրված գիտական նպատակի իրականացման առաջնահերթ խնդիրը հիմնահարցի առնչությամբ հոգեբանական գրականության վերլուծությունն է:

Կանանց անձնավորության բարոյական ոլորտի և բարոյազանց վարքի առաջին լուրջ հոգեբանական ուսումնասիրությունների հանդիպում ենք 19-րդ դարի մարդաբանների աշխատություններում: Նրանց մի մասը (Լոմբրոզո, Կոլայանի) գտնում էր, որ կինը տղամարդուց ավելի հանցավոր է, սակայն այդ կարծիքը հակասում էր այդ ժամանակաշրջանի պաշտոնական տվյալներին (կին-հանցագործների թիվը փոքր էր), իսկ մյուս մասը (Զելանդ, Ռեյնգարդ և ուրիշներ) գտնում էր, որ կանանց հանցագործությունների ցածր ցուցանիշները պայմանավորված են նրանց բարոյական ավելի բարձր մակարդակով: Մեկ այլ խմբի (Բեբել, այլք) կարծիքով՝ այս ամենը կապված է սոցիալական բնույթի տարբերությունների հետ: Այս հիմնախնդիրը քննարկել են նաև Պ. Տառնովսկին [3] և 19-րդ դարի իտալացի քրեագետ, հոգեբան Չ. Լոմբրոզոն՝ «Հանցագործ և թեթևաբարո կին» աշխատության մեջ: Զուգահեռներ անցկացնելով բարոյական նորմերին համապատասխան (նորմալ) վարք դրսևորող և անբարո (մարմնավաճառ) կանանց միջև՝ նա առանձնացրել է անբարոյական (մարմնավաճառ) կանանց երկու տիպ՝ ի ծնե և պատահական: Ըստ նրա՝ կանանց այս տիպի մոտ դիտվում է բարոյական խաթարում (moral insanity), որի տարատեսակ է նաև հանցավորությունը: Լոմբրոզոն գտնում է, որ բարոյազանց վարքը՝ մարմնավաճառությունն ու հանցավորությունը (գողություն, սպանություն, մանկասպանություն) դիտվում են դեռևս դեռահասության տարիքից, որին հանգեցնող բարոյական ապականվածության պատճառները թաքնված են «բարոյական թուլամտության» մեջ: Նման կանայք բավականին նման են «պատահական մարմնավաճառներին» և էապես տարբերվում են նորմալ կանանցից: Նրանց մոտ դիտվում են բազմաթիվ վատ հակումներ, ոչ նորմալ հոգեբանական գծեր՝ թեթևամտություն, բթացած ամոթի զգացում: Վերջինս ընդհանրապես բա-

ցակայում է «ի ծնե մարմնավաճառների» մոտ: Լոմբրոզոն բարոյալքման նպաստող գործոն է համարում նաև կանանց՝ բոլորին վստահելու հակումը, սոցիալական պայմանները և շրջապատի վատ օրինակը [4]: Կարելի է ասել, որ Լոմբրոզոն առաջիններից էր, որ տեսավ սեռադերային և բարոյական վարքի շեղումների միջև որոշակի կապը, դասեց այն հանցագործությունների պատճառների շարքին:

Օ. Վեյնինգերի, Սիմոնա դե Բովուարի և այլոց աշխատություններում հանգամանորեն վերլուծվում են կնոջ հոգեբանական առանձնահատկությունները, այդ թվում անդրադարձ է կատարվում բարոյական ոլորտին: Սիմոնա դե Բովուարը «Սեռ երկրորդ» գրքում այն միտքն է արտահայտել, որ կինը «կեղծ անձնավորություն» է: Տղամարդը ստեղծագործական նախասկզբի կրողն է, իսկ կինը պասսիվ կողմի՝ բնազդների և ենթագիտակցականի. տղամարդու համար կինը ոչ այլ ինչ է, եթե ոչ «օտարում ինքն իրենից»: Սակայն այդ օտարված եսը սկզբունքորեն տարբերվում է հենց տղամարդուց, ինչպես ստվերն՝ առարկայից: Կինը մարմնավորում է հուզական նախասկիզբը, ստեղծում է սովորույթներ, սահմանում ամուսնական հարաբերությունների հուզական-հոգեբանական բովանդակությունը՝ իր վրա վերցնելով երեխաների խնամքն ու տնտեսության վարումը: [5, 157-158]:

Օ. Վեյնինգերի կարծիքով՝ կինը չի կարող ունենալ իր եսը. անձ լինելու միակ արժանիքը պատկանում է տղամարդուն: Հետևաբար կինը ոչինչ է նաև իր բարոյական որակներով. նա ի բնե անբարոյականության մարմնացում է: Կինը ստախոս է և չի ճանաչում ո՛չ ճիշտը, ո՛չ արդարությունը, այդ իսկ պատճառով նրան չի կարելի մոտ թողնել քաղաքականությանն ու պետության ղեկավարմանը: Կնոջ միակ ստեղծագործությունը ընտանիքն է, որը հակադրույթ է մարդկանց սոցիալական շփման բոլոր բարձրագույն ձևերին ([6]):

Կնոջ բարոյական վարքի ուսումնասիրությունների հետ անուղղակի կերպով առնչվում է նաև Լ. Քոլբերգի բարոյական զարգացման տեսությունը: Ըստ նրա՝ անձն անցնում է բարոյական զարգացման երեք մակարդակներով, որոնցից յուրաքանչյուրն ունի երկուական ենթափուլ: Քոլբերգն անձի բարոյական զարգացման մակարդակը որոշելու համար ներկայացրել է խնդիր-երկընտրանքներ, որոնց տվյալների արդյունքում եզրակացրել է, որ բարոյական զարգացման ընթացքում դիտվում են սեռային տարբերություններ: Այսպիսով, ըստ Քոլբերգի՝ կանայք կարող են հասնել բարոյական զարգացման միայն երրորդ փուլին, իսկ տղամարդիկ՝ նույնիսկ չորրորդ փուլին [7]:

Վերանայելով բարոյական զարգացման Լ. Քոլբերքի տեսությունն ու հետազոտությունների արդյունքները՝ Կ. Ջիլլիգանն ընդգծել է այն փաստը, որ Քոլբերգը խնդիր-երկընտրանքները կիրառել է տղամարդկանց շրջանում: Հետևաբար Քոլբերգի եզրակացությունները, որ կանայք կարող են հասնել բարոյական զարգացման միայն երրորդ փուլին, հիմնավորված չեն: Ջիլլիգանը գտնում է, որ, ի հակադրություն տղամարդկանց, որոնք ուղղակի յուրացնում են նորմերն ու իրավունքները, կանանց մոտ դիտվում է բարոյականության մի յուրատիպ մոդել, որը կապված է խնամքի և պատասխանատվության դրսևորման հետ: Մոդելի առկայությունը և զարգացման մակարդակը կապված են սեռադերային համապատասխան ստերեոտիպերի հետ [8]:

Սեռային զարգացման ու դաստիարակության հիմնախնդիրներով բավական հանգամանորեն զբաղվել է Ի. Կոնը: Նա գտնում է, որ տղամարդու կամ կնոջ բնավորությունը կենսաբանական ուժերի, միջավայրի և դաստիարակության միասնական գործունեության արդյունք է, այլ ոչ թե այդ գործոններից որևէ մեկի առանձին ներգործության հետևանք: Նա նաև անդրադարձել է կենսաբանական սեռին համապատասխան սեռադերային ճիշտ վարքագծի դրսևորմանն ու շեղումների պատճառներին, առնական կանանց և կանացի տղամարդկանց սեռադերային վարքին, նրանց բարոյական դեգրադացիայի խնդիրներին: Ըստ նրա՝ սեռադերային վարքի տարբերությունները դիտվում են ոչ միայն տարբեր էթնոսներում, այլ նաև միևնույն էթնոսի տարբեր սոցիալական խավերում: Հարեմի կանանց բնավորությունն էապես տարբերվում է հավասար իրավունքներով կանանց բնավորությունից: Ընդ որում, երբ կանանց և տղամարդկանց իրավունքները հավասարեցվում են, տվյալ հասարակությունում հավասարություն է դիտվում նաև ընտանիքում. ավանդական «երկակի բարոյականությունը», որի շրջանակներում կանանց ավելի խիստ բարոյական պահանջներ են առաջադրվում, աստիճանաբար տեղի է տալիս: Հետևաբար վերանում են շատ ավանդական սահմաններ. կանայք ձեռք են բերում «տղամարդու» մտածելակերպ, տղամարդկային բնավորության գծեր. տեղի է ունենում կանանց «տղամարդկայնացում» (մասկուլինացում): Սա ենթադրում է կավատության, մարմնավաճառության, հարբեցողության, թմրամոլության աճ կանանց շրջանում [9]:

Անձի սեռադերային նույնականացման ճիշտ ընթացքի, բարոյական ոլորտի սեռային տարբերությունների վերաբերյալ վերը ներկայացված մոտեցումներն անմիջականորեն առնչվում են անձի հոգեբանական սեռի և դրանից բխող վարքագծային առանձնահատկությունների վերաբերյալ առավել տարածված տեսական դրույթներին:

Հոգեվերլուծաբան Զ. Ֆրոյդը գտնում է, որ առաջին սեռային նույնականացումը տեղի է ունենում «էդիպի բարդույթի» դրսևորման շրջանում (3-5 տարեկանում): Վերջինս ըստ էության առավելապես բարդ է ընթանում աղջիկների մոտ՝ առաջացնելով ամբիվալենտ զգացումներ. մի կողմից՝ քնքշություն և սեր, մյուս կողմից՝ մրցակցություն և ագրեսիա: Սակայն Ֆրոյդն, այնուամենայնիվ, չի կարողանում հստակ ներկայացնել անձի մեջ առնականությունը կամ կանացիությունը պայմանավորող գործոնները և նշում է. «Այն, ինչից կախված է առնականությունը կամ կանացիությունը, ինչ-որ մի անհայտ գործոն է, որի բնույթն անատոմիան բացատրել չի կարող»[10]: Հավանաբար դա կապված է սեռականության ձևավորման հետ, որի ընթացքը կանանց և տղամարդկանց մոտ տարբեր կերպ է ընթանում: Կանանց սեռականությունն, ըստ նրա, կարող է զարգանալ երեք ուղղություններով.

1) սեռականության ճնշում, որն ընթանում է սեռական մղումների նևրոտիկ արտամղման տեսքով.

2) առնականություն, որն ընթանում է տղամարդուց տարբեր լինելու մերժման տեսքով.

3) կանացիություն, որն ընթանում է կանացի իրադրության վերականգնման ճանապարհով. ի հայտ է գալիս երեխա ունենալու ցանկություն: Վերջինս Ֆրեյդը աղջիկների հոգեսեռական զարգացման նորմալ տարբերակ է համարում: Ըստ նրա՝ կանայք կանացիության ուղղությամբ զարգանալու դեպքում արդարության զգացում դրսևորում են շատ քիչ և կյանքի օբյեկտիվ պայմաններին քիչ են ենթարկվում, իրենց դատողություններում ավելի շատ ելնում են համակրանքի կամ թշնամանքի զգացումներից, ավելի շատ դրսևորում են ամոթի զգացում [11]:

Կ. Հորնին, մանրակրկիտ վերլուծության ենթարկելով տղաների և աղջիկների հոգեսեռական զարգացման յուրատիպությունները, առանձնացրել է կանացիության, այսինքն՝ սեռային համապատասխան ստերեոտիպերի ձևավորմանը խանգարող հոգեբանական և սոցիալական որոշ գործոններ: Հոգեբանական գործոններից է այն, որ հոգեսեռական զարգացման որոշ փուլերում աղջնակը գտնվում է իրեն «ոչ ձեռնտու» վի-

ճակում: Եվ այդ վիճակը հետագայում հիմք է հանդիսանում սեռադերային վարքի խաթարումների համար: Սոցիալական գործոններից են սոցիալական անհավասարությունը, մշակույթի և ավանդույթների ազդեցությունը, արգելքներն ու սահմանափակումները, որոնք կարող են հանգեցնել «առնականության (մասկուլինության) բարդույթի» ձևավորմանը և դրանից բխող վարքագծային հիվանդագին ձևերի դրսևորմանը [12]:

Ինչպես Կ. Հորնին, Ն. Հոդորոուն ևս գտնում է, որ անհատականացման գործընթացում սեռային տարբերությունների դրսևորումը չի նշանակում, որ կանայք ունեն «եսի ավելի թույլ սահմաններ» և ավելի հաճախ են տառապում փսիխոզներով, քան տղամարդիկ: Նրա կարծիքով՝ աղջիկներն ավելի ամուր նախադրյալներ ունեն էմպատիկ զգացումների համար: Եթե տղաների սեռային նույնականացման գործընթացը՝ առնականության ձևավորումը, տեղի է ունենում երեխա-մայր կապի թուլացման արդյունքում, աղջիկների մոտ, ընդհակառակը, կանացիություն (ֆեմինիստություն) ձեռք է բերվում՝ միասնական դառնալով մոր հետ [13]: Սա էական նշանակություն ունի կանացի որակների ձևավորման համար:

Սեռադերային նույնականացման հիմնահարցին հանգամանորեն անդրադարձել է Ս. Բեմը և առանձնացրել հոգեբանական սեռի հետևյալ չորս տիպերը՝

- ֆեմինիստական տիպին պատկանող անձանց մոտ անձնային որակները համապատասխանում են կանացիության ստերեոտիպերին.
- մասկուլիստական տիպին պատկանող անձանց մոտ անձնային որակները համապատասխանում են տղամարդկային ստերեոտիպերին.
- անդրոգինության ցուցանիշով անձանց մոտ զուգակցվում են ավանդական տղամարդկային և կանացի մի շարք դրական գծեր, ընդ որում՝ հոգեբանական անդրոգինությունը դաստիարակության որոշակի մոդելի կիրառման արդյունքն է. Ս. Բեմի կարծիքով՝ անդրոգինության ցուցանիշներով անձինք ավելի հարմարվող են և հազվադեպ են բարոյազանց վարք դրսևորում.
- չտարբերակված հոգեբանական սեռով անձանց մոտ առկա են և՛ տղամարդկային, և՛ կանացի ստերեոտիպերին համապատասխան ցածր ցուցանիշներ [14 ]:

Ընդ որում՝ Ս. Բեմի այս տարբերակումներն ու սեռադերային ստերեոտիպերի մասին դրույթները հիմնավորվել են բազմաթիվ երկներում BSRI մեթոդի կիրառման հիման վրա, ուր ներկայացվում են կանացիության և առնականության սանդղակներ:

Այսպիսով, կանանց սեռադերային և բարոյական վարքի միջև եղած փոխկապակցվածության հիմնախնդրի վերաբերյալ հոգեբանական գրականության վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ բարոյական վարքի զարգացումն ունի իր սեռային տարբերությունները, որոնք կապված են սոցիալականացման գործընթացի և սեռային նույնականացման առանձնահատկությունների հետ:

Ավելացնենք, որ վերը նշված տեսական դրույթների ու մոտեցումների և դրանց վերլուծություններից արված եզրակացությունների մեխանիկական տեղափոխումը հայկական իրականություն նպատակահարմար չէ: Վերջնական գիտական տվյալների ու եզրակացությունների համար անհրաժեշտ է վերջիններիս ադապտացումը մեր իրականության մեջ, ինչպես նաև որոշակի մեթոդների ու մեթոդիկաների կիրառումը, ինչը հնարավորություն կտա փորձարարական հիմքերից և տվյալների բազայի հիման վրա խոսել հայ կանանց բարոյական գիտակցության և վարքի առանձնահատկությունների մասին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1 www.armstat.am
2 *Արզումանյան Ս. Զ., Գրին Է.,* Իրավաբանական հոգեբանություն, Եր.: «Զանգակ-97», 2004:
3 *Гернеть М.* Общественные причины преступности. М., 1906.
4 *Ломброзо Ч.* Гениальность и помешательство; Женщина преступница и проститутка; Любовь у помешанных. Сборник. Попурри. Минск, 1998.
5 *Шимин Н. Д.* Личность женщины и семья. Методологические и социологические проблемы исследования. Волго-Вят. 1972.
6 *Вейнингер О.* Пол и характер. Принципиальные исследования. М., 1992.
7 *Նալչաջյան Ա.,* Անձ, խմբային սոցիալականացում և հոգեբանական ադապտացիա, Եր., 1984:
8 *Gilligan C.* In a different voice. Psychologicaltheory and women's development. L.; Cambridge, MA: Garvard Univ. press, 1982.
9 *Кон И. С.* Мужественные женщины? Женственные мужчины? "Литературная газета", 1970, N1, январь, стр. 12.
10 *Ֆրոյդ Զ.,* Հոգեվերլուծություն (դասախոսություններ): «Զանգակ-97», Երևան, 2002:
11 *Ֆրոյդ Զ.,* նշվ. աշխ.:
12 Психологическая помощ и консультирование в практической психологии. Под ред. *Тутушкиной М. К.* Санкт-Петербург, Дидактика Плюс, 2001.
13 *Gilligan C.* In a different voice. Psychologicaltheory and women's development. L.; Cambridge, MA: Garvard Univ. press,1982.
14 *Bem S. L Bem.* Sex Role Inventory: Proffesional manual Palo Alto, CA: Consulting Psychologists Press.
15 *Bem S. L Bem.* Sex Role Inventory: Proffesional manual Palo Alto, CA: Consulting Psychologists Press.


## THE PROBLEM OF THE DEVIATIONS OF WOMEN'S SEX ROLE AND MORAL BEHAVIOR IN PSYCHOLOGY


MERI AVETISYAN
*Lecturer of the Chair of Psychology at YSPA*


Summary


In this article is done detailed analize of psychological literature concerned with the problem of pecularities of women's moral behavior, is reviewed some important psychological teories of sex-role socialization and pecularities of the formation of psychological sex. The fact that this problem is not studied among armenian women and the necessity of the special adapted approaches and teories, methods of psychological studies in Armenia are pointed out.


## ПРОБЛЕМА ОТКЛОНЕНИИ ЖЕНСКОГО ПОЛОРОЛЕВОГО И МОРАЛЬНОГО ПОВЕДЕНИЯ В ПСИХОЛОГИИ


МЕРИ АВЕТИСЯН
*Преподаватель кафедры психологии ЕГПУ*


Резюме


В данной статье подробно представлен анализ психологической литературы по проблеме морального поведения у женщин, рассматриваются несколько особо важных психологических теорий полоролевой социализации и особенностей формирования психологического пола. Подчеркивается тот факт, что эта проблема не изучена среди армян и для психологических исследований особенностей морального развития и поведения женщин в Армении важно специальная обработка и адаптация изложенных подходов и теорий новых методик.

# ՊԱՐՍԿԱ-ՀՌՈՄԵԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՍԻԽԻՍԻ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵ ՅՈՒՐԵ ԲԱԺԱՆՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

ԱՐԹՈՒՐ ՄԵԼԻՔՅԱՆ

III դ. առաջին քառորդին Իրանում կատարված հեղաշրջման արդյունքում տապալվեց պարթև Արշակունիների 450-ամյա թագավորությունը, և իշխանությունն անցավ պարսկական նոր դինաստիային՝ Սասանյաններին: Հավակնելով վերականգնել պարսկական (Աքեմենյան) պետության երբեմնի տարածքն ու փառքը՝ առաջին իսկ Սասանյանները հանդես բերեցին նվաճողական բացահայտ նկրտումներ՝ կասկածի տակ առնելով ինչպես ողջ հռոմեական Արևելքի, այնպես էլ նրանից կախյալ երկրների քաղաքական կարգավիճակը[1]:

Կայսրության արտաքին քաղաքական ճգնաժամը, որը սկսվել էր IIIդ. 30-ական թթ., երկար տարիներ հնարավորություն չէր տալիս Հռոմին գործնականորեն հակազդելու Սասանյաններին: Ալեքսանդր Սևերոսի զորքերը հեռացել էին Արևելքից, նույնիսկ առանց պարսիկների հետ հաշտության պայմանագիր կնքելու: Եվ միայն հայոց Տրդատ II (վիպական Խոսրով Մեծ) արքայի ու նրա կովկասյան դաշնակիցների անզիջում դիմադրության[2] շնորհիվ էր, որ Սասանյանները դեռևս չէին անցնում եփրատյան բնագիծը:

Կայսրության արտաքին քաղաքական ճգնաժամի հետագա խորացումը ստիպեց իրար դեմ պայքարող քաղաքական խմբավորումներին առժամանակ համերաշխել՝ հանուն կայսրության փրկության: 238 թվականին՝ Կապիտոլական խաղերի ժամանակ, սպանվեցին Մաքսիմինոսն ու Բալբինոսը, և գահը մնաց տասնչորսամյա Գորդիանոս III-ին (238-244թթ.):

Գորդիանոս կայսեր կենսագիր Հուլիոս Կապիտոլիանոսը գրում է. «Այն բանից հետո, երբ վետերաններին հայտնի դարձավ, որ կայսր է հանդիսանում միայն Գորդիանոսը, ժողովրդի, զորքի ու վետերանների միջև խաղաղություն հաստատվեց: Պատանի Գորդիանոսին կոնսուլության շնորհումով վերջ դրվեց երկպառակությանը»[3]:

Ամմիանոսը ևս վկայում է, որ Գորդիանոսի գահակալությունը հռոմեական հասարակության կողմից ընկալվել է այլ՝ արտառոց կերպով[4]: Նշանավոր հռետոր և շնորհալի զորավար Ֆուրիոս Տիմոսթեոսը (Miziteos), որի դստեր հետ ամուսնացավ պատանի Գորդիանոսը, կարողացավ երիտասարդ և անփորձ կայսեր շուրջը համախմբել հռոմեական հասարակության տարբեր խավերին, սենատին, զորքին և պրովինցիաներին:

Առաջնահերթ խնդիրը, որ կանգնած էր պետության առջև, Արևելքում պարսիկներին հակահարված տալն էր: 242 թ. «Պրետեկստատի և Ատտիկոսի կոնսուլության տարում Գորդիանոսը բացեց երկդեմ Յանուսի տաճարը…և գնաց պարսիկների դեմ…»[5]:

Հռոմեական անցյալի խորքից եկող այս ծեսը նշանակում էր պատերազմի սկսում, այնպես, ինչպես տաճարի դարպասների փակումը ազդարարում էր խաղաղության վերականգնումը: Հռոմի բազմադարյան պատմության ընթացքում, անընդհատ պատերազմների հետևանքով այս դարպասները հազվադեպ էին փակվել[6]:

Մի շարք փաստեր, ինչպիսիք, օրինակ, Հռենոսադանուբյան սահմաններում կայսրության «հավերժական պատերազմը» բարբարոսական աշխարհի հետ, 233թ. պարսկա-հռոմեական հաշտության բացակայությունը, ինչը կայսրությանը պաշտոնապես թողնում էր պատերազմի մեջ, և վերջապես այն, որ պարսկական հերթական հարձակումը սկսվել էր Գորդիանոսի ու Պոմպեյանոսի կոնսուլության տարում[7], այսինքն՝ 241թ., ցույց են տալիս, որ Օգոստոսից մոտ 250 տարի հետո, այս ծեսին նորից քարոզչական նշանակություն է տրվել՝ հռոմեական ժողովրդին ազդարարելու այն նույն միտքը, ինչ որ Օգոստոսի օրոք, այն է՝ վերականգնված է պետության ներքին խաղաղությունը: Միաժամանակ այն ազդարարում էր «բարբարոս Արևելքի» դեմ քաղաքակիրթ Հռոմի ոչ հերթական, այլ արտառոց առաջխաղացումը և Արևելքում սասանված հռոմեական հեղինակության (Autoritas Romanis) վերականգնման կայսեր վճռականությունը:

242թ. հռոմեական բանակն անվանապես Գորդիանոսի, իսկ փաստորեն պրետորիականների պրեֆեկտ Տիմոսթեոսի հրամանատարությամբ մտավ Ասիա և շարժվեց դեպի Եփրատ: «Սիրիայի միջով նա (Գորդիանոսը-ծ.հ.) մոտեցավ Անտիոքին, որն արդեն զբաղեցրել էին պարսիկները… Նեղելով պարսից արքա Շապուհին, որը գահակալում էր Արտաքսերքսեսից հետո, նա հետ գրավեց և՛ Անտիոքը, և՛ Խառանը, և՛ Մծբինը, որոնք բոլորը գտնվում էին պարսիկների տիրապետության տակ»[8]: Այդ ընթացքում նա գահընկեց արեց Օսրոենեի Աբգար XI արքային, որը, հակառակ իր վասալական «պարտքին», բանակցությունների մեջ էր մտել պարսիկների հետ: «Պարսից արքան այնպես էր վախենում՝ Գորդիանոսից, որ… ինքնակամ հանեց իր կայազորերը քաղաքներից և այդ քաղաքները ողջ ու անվնաս հանձնեց դրանց բնակիչներին՝ ձեռք չտալով նրանց ունեցվածքից և ոչ մի բանի… Վերջապես հասան նրան, որ... ճակատամարտից հետո (Ռաշ-Այնի-ծ.հ.) Հռոմեական պետությունը իր ձեռքում պահեց ամբողջ Արևելքը»[9]:

Ինչպես երևում է Կապիտոլիանոսի վկայությունից, պարսիկները Միջագետքը հանձնել են գրեթե առանց կռվի, ինչը կարող է բացատրվել կամ մեծ պատերազմին նրանց անպատրաստությամբ, կամ էլ, որ ավելի հավանական է, հակառակորդի հաղորդակցությունը ձգելու, նրան Միջագետքի տափաստանները ներքաշելու և հենակետերից հեռացնելու Շապուհի մտադրությամբ: Եվ նա հասել է իր նպատակին[10]: Ոգևորված առաջին հաղթանակներով՝ կայսրը Քթեսիփոն (Տիզբոն) արշավելու մտադրություն է հայտնել. «Եթե աստվածները մեզ հովանավորեն, կհասնենք մինչև Քթեսիփոն»[11]:

Ուսումնասիրողները պարսկական զորքերի նահանջը արևմտյան սահմանից բացատրում են դեպի Իրանի հյուսիսարևմտյան շրջանները արշավանքի նախապատրաստությամբ[12]: Շապուհի այս արշավանքի մասին է պատմում ասորի հեղինակ Մշիխա Զեխայի՝ ոմն Ավելյոսի աշխատության հիման վրա գրված «Արբելայի ժամանակագրությունը»: «Առաջին տարիներին[13] Շապուհը պատերազմեց խորեզմացիների ու լեռնա-բնակ մարերի հետ, և դաժան մարտերում նա հաղ-

թեց նրանց: Այնտեղից նա գնաց և հաղթեց գելերին, դալյամիտներին, վրացիներին, որոնք ապրում էին հեռավոր լեռներում՝ վերջին ծովի մոտակայքում»[14]:

Ս. Երեմյանի կարծիքով՝ 243թ. գարնանը տեղի ունեցած Շապուհ I-ի այս արշավանքի նպատակը Դաղստանի հյուսիսից մինչև հայկական աղբյուրների հիշատակած «Պահլ դուռ» կոչված լեռնանցքը տարածվող Արշակունիների մազքթաց թագավորության չեզոքացումն էր և Իրանշահրի հյուսիսային սահմանների ապահովումը[15]: Արշավանքի արդյունքը, հեղինակի կարծիքով, եղել է այն, որ «Երանշահրին են կցվել Կասպից ծովի հարավարևմտյան և արևմտյան ծովափնյա երկրները, որից հետո Սասանյան Իրանի աշխարհակալությունն անմիջապես սահմանակից էր դառնում Մեծ Հայքի թագավորությանը հյուսիս-արևելքից՝ Կուր գետի երկայնքով»[16]: Անվանի հետազոտողը իր եզրակացության ժամանակ, ըստ երևույթին, փորձել է ինչ-որ կերպ համադրել Մշիխա Զեխայի վկայությունը SKZ-ի տվյալների հետ, համաձայն որի՝ Շապուհի օրոք Իրանշահրի մեջ էին մտնում Վրաշանը (հուն.՝ Իբերիա) և Արդանը (հուն.՝ Ալբանիա): Սակայն անուշադրության է մատնվել այն կարևոր հանգամանքը, որ Շապուհի արձանագրության տվյալները չեն կարող այս հարցում որոշակիություն մտցնել, քանի որ, երբ գրվում էր SKZ-ն[17], Սասանյան տերության մեջ մտնում էր նաև Մեծ Հայքը[18]: Մյուս կողմից՝ հնարավոր է, որ հեղինակի նման եզրակացության պատճառն առաջին աղբյուրն է: Ճիշտ է, Մշիխա Զեխան ուսումնասիրողների կողմից գնահատվում է որպես միանգամայն արժանահավատ սկզբնաղբյուր, սակայն ակնհայտ է, որ «խորեզմացիների» ու «վրացիների» հիշատակությունը վերոնշյալ հատվածում ուշ շրջանի ինտերպոլյացիա են, քանի որ Խորեզմը, Վրաստանն ու Լեռնային Մարաստանը որպես նույն, և այն էլ ընդամենը մի քանի ամիս տևած պատերազմի թատերաբեմ, անհամատեղելի են:

Տեսականորեն հնարավոր է, որ «Արբելայի ժամանակագրության» մեջ «Վրաշանը» առաջացել է Վրկան բառի գրչական վրիպակի արդյունքում, ինչն էլ մեծ շփոթի պատճառ է հանդիսացել: Այդ դեպքում Վրկանը, իրոք, կարող էր դառնալ Շապուհի հարձակման առարկա: Բոլոր դեպքերում, Շապուհի Կաաբա Զորաստրի արձանագրությունը ցույց է տալիս, որ արշավանքը սահմանափակվել է Գիլյանի ու Դելմիկք-Դելումքի նվաճմամբ: Նորանված երկրամասը Շապուհի կողմից ներառնվել է արքայական ոստանի մեջ՝ կազմելով առանձին վարչական միավոր՝ Գիլյան, որի կառավարումը հանձնվեց Շապուհի որդի Վարահրանին: Ընդ որում, նորաստեղծ շահրն այն աստիճան աննշան էր, որ նրա կառավարիչ Վարահրանը Շապուհի արքունի ցուցակում ոչ միայն պատվավոր տեղ չի գրավել, այլև, նույնիսկ սեփական կրակը (ատրուշան) ունենալու պատվին չի արժանացել[19]: Սակայն, անկախ Սասանյան պետական համակարգում Գիլյանի և նրա կառավարչի զբաղեցրած դիրքից, նրա գրավումը պարսիկների համար ուներ ռազմավարական կարևոր նշանակություն, քանի որ դրանով Սասանյանները պատնեշում էին Տրդատ II-ի ու նրա կովկասյան դաշնակիցների ռազմարշավը դեպի Մարաստան, մի բան, որը Հռոմի հետ փաստացի պատերազմի պայմաններում լուրջ դժվարություն կհարուցեր պարսիկների համար: Այսպես թե այնպես, այս արշավանքի արդյունքում Իրանշահրը մոտեցավ Հայաստանի սահմաններին, սակայն ոչ թե հյուսիս-արևելքից՝ Կուր գետի երկարությամբ, ինչպես կարծում է Ս. Երեմյանը, այլ հարավ-արևելքից՝ հյուսիսային Ատրպատականի կողմից:

Վերադառնալով Մարաստանից ու Գիլյանից՝ Շապուհն իր ուշադրությունը կրկին սևեռեց արևմտյան սահմաններին: Ուշագրավ է, որ նրա բացակայության ժամանակ պարսկա-հռոմեական ճակատում որևէ էական փոփոխություն տեղի չէր ունեցել: Շապուհի նահանջը Տիզբոն, նրա արշավանքը դեպի հյուսիս և նման պայմաններում հռոմեական զորքերի գործողություններում նկատելի դանդաղկոտությունն այն տպավորությունն են ստեղծում, որ նրանց միջև գոյություն է ունեցել ինչ-որ համաձայնություն, թերևս՝ զինադադար: Հնարավոր է, որ Հռոմեական Միջագետքն ազատագրելուց հետո հռոմեական բանակը ձմեռել է Մծբինում:

243թ. վերջերին, երբ հռոմեական զորքը Խաբուր գետի հոսանքով մոտեցավ Եփրատին ու նրա հոսանքով սկսեց իջնել դեպի Սելևկիա և Տիզբոն, մահացավ զորքի իրական առաջնորդ Գայոս Ֆուրիոս Տիմոսթեոսը: Գորդիանոսի կենսագիրը հնարավոր է համարում, որ նա գաղտնի դավադրության զոհ է դարձել[20]: Դրանից հետո պրետորիականների պրեֆեկտի պաշտոնը հանձնվեց Մարկոս Հուլիոս Ֆիլիպին:

Հուլիոս Կապիտոլիանոսը պատմում է, որ նոր պրեֆեկտն անմիջապես սկսել է դավադրություն կազմակերպել երիտասարդ կայսեր նկատմամբ: Զորքին արհեստականորեն սովի մատնելով՝ նախ նրան տրամադրել է կայսեր դեմ, ապա հասել է նրան, որ հռչակվել է կայսեր կառավարչակից ու խնամակալ և, վերջապես, դավադրության միջոցով վերջ է տվել նրա կյանքին[21]:

Հուլիոս Կապիտոլիանոսի հաղորդած այս սցենարը վերցված է Ամմիանոս Մարկելլինոսից, որը գրում է. «Գորդիանոսը հաղթեց ու փախուստի մատնեց պարսից արքային Ռեզայնի մոտ, սակայն պրետորիականների պրեֆեկտ Ֆիլիպպի և մի քանի հանցավոր դավակիցների որոշմամբ նրան խոցեց հանցավոր հարվածը այն նույն տեղում, որտեղ նա թաղված է»[22]: Նույն աղբյուրը վկայում է նաև Գորդիանոսի սպանության տեղը՝ «Զեյթայից հետո առաջին կայանում»: Նշված վայրը, եթե այն հասկանանք Եփրատի հոսանքին հակառակ ուղղությամբ, համապատասխանում է Կապիտոլիանոսի վկայությանը. «Կիրհեսիոնյան ամրությունների մոտ, Պարսկաստանում, զինվորները Գորդիանոսի համար դամբարան կառուցեցին»[23]:

Հռոմեական աղբյուրների վերոնշյալ պատումը երկար ժամանակ համարվել է պատմական[24]: Ուստի, մինչև XX դարի կեսերը պատմագիտության մեջ տիրապետող էր այն կարծիքը, որ Գորդիանոսի դավադիր սպանությունից հետո զորքի կողմից կայսր հռչակված Ֆիլիպպ Արաբը «ստիպուեցաւ իր զօրաց կամքին հպատակիլ և պատերազմը կէս թողլով, մեկնիլ դէպի Իտալիա»[25]:

1936-1939թթ. Է. Շմիթը Նակշի Ռուստամում Աքեմենյան ժամանակաշրջանին վերաբերող Կաաբա ի Զարդուշտ կոչվող հուշարձանի ստորին մշակութային շերտերի բացման ժամանակ հայտնաբերեց եռալեզու (պահլավերեն, միջին պարսկերեն և հունարեն) մի արձանագրություն, որը հանդիսանում էր Շապուհ I-ի՝ Հռոմի դեմ մղած երեք պատերազմներում տարած հաղթությունների արձանագրությունը: Արձանագրությունը 1940 թ. հրապարակվեց Մ. Շպերլինգի կողմից[26] և խոշոր հեղաշրջում առաջացրեց ոչ միայն իրանագիտության, այլև III դարի պարսկա-հռոմեական և հայ-իրանական հարաբերությունների ուսումնասիրության գործում: Վ.. Լուկուկոնինի բնութագրմամբ՝ Շապուհ I-ի

հիշյալ արձանագրությունը դարձավ «այս ժամանակշրջանի քաղաքական պատմության հիմնական աղբյուրը»[27]: Արձանագրությունը միանգամայն այլ կերպ է լուսաբանում իրադարձությունները:

«Եվ այն ժամանակ, երբ ես սկսեցի կառավարել երկիրը, Գորդիանոսը՝ կեսարը, զորք հավաքեց ամբողջ Հռոմեական կայսրությունից՝ գոթերից ու գերմանացիներից և դիմեց Ասորեստանի, Իրանշահրի ու մեր վրա: Եվ Ասորեստանի սահմանի մոտ՝ Մեսիխիս քաղաքի մոտակայքում, տեղի ունեցավ մեծ ճակատամարտ: Գորդիանոս կեսարը սպանվեց, և հռոմեական զորքը ցրիվ տրվեց: Եվ հռոմեացիները Փիլիպպին դարձրին կեսար: Եվ Փիլիպպը՝ կեսարը, եկավ մեզ մոտ՝ խնդրելով խաղաղություն և տալով մեզ 500 հազար դինար իր ընկերների կյանքի համար և դարձավ մեր հարկատուն»[28]:

Այսպիսով, Շապուհի տարեգրության համաձայն, Գորդիանոսը բնավ էլ Կիրկեսիոնում չի սպանվել, և նոր կայսր Փիլիպպ Արաբը բնավ էլ զորքի պահանջով հետ չի վերադարձել՝ կիսատ թողնելով արշավանքը: Արձանագրությունից ակնհայտ է, որ Գորդիանոսը, տարված առաջին հաջողություններով, շարժվել է Եփրատի հոսանքով դեպի վար և Ստորին Միջագետքի Միսիխեն (Բեթ-Մաշկեն) քաղաքի մոտ ճակատագրական ճակատամարտ է տվել պարսիկներին, որտեղ և սպանվել է[29]: Նրա դիակը ընկել է հաղթողի ձեռքը:

Արևելյան արշավանքի կատարյալ ձախողման պայմաններում զորքի կողմից կայսր հռչակված Փիլիպպ Արաբը հասկանալի պատճառներով շտապում էր Հռոմ՝ իր իշխանությունը սենատի կողմից վավերացնելու համար[30]: Սակայն նախքան այդ նա ստիպված էր մտածել թշնամու տարածքի խորքից իր նահանջի անվտանգությունն ապահովելու և հակառակորդի ձեռքն ընկած հռոմեական ռազմագերիներին ու սպանված կայսեր մարմինը փրկագնելու մասին: Ծանր կացության մեջ հայտնված Փիլիպպը ստիպված էր ընդունել հաղթողի պայմանները:

Ցավոք, հաշտության պայմանների վերաբերյալ աղբյուրների տեղեկությունները խիստ հակասական են: «Օգոստոսների պատմություն»-ը հաշտության մասին ընդհանրապես չի խոսում: Կաաբա Զորաստրի արձանագրությունը նույնպես, նշելով, թե «Փիլիպպը՝ կեսարը, եկավ մեզ մոտ՝ խնդրելով խաղաղություն», հաշտության պայմանների մասին ոչինչ չի հաղորդում: 500 հազար դինար: Ահա այն ամենը, ինչը, համաձայն SKZ-ի, արժեցել է հաշտության պայմանագիրը հռոմեացիների վրա: Արձանագրության մեջ և ոչ մի խոսք չկա Հռոմի կողմից տարածքային զիջումների մասին: Անգամ այդ 500 հազարը արձանագրության մեջ նշվում է ոչ թե որպես ռազմատուգանք կամ հատուցում, ինչպես տվել էր Օպիլիոս Մակրինոսը Արտավան 5-րդին 218թ. կնքված պայմանագրով[31], այլ որպես հռոմեացի ռազմագերիների փրկագին:

Հաշտության պայման չի կարող համարվել նաև ավանդական արևելյան փառասիրական մղումներից արված արտահայտությունը, թե «կեսարը հարկատու դարձավ մեզ», քանզի Շապուհն իր արձանագրության մեջ պարսկա-հռոմեական պատերազմի վերսկսման պատճառը համարում է ոչ թե հարկատվությունից կայսեր հրաժարվելը, այլ «Հայաստանում գործած անիրավությունը»[32]: Նկատի ունենալով այդ հանգամանքը՝ Մ. Դյակոնովը նույնիսկ կարծիք է հայտնում, որ հռոմեացիների պարտությունը Միսիխիսի ճակատամարտում այնքան էլ մեծ չի եղել, քանի որ այն որևէ տարածքային հարց չի շոշափել և սահմանափակվել է համեմատաբար ոչ մեծ ռազմատուգանքով[33]: Այսպիսին է արդի պատմագրության ընդհանուր կարծիքը խնդրի վերաբերյալ:

Սակայն այսօրինակ եզրակացությունը ուղղակի հակասության մեջ է մտնում Սասանյանների նվաճողական քաղաքականության արևմտյան ուղղվածության և Հայաստանի և Միջագետքի նկատմամբ նրանց տասնամյա հավակնությունների, Միսիխիսի «մեծ ճակատամարտում» հռոմեական բանակի ծանր պարտության և կայսեր սպանության, իրենց տարածքում պարտված, բարոյալքված և սովահար[34] հակառակորդի գտնվելու և, վերջապես, նոր կայսեր ընտրության հանգամանքի հետ, կայսր, որը, համաձայն Հուլիոս Կապիտոլիանոսի, չէր կիսում իր նախորդի հայացքներն ու նպատակները և իշխանատենչ լինելով՝ պետք է որ շահագրգռված լիներ իր իշխանությունը սենատի կողմից վավերացնելու համար շուտափույթ Հռոմ վերադառնալու մեջ[35]: Այս բոլոր հանգամանքները, անշուշտ, կասկած են հարուցում արձանագրության հիշատակած «պայմանների» հանդեպ: Մյուս կողմից՝ SKZ արձանագրության մյուս մասերի համեմատական քննությունն ցույց է տալիս, որ Շապուհի երեք պատերազմների տարեգրություններն էլ կազմված են պատմողական խոսքի միանման սխեմայով. դրանցում պատմվում է տարած հաղթանակների, գրաված քաղաքների, ասպատակված շրջանների մասին: Սակայն ոչ մի խոսք չկա ո՛չ պարսիկների կրած պարտությունների, ո՛չ էլ թշնամու հետ կնքված հաշտությունների ու նրանց պայմանների վերաբերյալ: Դրանք հեղինակը արձանագրության տեքստից պարզապես դուրս է թողել:

Շապուհի արձանագրության ուշադիր քննությունը միաժամանակ ցույց է տալիս, որ Միսիխիսի պայմանագիրն, այնուամենայնիվ, տարածքային հարցեր շոշափել է հօգուտ Պարսկաստանի:

«Այնուհետև կեսարը նորից ստեց և Արմենիայում անարդարություն կատարեց»[36]. SKZ-ում այսպես է հիմնավորում Շապուհն Միսիխիսի հաշտությունից հետո ձեռնարկած իր երկրորդ կամ «բարբալիսոսյան» արշավանքի պատճառները: «Նորից (պարսկերեն տարբերակում՝ երկրորդ անգամ)» արտահայտությունը ուղղակիորեն վկայում է, որ կեսարն արդեն մի անգամ ստել էր: Հարց է առաջանում՝ ե՞րբ: Պատասխանը կարող է լինել միանշանակ. արքան նկատի ունի Փիլիպպի հետ կնքած Միսիխիսի պայմանագիրը, քանի որ դրանից առաջ որևէ պայմանագիր կամ պայմանավորվածություն մարտնչող կողմերի միջև չէր կայացել:

Մյուս կողմից՝ ուշագրավ է, որ Շապուհը «կեսարի անարդարությունը» կապում է Հայաստանի հետ: Պաշտոնական Հռոմի տեսանկյունից Հայաստանը վաղուց համարվում էր «Հռոմեական իրավունքին ենթակա» երկիր[37]: Իրավաքաղաքական այս վիճակի մեջ Հայաստանը հայտնվել էր Արտաշեսյան արքայատոհմի անկումից հետո, երբ կայսրությունն ամրապնդեց իր քաղաքական ներկայությունն այս երկրում:

Հռոմեական իրավունքում հստակորեն սահմանազատված սեփականության և տիրության հասկացությունների միջազգային հարաբերությունների ոլորտ արտաբերելու միջոցով Հռոմը նորովի ձևակերպեց իր հարաբերությունները «բարեկամ» և «դաշնակից» երկրների հետ: Դրան նպաստեց այն կարևոր հանգամանքը, որ այդ երկրների մեծագույն մասը հռոմեական ազդեցության տակ էին հայտնվել սրանց նկատմամբ Հռոմի տարած հաղթանակից հետո: Նոր ձևակերպման

համաձայն՝ կախյալ արքան այլևս միայն իր երկրի վարչապետն էր՝ նշանակված Հռոմի կողմից, իսկ թագավորության նկատմամբ սեփականությունը (dominium) պատկանում էր հռոմեական պետությանը[38]: Այսպիսով, կախյալ արքայի իրավական դրությունը հավասարեցվում էր վարձակալի՝ պրեկարիստի դրությանը, որի պատճառով միջազգային հարաբերություններում նա որպես իր երկրի բացարձակ սեփականատեր էր ներկայանում բոլոր դեպքերում և բոլորի հետ հարաբերություններում, բացի Հռոմից[39]: Այս հանգամանքը նկատի ունենալով՝ կարելի է միանշանակ եզրակացնել, որ պարսից արքան կարող էր Հայաստանը համարել Հռոմի իրավունքից դուրս գտնվող երկիր, եթե մինչ այդ Հռոմը հրաժարված լիներ Հայաստանի նկատմամբ իր գերիշխանությունից կամ էլ պարտավորված լիներ չառնչվել այդ երկրի միջազգային իրավական նոր կարգավիճակի ձևակերպմանը: Այս դեպքում միայն Շապուհը Հայաստանի վերաբերյալ Հռոմի ցանկացած միջամտություն կարող էր անվանել «անիրավություն»: Եվ այս տեսանկյունից ակնհայտ է դառնում, որ Միսիխիսի պայմանագիրն արծարծել էր տարածքային հարցեր, մասնավորապես՝ Հայաստանի հարցը: Մեր այս եզրակացությունը հիմնավորում է գտնում նաև բյուզանդական գրավոր աղբյուրների կողմից:

244թ. պարսկա-հռոմեական հաշտության պայմանագրի մասին ավելի խոսում են բյուզանդակն աղբյուրները, որոնք բոլորն էլ, ուղղակի թե անուղղակի, օգտվել են III դարի հեղինակ Դեկսիպոսի երկից[40]:

V դ. հեղինակ Զոսիմոսը այս առթիվ գրում է. «Շատ ժամանակ անցնելուց հետո Գորդիանոսը պատերազմեց Պարսից թագավոր դեմ և պատերազմի ընթացքում սպանվեց: Սակայն նաև այս հաղթանակից հետո պարսիկները ոչ մի բան չգրավեցին հռոմեացինեի հպատակության տակ եղածներից: Բայց երբ Ֆիլիպպը իշխանության գլուխ անցավ, նա պարսիկների հետ կնքեց ամենաամոթաբեր հաշտությունը»[41]:

VI դ. բյուզանդական հեղինակ Եվագրիոսը իր հերթին վկայում է. «Մեծ Հայաստանը (Մեծ Հայքը) առաջ հռոմեացիների հպատակն էր: Բայց Փիլիպպոսը, հաջորդելով Գորդիանոսին, տվեց այն Շապուհին, որով Փոքր Հայքը մնաց հռոմեացիների ձեռքում, իսկ բոլոր մնացածը՝ պարսիկների…»[42]:

Վերջապես 12-րդ դարի հեղինակ Զոնարասը պատմում է. «Ապա հաջորդեց Ֆիլիպպոսը, որը տեր դառավ Հռոմեական կայսրությանը: …Նա, հաշտություն կնքելով պարսից թագավոր Շապուհի հետ, դադարեցրեց պատերազմը պարսիկների հետ և զիջեց նրանց Միջագետքը և Հայաստանը: Բայց երբ նա տեսավ, որ հռոմեացիները վշտացած են այդ երկրների կորստի պատճառով, մի փոքր հետո դաշնագիրն անվավեր համարեց և երկրները հետ վերցրեց»[43]:

Դեռևս նախքան SKZ-ի հայտնաբերումն ու հրատարակումը՝ պատմագիտության մեջ լուրջ տարակարծություն գոյություն ուներ 244թ. պարսկա-հռոմեական պայմանագրի վերաբերյալ բյուզանդական վերոնշյալ աղբյուրների պատմականության հարցում: Ուսումնասիրողներից Թ. Մոմզենը, Գ. Խալաթյանցը և այլք, փորձելով միմյանց համաձայնեցնել վերը բերված վկայությունները, գտնում էին, որ 244թ. պայմանագրով Հռոմը Պարսկաստանին է զիջել Միջագետքը և Մեծ Հայքը, սակայն պայմանագիրը չի իրականացվել, և հռոմեական զորքերը շարունակել են մնալ այդ երկրամասերում[44]: Այս կամ այն չափով այս կարծիքն են պաշտպանում արդի մի շարք ուսումնասիրողներ[45]:

Ա. Մարտիրոսյանը ևս, իր հոդվածներից մեկում վկայակոչելով Շապուհի SKZ արձանագրությունը, ընդունում է, որ «Փիլիպոսն իսկապես հաշտությամբ պարսիկներին է զիջել Միջագետքը և Հայաստանը կամ համաձայնել չառնչվել Հայաստանի հետ, բայց չի կատարել իր պայմանավորվածությունը, ինչ վկայում է Զոնարասը»[46]: Սակայն ավելի, նա հրաժարվում է այս կարծիքից և անտեսելով մի շարք փաստեր՝ գրում է, որ բյուզանդական աղբյուրների վկայություններից բնավ էլ չի հետևում, թե Մեծ Հայքը ենթարկվել է բաժանման: «Անտեղի է Եվագրիոսի մոտ Փոքր Հայք ըմբռնման մեջ ուղղումներ մտցնել: Եվագրոսը չէր կարող շփոթել Փոքր Հայքը: Նա չի ասում Հայաստանի փոքր մասը կամ նման մի բան, այլ՝ Փոքր Հայք (Armenia minor)՝ իբրև երկրի հատուկ անուն, և Եվագրիոսը դրա տակ այլ բովանդակություն չէր դնի: Այդ անունը նա տալիս է Մեծ Հայքի (Armenia major) անվան հետ միասին: Պարզ է, որ նա նկատի է ունեցել պատմական Փոքր Հայքը»[47]: «Ինչպես տեսնում ենք,- գրում է Ա. Մարտիրոսյանը մեկ այլ տեղ,- խոսքը վերաբերում է միայն Հռոմի հպատակության տակ եղած երկրներին: Եվ եթե կայսրը որևէ զիջում արել է, որը դիտվում է ամենաամոթաբեր, ապա միայն այդ երկրների հաշվին, իսկ Հայաստանը Հռոմի հպատակության տակ չէր, այլ համարվում էր նրա «դաշնակիցն ու բարեկամը»»[48]: Սակայն հեղինակն անուշադրության է մատնում այն փաստը, որ Եվագրիոսի մեջբերած վկայության մեջ ի սկզբանե խոսվում է Մեծ Հայաստանի՝ Մեծ Հայքի մասին: Եվ հաջորդող նախադասության մեջ էլ «այն» բառը վերաբերում է նախորդ նախադասության մեջ հիշատակված «Մեծ Հայաստանին»: Այսինքն՝ հեղինակը խոսում է ոչ թե ինչ-որ Հայաստանի կամ որևէ հայկական շրջանի մասին, այլ հնուց ի վեր մեկ վարչաքաղաքական ամբողջություն հանդիսացող Հայաստանի մասին, որպիսին III դարում միայն Մեծ Հայքն էր: Մինչդեռ Փոքր Հայքը, ինչպես հայտնի է, I դարում կախյալ թագավորության կարգավիճակի կորստից հետո[49] մտնում էր հռոմեական կայսրության կազմի մեջ ոչ թե որպես ինքնուրույն վարչական միավոր, այլ որպես Կապադովկիա պրովինցիայի բաղկացուցիչ մաս[50] և այդ կարգավիճակում մնաց մինչև Դիոկղետիանոսի դարաշրջանը[51]: Մյուս կողմից՝ ուսումնասիրողը անտեսում է աղբյուրների բազմաթիվ վկայությունները, որոնք վերաբերում են Հռոմի կողմից միակողմանի կերպով «դաշնակից» կամ «բարկամ» երկրների տարածքների վերաձևությունների՝ հօգուտ մի երրորդ կողմի[52]:

Մարկվարտն առաջինն էր, որ Զոնարասի հաղորդումը Միսիխիսի պայմանագրում Հռոմի կողմից տարածքային զիջումների վերաբերյալ համարեց իրապատում: Հակառակ Խրիստենսենի, որը գտնում էր, թե Մեծ Հայքը սուվերեն երկիր էր, և, հետևաբար, նրա տարածքների հարցը չէր կարող արծարծվել այլ տերությունների միջև կնքված պայմանագրում, Մարկվարտը, նկատի ունենալով նախընթաց հարուստ պատմական փորձը, իրավացիորեն գտնում էր, որ Հռոմը՝ որպես Մեծ Հայքի քաղաքական պատրոն և գերիշխան կողմ, ժամանակի միջազգային իրավունքի տեսանկյունից միանգամայն իրավասու էր այլ ինքնիշխան տերության հետ կնքելու այնպիսի պայմանագիր, որտեղ կշոշափվեր նաև իրենից կախյալ երկրի տարածքային ամբողջականության հարցը[53]: Եվ փաստորեն Մարկվարտն առաջինն էր, որ Եվագրիոսի վկայության մեջ

գործածված «Փոքր Հայք»-ը տեղադրեց Մեծ Հայքի տարածքում: Նրա կարծիքով՝ Եվագրիոսի մոտ այսպես են անվանված Մեծ Հայքի հարավային նահանգները՝ Ծոփքը և Կորդուքը, որոնք նրա կարծիքով մնացել էին հռոմեացիների ձեռքում, իսկ Մեծ Հայքի մնացյալ «մեծ մասը» պայմանագրով տրվել էր պարսիկներին[54]:

Անտարակույս, Ծոփքը՝ որպես կայսրությանը արևելքից սահմանակից երկրամաս, կարող էր անցնել Հռոմին: Սակայն անպատասխան է մնում այն հարցը, թե ինչպես կարող էր Կորդուքն անցնել կայսրությանը առանց միջանկյալ Աղձնիք նահանգի, որն, ինչպես ցույց են տվել Ն. Ադոնցն ու Բ. Հարությունյանը, այս դարում իր մեջ էր ներառում նաև Մոկքը[55]: Համենայն դեպս, հաղթանակած Սասանյաններն անքան ուժեղ էին, որ իրենց թիկունքում հռոմեացիների ձեռքում չէին թողնի բնական ամրոց հանդիսացող Կորդուքը: Մյուս կողմից՝ նման կտրվածության դեպքում, Կորդուքը որևէ ստրատեգիական նշանակություն չէր ունենա հենց Հռոմի համար:

Այդուհանդերձ, Մարկվարտը ևս գտնում էր, որ Միսիխիսի պայմանագրի կնքումից հետո նրա պայմանները մնացել են թղթի վրա, այլ խոսքով՝ պարսկա-հռոմեական սահմանում պահպանվել է ստատուս քվոն:

Բազմաթիվ հոդվածներում և «Հայ ժողովրդի պատմության» ակադեմիական հրատարակության երկրորդ հատորի համապատասխան բաժնում խնդրահարույց հարցին անդրադարձել է նաև ակադեմիկոս Ս. Երեմյանը[56], որը, զարգացնելով Մարկվարտի տեսակետը, անում է մի շարք, հաճախ հակասական եզրահանգումներ: Այսպես՝ Միսիխիսի ճակատամարտում հռոմեացիների պարտությունը հեղինակը հայոց համար կարևորում է նրանով, որ հայոց թագավոր Տրդատ II-ը, որը հույս ուներ հռոմեացիների ռազմական օգնության վրա, լքվել էր դեպի Հռոմ շտապող Փիլիպպոս Արաբ կայսեր կողմից: «Ահա այս ժամանակ,- շարունակում է Երեմյանը՝ առանց մատնացույց անելու իր աղբյուրը,- ինչպես երևում է, Շապուհ I-ի զորքերը գրավել են Մեծ Հայքի թագավորության մեծ մասը, և Փիլիպպոս Արաբը հարկադրված պիտի ճանաչեր ստեղծված իրադրությունը: Նա Շապուհ I-ի հետ կնքում է խաղաղության պայմանագիր՝ զիջելով պարսիկներին Հայաստանի մեծ մասը. սրա համար է, որ բուզանդական պատմիչ Զոսիմոսը խաղաղության այդ պայմանագիրը բնորոշում է իբրև «ամենաամոթաբեր հաշտություն»[57]:

Անդրադառնալով Հայաստանի տարածքային բաժանման հարցին՝ Երեմյանը առաջարկում է Եվագրիոսի հիշատակած «Փոքր Հայքի» տակ հասկանալ Ծոփքը և նախկինում (մինչև Ք.ա. 66թ.) Փոքր Հայքի հիմնական մասը կազմած Բարձր Հայքը: «Եթե մեր եզրակացությունը ճիշտ է, ապա ստացվում է, որ Հռոմեական կայսրությանը մնացել էին Մեծ Հայքից միայն երկու նահանգ՝ Ծոփքը և Բարձր Հայքը, այսինքն՝ նույն երկրամասը, ինչ որ կայսրությունը ստացել էր 387թ. Մեծ Հայքի թագավորության բաժանման ժամանակ, ուստի 244թ. դաշնագրով երկու աշխարհակալությունների միջև անցնող սահմանագիծը նույնը պիտի լիներ, ինչ որ հետագայում՝ 387թ. հաստատված սահմանագիծը»[58]:

Համաձայնելով անվանի ուսումնասիրողի հետ՝ մենք ևս գտնում ենք, որ Միսիխիսի հաշտության պայմանների վերաբերյալ բյուզանդական աղբյուրների վկայությունները պատմական են և հավաստում են, որ պայմանագիրը իրոք շոշափել է Մեծ Հայքի տարածքային բաժանման հարցը: Ավելին՝ գրավոր աղբյուրների վկայությունները ուղղակիորեն ցույց են տալիս, որ Սասանյանները պատմական թատերաբեմ դուրս գալուց ընդամենը երկու տասնամյակ անց ստիպել են Հռոմին՝ Միսիխիսի պայմանագրով իրավապես ճանաչել Ք.ա. 66 թվականից ի վեր հռոմեական ազդեցության գոտի համարվող Մեծ Հայքի տարածքի մեծագույն մասի անցումը Իրանին:

Սակայն դա չէր նշանակում, որ Հայաստանը պասիվ հայեցողի դերում էր այս իրադարձության նկատմամբ և լուռ ու մունջ հպատակվել է երկու գերտերությունների կայացրած որոշմանը: Ո՛չ հռոմեական, ո՛չ բյուզանդական աղբյուրները, ո՛չ էլ Շապուհի SKZ արձանագրությունը որևէ վկայություն չեն պարունակում մինչև 252/253թթ. Հայաստանի պարսկական ռազմակալման մասին: «Հայաստանը,- գրում է Հ. Մանանդյանը, չէր նվաճված Սասանյան Պարսկաստանի կողմից ոչ Փիլիպպոս Արաբեցու և ոչ էլ նրա հաջորդի՝ Դեկոսի ժամանակ (249-251թթ.): Նա իր անկախությունը պահպանել էր մինչև Գալոս կայսեր (251-253 թթ.) ժամանակը»[59]: Ուստի միանգամայն իրավացի է Վ. Լուկոնինը, որի կարծիքով՝ 244թ. պայմանագիրը վերաբերել է Հայաստանին այնքանով, որ, «եթե Հռոմի հետ պարսիկների առաջին պատերազմի ժամանակ Հայաստանի Խոսրով (Տրդատ II-ծ.հ.) արքան հաջողությամբ պայքարում էր Շապուհի զորքերի դեմ, ապա հռոմեացիների պարտությունից հետո նա այլևս չէր կարող հուսալ նրանց օգնության վրա»[60]:

Ս. Երեմյանը մատնացույց է անում 244թ. Միսիխիսի և 363թ. Հովիանոսի կնքած «ամոթալի» պայմանագրերի միջև առկա նմանությունը: Հիրավի, հար և նման են այն ռազմաքաղաքական պայմանները, որոնցում կնքվել են այդ երկու պարսկահռոմեական պայմանագրերը[61]. այս հարցում չի կարելի անվանի ուսումնասիրողի հետ չհամաձայնել: Երկրորդ դեպքում ևս հռոմեական բանակը, հաջողությամբ հասնելով Տիզբոնի մատույցներին, ծանր պարտություն էր կրել ու կորցրել կայսրին: Այն ժամանակ նույնպես բարոյալքված զորքը նոր կայսր էր հռչակել մեկին, որը բնավ էլ չէր կիսում իր նախորդի հայացքները և շուտափույթ Հռոմ վերադառնալու համար պատրաստ էր ամեն ինչ տալ ու ամեն ինչում զիջել պարսիկներին՝ այն աստիճան, որ անգամ հարուցել էր ժամանակակիցների զարմանքը: «Բանը հասավ նրան, գրում է անտիոքցի հռետոր Լիբանիոսը, որ ես հաճախ զարմանում էի, թե ինչու այդպիսի պայմաններում Մեդացին (Շապուհ Երկարակյացը-ծ.հ.) չի ցանկանում վերցնել ավելին... թեկուզ մինչև Օրոնտ, թեկուզ մինչև Կիդնոս... քանզի մեր նորի (Հովիանոսի-ծ.հ.) համար ամեն ինչ միևնույն էր. ամեն ինչ տալիս էր և ամեն ինչին համաձայնում»[62]:

Սակայն նաև հայտնի է Շապուհ II-ի «համեստության» չափը. «Թագավորը (Շապուհը-Ա.Մ.) համառորեն պահանջում էր, որ իրեն վերադարձվեն, ինչպես նա էր ասում, այն երկրները, որոնք իրենից խլել էր Մաքսիմիանոսը, և պահանջում էր... մեր ազատման (ազատ նահանջի-Ա.Մ.) համար իբրև փրկանք հինգ գավառներ Տիգրիսի մյուս կողմում՝ Աղձնիքը, Մոկքը Ծավդեքը, նաև Ռեհմենեն ու Կորդուքը՝ տասնհինգ ամրոցներով հանդերձ, և, բացի այդ, Մծբինը, Սինգարան ու Կաստրա-Մավրորումը, որն իր դիրքի պատճառով խիստ կարևոր ամրություն էր»[63]:

Վերը թվարկված շրջաններն ու քաղաքները, բացի Աղձնիքից, Մոկքից ու Կորդուքից, վերաբերում էին հռոմեական Միջագետքին:

120 տարի հետո վերադառնալով՝ հանդիպում ենք

ճակատագրորեն նույն իրավիճակին: Եվ եթե Միսիխիսի հաշտության պայմանների հարցում սահմանափակվենք բացառապես SKZ-ի տվյալներով, ապա Հովիանոսի կնքած պայմանագրի համեմատ այն ներկայանում է որպես հռոմեացիների համար միանգամայն «ծրի» պայմանագիր, ինչն անհավանական է, եթե ոչ անհնարին:

Մեր կարծիքով՝ Միսիխիսի խնդրահարույց պայմանագրի պայմանների բացահայտման ու քաղաքական նշանակությունը պարզելու համար հիշյալ հեղինակների տված բնութագրումները խիստ սկզբունքային նշանակություն ունեն:

Առաջին իսկ հայացքից ուշադրություն է գրավում այն հանգամանքը, որ աղբյուրները երկու պայմանագրերն էլ բնութագրում են միանման արտահայտություններով: V դարի պատմիչ Զոսիմոսը 244թ. պայմանագիրն անվանում է «ամենաամոթաբեր հաշտություն», իսկ Ամմիանոսը 363 թ. պայմանագրի վերաբերյալ գործածում է «կորստաբեր և անպատիվ» արտահայտությունը: «Բացի այդ, նաև կորստաբեր ու անպատիվ մի հավելում արվեց, որ այս կնքված համաձայնությունից հետո այլևս չտրվի օգնություն մեր մշտական և հավատարիմ բարեկամ Արշակին պարսից դեմ, եթե նա այդ մեզանից խնդրելու լինի»[64]:

Ակնհայտ է, որ Ամմիանոսը Հովիանոսի կնքած պայմանագրին «ամոթանք»-ը տալիս է ամենևին էլ ոչ Հռոմի կրած տարածքային կորուստների համար: Հեղինակի գնահատականը վերաբերում է Հայաստանի նկատմամբ նրա ուխտադրուժ վերաբերմունքին:

Նմանապես, չպետք է կարծել, որ Զոսիմոսի «ամենաամոթաբեր» արտահայտությունը վերաբերում է Միսիխիսի պայմանագրով արված տարածքային զիջումներին ընդհանրապես: Ամոթը Միջագետքի զիջմանը չէր վերաբերում, որովհետև թեև այն համարվում էր նիզակով նվաճված տարածք, այնուամենայնիվ, Կոստանդիոսը ևս չամաչեց նրա մասնակի կորուստից: Այն չէր վերաբերում նաև հռոմեացիների կողմից 500 հազար դինարի վճարմանը, քանզի Օպիլիոս Մակրինոսը Արտավանին վճարել էր 50 միլիոն դահեկան[65], ինչը բնավ էլ արգելք չէր հանդիսացել, որ սենատը նրան շնորհի «Պարթևական» տիտղոս, և ոչ էլ կայսրն էր ամաչել իր դրամների վրա «Պարթևստանը հաղթված» լեգենդը թողնել[66]: Ուստի կասկածից վեր է դառնում, որ Զոսիմոսը ևս նկատի ունի Միսիխիսի պայմանագրով «բարեկամ» Հայաստանի նկատմամբ իր ավանդական պարտավորություններից Հռոմի հրաժարվելը: Քանզի հայ-հռոմեական հարաբերությունների ավանդական դարձած ձևակերպումների համաձայն՝ միջազգային հարաբերությունների ոլորտում այդ կողմերը հանդես էին գալիս որպես յուրօրինակ պատրոն և կլիենտ[67]՝ համապատասխանաբար կրելով այդ իրավահարաբերություններից բխող փոխադարձ օգնության ու պաշտպանության պարտավորությունները:

Հռոմեական քաղաքացիական իրավունքի համաձայն՝ պատրոնի և կլիենտի փոխհարաբերությունները որոշվում էին ius aplicationis-ի սկզբունքով (applicatio-հակում, նվիրվածություն)[68]: Ընդ որում, պատրոնի պարտքն էր համարվում կլիենտներին օգնելն ու պաշտպանելը, ինչպես նաև դատարանում (տվյալ դեպքում՝ միջազգային հարաբերություններում) նրանց շահերը ներկայացնելն ու պաշտպանելը:

Համաձայն հռոմեական իրավունքի՝ կլիենտի նկատմամբ պարտավորությունները խախտած պատրոնը դառնում էր sacer consecratio, այսինքն՝ աստվածների վրեժին դատապարտված անձնավորություն[69]: Քաղաքացիական կյանքում դա ուխտադրուժ պատրոնին սպառնում էր հասարակական դիրքի և հեղինակության լուրջ կորստով: Իսկ միջպետական հարաբերությունների ոլորտ՝ այս հարաբերությունների արտաբերման պայմաններում, հասկանալիորեն, փոխադարձ պարտավորությունների ու փոխօգնության ուխտի խախտումից բխող «անպատվությունն» ու «ամոթանքը» ընկնում էր պայմանադիր կողմը հանդիսացող իրավական սուբյեկտի վրա՝ հարվածելով նրա միջազգային վարկին և վերացնելով կլիենտի նկատմամբ նրա իրավունքները:

Մյուս կողմից՝ քաղաքական պատրոնի հովանավորությունից նման կերպով դուրս մնացած կլիենտը ազատվում էր իր պատրոնի նկատմամբ ունեցած պարտավորություններից՝ դառնալով in juri sui: Հետևաբար, Միսիխիսի պայմանագրի, ինչպես և հետագայում կնքված «ամոթալի» հաշտության քաղաքական նշանակությունը Հայաստանի համար առաջին հերթին այն էր, որ այն, մի կողմից, իրավաբանորեն ազդարարում էր նրա քաղաքական ինքնիշխանության վերականգնումը, մյուս կողմից՝ քաղաքական տեսանկյունից հանգեցնում էր նրա քաղաքական մեկուսացմանը:

Հովիանոսի կնքած հաշտության իրավական հետևանքը քաջ գիտակցում էին նաև հռոմեացիները, և միանգամայն օրինաչափ էր այն, որ երբ Շապուհ Բ-ն Վաղես կայսրից պահանջում էր հետ վերադարձնել Հայաստանի մասը կազմող Անդրտիգրիսյան երկրամասերը, վերջինս պատասխանում էր, որ հայերին թողնված է ad arbitrium suum vivere cultoribus eius permissis[70]: Այլ խոսքով՝ կայսրն ընդունում էր, որ Հովիանոսի կնքած պայմանագիրը, խախտելով հայ-հռոմեական պատրոնա-կլիենտային ավանդական հարաբերությունները, Հայաստանը դուրս է թողել Հռոմի քաղաքական ազդեցությունից, և կայսրն այլևս իրավասու չէ նախկինի պես տնօրինել իր սուվերենությունը վերագտած երկրի տարածքները:

Վերջապես, պարսկա-հռոմեական հաշտության հիշյալ երկու պայմանագրերի նմանությունը կայանում էր նաև նրանում, որ երկուսն էլ արձանագրում էին պարսիկների հաղթանակը՝ հաշտության՝ Հայաստանին վերաբերող կետերի իրականացումը թողնելով «հաղթողի սրի վրա»:

Մեր կարծիքով՝ Միսիխիսի պայմանագրի վերաբերյալ պատմագիտության մեջ առաջացած լուրջ տարակարծության պատճառն էլ հենց այն է, որ ուսումնասիրողները խիստ կատեգորիկ ձևով են մոտեցել այս կնքված, բայց անմիջապես չգործադրված պայմանագրին. ոմանք, վկայակոչելով Եվագրիոսին, գտնում են՝ որ պայմանագրով Հայաստանը բաժանվել է երկու տերությունների միջև, մյուսները, ելնելով փաստացի դրություններից և պատշաճ ուշադրությունից դուրս թողնելով պայմանագրի իսկական քաղաքական նշանակությունը, կարծիք են հայտնում, որ այն որևէ տարածքային հարց չի շոշափել և սոսկ վերականգնել է նախապատերազմական ստատուս քվոն:

Սակայն բանն այն է, որ պատմական ասպարեզ նոր դուրս եկած Սասանյանների համար նման պայմանագրի կնքումն իսկ արդեն նշանակալից քաղաքական հաջողություն էր այն առումով, որ թեկուզև զուտ իրավաբանորեն ճանաչում էր նրանց իրավունքը մի մասի վրա այն ամենից, «ինչ որ պատկանել էր հին պարսիկներին»: Դա մի կողմից ուներ քարոզչական նշանակություն և իրանական ազնվականության աչքին բացա-

հայտ էր դարձնում Սասանյանների առավելությունը իրանական նախորդ արքայատոհմի նկատմամբ, որը իր գոյության գրեթե ողջ ընթացքում այդպես էլ չկարողացավ Հայաստանի նկատմամբ քիչ թե շատ կայուն և երկարատև գերիշխանություն հաստատել: Մյուս կողմից` Միսիխիսի պայմանագիրը Սասանյանների համար ուներ գործնական, քաղաքական նշանակություն, քանի որ նրանց հնարավորություն էր տալիս այդուհետ հանգիստ, առանց հռոմեական միջամտությունից վախենալու, փորձել իրենց իշխանությունը հաստատել պայմանագրով սոսկ դե յուրե զիջված տարածքների վրա: Եվ ինչպես ցույց են տալիս փաստերը, հետագայում պարսիկները թեև հնարավորություն ունեին Հայաստանից զավթել անհամեմատ ավելի շատ տարածքներ, քան նախատեսել էր Միսիխիսի պայմանագիրը, չգնացին այդ քայլին և բավարարվեցին այն ամենով, ինչ նրանք արդեն ստացել էին հիշյալ պայմանագրով: Դրանով Սասանյանները փորձում էին իրապաշտ մնալ: Կոնկրետ Հայաստանի հարցում, «վերցնելով իրենցը իրենց, թողնելով կեսարինը` կեսարին», նրանք Հռոմին դրդելու էին արդեն de facto ճանաչել Միսիխիսում երբևէ կնքված, բայց չգործադրված պայմանագիրը:

---

[1] *Dio Cass.*, LXXX, 3,1. Տե՛ս Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, թարգմանությունը բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ *Ս. Մ. Կրկյաշարյանի*, հ. 7, էջ 226:

[2] *Ագաթանգեղայ* Հայոց Պատմութիւն, աշխ. . Տեր- Մինասյանի և *Ստ. Կանայանցի*, Տփղիս,1909, էջ 16-19:

[3] www.thelatinlibrary.com Scribtores Historiae Augustae, Julius Capitolianus, Gordiani tres, XXIII.1.

[4] www.thelatinlibrary.com Ammiani Marcellini rerum gestarum libri qui supersunt,XXIII, V. (այսուհետ` Ammianus M.).

[5] *Julius Capitolianus,* Gordiani tres, XXVI. 3.

[6] Օգոստոս կայսրը Յանուսի դարբասների հետ կապված ծեսը ներառեց պաշտոնական քարոզչության համակարգի մեջ: Նշանավոր կտակի (Res Gaeste Divi Augusti II, 13) մեջ Օգոստոսն իր հատուկ ծառայությունն էր համարում այն, որ իր օրոք ի նշան ամբողջ հռոմեական կայսրությունում տիրող խաղաղության Յանուսի տաճարի դռները փակվել են երեք անգամ, այն դեպքում, երբ իրենից առաջ, Հռոմի ողջ պատմության ընթացքում դրանք փակվել էին ընդամենը երկու անգամ: Շիֆմանի կարծիքով (*Шифман И. Ш,* Цезарь *Август, Л.,* 1990 с.104.), «Pax Romana»-ի հաստատումը, որի տակ, ինչպես և Գորդիանոսի օրոք, առաջին հերթին հասկացվում էր քաղաքացիական խաղաղությունը, Օգոստոսին ապահովեց հռոմեական հասարակության ամենալայն խավերի աջակցությունը:

[7] *Julius Capitolianus,* Gordiani tres, XXIII. 5.

[8] Նույն տեղում, XXVII. 3.

[9] Նույն տեղում:

[10] Առանց ավարառության ու ավերածության Միջագետքի քաղաքները լքելը չի համապատասխանում պարսիկների այն մարտավարությանը, որը ներկայացնում են սասանյան արձանագրությունները (Տե՛ս www. sasanica com. /pdf/ NAQSH. pdf., The inscription of Shapur I at Naqsh-e Rustam in fars, 5-9, 11-16: www.sasanika.com Kerdir's Naqsh-e Rajab inscription, Translation by D.N. MacKenzie): Դրանով Շապուհը, ըստ երևույթին, աշխատել է Հռոմեական Միջագետքի քաղաքային բնակչության մեջ պարսկամետ տրամադրություններ առաջացնել:

[11] *Julius Capitolianus,* Gordiani tres, XXVII. 6: ,, Si dii faverint, Ctesifona usque veniemus".

[12] Տես` *Луконин В. Г.,* Завоевания Сасанидов на Востоке и проблема кушанской абсолютной хронологии, Вестник древней истории (այսուհետ` ԹԺԼ), 1969, N 2, էջ 33:

[13] Ն. Պիգուլևսկայան (*Пигулевская Н. В.,* Хроника Арбелы, М., 1956, էջ 159, ծան. 1) ուղղում է` «առաջին իսկ տարում»:

[14] Նույն տեղում, էջ 159:

[15] *Երեմյան Ս. Տ.,* Մեծ Հայքի թագավորության բաժանումը Սասանյան Իրանի և Հռոմեական կայսրության միջև (244-253թթ.), Պատմա-բանասիրական հանդես (այսուհետ` ՊԲՀ), 1976, N 1, էջ 70:

[16] Նույն տեղում, էջ 71:

[17] Վ. Լուկոնինի կարծիքով` SKZ-ն գրվել է 260թ., Ս. Երեմյանն այն թվագրում է 260 կամ 261թ., Մարտիրոսյանը 261թ. և այլն:

[18] Տե՛ս The inscription of Shapur I at Naqsh-e Rustam in fars, 1:

[19] Տե՛ս *Луконин В. Г.* Варахран II и Нарсе, ВДИ, 1964, N 1, с. 50.

[20] *Julius Capitolianus,* Gordiani tres, XXVIII.1. «Տիմութեոսը, շատերի ասելով, զոհ գնաց Ֆիլիպպի մեքենայություններին, որը նրանից հետո պրետորիականների պրեֆեկտ նշանակվեց: Մյուսների ասելով` նա մահացել է հիվանդությունից»:

[21] Նույն տեղում, XXIX. 1-4:

[22] *Ammianus M.,* XXIII. V,17

[23] *Julius Capitolianus,* Gordiani tres, XXXIV. 1-3. «Կիրկեսիոնի ամրությունների մոտ, Պարսկաստանում, զինվորները Գորդիանոսի համար գերեզման կառուցեցին` հունարեն, լատիներեն, պարսկերեն, եբրայերեն և եգիպտերեն լեզուներով այսպիսի արձանագրությամբ, որպեսզի բոլորը կարողանան կարդալ. «Աստվածային Գորդիանոսին, պարսիկների հաղթողին, գոթերի հաղթողին, սարմաթների հաղթողին, հռոմեական երկպառակությունների դադարեցնողին, գերմանների հաղթողին, սակայն ո՛չ Ֆիլիպին հաղթողին»»:

[24] Տե՛ս *Моммзен Т.,* История Рима, т. V, Москва, 1949, էջ 380: *Աստուրյան Հ.,* Քաղաքական վերաբերություններ ընդ մեջ Հայաստանի և Հռովմա, Վենետիկ, 1912, էջ 240-241, *Մանանդյան Հ.,* Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Երևան, 1957, հ. Բ, մաս Ա, էջ 82:

[25] *Աստուրյան Հ.,* նշվ. աշխ., էջ 241:

[26] *Sprengling M.,* Shahpuhr I The Great on the Kaaba of Zoroaster, AJSL, LVII (1940), նույնի` Third Century Iran, Sapor and Kartir, Chicago 1953

[27] *Луконин В. Г.,* Культура Сассанидского Ирана, էջ 50:

[28] Տե՛ս The inscription of Shapur I at Naqsh-e Rustam in fars, 3-4: Համա. *Sprengling M.,* Third Century Iran, Sapor and Kartir, էջ 15:

[29] Հռոմեական աղբյուրներում Գորդիանոս III-ի մահը նշված է 244թ. հունվարի 13-ի և մարտի 14-ի միջև: Տես` A. von Domaszewsky, Die daten der Scribtores Historiae Augustae von Severus Alexander bis Karus, ,,Sitzungsberichte der Heidelberger Akademie (Phil.-Hist. Klasse)", VIII, 1917, Heft 1, էջ 23: Ս. Երեմյանի (Մեծ Հայքի թագավորության բաժանումը, էջ 71) կարծիքով Միսիխիսի ճակատամարտը տեղի է ունեցել 244թ. փետրվարի 11-ին:

Դժվար է պատկերացնել, որ Ամմիանոսն ու «Օգոստոսների պատմության» հեղինակն անտեղյակ են եղել Միսիխիսի ճակատամարտի իրողությանը, և Գորդիանոսի վախճանի մասին պատմությունը հյուսել են միայն նրա գերեզմանի գտնվելու փաստի հիման վրա: Ավելի հավանական է, որ այստեղ մենք գործ ունենք քրիստոնեության դեմ հեթանոսական պատմագրության գաղափարախոսական պայքարի արտահայտության հետ. հեթանոս հեղինակները գիտակցաբար խեղաթյուրել են փաստերը` հեղինակազրկելու համար քրիստոնյա Ֆիլիպպին` որպես Գորդիանոսի մահվան մեղավորի:

[30] *W. Enslin,* Cambridge Ancient History, vol XII, p. 88.

[31] *Dio Cass.,* LXXIX, 27,1, հայերեն թարգմ. էջ 224:

[32] Տե՛ս The inscription of Shapur I at Naqsh-e-Rustam in fars, 5-9:

[33] *Дьяконов М. М.,* Очерки истории древнего Ирана, М., 1961, էջ 61:

[34] Թեև Հուլիոս Կապիտոլիանոսը (Gordiani tres, XXIX, 1) նշում է, թե այն արհեստականորեն ստեղծել էր պրետորիաների պրեֆեկտ Ֆիլիպպը` զորքին Գորդիանոսի դեմ տրամադրելու նպատակով, կարելի է կարծել, որ Ստորին Միջագետքի թշնամական տարածքի խորքում այն իրողություն էր նաև առանց արհեստական միջամտությունների և նույնիսկ Ֆիլիպպի կայսր հռչակվելուց հետո:

[35] Տե՛ս Cambridge Ancient History, vol XII, էջ 88:

[36] Տե՛ս Springling M., Third Century. Iran, Sapor and Kartir, էջ 25:

[37] Տե՛ս www.thelatinlibrary.com. Lucios Florus, Epitoma de gest. Rom. XXXII, 42:

[38] Տե՛ս *Մանասերյան Ռ.,* Հայաստանը Արտավազդից մինչև Տրդատ Մեծ, Ե. 1997, էջ 75-134:

[39] Տե՛ս *Бартошек М.,* Римское право: понятия, термины, определения. 15 258: Կախյալ երկրների հետ Հռոմի հարաբերությունների մասին ուշագրավ է Դիոն Կասսիոսի (Dio Cass., XXXVIII, 3) գնահատականը.«Հռոմեացիները բազում երկրներ նվաճեցին... այժմ նրանց մի մասին ինքներս ենք տիրում, մյուս մասը շնորհել ենք ուրիշներին, այնպես որ, նրանցից ստացել ենք և եկամուտներ, և զորքեր, և պատիվներ և թե դաշնակցություններ»:

[40] *Մանանդյան Հ.,* Քննական տեսություն, h. Բ, մաս Ա, էջ 82, ծան. 5:

[41] Zosimi Histore nouvelle, texte e'tali et traduit par Fr. Paschoud, III, 32, 4, Paris, 1979: Տե՛ս Հ. *Մանանդյան,* նշվ. աշխ., էջ 83:

[42] Evagrios, Historia ecclesiastica, V. 7 ed. Bidez- Parmentier, Londres,1898, p. 203.

[43] Zonaras, XII. 19: Տե՛ս Հ. մանանդյան, նշվ. աշխ., էջ 83:

[44] Տե՛ս` *Моммзен Т.,* նշվ. աշխ., էջ 380:

[45] *Ու. Էնսլին* (Cambridge Ancient History, vol XII, էջ 88) կասկածի տակ առնելով Զոնարասի հաղորդումը` գտնում է, որ պայմանագրով Միջագետքն ու Փոքր Հյաքը, որտեղ, ըստ նրա կառավարիչ էր նշանակված Ֆիլիպ Արաբի եղբայր Պրիսկուսը, մնացել են կայսրությանը: Ա. Խրիստենսենն (Cambridge Ancient History, vol XII, էջ 131) իր հերթին գտնում է, որ Միջագետքն ու Փոքր Հայքը մնացել են կայսրության կազմում: Միևնույն ժամանակ, նա սխալ է համարում Եվագրիոսի վկայությունը Մեծ Հայաստանը պարսիկներին զիջելու մասին: Նրա կարծիքով` Մեծ Հայքը ինքնուրույն պետություն էր և չէր կարող մեկ այլ պետության կողմից պայմանագրով զիջվել պարսիկներին: Նորօրյա ուսումնասիրողներից Ռ. Ֆրայը (Տե՛ս *R. Frye,* The History of Ancient Iran, ծանոթ. 4), Ա. Մարտիրոսյանը և այլոք, իրենց վերապահությունը տալով SKZ-ին, չեն ընդունում բյուզանդական աղբյուրների վկայությունների իսկությունը Հռոմի տարածքային զիջումների, առավել ևս, Մեծ Հայքի տարածքային բաժանման վերաբերյալ:

[46] *Մարտիրոսյան Ա. Ա.,* Սասանյանների արևմտյան նվաճումները և Հայաստանը,ՊԲՀ, 1977, N 1, էջ 201:

[47] Նույն տեղում, էջ 199-200:

[48] *Մարտիրոսյան Ա.,* III դարում Մեծ Հայքի բաժանման վարկածը, ՊԲՀ, 1987, թ. 3 էջ 202:

[49] Պոմպեոսը Փոքր Հայքը շնորհեց Գաղատիայի քառապետ Դեյոտարոսին, Կեսարը` Կապադովկիայի արքա Արքելայոսին, Անտոնիոսը` Պոնտոսի Պոլեմոն թագավորին, Օգոստոսը` Արքելայոս Կապադովկիացուն, Կալիգուլան` Թրակիայի իշխան Կոտիսին, Ներոնը` Արիստոբուլոսին, և վերջապես, առաջին անգամ Տիբերիոսի և, վերջնականապես, Վեսպասիանոսի օրոք այն մտավ հռոմեական կայսրության կազմի մեջ: Տե՛ս Strabo.XII 3, p 768 և 780, Dio Cass. XLI 63; XLIX 33, 44; LIX, 12, Tacit. XI, 9 , XIII. 7.

[50] Տե՛ս *Ադոնց* Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Ե., 1987, էջ 82:

[51] Նույն տեղում, էջ 100:

[52] *Dio Cass.,* XLIX, 44, 2, հայերեն թարգմ. էջ 85:

[53] *Markwarrt J.,* Untersuchuagen zur Geschichte von Eran, Zweiter Heft, Leipzig, 1905, էջ 218-220, (“Philologus”, Supplimentaband, X, Heft 1):

[54] Նույն տեղում, էջ 220, ծան. 2:

[55] Տե՛ս *Հարությունյան Բ.,* Մեծ Հայքի Մոկք աշխարհն ըստ «Աշխարհացոյց»-ի, ՊԲՀ,1988, թ. 4, էջ 42-43:

[56] Տե՛ս *Երեմյան Ս.,* Նախշ-ի-Ռուստամի «Քաաբա ի Զարդուշտ» հուշարձանի արձանագրության վկայությունները Հայաստանի մասին, ՊԲՀ, 1966, N 2, էջ 59. նույնի` Մեծ Հայքի թագավորության բաժանումը, էջ 67. նույնի` Հայաստանի քաղաքական վիճակը Արտավազդ V-ի ժամանակ (252-261 թթ.), «Լրաբեր հասարակական գիտությունների», 1975, N 1, էջ 13, Հայ ժողովրդի պատմություն, Ա հրատ. հատ. II, Երևան 1984, էջ 21 և հաջորդներ:

[57] Տե՛ս *Երեմյան Ս.,* Մեծ Հայքի թագավորության բաժանումը, էջ 75:

[58] Տե՛ս *Երեմյան Ս.,* Մեծ Հայքի թագավորության բաժանումը, էջ 74: Հմմտ. *Մարտիրոսյան Ա.,* Սասանյանների արևմտյան նվաճումները և Հայաստանը, էջ 200, ծան. 19: Մենք ևս հակված ենք կարծելու, որ Հայաստանի IV դարի բաժանման ժամանակ ինչ-որ չափով նկատի է առնվել Հայաստանի III դարի բաժանման նախադեպը: Այդուհանդերձ, կարծում ենք, որ գրավոր աղբյուրների, մասնավորապես Ագաթանգեղոսի, Մովսես Խորենացու և Ամմիանոսի անուղղակի վկայությունները թույլ են տալիս պնդել, որ Մեծ Հայքի երրորդ դարի պարսկա-հռոմեական բաժանման սահմանագիծը էապես տարբերվել է չորրորդ դարի սահմաններից:

[59] Տե՛ս *Մանանդյան Հ.,* նշվ. աշխ. էջ 84:

[60] *Луконин В.Г.* Культура Сассанидского Ирана, с. 56:

[61] Տե՛ս *Երեմյան Ս.,* Մեծ Հայքի թագավորության բաժանումը, էջ 74:

[62] *Либаний.* Погребальное слово Юлиану, 277-280, Տե՛ս Ораторы Греции, М. 1985, էջ 405.

[63] *Ammianus M.,* XXV, VII, 9.

[64] *Ammianus M.,* XXV, VII, 12.

[65] *Dio Cass,* LXXIX, 27, 1. Zonaras, XII, 13

[66] Տե՛ս *Ասատուրյան Հ.,* նշվ. աշխ., էջ 228, ծան. 3:

[67] Տե՛ս *Шифман И.Ш.,* նշվ. աշխ., էջ 122:

[68] Տե՛ս *Бартошек М.,* Римское право: Понятия, термины, определения, с. 88.

[69] Տե՛ս նույն տեղում, էջ 280:

[70] *Ammianus, M.,* XXX., 2, 4: “Quod rex iustus et suo contentus, ut iactitabat, sceleste concupiscat Armeniam, ad arbitrium suum vivere cultoribus eius permissis”.

---

ON THE QUESTION OF PERSIAN-ROME CONFLICT AND DE-JURE OF THE ARMENIAN DIVISION ACCORDING TO MISICJISK AGREEMENT

ARTHUR MELIKYAN

Summary

In the article the problem of juridical division of Armenia between Persia and Rome empire according to Misichisk agreement in investigated in details taking into consideration source in a new way.

ВОКРУГ ВОПРОСА ПЕРСИДСКО-РИМСКОГО КОНФЛИКТА И ДЕ-ЮРЕ РАЗДЕЛА АРМЕНИИ ПО МИСИХИСКОМУ ДОГОВОРУ

АРТУР МЕЛИКЯН

Резюме

В статье впервые подробно исследуются проблем юридического раздела Армении между Персией и Римской империей по Мисихискому договору, подробно и по новому используя многочисленные источники.

ՆԱՌԱ ԱՅՎԱԶՅԱՆ

*ՀՊՄՀ*
*Հայոց պատմության ամբիոնի ասպիրանտ*

# ԱՐՑԱԽ. ԽՈՍՈՒՄ ԵՆ ՓԱՍՏԵՐԸ

Հին և միջնադարյան Հայաստանի տասներորդ նահանգը՝ պատմական Արցախը, տարբեր դարաշրջաններում կոչվել է Առան, Արցախ, Փոքր Սյունիք, Խաչեն, Ղարաբաղ: «Արցախ» բառն ունի մի քանի բացատրություն, բայց դրանցից ամենաիրականը հետևյալն է. ըստ ավանդույթի՝ սկզբում եղել է ոչ թե Արցախ, այլ՝ Սարցախ, որը կազմվել է «սար» և «ցախ» արմատներից: Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը պատմական Արցախի 1/3 մասն էր ընդամենը և ուներ 4,4 հազար քառակուսի կիլոմետր տարածք: Արցախը գտնվում է հայկական լեռնաշխարհի արևելյան մասում. նրա սահմանները արևմուտքում հասնում էին մինչև Սևանի արևելյան ափը, արևելքում բռնում էր Մուխանք (Մուխանի) դաշտավայրի մի զգալի մասը, հարավում Երասխ գետն էր, հյուսիսից՝ Արցախյան լեռնաշղթան: Վարչատարածքային առումով Արցախը բաժանված է եղել 12, որոշ ժամանակներում 14 գավառի՝ շրջանի: Արցախի հայերը պատկանում են հնդեվրոպական լեզվաընտանիքին: Դա են վկայում ոչ միայն հայ, այլև օտարերկրյա աղբյուրները. Վ. Բունակը գրում է. «Արցախի հայերը ոչ միայն պատկանում են հնդեվրոպական լեզվաընտանիքի արմենոիդ մարդաբանական տիպին, այլև հանդիսանում է այդ տիպի ամենացայտուն ներկայացուցիչը»[1]: Ռ. Վիրխովը, քննարկելով հայկական լեռնաշխարհի տարբեր մասերից հավաքած նյութերը, եկել է հետևյալ եզրակացության. «Բնորոշն ու վերին աստիճանի կարևորը ընդհանուր տիպն է, իսկ այս կողմից մինչ այժմ կատարված սակավաթիվ պեղումներն անգամ ցույց են տալիս, որ Գուգարքից սկսած մինչև Թարթառ գետի դաշտը ապրած հին ազգերը մի կուլտուրայի ներկայացուցիչներ էին»[2]: Այն, որ արցախահայերը հնդեվրոպական լեզվաընտանիքի ներկայացուցիչներ են, վկայում է այսօր կենդանի և միակ խոսուն վկան՝ արցախահայերի բարբառը: Այս բարբառը նույնքան հին է, որքան հայ ժողովուրդը, և հնդեվրոպական մայր լեզվաընտանիքի շատ բառեր, որոնք այսօր այս կամ այն ձևով, հաճախ անճանաչելիության չափ փոփոխման են ենթարկվել, արցախահայության բարբառում դրանք առկա են և նման նախնականին: Այս բարբառը իր մեջ պարունակում է նաև գրաբարյան շատ երևույթներ, օրինակ՝ արցախահայերը այդպես էլ իրենց խոսակցականից չհանեցին բառավերջի «ն»-ն և չընդունեցին «ֆ»-ն: Դա բացահայտում է նրանց ավանդապաշտությունը և ազգայինին ամուր կառչելու առանձնահատկությունը: Արցախահայերի բարբառը թերևս հայ բարբառներից ամենակենսունակն ու ամենաճկունն է: Էլ ո՞վ, եթե ոչ մինչ ուղն ու ծուծն արցախցի Լեոն կարող է նկարագրել այս նուրբ ու կոպիտ, հին ու նոր և, ցավոք, շատերի համար անհասկանալի բարբառը. «Ուր կա ղարաբաղցի, նրա հետ ապրում է իր պապենական մեծ ու հարուստ ժառանգությունը՝ ղարաբաղցու բարբառը՝ ուժեղ, կոպիտ, ինչպես լեռնական մի ստեղծագործություն, հյութեղ՝ իր առանձին համ ու հոտով»[3]:

Վանի թագավորության սեպագրերում Արցախն ունի Ուրդեխինի կամ Ուրդեխե ձևերը, որոնք հայերեն Արցախ ավանդական անվան անդրադարձն են: Արգիշտի I-ի թողած արձանագրությունները վերլուծելով՝ ակնհայտ է դառնում, որ նրա կառավարման տարիներին Արցախը ներառված է եղել հայկական պետականության կազմում: Ուրարտուի կործանումից հետո Հայկական լեռնաշխարհում ձևավորված համահայկական պետության հիմնադիր Երվանդ Սակավակյացի և նրա հաջորդների օրոք էլ Արցախը ներառված է եղել հայկական պետության կազմում: Երբ Երվանդ I-ը և յուր որդի Տիգրան I-ը զորք էին հավաքում Մարաստանի արքա Աժդահակի դեմ կռվելու համար, հայոց թագավորը զորք էր ժողովում նաև Արցախից և Ուտիքից:

Ք. ա. 550-331թթ. Արցախը ևս գտնվում էր Աքեմենյան տերության գերիշխանության տակ: Որպես բուն հայկական տարածք՝ այն վկայակոչվում է ոչ միայն հայ, այլև հույն ու հռոմեացի պատմիչների կողմից, ինչպիսիք են Ստրաբոնը, Գայոս Պլինիոս Ավագը, Կլավդիոս Պտղոմեոսը, Պլուտարքոսը, Դիոն Կասիոսը և շատ ուրիշներ: Ստրաբոնը «Աշխարհագրություն» հայտնի աշխատության մեջ տեղեկություններ է հաղորդում Մեծ Հայքի կազմի մեջ մտնող Արցախի (Օրխիստենե) մասին և միաժամանակ վկայում, որ այն բարեբեր երկիր է և պատերազմների ժամանակ հանում է մեծաքանակ հեծելազոր: Նույն աշխատության մեջ հեղինակը շարունակում է Արցախի մասին վկայությունները և շեշտում, որ այն չի սահմանակցվում հարևան երկրների հետ և գտնվում է Մեծ Հայքի խորքում[4]: (Հուսանք՝ ադրբեջանցի պատմաբանների մտքով չի անցնի, որ դեռևս քրիստոնեությունից առաջ հայերը կարող էին կաշառել Ստրաբոնին Արցախը հօգուտ Հայաստանի ներկայացնելու համար, հետևաբար նաև մյուս պատմիչներին): Հյուբշմանը ևս վկայում էր, որ Հայաստանը Արտաշեսի օրոք իր մեջ բովանդակում էր Փայտակարանը, Սյունիքը, Վասպուրականը, Այրարատը, Գուգարքը, Տայքը, Բարձր Հայքը, Տուրուբերանը, Չորրորդ Հայքը, Աղձնիքը, Մոկքը, Կորճայքի մի մասը, Ուտին ու Արցախը՝ հնագույն Հայաստանի 15 նահանգներից 13-ը: Այստեղ կցանկանայի ևս մեկ անգամ մեջբերել Ստրաբոնի աշխատության մի քաղվածք. «Ք. ա. II դ. Հայաստանի բնակչությունը միալեզու էր (հայալեզու), այսինքն՝ այդ 13 նահանգից և ոչ մեկը օտար չէր ու բռնի ուժով չէր միացված Հայաստանին»[5]: Լեոն կարևորում էր նույնիսկ այդ ժամանակներում Արցախի ռազմավարական նշանակությունը Հայաստանի համար. «...Առանց Ղարաբաղի լեռնաստանի անհնարին է երևակայել Հայաստանի սրտի՝ այն է Արարատյան երկրի պաշտպանությունը հյուսիսային և արևելյան տափաստաններից, Ղարաբաղը անմիջական շարունակությունն է այն հզոր պաշտպանողական պատվարի, որ ներկայացնում է Գուգարքը (այժմյան Լոռին և հարակից գավառները): Եվ այս է պատճառը, որ հայկական պետության հիմնադիրներ հանդիսացած Արտաշեսն ու Տիգրանը Գուգարքի հետ միասին Հայաստանի սահմանների մեջ են մտցրել Ուտին, Արցախն ու Սյունիքը»[6]: Պատահական չէ, որ հայոց արքա Տիգրան II Մեծը իր կառուցած չորս Տիգրանակերտից առաջինը

կառուցել է Արցախում մ.թ.ա. 90-ական թվականներին: Այն գտնվում է Ստեփանակերտ-Մարտակերտ մայրուղու ձախ կողմում, Վանքասարի ստորոտում՝ այժմյան Աղդամի շրջանի Շահբուլաղի տարածքում:

Մինչև 387թ., այսինքն՝ Հայաստանի առաջին բաժանումը, Արցախը գտնվում էր Մեծ Հայքի կազմում, դրանից հետո, երբ Հայաստանը բաժանվեց Պարսկաստանի և Հռոմի միջև, Արցախ, Ուտիք մարզերից և Անդրկուրյան Աղվանքից կազմվեց մի մարզպանություն՝ Աղվանք կամ Աղվանից աշխարհ, այլ լեզուներով՝ Ալբանիա: Մարզպանությունն իր գոյությունը պահպանեց մինչև արաբական արշավանքները: Այս հանգամանքը բնավ չկտրեց Արցախը մայր հայրենիքից, քանզի Աղվանք հասկացությունը զուտ պատմաշխարհագրական է, իսկ «աղվաններ» անվանումն էլ հավաքական է եղել բազմաթիվ ցեղերի համար: IV դ. արշալույսին Արցախում տարածվում է քրիստոնեությունը, և Գր. Լուսավորչի հիմնած առաջին տաճարների ու վկայարանների թվում է Ամարասը: Մեսրոպ Մաշտոցը V դ.-ի սկզբներին հայկական առաջին դպրոցներից մեկը բացել է Արցախում:

VIII դ. սկզբներին աղվանական մարզպանությունը մտցվեց արաբական խալիֆայության կազմած Արմենիա վարչատարածքային միավորման մեջ: 885թ., երբ հիմնադրվեց Բագրատունյաց պետությունը, Արցախը մտավ նրա սահմանների մեջ: Սակայն ենթակա թագավորությունների առաջացմամբ, կենտրոնախույս ուժերի ակտիվացմամբ երկիրը գնում էր դեպի տրոհում: Դրան ակտիվորեն աջակցում էր նաև Բյուզանդիան: Տրոհումից չխուսափեց նաև Արցախը, որը պատմական այդ ժամանակաշրջանում անվանվում էր Խաչեն: Այսպես, Խաչենը բաժանվեց երեք մասի՝ Վերին Խաչեն, Միջնարցախ, Ներքին Խաչեն: Այնուամենայնիվ, պարսիկ անանուն պատմիչի վկայությամբ՝ «Խաչենի բնակչությունը հայկական էր»[7]:

XI դ. Հայաստանին և Խաչեն-Արցախին սպասվում էր մի նոր արշավանք. սելջուկ թուրքերը, չհանդիպելով լուրջ դիմադրության, ներխուժեցին Հայաստան և սկսեցին ավերել երկիրը: Խաչենի համար աննախադեպ չարիքներին գումարվեց 1139թ. երկրաշարժը, որի մասին սարսուռով են խոսում այդ ժամանակաշրջանի պատմիչները, այդ թվում նաև Մխիթար Գոշը: Սակայն արցախցուն հատուկ չեն վախն ու ընկճումը, և, դեռ ամողջովին չապաքինված այդ արհավիրքներից, Խաչենն արդեն ընդգրկվել էր հակասելջուկյան ազատամարտերի ոլորտում:

Զավթիչներին Հայաստանից ու Խաչենից վտարելուց հետո XIII դ. նրանք մտան Զաքարյան հայկական իշխանության կազմի մեջ: Զաքարյանների օրոք սկսվեց շինարարական մեծ եռուզեռ, երկիրը բռնեց ծաղկման ուղին, այդ թվում՝ նաև Խաչեն-Արցախը:

Ավաղ, դա երկար չտևեց. 1220թ. սկսած՝ Հայաստանը ենթարկվեց մոնղոլ-թաթարների ավերիչ արշավանքներին: Խաչենի գահերեց տեր Հասան Ջալալի գործադրած ջանքերի շնորհիվ երկրամասը մասամբ զերծ մնաց ավերածություններից, սակայն նրա մահից հետո 1261թ. այն ևս ենթարկվեց վայրագությունների:

Սելջուկ-թուրքերի արշավանքների, մոնղոլ-թաթարների դաժանությունների հետևանքով Մուխանք գավառից զրկվեցին Արցախի տերերը: Եկվորներն այստեղ էին անցկացնում ձմեռը, այստեղից էին սկսում կողոպտչական արշավանքները: Իսկ բնիկ հայությունը, ապավինած լեռնաստանին, պաշտպանվում էր և ապրում իր դժվար կյանքը, ստեղծում իր հերոսական պատմությունը:

1919թ. ռուս նշանավոր բանաստեղծ Սերգեյ Գորոդեցկին «Ղարաբաղ» հոդվածում գրում է. «Այստեղ՝ Ղարաբաղի անառիկ բարձունքներում, ավելի քան երկու հազար տարիների ընթացքում հայ ժողովուրդը դիմացել է քոչվոր ցեղերի գրոհներին՝ պահպանելով իր մշակույթը և ազգային դեմքը: Ղարաբաղը դարձել է Հայաստանի միջնաբերդը, քանի որ Հայաստանի սիրտը՝ դաշտն Արարատյան, անհնար է պաշտպանել առանց տերը լինելու Ղարաբաղի: Վեհ, ամրապինդ այս ժողովուրդը, կյանքը փրկելու համար լեռները բարձրացած, պնդացել էր լեռնային օդից և իրեն պաշտպանել այն վարակից, որոնց ենթակա են դաշտաբնակները...»[8]: Սրան զուգահեռ՝ տեղին է մեջբերել գերմանացի ճանապարհորդ Հ. Շիլտբերգերի վկայությունը, որը, XIV դ. գտնվելով Արցախում, նշում է. «Արցախը գտնվում է Հայաստանում»[9]: Ցավոք, մոնղոլների արշավանքներն անհետևանք չեղան. մեկը մյուսի հետևից Արցախ ներթափանցեցին կարա-կոյունլուներն (սև ոչխարավոր) ու ակ-կոյունլուները (սպիտակ ոչխարավոր): Նրանք բնակվում էին Կուր-արաքսյան դաշտավայրի չոր տափաստանային հատվածում և զբաղվում էին անասնապահությամբ, նստակյաց չէին և հեռու էին մշակույթի այն բարձունքից, որին վաղուց հասել էր Արցախը: Աստիճանաբար Արցախ անունը կորցրեց իր նախկին վարչաքաղաքական նշանակությունը և փոխարինվեց «Ղարաբաղ» օտարահունչ բառով: Ինչ վերաբերում է այս անվանը, համեմատաբար ուշ է վկայվում վրացական ու պարսկական աղբյուրներում (XIV–XV դդ.): Այն կազմված է պարսկական աշխարհագրական անվանացանկի հիման վրա և, ի տարբերություն հարթավայրային մասի, որը կոչվում է Պաղ-ի Սաֆիա (սպիտակ այգի), լեռնային անտառապատ հատվածն անվանվում է Պաղ–ի Սիադ, որը թուրքալեզու իմաստավորմամբ նշանակում է Ղարաբաղ (սև այգի):

Հենց այս նույն ժամանակաշրջանում էլ, գուցե քիչ ավելի ուշ, Ղարաբաղում ի հայտ եկան մելիքությունները, որոնցից առավել հայտնի են Խամսայի մելիքները: Թվով հինգ այս մելիքները (Խաչենի, Գյուլիստանի, Դիզակի, Վարանդայի, Ջրաբերդի) իրենց տիրույթներում նման էին փոքր թագավորների, իշխանությունը փոխանցում էին հորից որդի, և յուրաքանչյուրն ուներ իր նստավայր բերդ-ամրոցը: Խամսայի մելիքները առավել արտոնություններ ստացան Նադիր Շահի ժամանակ: Ա. Բուտկովը գրում է. «Ղարաբաղը ընկած է Արաքսի ձախ ափի և Կուրի աջ ափի միջև, լեռներում, որոնք բարձր են Մուղանի դաշտավայրից: Նրա գլխավոր բնակիչները հայեր են, երկիրը կառավարում են հինգ մելիքները, որոնցից յուրաքանչյուրը կարող է 1000 մարդ (զորք) հանել: Մելիքներն անմիջականորեն կախված են պարսից շահից»[10]: Մելիքների ժամանակաշրջանում Ղարաբաղը կարողացավ պահպանել իր ինքնուրույնությունը: Պլատոն Զուբովը «Ղարաբաղյան աստղագետ» գրքում մեջ է բերում Վարանդայի մելիքի խոսքերը. «Մենք՝ հայ մելիքներս, միայնակ մնացած՝ անկախ ենք մեր լեռներում, այն ժամանակ, երբ Հայաստանը միմյանց են բաժանում պարսիկներն ու թուրքերը»[11]: Հայ մելիքները, մտահոգված լինելով Ղարաբաղի ճակատագրով, ուղիներ էին փնտրում՝ դիվանագիտական կապեր հաստատելու Եվրոպայի մի շարք պետությունների՝ այդ թվում նաև Ռուսական կայսրության հետ: Եվրոպական տերությունները հայ մելիքներին ճանաչում էին որպես ինքնուրույն, անկախ իշխողների: Դրա վառ օրինակն է Պետրոս Մեծի հրովարտակը, Պավելի կայսերական շնորհագիրը՝

“Ресркипт”, որն սկսվում է այսպես. “Державной и знаменитой Карабхской области, благородным меликам Джамшуду Шахназарову, владельцу Варандинскому, и Фридону Беглярову, владельцу Гюлистанскому, и всем прочим этой знаменитой области владетельным меликам и юзбашам и всему народу их”[12]: Հայ մելիքները միշտ էլ բոլոր պետություններից նախընտրել են Ռուսաստանին և եղել նրան հավատարիմ, բայց երբ 1724թ. Պետրոս I-ը գաղտնի պայմանագիր կնքեց Թուրքիայի հետ և, անավարտ թողնելով Կասպիական արշավանքը, կրկին վերադարձավ Ռուսիա, մելիքները նախընտրեցին համագործակցել պարսիկների, ոչ թե թուրքերի հետ: Եվ հենց այդ ժամանակ էլ առաջացավ սերտ բարեկամություն Նադիր Շահի և մելիքների միջև:

Եկատերինա II կայսրուհու աչքից չվրիպեց հայ մելիքների նվիրվածությունը ռուս ժողովրդին, և նա աշխատում էր դա օգտագործել ի շահ իր պետության: Հատկանշական է Գրիգորի Պոտյոմկինի զեկույցը կայսրուհուն. «Ղարաբաղը, որը կազմված է հայ ժողովրդից, պետք է հանձնվի ազգային վարչությանը, և այսպիսով Ասիայում վերականգնվի քրիստոնեական մի պետություն, ինչպես որ եղել են Ձեր կայսերական մեծության խոստումները՝ իմ միջոցով տված հայ մելիքներին»[13]:

Խամսայի մելիքության շրջանում Ղարաբաղը դեռևս միատարր էր, սակայն պարսիկները, որոնք այդքան ջանում էին ներթափանցել այստեղ, հասան իրենց նպատակին՝ օգտվելով հայ մելիքների միմյանց հանդեպ ունեցած թշնամանքից:

Այսպիսով, XVIIIդ. 50-ական թվականներին Փանահ Ալին Վարանդայի Մելիք Շահնազար II-ի օժանդակությամբ տեղափոխվում է Շոշի բերդը և իրեն հռչակում Ղարաբաղի ինքնակոչ խան: Գտնում եմ՝ հարկ չկա շեշտելու, որ նա երկրամասի օրինական տերը չի եղել և հայերի կողմից չի ընդունվել: Դրանից հետո էլ մելիքները և Ղարաբաղի ողջ մտավորականությունը երկրամասի ազատագրման հույսը կապել էր Ռուսական կայսրության հետ: Դեպ Կովկաս ձեռնարկված ռուսական բոլոր արշավանքների ժամանակ ռուս զորահրամանատարները իրենց հույսը կապել են հայերի, այդ թվում նաև արցախահայերի հետ, և պետք է շեշտել, որ նրանք երբեք հուսախաբ չեն եղել: Երբ 1805թ. հունիսին պարսկական 40 հազարանոց զորքը հասնում է Արցախի սիրտը՝ Կարկառ գետի հովիտը և վտանգ ստեղծում Շուշին գրավելու և այնտեղ գտնվող ռուսական կայազորը ոչնչացնելու համար, Ցիցիանովը կոչով դիմում է Ղարաբաղի հայությանը. «Հիշեցեք ձեր նախկին քաջությունը, պատրաստ եղեք հաղթանակների և ցույց տվեք, որ դուք հիմա էլ այն նույն քաջ արցախահայերն եք, ինչպիսին կայիք առաջ՝ միշտ սարսափեցնող պարսկական հեծելազորը»[14]: Նման օրինակներով լի է հայոց պատմությունը, երբ 1826թ. պարսկական զորքը կրկին պաշարել էր Շուշին, ռուսական զորքերի հրամանատար Երմոլովը կարգադրում է Շուշիում գտնվող ռուսական կայազորի պետ Ռեուտին՝ զինել հայերին. նրանք կպաշտպանվեն: Իրոք, Ռեուտը հիացած էր շուշեցիների ցուցաբերած քաջությամբ և անձնազոհությամբ: 1828 թվականին Լեռնային Ղարաբաղը Հայաստանի հետ միասին մտավ Ռուսական կայսրության կազմի մեջ և մնաց մինչև կայսրության փլուզումը:

Դարեր շարունակ Արցախում բնակվել են միայն հայեր. ադրբեջանցի էթնոտարր՝ որպես այդպիսին, չի եղել: Լեոն գրում է. «Լեռնաստանը միշտ անաղարտ է պահել ազգագրական կերպարանքը: Այստեղ միշտ ապրում էր հոծ և միապաղաղ հայ ազգաբնակչությունը, որը բնիկ էր, չուներ բոլորովին կամ շատ քիչ ուներ իր մեջ եկվոր այլատարրություն: Մի ժողովուրդ, որն անհիշելի ժամանակներից կառչում է իր հողին ու բնությանը, նրանց աշխատակցությամբ իր համար բնավորություն ու խառնվածք է մշակում, իր ինքնուրույն հոգեբանությունն է մշակում և տիրական դարձնում»[15]: Թրքալեզու այս ցեղը Ղարաբաղ է ներթափանցել XVIII դարում և զբաղվել քոչվոր անասնապահությամբ: «Ադրբեջանը չունի անցյալ այն իմաստով, ինչպես հասկացվում է պատմության մեջ, այդպիսի երկիր չի եղել տեղագրական աշխարհագրական տեսակետից, նույնը կարելի է ասել երկրում ապրող ազգաբնակչության մասին: Նրանք իրենց նիստ ու կացով, կրոնով, սովորույթով ու վարքագծով ինչ-որ արևելյան պարսկական ժողովուրդ են: Որտե՞ղ են սկսվում այդ պետության սահմանները, որտեղ վերջանում. ոչ ոք չգիտի և չի էլ կարող գիտենալ: Մինչև ռուսական տիրապետությունը Ադրբեջանը արևելյան Պարսկաստանի մի մասն էր»[16]: 1823թ. դրությամբ հայերը կազմում էին Արցախի բնակչության 84,6%-ը, պարսիկ-թաթարները՝ 14,7%-ը, քրդերը՝ 0,7%-ը: Ղարաբաղի տարածքը նրանց հարկավոր էր միայն քոչը գարնանը սարը բարձրացնելու ու աշնանը իջեցնելու համար: Տարածքը ավելի շատ հարկավոր էր Թուրքիային՝ կիսատ թողած ծրագրերն իրականացնելու համար և, թիկունք կանգնելով Ադրբեջանին, որը պետություն էին դարձրել դեռևս 1918թ. մայիսին, տիրանալու Լեռնային Ղարաբաղին: Եթե խոսում են փաստերը, համրանում են պատմական կեղծիքները: 1917թ. դրությամբ Լեռնային Ղարաբաղում բնակվում էր 150.000 հայ (70%), մուսուլմաններ՝ 58.000 (27%), այլ ազգեր՝ 5.000 (3%): 1921 թ. տվյալներով մարզի բնակչության 94,4%-ը հայ էր, 5-6%-ը՝ մյուս ազգերը: 1939թ. տվյալներով՝ 132.8 հազարը հայ էր, 14,1 հազարը՝ ադրեջանցի: Կարող է ստել հայը, իսկ կարո՞ղ են արդյոք ստել այն հազարավոր քարե վկաները, որոնք սփռված են ողջ Արցախի տարածքում, և դրանց թիվն անցնում է 20.000-ը: Իսկ դրա դիմաց ընդամենը 2 մզկիթ, որոնք կառուցվել են XIX դ. վերջին հայ վարպետների ձեռքով: Այս երկիրը հարուստ է այդ անխոս, բայց և բոլորից ճիշտ ու բարձր խոսող քարերով: Յուրաքանչյուր դար, ինչո՞ւ չէ, նաև տասնամյակ Արցախում կանգնեցվել են խաչքարեր, կառուցվել եկեղեցիներ: Ոչ մի հայի մտքով չէր անցնի, որ մշակույթի այդ կոթողները հետագայում միջոց կլինեն ապացուցելու, որ Արցախը բուն հայկական տարածք է: Քարե վկաներից բացի Արցախի մասին բազում աշխատություններ են պահպանվել օտարազգի հեղինակների գործերում, օտար պետությունների արխիվներում: Բավական է միայն հետաքրքրվել և համեմատել վիճակագրական տվյալները՝ համոզվելու համար ասվածի ճշմարտացիության մեջ: Կարելի է նաև չհավատալ ոչ ոքի. ընդամենը մեկ անգամ այցելել Արցախ, և քարե հազարավոր վկաները կպատմեն իրենք իրենց մասին: Ցավալին այն է, որ պատմության տարբեր դարաշրջաններում բազում հերոսներ ծնած այս լեռնաշխարհը և նրանցով ողջ աշխարհում փառաբանված՝ այսօր իր հայկական ծագման ապացույցի կարիքն ունի:

Ավարտին կցանկանայի մեջբերել հատված բանաստեղծ Ս. Գորոդեցկու «Ղարաբաղ» հոդվածից. *«Ամրակապված սեփական մշակույթին ու կենցաղին՝ Ղարաբաղը մեր օրերում էլ չի դավաճանում իր հին*

*փառքին: Եթե Հայաստանը կորցնի այն, ազգի ինքնորոշման գաղափարը կտուժի մեծապես: Եվ հակառակը՝ տեր մնալով Ղարաբաղին՝ Հայաստանը կստանա եռանդուն մշակութային ուժի հզոր ներհոսք, որը, ողողելով Հայաստանի ավեր տարածքները, կարգասավորի դրանք մշակույթով և դրանով էլ կավետի Ղարաբաղի բազմադարյան փառավոր պատմությունը: Ճիշտ է, պատմությունը Հայաստանին քաշել է դեպի հարավ, և գուցե այստեղից կժայթքեն այնպիսի ուժեր, որոնք Ղարաբաղը կդարձնեն նոր Հայաստանի հյուսիսային ծայրամասը»[17]:*

[1] *В. Бунак*. Антропологический состав населения Кавказа. “Вестник гос. музея Грузии”. Т. 13А, 1946г., стр. 94.

[2] *Ռ. Վիրխով,* Կովկասի տեղը քաղաքակրթության պատմության մեջ, «Ազգագրական հանդես», 1895թ., էջ 66:

[3] *Բ. Ուլուբաբյան,* Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, Երևան, 1994, էջ 20:

[4] *Ստրաբոն,* Աշխարհագրություն, Մոսկվա, 1964թ., XI, XIV, 5:

[5] *Ստրաբոն,* Աշխարհագրություն, Մոսկվա, 1964թ., XI, XIV, 4:

[6] *Լեո,* Հայոց պատմություն, հ. 3, Երևան, 1946:

[7] *Лоив А. Н.* СССР. Рукопись А 233, л. 202 б.

[8] «Սովետական Ղարաբաղ», 6 հոկտեմբերի, 1988թ.:

[9] Путешествие Ганса Шильтбергера по Европе, Азии и Африке. Одесса, 1866г., стр. 110.

[10] *А. Бутков*. Материалы по новой истории Кавказа. СПб, 1869 г., с. 385-386.

[11] *П. Зубов*. Карабахский астролог или основание крепости Шуши. Ереван, 1993г., стр. 19.

[12] ЦРНА Арм. ССР, Ф. 230, оп. 1, д. 244, лл. 38–44.

[13] *Բ. Ուլուբաբյան,* Արցախի պատմությունը, Երևան, 1994, էջ 161:

[14] *Շ. Մկրտչյան,* Արցախյան գրառումներ, Երևան, 2001:

[15] *Լեո,* Երկերի ժողովածու, հ. 3, գիրք 2, էջ 12, Երևան, 1973:

[16] *Ս. Դ. Ավագյան,* Արցախ. ինչո՞ւ չի ասվում ճշմարտությունը, էջ 11:

[17] Սովետական Ղարաբաղ, 6 հոկտեմբերի, 1988թ.:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Ս. Դ. Ավագյան,* Արցախ. ինչո՞ւ չի ասվում ճշմարտությունը, Երևան, 1991:
2. *Վ. Բալայան,* Արցախի պատմություն, Երևան, 2002:
3. *Շ. Մկրտչյան,* Արցախ, Երևան, 1991:
4. *Շ. Մկրտչյան,* Արցախյան գրառումներ, Երևան, 2001:
5. *Ս. Մելքումյան,* Լեռնային Ղարաբաղ, Երևան, 1990թ.:
6. *Ս. Սարգսյան,* Արցախ, 1996:
7. *Բ. Ուլուբաբյան,* Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, Երևան, 1994:
8. *Լեո,* Հայոց պատմություն, հ. 3, 1946թ.:
9. *П. Зубов*. Карабахский астролог или основание крепости Шуши. Ереван, 1993г., стр. 19.
10. Обозрение российских владений Закавказья, 1834г.

## ARTSACH: FACTS SPEAK

NARA AYVAZYAN

Summary

The land Artsakh had many names - Artsakh, Aran, Ardakh, Ardzakh, Small Syunik, Khachen, Karabakh. The people of Artsakh belong to Indo-European linguistic family, and it's proved also by their dialect.
From 15 Armenian lands Artsakh has always been the integral part of Armenia as far back as in the time of Van kingdom, then under the houses of Yervandunies, Artashesyans, Arshakunies. During several time it has formed a part of Aghvanq, but later it was joined to the Bagratunies again.
Till 1917 Artsakh has never been a debatable territory and became it since 1918 when the state Azerbaydjan has been formed.

## АРЦАХ: ГОВОРЯТ ФАКТЫ

НАРА АЙВАЗЯН

Резюме

У земли Арцах были разные названия - Арцах, Аран, Ардах, Ардзах, Малый Сюник, Хачен, Карабах. Арцахцы принадлежат к индоевропейской языковой семье, и доказательством тому является также их диалект.

Из 15-и армянских земель Арцах во все исторические времена был неотъемлемой частью Армении, еще при Ванском королевстве, во времена правления династий Ервандуни, Арташесян, Аршакуни. Некоторое время он входил в состав Агванка, а после опять был присоединен к Багратунинцам.

До 1917г. Арцах никогда не был спорной территорией и стал ей только с 1918г., когда создалось государство Азербайджан.

ԼՈՒՍԻՆԵ ՂԱՐԱԽԱՆՅԱՆ

*Արցախի պետական համալսարանի ասպիրանտ*

# ԱԴՐԲԵՋԱՆՑԻՆԵՐԻ ԽՏՐԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՅԵՐԻ ՄԻՋԷԹՆԻԿԱԿԱՆ ՇՓՈՒՄՆԵՐՈՒՄ

Ազգագրական, պատմական ու արխիվային հարուստ տվյալները փաստում են ադրբեջանցիներ-ղարաբաղցի հայեր միջէթնիկական շփումների լարվածությունը, որի հիմքում ընկած էին պատմամշակութային իրողությունների աղավաղումը, կեղծարարությունը, ազգային ճնշումները և հայերի ուծացմանն ուղղված նպատակամետ քաղաքականությունը: Այս ամենի հետևանքով ստեղծվել էր էթնիկական տեսակետից ստրատիֆիկացված հանրույթ, որին բնութագրական էին միջխմբային և միջանձնային դեզադապտացիան և դրանից բխող դիսկոմֆորտը:

Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի վարչական քարտեզի վերաձևմամբ սկիզբ դրվեց ղարաբաղցիների էթնիկական հոգեկերտվածքի խեղաթյուրմանը: Ազգերի մերձեցման ինտերնացիոնալիզմի քողի տակ ադրբեջանցիները ղարաբաղցիների ձուլման մեխանիզմն էին մշակում և իրականացնում: Արցախի հայերի մոտ վտանգված էր և արդեն գրեթե չէր գործում սեփական էթնոսի հետ նույնանալու մեխանիզմը, քանզի ազգային մշակույթին, արվեստին ու ավանդույթներին փոխարինելու էր եկել, մի կողմից, խորհրդային մշակույթը, մյուս կողմից՝ «եղբայրական ազգին» միավորվելու պարտավորվածությունը: Հայաստանի հետ խզված էին սոցիալ-մշակութային կապերը, և դրա հետևանքով բացակայում էր էթնիկական նույնացման մոդելը, որն էլ հանգեցնում էր ղարաբաղցի հայերի ազգային ինքնության աղավաղմանը: Դրա փոխարեն՝ Ադրբեջանը ջանք չէր խնայում իր մշակույթը մատուցելու գործում: Ինչպես գիտենք, էթնիկական կարծրատիպերի բովանդակությունը կրում է սոցիալական գործոնի ազդեցությունը՝ մշակույթ, կրթության մակարդակ, սոցիալական ակտիվության մոտիվացիա և այլն: Ղարաբաղի բնակչության զգալի հատվածը տիրապետում էր ադրբեջաներեն լեզվին. «անա դիլին» (մայրենի լեզու) Ղարաբաղի դպրոցներում ուսումնասիրվում էր տարրական դասարանից: Փաստորեն երկլեզվությունը (բիլինգվիզմ)՝ որպես այդպիսին, արդեն կար: Այդ մշակութային քարոզչությունը, որը յուրահատուկ մանիպուլյատոր էր, չէր կարող չգործել մեր ենթագիտակցական ոլորտում և բացասաբար չանդրադառնալ ղարաբաղցիների կարծրատիպերի, էթնիկական ինքնագիտակցության և աշխարհընկալման վրա: Փաստերը վկայում են, որ ազգի զարգացման (նացիոգենեզի) աստիճանաասանդղակը ոչ միայն չէր բարձրանում, այլև իջնում էր: Ադրբեջանցիների և Ղարաբաղի հայերի շահերը նույնացվում էին, և այս ուղղությամբ որպես սոցիալական ազդեցության գործիքներ աշխատում էին ԶԼՄ-ները:

Ադրբեջանական ԶԼՄ-ների գործունեությունը պարտադրվող մշակութային համակարգի մի մասն էր, որ վերածվել էր ազգային ճնշում իրականացնող գործիքի և ներծծված էր բացահայտ ու քողարկված ագրեսիվությամբ: Սա ևս մեկ հզոր գործոն էր, որը խորացնում էր միջէթնիկական լարվածությունը և դրանից բխող հոգեբանական դեզադապտացիան:

Խորհրդային մամուլի մեր դիտարկումներն ընթացել են քանակական և բովանդակային մակարդակներով: Քանակական արդյունքներն ամբողջական պատկերացում են տալիս հետաքրքրության և ուսումնասիրության օբյեկտ հանդիսացող նյութի ընդհանուր ծավալի մասին: Նյութերի մատուցման ձևերը, նրանցում տրվող գնահատականների ու նկարագրությունների ինտենսիվությունը բացահայտում են էթնիկական ավտո և հետերոստերեոտիպերի մեխանիզմները և այն ուղիները, որոնք սկսել են հոգեբանական նոր կաղապարներ ձևավորել Ղարաբաղի հայերի մոտ: Դիտարկումներից հստակեցվում է նոր կաղապարների տարածման մոտիվացիոն աստիճանը, ինչը չէր կարող չանդրադառնալ սերունդների սոցիալականացման վրա:

Ադրբեջանական մամուլում աչք են ծակում ազգային տարբերությունների արհեստական համահարթեցմանն ուղղված՝ լրագրողների տխուր փորձերը: Կեղծ բարեպաշտության քողի տակ (եղբայրական ազգ) իրականացվող էթնիկական ճնշման այս դրսևորումը հայերի մոտ կոգնիտիվ դիսսոնանս (իմացական աններդաշնակություն) էր առաջացնում, որն էլ ավելի էր սրում ներքին լարվածությունը: Մամուլի այսօրինակ ազդեցության պայմաններում պարարտ հող էր ստեղծվում թշնամական միջէթնիկական հետերոստերեոտիպերի առաջացման համար, որոնք ուղեկցվում էին դրական ինքնավերագրումներով: Համաձայն խմբային ֆավորիտիզմի սկզբունքների՝ ավտոստերեոտիպերը, ի հակադրություն հետերոստերեոտիպերի, որպես կանոն՝ պոզիտիվ բնույթ են կրում, իսկ ահա նեգատիվ հետերոստերեոտիպերն առավել հաճախ ակտուալիզացվում են այնպիսի պայմաններում, երբ երկու էթնոսների էթնիկական շփումներում ծագում է մրցակցային պայքար կամ գերադասի ու ստորադասի հարաբերությունների խնդիր:

Ղարաբաղցի հայեր-ադրբեջանցիներ միջէթնիկական փոխհարաբերությունների բոլոր ոլորտներում Ադրբեջանը փաստացի խտրականություն էր դրսևորում: Սա ևս միջէթնիկական շփումներում պերմանենտ լարվածության և դեզադապտացիայի առաջացման աղբյուր էր: Բերենք ընդամենը մեկ փաստ. հայ գյուղացին առանց Բաքվի իշխանությունների թույլտվության իր երկրի հարուստ անտառներից շինափայտ բերելու իրավունք անգամ չուներ: Այսպես, օրինակ, ԼՂԻՄ մարզային խորհրդի 4-րդ համագումարի

պատգամավոր Աշոտ Երիցյանն իր ելույթում նշում էր, որ Խաչենի, Ջրաբերդի և Վարանդայի շրջանների գյուղերի տների կեսից ավելին այրված ու ավերված են: Այդ տները վերականգնելու համար գյուղացիներին շինանյութ էր հարկավոր, որը նրանք կարող էին ձեռք բերել մոտակա անտառից: Երիցյանը ստիպված էր դիմել համագումարին՝ միջնորդելու «ընկեր» Բունյաթ Զադեին, որպեսզի նա իրավունք տար օգտվելու անտառից: Փաստորեն տնտեսական ու մշակութային էքսպանսիան որպես այդպիսին արդեն կար: Կատարվածը հուշում է, որ ադրբեջանցիների հետերոստերեոտիպերը պատմականորեն հաստատված էին, որոնց բովանդակությունը ենթագիտակցորեն տիրապետում ու ճնշում էր ենթադրում: Միջմշակութային միակողմանի հաղորդակցությունը Ղարաբաղի հայերին, մասնավորապես Ադրբեջանի հարևան հայաբնակ գյուղերի բնակիչներին, դեպի մարգինալության էր տանում:

Ադրբեջանցիների էթնոցենտրիզմը գործում էր հակասականության դիրքերից, և ինտերնացիոնալիզմի ծնած «եղբայրական ազգի» գաղափարաբանությանը զուգակցված էր ենթարկելու և ճնշելու մեխանիզմը:

Ադրբեջանական մամուլի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ այն այսօր ևս վերածվել է մանիպուլյացիայի (ձեռնածության) գործիքի և դարձել հայերին ծայրահեղորեն վարկաբեկող գերագրեսիվ ստերեոտիպերի առաջացման յուրատեսակ «գեներատոր»:

Այսօր այդ նույն մամուլում, որին գումարվել է նաև ընդդիմադիր մասը, եռանդուն կերպով տպագրվում են էթնոկոնֆլիկտածին հրապարակումներ, որոնք հայերի նկատմամբ թշնամական և վարկաբեկող ստերեոտիպեր են մշակում և տարածում ինչպես սեփական հանրույթի, այնպես էլ այլ ժողովուրդների շրջանում: «Зеркало», «Бакинский рабочий», «Эхо», «Виртуальный Азербайджан» և այլ թերթերի՝ կոնֆլիկտածին ազդեցություններ պարունակող նյութերը միտված են էթնիկական շփումներում ինթոլերանտ (ապահանդուրժողական), նեգատիվ դիրքորոշումների ձևավորմանը: Սա պետք է համարել ադրբեջանցիների ագրեսիվ էթնիկական հոգեբանական ինքնապաշտպանությունը՝ ներկայումս ստեղծված սոցիալ-քաղաքական իրավիճակում:

Կրկնակի էթնիկական ինքնագիտակցության դրսևորումներ, ցավոք, այսօր ևս պահպանվել են նախկին ադրբեջանաբնակ գյուղերի հարևանությամբ ապրող հայկական գյուղերի բնակիչների մոտ: Նրանցից ոմանք այսօր (մեծավ մասամբ նրանք, ովքեր ծանր կորուստներ չեն կրել) «եղբայրական» ազգին միավորվելու ցանկություն են հայտնում և խոսում Ադրբեջանի կազմում ապրած անհոգ տարիների մասին: Փաստորեն եղբայրական ազգի երբեմնի կեղծ համագործակցային փոխհարաբերությունները շարունակվում են խիստ մակերեսորեն ընկալվել: **Եվ այստեղ է, որ ազգային գաղափարախոսության ձևավորման հարցը օրախնդիր է դառնում:**

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. *Ա. Ա. Նալչաջյան,* էթնիկական հոգեբանություն, Երևան 20:
2. *Շ. Աբրահամյան,* Ազգային քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղում խորհրդային իշխանության տարիներին, Երևան, 2003:
3. *Эллиот Аронсон.* Общественное животное аспект пресс, Москва, 1998.
4. *Девид Маерс.* Социальная психология, Москва, 1998.


PARADOXICAL HOSPITALITY-REVERSE-PROTECTIVE REACTION

LUSINE GHARAKHANYAN

Summary


Hospitality is an element of et hnical culture and as s social-psychological phenomena carries valuable character.
But the element of hospitality has is paradoxes which usually obtains character of self-protecting reaction.
The phenomena of paradox hospitality was inescapable between interethnic contacts of armenians and azerbaijanins of Karabakh.
Our investgations show that, the mechanism of paradox hospitality mainly functioned among the inhabitants of arminian settled villages, which were frontier to azerbaijan s villages.
Separate episodes revealed during the hospitality, prompt that ethnocentrism was more developed among azerbaijani women. This was a course of superficial irrational notions of azerbaijani women about armenians.
Inhuman stereotype were revaled during " Novrouz Bayram", when killing an arme nian was considered as the element of completing the ritual of the holiday.


ПАРАДОКСАЛЬНОЕ ГОСТЕПРИИМСТВО–КАК ОБРАТНОЕ ЗАЩИТНОЕ РЕАКЦИЯ

ЛУСИНЭ КАРАХАНЯН

Резюме


Гостеприимство-элемент этнической культуры и как социально-психологическое явление носит ценностный характер, не лишено парадоксальности и нередко приобретает характер самозащиты. Явление парадоксального гостеприимства было неизбежным при межэтнических контактах армян и азербайджанцев Карабаха. Наши исследования показывают, что механизм парадоксального гостеприимства действовал у жителей армянских сел, граничащих с азербайджанонаселенными пунктами. В этом гостеприимстве был и скрытый элемент самообороны, который в дальнейшем перерос в вертикальные этнические взаимоотношения.

ДАВИД КАРАБЕКЯН

*Арцахский государственный университет*

# СИТУАЦИЯ В ЗОНЕ АЗЕРБАЙДЖАНО-КАРАБАХСКОГО КОНФЛИКТА И ПРОЦЕСС УРЕГУЛИРОВАНИЯ ПРОТИВОСТОЯНИЯ В 1992г.

Совещание по Безопасности и Сотрудничеству в Европе (СБСЕ) с момента начала своей деятельности по урегулированию противостояния пыталось объективно изучить все аспекты азербайджано-карабахского конфликта.

Сравнение "Промежуточного отчета миссии СБСЕ о положении в Нагорном Карабахе" (Interim Report of the CSCE Repporteur Mission on the Situation in Nagorno-Karabagh, considered on 28 February by CSO of the CSCE, agenda item 3), подготовленного на основе изучения Миссией развития конфликта с 1988 по 1992г., а также встреч и обстоятельных бесед с представителями противоборствующих Сторон, заинтересованных сторон и журналистами, и даже независимыми экспертами (см. http://armenianhouse.org/zolyan/nf-ru/karabakh) с актами Комитета Старших Должностных Лиц (КСДЛ) и Совета Министров Иностранных Дел (СМИД) Совещания по Безопасности и Сотрудничества Европе(СБСЕ) и предложенным Минской группой "Примерным графиком мероприятий по приостановлению боевых действий" с официальной реакций Сторон позволяет определить логику выбора приоритетов, стратегии проведения переговоров и принятия решений СБСЕ, а в последующем и ООН, призванных предотвратить эскалацию насилия в зоне азербайджано-карабахского конфликта.

В решении СМИД СБСЕ 24 марта 1992 г. выражалась обеспокоенность по поводу угрозы международной и региональной безопасности и гуманитарной катастрофы вызванной расширением масштабов вооруженного противостояния, были сформулированы приоритеты взаимодействия Совещания со странами и организациями, входящими в Европейское сообщество и Организацией Объединенных Наций по урегулированию конфликта, которые были развиты в основополагающих документах Организации по Безопасности и Сотрудничеству в Европе (ОБСЕ).

По решению саммита глав государств-участниц ОБСЕ, состоявшегося 4-6 декабря 1994г. в столице Венгрии Будапеште СБСЕ была трансформирована в ОБСЕ. (см. статью Д. Бочкарева "ОРГАНИЗАЦИЯ ПО БЕЗОПАСНОСТИ И СОТРУДНИЧЕСТВУ В ЕВРОПЕ (ОБСЕ на сайте http://www.krugosvet.ru/articles/107/1010705/1010705a2.htm).

Решение СМИД создало международный и региональный политический фон благоприятный для переговоров по урегулированию конфликта.

Наиболее крупными успехами в урегулировании конфликта и установлении взаимного доверия Сторон в 1992 г. являлись:

1) встреча министров иностранных дел Армении и Азербайджана при посредничестве МИД РФ в Москве (20 февраля), 2) подписание трехстороннего Тегеранского коммюнике (Иран, Армения, Азербайджан), предусматривающего недельное прекращение огня в зоне конфликта (16 марта), 3) встреча президента Армении Левона Тер-Петросяна и председателя Верховного Совета Азербайджана Я. Мамедова 7-8 мая в Тегеране по итогам которой было принято коммюнике, 4) встреча министров обороны Армении, Азербайджана и Нагорного Карабаха при участии министров обороны и безопасности РФ 19 сентября 1992. в Сочи, в ходе которой представителями Сторон конфликта было подписано соглашение о прекращении всех военных действий сроком на 2 месяца, 5) подписание Сторонами в Москве военно-технического протокола о механизме выполнения сочинского соглашения (25 сентября) (см. http://www.nkr.am/rus/mid/chron.htm).

В этот же период при посредничестве МИД России и содействии Международного Комитета Красного Креста был проведен ряд обменов заложниками и военно-пленными, и мониторинг условий их содержания Сторонами. Хроника боевых действий в зоне конфликта в 1992г показывает, что основным фактором, обусловившим согласие азербайджанской стороны вести переговоры с Нагорным Карабахом и прекратить боевые действия было изменение ситуации в зоне противоборства в результате военных успехов сил самообороны НКР. (см. http://nkr.am/rus/history/voina.htm).

Вопреки договоренностям Азербайджан не только не прекратил боевых действий и блокады Армении и НК, а усилил их.

Летом 1992 г. артиллерийские обстрелы, авианалеты и применение против населения Нагорного Карабаха систем залпового огня "Град" и "Ураган" достигло беспрецедентных масштабов - таких, что это повлекло открытые протесты и санкции США. 11 августа 1992г. американская Палата представителей приняла Резолюцию 907 (более известную как поправка к "Акту о защите свободы"-авт.), осуждающую агрессию Азербайджана в Нагорном Карабахе и запрещающую администрации Соединенных Штатов оказывать помощь АР (см.Манасян.А.С. "Карабахский конфликт. Ключевые понятия и хроника", Ер.: НОФ "Норавaнк", 2005, с.139).

На сайте МИД НКР указывается, что в день принятия Палатой вышеуказанной Поправки Азербайджан объявил частичную мобилизацию офицеров и сержантов запаса и продлил сроки службы на-

ходящихся на действительной воинской службе (см.http://www.nkr.am/rus/history/voina.htm).

Предпринятые руководством Нагорного Карабаха и Армении в ответ на агрессивные выпады Азербайджана меры привели к коренному изменению ситуации в зоне конфликта. 12 августа Верховный Совет НКР ввел в республике военное положение, началась мобилизация мужчин в возрасте от 18 до 45 лет, 14 августа был создан Государственной Комитет Обороны(ГКО) призванный мобилизовать все людские и материальные ресурсы республики, перевести предприятия, учреждения и организации, весь общественно-политический потенциал на рельсы военного времени, а также объединить разрозненные и автономно действовавшие отряды самообороны под единым командованием и создать регулярную армию.

В кратчайшие сроки была осуществлена структурная реорганизация вооруженных сил (см. http://www.nkr.am/rus/history/voina.htm).

Руководство Армении отказалось от идеи создания нейтрального демилитаризованного государства. В начале 1992г. Армения приступила к формированию собственных вооруженных сил, которые не только эффективно отражали агрессивные вылазки Азербайджана, но и контратаковали противника.

8 июля 1992г. парламент РА принял постановление, согласно которому РА считает неприемлемым "любой международный документ, в котором Нагорно-Карабахская Республика будет отмечена в составе Азербайджана"(см. Манасян.А.С. "Карабахский конфликт. Ключевые понятия и хроника", Ер.:НОФ "Нораванк" 2005, с.138).

К 19-му октября подразделения АО НКР НКР остановили наступление азербайджанской армии, и удачно проведя контрнаступление на ряде участков фронта во второй декаде ноября, взяли под контроль стратегическую магистраль Тартар- Мартакерт- Кельбаджар.

После этого в зоне конфликта наметилось снижение интенсивности боевых действий. (см. http://www.nkr.am/rus/history/voina.htm).

ЛИТЕРАТУРА


1. http://armenianhouse.org/zolyan/nf-ru/karabakh
2. www.vn.kazimirov.ru
3. http://www.krugosvet.ru/arti-cles/107/1010705/1010705a2.htm
4. *Манасян А. С.* "Карабахский конфликт. Ключевые понятия и хроника", Ер.: НОФ "Нораванк", 2005 с. 99
5. http://www.nkr.am/rus/mid/chron.htm.
6. *Манасян А. С.* "Карабахский конфликт. Ключевые понятия и хроника", Ер.: НОФ "Нораванк", 2005
7. http://www.nkr.am/rus/mid/chron.htm


## ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԱԴՐԲԵՋԱՆԱ-ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԳՈՏՈՒՄ ԵՎ ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ 1992թ.

ԴԱՎԻԹ ԿԱՐԱԲԵԿՅԱՆ
*Արցախի պետական համալսարան*

Ամփոփում

1992թ. ԵԱՀԽ և միջնորդ-երկրների (Ռուսաստանի, Իրանի, Ղազախստանի) ջանքերն ուղղված էին ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության «միջազգայնացմանը», հակամարտության գոտում հումանիտար աղետի, հակամարտող կողմերի վերահսկվող տարածքներում անվերահսկելի զարգացումների կանխարգելմանը, հակամարտության համապարփակ կարգավորմանը:

## THE SITUATION IN THE ZONE OF AZERBAIJAN-KHARABAKH CONFLICT AND THE PROCESS OF RESISTANCE REGULATION, 1992

DAVID KARABEKYAN
*Artsakh State University*

Summary

In 1992 the basic efforts of the CSCE and the states-intermediaries (Russia, Iran and Kazakhstan) have been directed on prevention of internationalization of the azeri-karabakh conflict, humanitarian accident in a zone of opposition, uncontrollable processes in territories of the under control Parties of the conflict, and universal settlement of opposition

# ԴԱՍԱԼՍՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՆԵՐԴՊՐՈՑԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑ

ՎԱՐԴԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

*Աբովյանի թիվ 10 միջնակարգ դպրոցի տնօրեն*

Այսօր շատ են դժգոհությունները հանրակրթական դպրոցից:

Խախտվել է համամասնությունը գիտելիքների ծավալի և հատկացված ժամաքանակի միջև, բարդացել են ծրագրերը, շատ դասագրքեր վերափոխման կարիք ունեն, մեծացել է պահանջը աշակերտների նկատմամբ, հնացել են դասավանդման ավանդական մեթոդներն ու ձևերը, տարիներ շարունակ ուսուցիչները չեն վերապատրաստվում, չեն ատեստավորվում, ԲՈՒՀ-երի ընդունելության քննությունների պահանջները հեռու են դպրոցական ծրագրերից, դպրոցի հնարավորություններից: Այս ցանկը կարելի է շարունակել, բայց այս ամենի հետ միասին՝ հաճախ դպրոցի աշխատանքի ցածր արդյունքները պայմանավորված են նաև ներդպրոցական վերահսկողության ոչ ճիշտ կազմակերպմամբ:

Ներդպրոցական վերահսկողությունն ընդգրկում է ուսումնադաստիարակչական պրոցեսի բոլոր կողմերը: Եվ դպրոցի աշխատանքի արդյունքները մեծապես կախված են նրանից, թե դպրոցի ղեկավարությունն ինչ չափով է տիրապետում բազմակողմանի, հավաստի, ամբողջական տեղեկատվությանը դպրոցի իրավիճակի, ուսուցչի աշխատանքի, աշակերտների գիտելիքների մակարդակի մասին:

Այդպիսի տեղեկատվություն ստանալու ձևերից մեկը ուսուցչի աշխատանքի վերահսկողությունն է դասալսման միջոցով: «Վերահսկողը պետք է խթանի աշխատանքային այնպիսի միջավայրի ձևավորումը, որը կնպաստի ազատ և հստակ հաղորդակցմանը, կխրախուսի աշխատակիցների ակտիվ մասնակցությունը, անկախ մտածելակերպը և միասնական գործունեությունը» [1]:

Համաձայն ԱՄՆ-ում իրականացվող մոդելների վերահսկողությունը կարելի է դասակարգել հետևյալ ձևով.

1. ախտորոշման
2. զարգացման
3. խորհրդակցային
4. ինքնագնահատման:

Ախտորոշման վերահսկողությունը երկարատև, շարունակական գործընթաց է, որի նպատակը դասավանդման բարելավումն է: Վերահսկողության այս ձևը հնարավորություն է տալիս դիտարկել ուսուցչի կողմից աշակերտների հետ տարվող աշխատանքը դասարանում, հետևել ուսուցչի և աշակերտների փոխգործունեությանը: Այս դեպքում վերահսկողն ավելի շատ հանդես է գալիս ուսուցանողի դերում և չի միջամտում ուսուցչի աշխատանքին: Ախտորոշման վերահսկողությունը կարող է իրականացվել հինգ փուլով:

1. Նախնական խորհրդակցություն:

Այն տեղի է ունենում մինչև դասալսումը և հստակեցնում է դասալսման նպատակները, պատճառները, դիտարկման ենթակա վարքագծերը և հավաքվող անհրաժեշտ տվյալները:

2. Դասավանդման դիտարկում:

Այս փուլում վերահսկողը, ներկա գտնվելով դասին, հետևում է նրա ընթացքին, տվյալներ հավաքում դասավանդման, աշակերտների կողմից գիտելիքների յուրացման, հմտությունների ձեռք բերման, գործնական հմտությունների զարգացման, ուսուցչի և աշակերտների վարքագծի վերաբերյալ:

3. Վերլուծություն և ռազմավարությունների մշակում:

Սրա նպատակն է՝ համակարգել հավաքած տվյալները հետագա օգտագործման համար հարմար ձևով:

Այդ աշխատանքը կարելի է կատարել նաև աղյուսակի միջոցով՝ տվյալները փոխարինելով թվերով, տոկոսային հարաբերություններով:

4. Վերահսկողական խորհրդակցություն:

Անդրադառնալով առաջին փուլում դիտարկված հարցերին՝ գնահատվում են դիտարկման տվյալներն ու արդյունքները, որոշվում տվյալ դասարանի համար հարմար լուծումներ: Այս փուլում շատ կարևոր է հասնել նրան, որ ուսուցիչը զգա վերահսկողի օբյեկտիվ վերաբերմունքը, տեսնի իր աշխատանքի կատարելագործման ուղիները:

5. Ամփոփիչ վերլուծություն:

Սա հնարավորություն է տալիս վերահսկողին՝ ի մի բերել իր աշխատանքը, գտնել իր թերացումներն ու բացթողումները, պարզել իր և ուսուցչի միջև վստահության և համագործակցության չափը, որոշել հետագա անելիքները:

Եթե «Ախտորոշման վերահսկողությունը ուսուցիչների հետ աշխատելու համակարգ և գործնական քայլեր է առաջարկում, ապա զարգացման վերահսկողությունը զինում է վերահսկողին իր մասնագիտական ոճը ուսուցիչների մասնագիտական զարգացման մակարդակին համապատասխանեցնելուն» [1]:

Համեմատելով այսօր ԱՄՆ-ում գործող վերահսկողության մոդելները մեզ մոտ գործող մոդելների հետ՝ շատ ընդհանրացնող մոտեցումներ ենք տեսնում:

Երկար տարիների աշխատանքի փորձը ցույց է տալիս, որ դասալսումները կարելի է իրականացնել երեք փուլով:

1. Նախնական վերահսկողություն:

Այս փուլում վերահսկողը (դաս լսողը) նախնական զրույց է ունենում ուսուցչի հետ, ծանոթանում դասի կազմակերպման պլաններին, դասագրքերին, ուսուցչի ձեռնարկին, դիտողական, լրացուցիչ նյութերին, ուսուցչի դասավանդման մեթոդներին: Պարզում է աշխատանքում նրան հանդիպած դժվարությունները, դրանց հաղթահարման ուղիները, ծանոթանում դասամատյանի գրանցումներին, աշակերտների գնահատականներին, բացակայություններին, անհրաժեշտության դեպքում իր մոտ նշում լավ և վատ սովորողների ազգանունները: Որոշում է դասալսման նպատակը և դասալսման մասնակիցներին: Ծանոթանում է ուսուցչի թղթապանակին (եթե այն կա):

2. Ընթացիկ վերահսկողություն:

Վերահսկողը, ներկայանալով դասին, պետք է ուշադրությունը կենտրոնացնի հետևյալ հարցերի վրա.

ա) դասասենյակի սանիտարական վիճակին, ջերմային, օդային ռեժիմների պահպանմանը, լուսավորությանը,

բ) դասի կահավորմանը, դիդակտիկ և լրացուցիչ նյութերի օգտագործմանը, նոր տեխնոլոգիաների կիրառմանը,

գ) ինչպիսի՞ն է ուսուցչի մանկավարժական տակտը (խոսքի գրավչությունը, մաքրությունը, հուզականությունը, կեցվածքը, շարժ ու ձևը և այլն),

դ) ուսուցիչն ի՞նչ մեթոդներով է վարում դասը, դասի

վարման ի՞նչ հնարների ու ձևերի է տիրապետում, կարողանու՞մ է ապահովել միջառարկայական կապերը, կազմակերպել կրկնությունները, ապահովել տեսականի և գործնականի կապը,

ե) ուսուցիչն ապահովու՞մ է արդյոք ուսուցանվող նյութի գիտականությունը, մատչելիությունը, ծրագրերին համապատասխանությունը, ի՞նչ դաստիարակչական խնդիրներ է լուծում և այլն,

զ) ինչպիսի՞ն է վարած դասի կառուցվածքը, ժամանակի բաշխումը, տնային աշխատանքների ծանրաբեռնվածությունը,

է) դասի ընթացքում ինչպիսի՞ն է աշակերտների կարգապահությունը, նրանց կողմից իրականացվող ինքնուրույն աշխատանքների (ռեֆերատներ, զեկուցումներ) որակը,

ը) ինչպե՞ս է կատարվում աշակերտների գիտելիքների և հմտությունների ստուգումն ու գնահատումը:

3. Ամփոփում:

Դասալսման վերջին փուլը դասի քննարկումն է:

Ե՞րբ կազմակերպել այն.

ա) անմիջապես դասից հետո, եթե ուսուցիչն ու դաս լսողը զբաղված չեն, կամ եթե ուսուցիչը կոպիտ սխալ է թույլ տվել և պետք է կանխել, որ մյուս դասարաններում նույն սխալը չկրկնի,

բ) դասերի ավարտից հետո, երբ երկուսն էլ ազատ են և կարող են հանգիստ պայմաններում քննարկել դասը,

գ) մի քանի օրից, եթե ուսուցիչը կամ դաս լսողը շատ հուզված են: Այս դեպքում պետք է փորձել հանգստացնել ուսուցչին և քննարկումը կազմակերպել առավելագույն արդյունավետությամբ: Քննարկումը կարելի է հետաձգել նաև այն դեպքում, երբ դաս լսողը վստահ չէ, որ իր կարծիքը ճիշտ է, և կարիք է զգում կրկնել դասալսումը:

Քննարկումը պետք է սկսել՝ նշելով դասի դրական կողմերը, ձեռքբերումները, առավելությունները, որից հետո նոր նշել դասի բացասական կողմերը, վրիպումները, բացթողումները:

Աշխատանքը գնահատելիս չպետք է հենվել միայն աշակերտների լավ կամ վատ գնահատականների վրա, պետք է հաշվի առնել նաև դասարանի առանձնահատկությունները: Թերությունները նշելիս պետք է պահպանել էթիկայի նորմերը, չվիրավորել ուսուցչին նույնիսկ կողմնակի ակնարկներով:

Վերջին հաշվով՝ դասի քննարկումը, մտքերի փոխանակությունը, զրույցը ուսուցչի հետ, կատարած դիտողությունները, առաջարկությունները պետք է օգնեն ուսուցչին վերացնելու նկատված թերությունները և ոչ թե հուսահատության մատնեն նրան:

Շատ կարևոր են կատարած առաջարկությունների և եզրակացությունների համոզիչ լինելը, կոնկրետությունը:

Վերահսկողների տիպիկ սխալներից են, երբ նրանք դասը քննարկելիս պահանջում են, որ ուսուցիչը բոլոր դասերին կիրառի ուսուցման նոր, ժամանակակից մեթոդներ, տեխնոլոգիաներ, ուսուցման տեխնիկական միջոցներ և այլն:

Երբեմն դաս լսողը դասի քննարկման ժամանակ շեշտը դնում է դասի միայն բացասական կողմերի վրա, ընդ որում՝ դա անում է ընդգծված ձևով:

Քիչ չեն դեպքերը, երբ վերահսկողը գտնում է, որ միայն իր իմացածը կամ կատարածն է ճիշտ, պարտադրում է ուսուցչին իր կարծիքը՝ թույլ չտալով նրան ինքնուրույն ստեղծագործել, ունենալ իր սեփական կարծիքը:

Դասի քննարկումը պահանջում է ոչ միայն գիտական վերլուծություն, այլև ուսուցչի հոգեբանական և անհատական առանձնահատկությունների իմացություն:

Մանկավարժության մեջ ընդունված է դասալսումները խմբավորել հետևյալ կարգով:

1. Նախազգուշացումով դասալսումներ:

Դասալսման այս տիպը հիմնականում օգտագործվում է սկսնակ ուսուցիչների մոտ: Այն ուսուցչին հնարավորություն է տալիս խուսափել անակնկալներից: Չնայած ուսուցիչը տեղյակ է դասալսման մասին ներդպրոցական վերահսկողության պլանից, այնուամենայնիվ դաս լսողը մեկ երկու օր առաջ զգուշացնում է ուսուցչին կատարվելիք դասալսման մասին, հայտնում դասալսման նպատակը:

2. Նախապատրաստումով դասալսումներ:

Այս տիպը նպատակ է հետապնդում օգնել ուսուցչին՝ կատարելագործել իր վարպետությունը, բարձրացնել դասի արդյունավետությունը, ճիշտ նախապատրաստվել դասին, ունենալ փորձառու խորհրդատու: Ուսուցիչը նախօրոք վերահսկողի հետ կազմում է դասի պլանը, ընտրում աշխատանքի ձևերն ու մեթոդները, հստակեցնում մասնագիտական ու մանկավարժական պրոբլեմները:

Դրան հաջորդում է դասալսումը, որը քննարկվում է հանգամանորեն, անհրաժեշտության դեպքում՝ համատեղ նախապատրաստվում հաջորդ դասը, կատարվում նոր դասալսում, քննարկում և այլն:

Նման դասալսումներ կարող են կազմակերպվել ուսուցչի խնդրանքով, կամ երբ նրա վարած դասն անհաջող է եղել:

3. Պլանավորված, վերահսկողական դասալսումներ:

Վերահսկողն, առանց ուսուցչին զգուշացնելու, իր պլանի համաձայն իրականացնում է դասալսումը: Սա օգնում է զգուշացնելու ուսուցչին, ստիպելու, որ նա միշտ պատրաստ մտնի դասարան, պարզելու աշակերտների փաստացի գիտելիքների մակարդակը:

4. Թեմատիկ դասալսումներ:

Վերահսկողն ուսուցչի աշխատանքն ավելի մանրամասն ուսումնասիրելու նպատակով իրականացնում է նույն թեմայի կամ ենթաթեմայի երեքից հինգ դասալսում: Այսպիսի ստուգումը հնարավորություն է տալիս պարզել ուսուցչի աշխատանքի ուժեղ և թույլ կողմերը, ինչպես նաև ուսումնասիրել առաջավոր փորձը:

5. Դասալսումներ նույն թեմայով տարբեր ուսուցիչների մոտ:

Դասալսողն այցելում է զուգահեռ դասարաններում դասավանդող տարբեր ուսուցիչների դասերին, ցանկալի է՝ նույն թեմայով: Այս դեպքում օգտակար է դասալսումն իրականացնել զուգահեռ դասարաններում պարապող ուսուցիչների հետ:

Այս տիպի աշխատանքը հնարավորություն է տալիս համեմատել տարբեր ուսուցիչների աշխատանքը, գնահատել ուսուցիչների մանկավարժական վարպետությունը, այս կամ այն մեթոդի արդյունավետությունը:

6. Առանձին դասարաններում համալիր (կոմպլեքս) դասալսումներ:

Վերահսկողը մեկ օրում դասալսումներ է կատարում նույն դասարանում, բոլոր ժամերին, նպատակ ունենալով պարզել տվյալ դասարանի աշակերտների աշխատունակությունը, ակտիվությունը, վերաբերմունքը այս կամ այն առարկայի կամ ուսուցչի նկատմամբ:

Դասալսման այս տիպն օգնում է պարզել, թե ինչո՞ւ առանձին ուսուցիչների մոտ նույն աշակերտները կարգապահ են, կատարում են հանձնարարությունները, որոշակի գիտելիքներ ունեն, մյուսների մոտ՝ ոչ:

7. Նպատակային դասալսումներ:

Իրականացվում են այն դեպքում, երբ դաս լսողը այդ առարկայի մասնագետը չէ, կամ երբ մասնագիտական վեճ է առաջացել ուսուցչի հետ: Վերահսկողը խնդրում է այդ առարկայի փորձառու մասնագետին դասեր լսել: Դասալսումը կարելի է իրականացնել մեկ կամ մի քանի մասնագետների և վերահսկողի հետ համատեղ:

Ի դեպ, եթե մեզ մոտ դասալսում կարող է իրականացնել միայն վերահսկողը, իսկ մյուս ուսուցիչները և ծնողները՝ միայն տնօրենի և ուսուցչի թույլտվությամբ, ապա ԱՄՆ-ում ցանկացած դասի կարող է ներկա լինել ցանկացած ուսուցիչ կամ ծնող՝ առանց թույլտվության: Սա մեծապես բարձրացնում է ուսուցչի պատասխանատվությունը:

Դասալսումը չպետք է լինի ինքնանպատակ. այն պետք է որոշակի նպատակներ հետապնդի: Որպես դասալսման նպատակ՝ կարող են ծառայել հետևյալ հարցերը.

- ինչքանո՞վ է ուսուցիչը պատրաստ օրվա դասին,
- ինչպե՞ս է կազմակերպվում դասի մուտքը,
- ինչպիսի՞ն է դասը հետաքրքիր դարձնելու, աշակերտներին ակտիվացնելու ուսուցչի կարողությունը,
- դիտողական պարագաների, նոր տեխնոլոգիաների օգտագործման արդյունավետությունը,
- ուսուցչի առարկայական, մեթոդամանկավարժական պատրաստվածությունը,
- դաստիարակչական խնդիրների իրականացումը,
- միջառարկայական կապերի և կրկնությունների կազմակերպումը,
- տեսական նյութի գործնական կիրառությունը,
- ուսուցչի կողմից օգտագործվող մեթոդների ու հնարների արդյունավետությունը,
- դասի ժամանակի ճիշտ բաշխումը,
- ուսուցչի տակտը, խոսքի մաքրությունը, գրավչությունը,
- աշակերտների ինքնուրույնության զարգացումը,
- աշակերտների կարգապահությունը,
- գիտելիքների, հմտությունների ու կարողությունների ստուգումն ու գնահատումը և այլն:

Դասալսումների գրանցման տարբեր ձևեր են առաջարկվում: Որպես օրինակ՝ բերեմ դրանցից մեկը: Գրվում է ամսաթիվը, դասարանը, առարկան, ուսուցչի ազգանունը, անունը, աշակերտների թիվը, բացակաների թիվը, դասալսման նպատակը, դասի կահավորվածությունը, մեթոդները, դասի թեման (նախորդ, նոր): Հետո էջը բաժանում են երկու մասի, մի կողմում գրում դասի դրական, մյուսում՝ բացասական կողմերը, կամ ուղղակի նկարագրում դասը:

Հատուկ ուշադրություն է դարձվում աշակերտների ակտիվությանն ու ինքնուրույնությանը, կարգապահությանը, ուսուցչի խոսքի մաքրությանը, մասնագիտական գիտելիքներին, ներառարկայական և միջառարկայական կապերին, տեսական և գործնական գիտելիքների զուգակցմանը և այլն:

Վերջում գրվում է եզրակացությունը, ուսուցչին տրվող հանձնարարություններն ու առաջարկությունները:

Էջի վերջում դաս վարող ուսուցիչը կարող է գրել իր կարծիքը վարած դասի և դասալսման արդյունքների մասին և ստորագրել:

Դասալսման տետրերը պահվում են դպրոցում երեք տարի:

Ամեն դեպքում դասալսումն իրականացնելիս չպետք է վիրավորել, նվաստեցնել ուսուցչին (ինչքան էլ նա սխալվի կամ վատ աշխատի), այլ պետք է օգնել, դուրս բերել ստեղծված իրավիճակից, վստահություն ներշնչել նրան իր ուժերի նկատմամբ:

Հիշենք, որ դասալսումը կարող է դրական արդյունք տալ և օգնել ուսուցչին միայն այն դեպքում, եթե ուսուցիչը զգա, որ իր աշխատանքը վերահսկողը, գնահատողը գիտի իր գործը, օբյեկտիվ է և միայն բարի նպատակներ է հետապնդում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Ս. Խրիմյան, Ար.Հովսեփյան, Մ. Մելքոնյան, Ն. Էլոյան,* Ֆարնուշ Շահրոքի, «Դպրոցի ղեկավարում և կառավարում», ԱՅՈՒԵՔՍ, Երևան 2004թ:
2. *Г. Горская, Р. Чуракова.* “Организация учебно - воспитательного процеса в школе”, Москва, “Просвещение” 1986г.
3. *Е. Березняк.* “Руководство современной школой”, Москва “Просвещение” 1983г.
4. *М. Портнов.* “Труд руководителя школы“, Москва, “Просвещение” 1984г.
5. *П. Худоминский.* “Основы внутришкольного управления”, Москва, “Просвещение”, 1987г.
6. *Г. Сыченкова.* “Вопросы школоведения”, Москва, “Просвещение”, 1982г.
7. *В. Симонов.* “Директору школы об управлении учебно - воспитательным процесом“, Москва, “Просвещение”, 1987г.

LISTENING OF THE LESSONS AS MAIN MEANS OF INTERSCHOOL CONTROL

VARDAN PETROSYAN
*The Director of the Secondary School N 10, Abovyan*

Summary

Interschool control includes all the parts of the teaching-educational process.
One of the forms of such control is listening of lessons; its importance can be hardly overestimated. Scientifically correct and pedagogically motivated listening of the lessons: their preparing, process and analysis can considerably help to increase the efficiency of educational process.

ПРОСЛУШИВАНИЕ УРОКОВ, КАК ОСНОВНОЕ СРЕДСТВО ВНУТРИШКОЛЬНОГО КОНТРОЛЯ

ВАРДАН ПЕТРОСЯН
*Директор средней школы N 10, г. Авовян*

Резюме

Внутришкольный контроль охвативает все стороны учебно-воспитательного процесса. Одной из форм такого контроля является прослушивание уроков, чье значение трудно переоценить. Научно правильное и педагогически обоснованное прослушивание уроков, его подготовка, проведение и анализ, могут значительно содействовать повышению эффективности учебного процесса.

АННА МХИТАРЯН

*Кафедра общей педагогики АГПУ*

# ПЕДАГОГИЧЕСКИЕ УВЛЕЧЕНИЯ СОВРЕМЕННЫХ РОДИТЕЛЕЙ

"Угасание родительской инициативы" - одна из проблем сегодняшнего дня, о которой с тревогой говорят специалисты по работе с семьей. Она выражается в том, что современные родители, в лучшем случае, склонны препоручать образование и воспитание своего ребенка "третьим лицам"; доля времени, посвящаемого ими семейному общению, ничтожно мала; потеряна преемственность в традиции домашнего воспитания, вопросы педагогической культуры лежат вне сферы интересов родителей.

"Как привлечь родителей, заинтересовать их содержанием занятий с детьми?" - это предмет особой заботы и педагогов, работающих с детьми в воскресных школах, в православных группах детских садов. Часто приходится слышать о том, что они сталкиваются со следующей закономерностью: на первое занятие в начале года приходит несколько десятков человек - взрослых и детей, к концу месяца остается 2-3 семьи.

Думается, что было бы неправильно объяснять такое положение дел только "безынициативностью родителей". Необходимо задуматься над тем, какие принципы во взаимодействии с семьями способны сегодня послужить складыванию творческой, взаимообогащающей педагогической среды, а какие дело объединения педагогических усилий семьи и коллектива педагогов губят на корню.

Вглядываясь в современную педагогическую реальность большого города, невозможно не заметить, что, казалось бы, вопреки вышеозначенной проблеме, неформальные родительские объединения составляют ее характерную примету. Они насчитывают тысячи активных последователей по всей стране, которым свойственны и любознательность, и готовность учиться и постигать особенности различных оздоровительных и образовательных систем, практиковать их в занятиях со своими детьми, создавать среду общения семей-единомышленников. По содержанию деятельности, мировоззренческим особенностям они достаточно разнообразны, но фактом остается то, что они оказались способны поддерживать и развивать родительскую инициативу в современном обществе.

Вот наиболее популярные имена, привлекающие сегодня внимание родителей:

Глен Доман - американский врач, названия бестеллеров которого говорят сами за себя, характеризуя основную направленность его системы занятий с детьми дошкольного возраста: "Как дать ребенку энциклопедические знания", "Как обучить ребенка математике", "Как научить ребенка читать".

Примечательно, что под "ребенком" Доман понимает вовсе не того, кто стоит уже на пороге школы, но скорее младенца, т.к. "Легче, - по его словам, - научить читать годовалого младенца, чем шестилетнего, легче научить его математике, а также дать энциклопедические сведения, чем шестилетнему ребенку".

Дает повод для размышления и отношение Домана к понятию "образованность" - по его мнению, "это в принципе сумма трех составляющих: способность читать, способность производить математические действия, запас энциклопедических знаний".

Как бы то ни было, успехи доктора в работе с умственно отсталыми детьми привели, в конечном счете, к рождению программы для здоровых детей. Ей может последовать любой родитель в домашних занятиях - при условии, конечно, что разделяет представление о том, что основные усилия семьи, где растет дошкольник, должны быть сосредоточены именно на интеллектуальном штурме.

Идеи Глена Домана развивает его последовательница из Франции - Сесиль Лупан, автор популярного среди родителей практического руководства по раннему развитию "Поверь в свое дитя".

Следуя ее советам, мамы и папы полуторагодовалых малышей наполняют свой дом, например, множеством карточек. Они "разбросаны в доме то тут, то там и связаны с теми вещами, которые они обозначают: слово "кресло" оказывается на кресле, слово "шкаф" прикреплено к шкафу, когда Галя пьет, я держу перед ее глазами карточку со словом "чашка" - так пишет об этом сама Лупан.

Подобная информация, запечатленная разными способами, определяет основной способ общения между матерью и малышом. Потешки, пестушки, двигательные забавы, первые прибаутки - весь тот драгоценный потенциал народной педагогики, к которому прибегали матери во всем мире, воспитывая своих младенцев, у последователей Домана и Лупан обычно или не пользуется доверием или, чаще, попросту им не известен.

Вера в особые возможности мозга и необходимость их развития с малолетства отличает, отчасти, и систему занятий с детьми такого "патриарха" семейной педагогики, как Борис Павлович Никитин. Примеру и опыту его многодетной семьи следует множество родителей в течение более чем тридцати лет. Интерес к "системе Никитиных" не ослабевает. Она попрежнему вдохновляет родителей использовать преимущества домашнего воспитания детей, обратившись к педагогическому потенциалу семьи.

Дело в том, что, в отличие от западных сподвижников, Б. П. Никитин не придавал интеллектуальному развитию исключительного места, хотя, безусловно, является признанным разработчиком различных уникубов, развивающих таблиц и прочего дидактического материала.

Его "система" предполагает и активную деятельность матери во время беременности, и подготовку к естественным родам, и грудное вскармливание малыша, и использование возможностей закаливания, физического развития ребенка с помощью различных спортивных комплексов, и предоставление ему определенной свободы в "познании мира" ("Кроватка и манеж - способ изоляции от мира, от вещей и познания их свойств... Ползание по комнате, по квартире, по двору - одно из сильных средств развития творческих способностей").

Немалое значение "система Никитиных" придает трудовому воспитанию детей - от самообслуживания, участия в домашних трудах до труда производительного (в школьном возрасте), подмечая его тесную связь

с нравственным становлением человека: "Современная словесно-книжная школа воспитывает пассивного иждивенца-потребителя и создает все трудности морально-этического плана".

Наиболее актуальной в воспитании Борис Павлович Никитин считал задачу развития творческих способностей каждого ребенка до доступных ему высот.

Опыт детей, выросших в семье Никитиных, показывает, что, несмотря на высокий коэффициент интеллектуального развития, который демонстрировали они в школьные годы, никто из них не достиг высот академических. Зато впрямую не декларировавшиеся в книгах Бориса Павловича и Лены Алексеевны традиционные ценности семейной культуры были восприняты при создании собственных семей уже выросшими детьми Никитиных. Многодетность, активная педагогическая позиция родителей, творческая атмосфера свидетельствуют о преемственности жизненных идеалов.

Другим сверхпопулярным увлечением является развивающая программа питерского педагога Николая Александровича Зайцева, которую апологеты обычно лаконично именуют как "Кубики Зайцева".

Метод "Кубиков Зайцева" представляет технологию обучения детей складовому чтению буквально с трехлетнего возраста. По методике Зайцева малыши также знакомятся и с математикой: трехлетки оперируют числами первой сотни, находят любое число на числовой ленте, решают задачи и примеры на сложение и вычитание в пределах ста, пятилетки подходят к умножению и делению, счету в уме, знакомятся с таблицей умножения и, играючи, с помощью числовых карточек и лент, выучивают ее.

Есть еще два имени, пользующиеся авторитетом и популярностью родителей. Это - Мария Монтессори (Монтессори-педагогика) и Рудольф Штайнер (вальдорфская педагогика).

Мария Монтессори (1870-1952) - итальянский психиатр, психолог, педагог. В ходе занятий с умственно отсталыми детьми она разработала и применила разнообразные дидактические материалы, ныне широко известные как "Монтессори-материал". Он служит для "упражнения в практической жизни", развития чувств, родного языка, математических представлений, двигательной активности. Занятия с ним играют важную роль в жизни детей из Монтессори-групп детского сада.

В результате освоения соответствующей развивающей среды ребенок "...застегивает и расстегивает застежки, шнурует и чистит обувь, причесывается, моет руки, стирает, полоскает посуду, гладит. Он аккуратно переливает воду из одного сосуда в другой..., пересыпает зерно из сосуда в сосуд с помощью ложки, успешно работает с пинцетом, с бельевыми прищепками, ножницами, нанизывает бусы различной величины, вышивает на картоне по заданным отверстиям, сортирует природный материал..., правильно режет ножом овощи и фрукты, трет их на терке, оранжирует цветы, кормит животных, полирует металлические предметы, правильно сервирует стол, участвует в приготовлении пищи". (Короче, делает все то, что составляет обычные умения ребенка из семьи, где растет больше одного малыша, - проявляя тем самым необходимую самостоятельность и заботу о братьях или сестрах. Правда, тренировка полезных навыков происходит в этом случае без помощи специального дидактического материала, а как-то само собой, по обстоятельствам многодетной жизни...)

Привлекающим же родителей достижением Монтессори-педагогики в условиях постсоветского детского сада является и то обстоятельство, что к шестилетнему возрасту дети могут достаточно бегло читать, писать, производить сложение и вычитание с четырех-пяти-шестизначными числами. Чтобы попасть трехлетнему малышу в Монтессори-группу детского сада, ему скорее всего предложат пройти собеседование с педагогом и психологом - конкурс составляет несколько человек на место, неизбежен отсев.

"Что это?" - спрашивает психолог трехлетнего мальчика и показывает желтый кружок.

"Солнышко!"- восклицает малыш.

"А это что?" (показывается карточка с изображением квадрата).

"А это - домик... только без крыши" - удивляется малыш.

Вывод психолога: ребенок не знает названия геометрических фигур. Конкурс не пройден, в группу возьмут более "продвинутого" трехлетнего конкурента.

Не трудно увидеть, что все вышеперечисленные увлечения современных родителей более или менее тесно связаны с так называемым направлением раннего интеллектуального развития.

Тенденция к интеллектуализации детства наметилась еще в педагогических опытах начала XX века, что сразу же вызвало обеспокоенность и горячий отклик выдающихся психологов, педагогов, философов.

Достаточно вспомнить протоиерея Василия Зеньковского, который, поднимая проблему "педагогического интеллектуализма", называл основной задачей воспитания "охрану и развитие творческих сил в нас, творческой основы души". Но при этом не связывал источник этой силы с интеллектом, с приобретением знаний:

"Творческие недра души... связаны именно с эмоциональной сферой, откуда и излучается творческая энергия, согревающая и одушевляющая работу ума и нашу активность".

Удивительно актуальным выглядит и осмысление проблемы основного содержания воспитания русским философом Иваном Ильиным, высказанное им в одной из своих последних работ "Путь к очевидности" в двадцатых годах XX века. Он видит ведущую задачу воспитания "...не в наполнении памяти и не в образовании "интеллекта", а в зажигании сердца. Обогащенная память и подвижная мысль - при мертвом и слепом сердце - создает ловкого, но черствого человека. Вот почему образование без воспитания есть дело ложное и опасное..."

Популярную среди многих родителей вальдорфскую педагогику никак не отнесешь к направлению раннего интеллектуального развития. Она привлекает тех из них, кто ищет не схем и методик, но душевной, творческой атмосферы.

Однако за любым творческим педагогическим методом стоит, как правило, некое мировоззрение, своя духовная реальность. В основе вальдорфской педагогики лежит антропософия - оккультно-мистическое учение немецкого философа-мистика Рудольфа Штайнера 1861-1925 . Философ ставил целью воспитания раскрытие "тайных" способностей человека с помощью специальной системы, получившей свое название от школы, открытой в Вальдорфе.

Формально вальдорфская педагогика, как и христианская, строится на принципе приоритета в становлении человека духовного начала, что во многом объясняет тяготение к ней родителей, не равнодушных к поиску истины, испытывающих духовную жажду.

Вальдорфская педагогика, по ряду причин, остается весьма популярным увлечением. С вальдорфской педагогикой современные родители знакомы гораздо лучше, нежели со своей родной, традиционной.

Для многих детей и их родителей первое знакомство с материальной, песенной и игровой культурой своего народа происходит именно в таком, вальдорфском варианте. Чрезвычайно привлекательна для многих и система творческих занятий с детьми - элементы рукоделия (вышивание, прядение, ткачество, плетение, резьба по дереву и пр.), живописные этюды, арфы, флейты...

Однако вовсе не задача укрепления в ребенке чувства причастности к духовной, моральной, художественной отечественной традиции ставилась Штайнером при создании вальдорфской эстетики. Он полагал, что развитие в ребенке тонкой художественной чуткости, соединенной с сосредоточенностью глубокой натуры, является лучшим предварительным условием для пробуждения оккультных способностей человека.

В заключение отмечу и некоторые общие актуальные принципы, отличающие взаимодействие с семьями в практике востребованных родителями "педагогических систем", на которые стоит обратить внимание:

- единство и согласованность представлений о целях воспитания (развития) и реально способствующих тому методах между семьей ребенка и педагогическим коллективом;
- отношение к семье, как к "заказчику" педагогического процесса и отчетность перед ней (распространенная печальная альтернатива - педагогический снобизм, назидательный тон в отношении с родителями);
- привлечение родителей к деятельному участию в занятиях, праздниках, изготовлению необходимых материалов на основе их личной в том заинтересованности (значит, цели, методы и виды деятельности должны быть предметом активного родительского интереса, обеспечивать возможность раскрытия творческого потенциала не только детей, но и взрослых);
- открытость занятий для посещения родителями (родители всегда будут там, где в качестве ведущих выбраны диалоговые, интерактивные, личностно-значимые, подходы, и их не будет там, где царит скука или, напротив, двери перед семьей закрыты педагогическими амбициями - мол, мы тут специалисты, знаем, что делаем, а эти тревожные, обеспокоенные родители только мешают процессу);
- предоставление возможности подробного ознакомления с особенностями педагогической системы, личного совершенствования в ее использовании для домашних занятий с ребенком (консультации, тренинги, семинары, беседы на актуальные темы);
- доброжелательность и опора на положительное начало в ребенке, его добрые качества и поступки (любовь, а не ежедневная или еженедельная пулеметная очередь" - констатация перед родителями того, что тот на сей раз "натворил").

Аналитическое отношение к опыту различных родительских объединений может помочь педагогам, стремящимся к активному взаимодействию с семьями, в решении как минимум двух задач:

- методическая задача состоит в выявлении ценных, востребованных родителями форм и методов работы, на которые можно опереться в педагогической практике, а также в выработке ряда принципов эффективного взаимодействия воспитателей и семей;
- просветительская задача состоит в готовности педагога к обсуждению с родителями позитивных и негативных особенностей той или иной педагогической системы с позиций возрастной психологии и педагогики, христианской антропологии.

## ЛИТЕРАТУРА

1. *Доман Г.* и *Д. Дошкольное* обучение ребенка/ Пер. с англ. - М.: Аквариум, 1995.
2. *Лупан С.* Поверь в свое дитя. - М.: Эллис Лак, 1993.
3. *Никитин Б. П.* Интеллектуальные игры. - М.: "Лист-Нью", 2004.
4. *Зайцев Н. А.* Письмо.Чтение. Счет. Учебник нового типа для учителей, воспитателей, родителей. Санкт-Петербург, Лань, 1997.
5. *М. Монтессори.* Помоги мне это сделать самому/ Л. Гребенников. Как правильно пользоваться Монтессори-материалом. - М.: Изд. дом "Карапуз", 2004.
6. *Зеньковский В. В.* О педагогическом интеллектуализме *Зеньковский В. В.* Психология детства. М.: Школа-Пресс, 1996. С. 328 - 329.
7. *Ильин И. А.* Собр. соч. в 10 т. М.:Русская книга, 1994. Т. 3. Стр. 409.
8. См. *Зеньковский В. В.* Проблемы воспитания в свете христианской антропологии. М:, 1993.

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԾՆՈՂՆԵՐԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՆՆԱ ՄԽԻԹԱՐՅԱՆ
*ՀՊՄՀ*
*Ընդհանուր մանկավարժության ամբիոն*

Ամփոփում

Այսօր մասնագետները տագնապով են խոսում այն մասին, որ ժամանակակից ծնողներն իրենց երեխաների կրթությունն ու դաստիարակությունը հակված են դնել այլ անձանց ուսերին: Բոլոր ժամանակների գիտնականներն առաջարկում են ավանդականից տարբերվող այլընտրանքային կրթական համակարգ, որտեղ նախապատվությունը տրվում է երեխայի ստեղծագործական ունակությունների զարգացմանը և մարդու հոգևոր կայացմանը:

## CURRENT PARENTS PEDAGOGICAL INTERESTS

ANNA MKHITARYAN
*Chair of General Pedagogy*
*SPUA*

Summary

Today the specialists are discomposed that the parents nowadays heap their children's education and upbringing onto other's shoulders. The scientists of all the times offer an alternative educational system differing from the traditional one where the development of the child's creative abilities and the person's spiritual formation are prefered.

ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ

# ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆԸ ԻԲՐԵՎ ԽՈՍՔԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՐԵՎՈՒՅԹ

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

Լեզվի և խոսքի խնդիրը, որը Ֆերդինանդ դը Սոսյուրը տարբերակել է որոշակի հստակությամբ, թվում է, թե նույնպես սկիզբ է առնում Վ. Հումբոլդտի տեսական ժառանգությունից, ինչպես ընդհանուր լեզվաբանական բազմաթիվ խնդիրներ, այնքանով, որքանով նրա չորրորդ և հինգերորդ անտինոմիաները ուղիներ են բացում նման մոտեցման համար: Ըստ Հումբոլդտի՝ «հավասարապես ապացուցելի են՝

ա) և՛ այն, որ լեզուն ասվող մի բան է, տվյալ անհատի կողմից տվյալ պահին ստեղծագործվող մի բան (խոսք՝ Ա. Հ), և՛ այն, որ լեզուն ստեղծագործված մի բան է, նախորդ սերունդների գործունեության արդյունք, ավանդույթ (լեզու՝ Ա. Հ.),

բ) և՛ այն, որ լեզուն օբյեկտիվ էություն է, որ անհատի կողմից ընկալվում է որպես նրանից դուրս գտնվող, նախորդ սերունդներից ժառանգված, օտար մի բան (լեզու՝ Ա. Հ), և՛ այն, որ լեզուն սուբյեկտիվ էություն է, որ ստեղծագործվում է իր իսկ անհատի կողմից (խոսք՝ Ա. Հ.)»[1]: Երկու անտինոմիաներում էլ լեզու տերմինի բազմիմաստության առումով իսկապես հակասություն և «աղմուկ» է առաջանում իմացության ոլորտում: Ընդ որում, ականավոր լեզվաբաններից մեկը՝ Հումբոլդտը, մատնանշում է նկատած իմացաբանական հակասությունը, մյուսը՝ Սոսյուրը, լուծում է այն՝ մարդու խոսքային գործունեությունը երկատելով լեզու և խոսք բինոմին: Իսկապես, եթե սոսյուրյան երկատումը զետեղում ենք վերը նշված հումբոլդտյան անտինոմիաներում, հակասությունը տեղի է տալիս լեզվի և խոսքի խոր, լեզվափիլիսոփայական բնութագրությունների առաջ[2]:

Սրանից բխում է մի կողմից՝ լեզվի և խոսքի հակադրումը, որն ավելի հստակ ձևով տեսնում ենք Սոսյուրի մոտ, մյուս կողմից՝ այն, որ եթե լեզուն միաժամանակ և՛ հասարակական է, և՛ անհատական, ապա խոսքը միանշանակ անհատական է:

Այսուհանդերձ 20-րդ դարի լեզվաբանության հայրը՝ Ֆ. դը Սոսյուրը, իր իսկ նախանշած Լեզվաբանության արշալույսին լեզու/խոսք երկատմամբ բանադրանք (անաֆեմա) դրեց խոսքի և նրա ուսումնասիրության հեռանկարի վրա՝ այն դուրս բերելով լեզվաբանական գիտության հետազոտելի հարցերի շրջանակից և հայտարարելով արտալեզվաբանական խնդիր:

Հայտնի են նաև հանգամանքները, որոնք պայմանավորեցին Սոսյուրի այդ քայլը: Լեզվաբանական գիտությունը շատ խայտաբղետ էր դարձել բազմաթիվ «-իզմ»-երի առատությունից՝ երիտքերականություն, փսիխոֆիզիոլոգիզմ, էթնոփսիխոլոգիզմ, փսիխոլոգիզմ, լոգիցիզմ, կուլտուր-անտրոպոլոգիզմ, էսթետիզմ և այլն, որոնց ներկայացուցիչները զբաղված էին լեզվի պատմական հարցերի կամ լեզվի և հասարակական մյուս ինստիտուտների փոխհարաբերության և առնչությունների ուսումնասիրությամբ, իսկ բուն լեզվաբանական խնդիրները գիտնականի կարծիքով մնացել էին ստվերում:

Սոսյուրյան հայտնի երկատումները այնպես էին կազմված, որ նրա եզրերից մեկը հիմնականում դիտվում էր ներլեզվաբանական, իսկ մյուսը՝ արտալեզվաբանական խնդիր: Ճիշտ է, կառուցվածքային լեզվաբանական ուղղությունները շուտով Սոսյուրի կողմից արտալեզվաբանական հայտարարված խնդիրների մի մասը մեկիկ-մեկիկ վերադարձրին լեզվաբանության ոլորտ (դրանցից էին լեզվական նշանից փոքր միակողմանի միավորների ուսումնասիրությունը, լեզվի տարժամանակյա ուսումնասիրությունը ի շահ համաժամանակյա ուսումնասիրության, վերջապես՝ խոսքի ուսումնասիրությունը և այլն), այնուամենայնիվ նման թեմատիկ սահմանափակումներից հետո լեզվաբանական գիտությունը իսկապես հնարավորություն ստացավ ծավալվել հետազոտական ավելի նեղ ճակատով, որի հետևանքով ձևավորվեց և աննախադեպ զարգացում ապրեց կառուցվածքային նկարագրական լեզվաբանական դպրոցն իր մի շարք ուղղությունների ցանցով, որի հետևանքով «լեզվաբանությունը հետազոտության մեթոդներ ներմուծող գիտությունից վերածվեց մեթոդներ արտահանող գիտության»:

Այսպիսով, ինչպես արդեն նշվեց, սոսյուրյան լեզու/խոսք երկատմամբ խոսքի ուսումնասիրության ոլորտը հռչակվեց արտալեզվաբանական խնդիր, և եվրոպական լեզվաբանները բավական երկար ժամանակ իսկապես չէին հետաքրքրվում նրա ուսումնասիրությամբ:

Սրան հակառակ՝ ամերիկյան լեզվաբանությունը, հատկապես Յել համալսարանի թևը, գործում էր այնպիսի աննախադեպ պայմաններում, որ ստիպված էր խոսքի կրկնվող հատվածների քայլ առ քայլ արձանագրումով բխեցնել նրա նյութական իրակությունների լեզվական-մտային կառույցները՝ հնչույթ, ձևույթ, բառ և այլն: Ուստի ճիշտ է, որ ամերիկյան նկարագրական լեզվաբանության ընդերքում հետզհետե «հասակ առավ» խոսքի լեզվաբանությունը կամ այն, ինչը պայմանավորեց այդ լեզվաբանությունը (Սեպիր, Նայդա, Հարրիս, Հոքետ, Բլումֆիլդ, Սեբեոկ և այլք), քանի որ իրո՛ք տարբեր են կրկնություններն իբրև խոսքում հանդիպող և դրանով լեզվաբանի համար մի անծանոթ լեզվի տարբեր մակարդակային միավորների ինքնությունը փաստող միջոց և կրկնություններն իբրև երկխոսության կառուցվածքում խոսողի կամ ունկնդրի խոսքում լեզվական, բայց հաճախ նաև արտալեզվական իրողություններ շեշտող, նույնականացնող կամ մի որևէ այլ գործառույթ դրսևորող երևույթ:

Հարց է բարձրացվել, թե ինչու լեզվաբանության մեջ բավականին ուշացավ կրկնության ամբողջական ընկալումը որպես համակարգային ուսումնասիրության խնդիր հանդիսացող ընդհանրական փաստ: Մյուս կողմից՝ լեզվի տարբեր մակարդակներում և ոլորտներում՝ հնչութային, ձևույթային, նշանային, ստորոգական, իմաստաբանական և այլն, ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր խոսքում հանդես եկող միավորների և կառույցների կրկնությունն այնքան բազմազան և ցրիվ երևույթ է, որ հասկանալի է դարձնում անցյալում իր ամբողջականության մեջ նրա համակարգային ուսումնասիրությանը դիմելու սակավաթիվ փորձերը, թեև կրկնության առանձին գոր-

ծառույթների ուսումնասիրությանը հաճախ են դիմել ինչպես հայրենական, այնպես էլ արտասահմանյան լեզվաբանության մեջ:

Մինչ 20-րդ դարը եղած ոճաբանական, փիլիսոփայական և լեզվաբանական հետազոտություններում կրկնությունները մի կողմից դիտվել են իբրև ոճի անհարթություն և ոչ ավելին, և բնական է, որ երբեք փորձ չի արվել քիչ թե շատ ամբողջական մի հետազոտությամբ պարզելու նրանց ընդհանրական էությունը:

Եթե հաշվի չառնենք այն դեպքերը, որոնք բնութագրվել են իբրև տեքստի ոճական թերություններ, ապա կրկնությունը հին և նոր ճարտասաններին և լեզվաբաններին հետաքրքրել է որպես խոսքային կամ լեզվական կառույց, որը մեծ մասամբ շեշտադրում, ընդգծում և նույնականացում է արտահայտում: Քանի դեռ ուսումնասիրվում են խոսքում կրկնվող տարբեր հատույթների բազմություններ, կրկնությունը՝ իբրև այս ամենի ընդհանրացում (հիպոնիմ) և վերացարկում, Եսպերսենի բնութագրմամբ՝ հանդես է գալիս որպես *թաքնված կարգ*[3]: Ոչ միայն առաջին հայացքից ընդհանուր հայտարարի չեկող դեպքերի բազմազանության, այլև լեզվաբանության զարգացման տարբեր էտապներում երևույթի միասնական ընկալմանը խանգարող գիտական տարբեր անվանումների, եզրույթների, նաև նրա բազմաթիվ դրսևորումների բազմազան դասակարգումների առկայության պատճառով՝ բաղաձայնական կրկնություններ (ալիտերացիա), շրջում (ինվերսիա), կրկնաբանություններ (տավտոլոգիա), հոմանիշություն և այլն:

Հետազոտողներն ինչ-ինչ պատճառներով հավանաբար ունեցել են դրանք միմյանց հետ հարաբերելու օբյեկտիվ հնարավորության պակասություն, որպեսզի լուսավորեին երկու բավականին տարբեր համարվող երևույթների միմյանց միտված «ընդհանրացնող տեղաշարժը» մեր գիտակցության մեջ: Ուստի մինչև լեզվաբանության երրորդ շրջանի զարգացումը կրկնության երևույթների ուսումնասիրման սակավաթիվ դեպքերը չի կարելի համարել համակարգային:

Կրկնվող երևույթների առավել արդյունավետ համադրում տեղի ունեցավ 20-րդ դարի լեզվաբանության շրջանում, երբ կառուցվածքային ոճաբանությունը հետաքրքրվեց պոեզիայի հիմնական տարր համարվող կրկնության ձևերից մեկով՝ զուգահեռայնությամբ (կառուցվածքային կրկնություն կամ պարալլելիզմ) (Յակոբսոն)[4]:

Հետագայում, երբ նախադասության դիտարկումը իբրև վերլուծության միավորի հասավ «չարաշահման» աստիճանի, լեզվաբանության շրջանակները հետզհետե ընդլայնվեցին դեպի հաղորդակցություն, որի հետևանքով կրկնությունը լեզվաբանությանը վերջապես սկսեց հետաքրքրել համակարգայնորեն:

Տեքստի լեզվաբանության զարգացման հետ լեզվաբանների ուշադրությունը բևեռվում է տեքստերի, նրանց կազմության և հատկանիշների վրա: Տեքստայնության բաղկացուցիչ կողմ դիտվող կապակցման գործոնը կենտրոնական տեղ է զբաղեցնում տեքստի լեզվաբանության ուսումնասիրություններում, իսկ կապակցման ամենակարևոր ձևերից մեկը կրկնությունն է: Կրկնության երևույթի նկատմամբ շատ մեծ հետաքրքրություն են ցուցաբերում խոսքի (discourse analyses) և զրույցի (conversation analyses) վերլուծության ուղղությունները՝ դեպի տեքստային լեզվաբանություն և գործաբանություն տանող զուգահեռներով: Այս ուղղությունները տարբեր տեսանկյուններից հետևողականորեն զբաղվում են հաղորդակցության հիմնախնդրով ընդհանրապես՝ իր սերող և միջավայրային հանգամանքներով հանդերձ, բայց ոչ լոկ լեզվով, քանի որ լեզուն արտաքնապես մեկուսացված է դրանցից: Իրար հետ կապված այդ երկու ուղղություններն ուսումնասիրում են խնդրի յուրահատկությունները մինչև բնական սպոնտան բանավոր հաղորդակցություն՝ ցուցադրելով նրա կառուցվածքային խորությունը և ձևավորելով այն արժևորող կանոնները: Բանավոր խոսքում հանդիպող բազմազան ու բազմաթիվ կրկնվող կառույցները մեզ դրդում են դիտել կրկնություններն իբրև հաճախադեպ և կարևոր գործառույթներ ունեցող մի ինքնատիպ մակրոերևույթ:

Խոսքի վերլուծություն (discourse analysis) տերմինը վերաբերում է լեզվաբանության յուրահատուկ, հիմնականում տարտամ ու անորոշ սահմաններ ունեցող մի ընդարձակ երևույթի, որի ուսումնասիրողները հազվադեպ են միանման մոտեցումներ դրսևորում, քանի որ այն կապված է միմյանց հետ սերտաճած այնպիսի ոլորտների հետ, ինչպիսիք են գործաբանությունը, տեքստային լեզվաբանությունը և հանրալեզվաբանությունը:

Այս մոտեցումները բնութագրվում են մեկ ընդհանուր տարրով՝ լեզվական միավորների բացատրության մեջ արտալեզվական միջավայրի ներառմամբ, որի բացահայտումը բոլորի գլխավոր նպատակն է: Դեռ Հերման Պաուլը լեզվի կյանքը, օրինակ, տեսնում էր անհատների հաղորդակցության մեջ, ուր անհատական տարբերությունները (խոսող-խոսակից՝ Ա. Հ) հաղորդակցման գործընթացում հարթվում են: Հաղորդակցումը երկկողմանի գործընթաց է, ուստի նախադասության սահմանման ժամանակ լեզվաբանը միաժամանակ հաշվի է առնում և՛ խոսողի, և՛ խոսակցի դերակատարումները. «Նախադասությունը լեզվական արտահայտությունը կամ խորհրդանիշն է այն բանի, ինչը խոսողի հոգու մեջ ստացվել է մեկից ավելի պատկերացումների կամ դրանց խմբերի կապակցությունից, և դրդիչն է այն բանի, որ լսողի հոգում առաջացնի նույն պատկերացումների կամ դրանց խմբերի նույն կապակցությունը»[5]:

Լեզվաբանական հետազոտական շատ դպրոցներ զարգացել են՝ կարծես նպատակ ունենալով չեզոքացնել արտալեզվական միջավայրի գործոնների ազդեցությունը հաղորդակցության կազմակերպման վրա: Սակայն խոսքաշարի բովանդակությունն ամբողջովին ի հայտ է գալիս այն ժամանակ, երբ ուսումնասիրողներն սկսում են գիտակցել, որ իմաստներ արտահայտող լեզվական կառույցների հարաբերությունները չեն բավարարում վերլուծության պայմանները՝ ինչպես ձևաբանաշարահյուսական, այնպես էլ իմաստագործաբանական տեսանկյունից: Մինչդեռ կրկնությունների տարբեր օրինակներ հիմք են դառնում բավական տարբեր հետազոտական մոտեցումների ստեղծման համար, որոնք, վերջին հաշվով, միմյանց փոխադարձորեն լրացնում են: Նրանց անվանումները շատ են, բայց և ուշադրության արժանի, քանի որ բոլորն էլ լեզուն դիտում են իբրև հաղորդակցման լայն երևույթ:

Գործաբանության (պրագմատոլոգիա) զարգացումը նախորդում է այս ասպարեզի հետ կապված մյուս բոլոր ուղղություններին: Ընդունված է նշել, որ առաջինը Մորիսն[6] է զբաղվել լեզվի նշանների և նրանց օգտագործողների հարաբերություններով, քննել նշանների և նպատակների հարաբերությունները վերաբերյալների հետ. դա վերաբերում է նշանաբանության ոլորտին ընդհանրապես[7]: Սակայն իր զարգացման համար գործաբանությունը պարտական է մի շարք տեսաբանների և այն հետաքրքրությանը, որ նրանք առաջացրին, որպեսզի ցուցադրեն լեզվի օգտագործումը իբրև բանալի՝ նրա իսկ բնությունը բացահայտելու նպատակով (Օստին[8], Սիրել[9] և Գրայս[10]): Այս ոլորտ մուտք գործեցին նաև սերող իմաստաբանությամբ զբաղվողները, երբ արտալեզվական միջավայրից դուրս նախադասության ունեցած

բովանդակությունը փորձեցին հարստացնել Խոմսկու[11] տեսությամբ (standard Theory)՝ լրացնելով այն դեպի ներլեզվական միջավայր և լեզվական իմաստային համալրում կատարած վերադարձով, այսինքն՝ լեզվակիրարկմամբ (ուզուսով)[12]:

Ժամանակակից գործաբանության մեջ մասնագետները կարևորում են երկու հիմնական խնդիր.

ա. խոսողի տեսանկյունից ուսումնասիրել ասույթների խոսքային (բառային) ազդեցությունները,

բ. լսողի տեսանկյունից որոշել և դասակարգել խոսողի արտահայտությունը՝ խոսքից բխող վարկածները բացատրելու նպատակով:

Գործաբանական հետազոտությունները հիմնականում արվում են մեկուսացված, անջատ արտահայտությունների, ինչպես նաև վարկածների հիման վրա[13]: Ինչ վերաբերում է վերոհիշյալ երկու խնդիրների հաջողակ զուգադրմանը, ապա այն դիտարկվում է Գրայսի նշված աշխատության մեջ:

Գործաբանությունից զգալիորեն տարբերվող, թեև նույն ժամանակաշրջանում զուգահեռաբար զարգացած մի այլ ուղղության՝ հանրալեզվաբանության համար արտալեզվական միջավայրի ըմբռնումը կապվում է լեզվի ներսում արտացոլվող և վերարտադրվող այնպիսի հասարակական գործոնների հետ, ինչպիսիք են հասարակական շերտավորումը, տարիքը, սեռը, ռասան, գաղափարախոսությունը և այլն: Լաբովի[14] վերլուծության հիմնական կաղապարը, որն ուսումնասիրում է լեզվի տարբերակային մոտեցումները, ձևավորվում է համակարգի մի որևէ կոնկրետ՝ հնչյունային-հնչութաբանական, ձևաբանական, շարահյուսական ոլորտի լեզվական բազմությունների մակրոսկոպիկ մակարդակներում, որը վերաբերում և ուսումնասիրում է նրա սոցիալական և լեզվական հատկանիշների փոփոխությունները:

Հանրալեզվաբանությունը մի քանի ուղղություններ է ներառում, ինչպես *հաղորդակցման ազգագրությունը*[15], խոսքի վերլուծությունը: Դրանք լուրջ մերձավորություն ունեն միմյանց (տե՛ս Թեյլոր և Կամերոն[16], քանի որ երկուսի միջակայքում է գործում ավելի ուշ ստեղծված խոսքի քննական վերլուծությունը (critical discourse analysis), որը, ըստ Ֆայրկլուհի, ուսումնասիրում է, թե բնագրերում ու խոսքում ինչպես են արտադրվում ու վերարտադրվում սոցիալական պրակտիկայի գերակայության և հասարակական սահմանման հատկանիշների առանձնահատկությունները[17]: Ինչպես նշում է Ստաբսը, «Լեզվի և հասարակության միջև գոյություն չունեն այնպիսի մակրոսկոպիկ հարաբերություններ, որոնք գոնե մասնավորապես չիրականանան լեզվական փոխազդեցության բովում»[18]:

Տեքստի լեզվաբանությունը ավելի խորքային է վերլուծում զրույցը, քան մյուս ուղղությունները: Հետազոտողներից մեծ մասի համար[19] այն դառնում է խոսքի վերլուծությանը հետևող երկու հիմնական ուղղություններից մեկը: Երկու մոտեցումներն էլ պայմանավորված են նախադասության՝ իբրև վերլուծության միավորի գերբեռնվածությամբ, ուստի հասկանալի է դառնում, որ նրա մեկնաբանման համար անհրաժեշտ է թափանցել ոչ միայն ներլեզվական, այլև արտալեզվական լայն բնագավառներ (co-text):

Նրանց ընդհանուր առարկան է հանդիսանում կենդանի շարունակական խոսքը, այսինքն՝ լեզվակիրառման բազմաքանակ օրինակները, ինչպես նաև այն առանձնահատկությունների ընդհանուր հարցերը, որ ունի խոսքը իր պարունակած երևույթների համեմատությամբ (անհատական արտաբերություններ):

Դրանց տարբերությունները սկիզբ են առնում «ներլեզվական» ոլորտի նկատմամբ տարբեր մոտեցումներից, որոնք տանում են վերլուծության այլ թեմաների ընդգրկմանը: Տեքստի լեզվաբանությունը հետաքրքրվում է նախ և առաջ՝ ներլեզվական ոլորտով, որը «տեքստ» է կազմում հենց իբրև խոսողի կողմից արտաբերված ծավալուն խոսքի հատված, ապա՝ զրույցի վերլուծությամբ, որը «երկխոսություն» է կազմում տարբեր խոսակիցների կողմից խոսքի փոքր հատվածներ արտաբերելու առումով:

Սպեկտրի երկու կողմերում զետեղված են մի կողմից՝ գրավոր տեքստը, մյուս կողմից՝ սպոնտան բանավոր երկխոսությունը: Տեքստի լեզվաբանության հետազոտությունների կենտրոնը կազմվում է տեքստի ինքնուրույն ամբողջության մեջ գտնվող հատկանիշների, ինչպես նաև նրանց գործունեության ուղիների բացահայտումից:

Ոմանց համար բավարար է համապատասխան շարահյուսական կառույցով մեկ տեքստային քերականության ձևավորումը (Պետյոֆի[20], Վան Դեյկ[21]), այլոց համար այդ հատկանիշները նկարագրվում են միասնականություն ընդհանուր հասկացությամբ[22], երրորդների համար՝ որոշ կաղապարներում տեքստն ընդլայնվում է գործառույթների բազմազանությամբ, որոնք իրենց ոլորտ են ներառում նաև արտալեզվական միջավայրը[23]: Տեքստային լեզվաբանությանն են վերաբերում նաև այն հետազոտությունները, որոնք առնչվում են տեքստից բխող մշակութային որոշակի սպասումներին, իրենց կազմակերպմամբ արտացոլվող սահմանմանը և ֆունկցիոնալ նշանակությանը[24]:

Հարցը, որին պետք է պատասխանի տեքստի լեզվաբանությունը նախադասության գերբեռնումից հետո, այն է, թե՝

- ինչի վրա է հիմնվում «տեքստի» կառուցվածքը,
- ինչպիսի հարաբերություն ունի տեքստի լեզվաբանությունը մի կողմից՝ իր վրա հիմնվող միավորների հետ (նախադասություն-բացականչություն), մյուս կողմից՝ ներլեզվական միջավայրի (կապակցվածության) և վերջապես՝ արտալեզվական իրականության հետ ընդհանրապես (տեքստայնության կոնկրետ բաղադրիչներ, տեքստի տեսակներ): Կարծում ենք, որ նույնպիսի հարցերի կբախվի նաև զրույցի վերլուծությունը՝ կապված իր ուսումնասիրության առարկայի հետ:

Այսպիսով, մեր հետազոտության նպատակն է հաղորդակցման գլխավոր կառույցի՝ երկխոսության մեջ ուսումնասիրել կրկնության կոնկրետ դրսևորումները և պարզել, թե՝

- որո՞նք են նրան բնութագրող չափանիշները,
- որքա՞ն և ի՞նչ ձևեր կարող է ստանալ այն,
- որքա՞ն և ի՞նչ գործառույթներ է իրականացնում և ինչպե՞ս:

Բուն աշխատանքի մեջ կներկայացնենք մեր դիրքորոշումը խոսքի վերլուծության շուրջ ձևավորված տեսական մոտեցումների նկատմամբ, որը բավական հարուստ է իր իմաստաբանական և մեթոդաբանական դաշտի շնորհիվ, և որը սերտ կապված է զրույցի (դիսկուրս) վերլուծության ոլորտի հետ: Միաժամանակ կպատճառաբանենք նյութի ընտրությունը, որի դերում կարող է հանդես գալ ինչպես արվեստական, նույնպես էլ բնական բանավոր երկխոսությունը:

Մեր մոտեցումը կրկնությանը չի կարող լինել ընդհանրական. հաշվի կառնվեն լեզվաբանական կարգերը, կընդգծվեն որոշ ընդհանրացումներ՝ կապված այն բանի հետ, թե ինչպես է ընդունված երևույթը յուրաքանչյուր առանձին ուղղության մեջ, և նրանցից ամեն մեկը կրկնության ո՞ր հատկությանը, ձևին կամ ֆունկցիային առավել կարևորություն է տվել:

Կարևոր ենք համարում խոսքի մեջ կրկնության ի հայտ գալու պատճառների, նրան բնութագրող հատկանիշների և նրա ձևավորման վրա ազդող գործոնների

պարզաբանումը: Կփորձենք քննարկել նաև, թե՝

- ի՞նչ է ներկայացնում կրկնությունն իրենից,
- արդյո՞ք նրա վերը նշված հատկանիշները կարող են արտահայտվել նույն կամ այլ խոսողի կողմից,
- լեզվի կառուցվածքային ո՞ր միավորները կարող են կրկնվել,
- ի՞նչ միջատարածք (դիստանցիա) կա նրանց միջև,
- արդյոք գոյություն ունի՞ կրկնությունների բարձր հաճախականության կոնկրետ ցուցիչ, որը կլուսաբանի, թե կրկնությունը ի՞նչ ձևեր կարող է ընդունել՝ կապված իր դերակատարության հետ:
- ի՞նչ տիպի ինֆորմացիա է կրում կրկնությունը բնական երկխոսությունում. կրում է այն իմացաբանակա՞ն, թե՞ փոխազդեցական ինֆորմացիա,
- ո՞րը չափով է այդ ինֆորմացիան (ազդեցությունը) բխում մասնակիցներից, նրանց հաղորդումից կամ արտալեզվական իրականության հետ նրանց ունեցած հարաբերություններից:

Վերջում հնարավորություն կունենանք զրույցի մեջ կրկնության արտահայտած գործառույթները ներկայացնել իմաստաբանական դաշտի տեսքով՝ իր միջուկային, միջուկամերձ և ծայրամասային ոլորտներով, որոնք կլուսաբանեն երկու հնդեվրոպական ոչ այնքան մերձավոր ցեղակցություն ներկայացնող հայերեն և հունարեն լեզուների զուգադրման առնչությունները:

---

[1] *Գ. Բ. Ջահուկյան,* Լեզվաբանության պատմություն, հատ. 1, էջ 329-330,. Երևան, ԵՊՀ հրատ. 1960թ:

[2] Լեզվաբանության, ինչպես և ցանկացած գիտության զարգացման ընթացքում նման երևույթները հազվադեպ չեն: *Հ. Պաուլը* նման հակասություն է համարում այն, որ համանուն (homonyme) տերմինը միավորում է միմյանցից էականորեն տարբերվող լեզվական երկու երևույթ, որոնք նա նկարագրեց, սակայն տերմինաբանորեն չտարանջատեց, մի բան, որով ավելի ուշ հանդես եկան այլ լեզվաբաններ՝ շրջանառության մեջ դնելով մի նոր տերմին՝ բազմիմաստությունը (polyse'mie) H. Paul. Principen der Sprachgeschichte, Y/5/ Aufl, Halle, 1937/:

[3] *Есперсен О.,* Философия грамматики, М., 1958.

[4] *Jakobson Roman* 1960 "Linguistics and Poetics", T.A. Sebeok "Style in Language". Cambridge, Mass.:The M.I.T. Press. 350-377 [Jakobson 1981b(SWIII), 18-51

[5] *H. Paul,* Prinzipen der Sprachgescichte, 5 Aufl, Halle, 1937, page 176

[6] *Morris C. W.* 1938: Foundations of the Theory of Signs. O. Neurath, R. Carnap and *C. Morris:* International Encyclopedia of United Science. Chicago: University of Chicago Press, 77-138

[7] *Levinson Stephen* 1983: Pragmatics. Cambridge textbook in Linguistics, Cambridge: Cambridge University Press.

[8] *Austin J. L.* 1962: How to do things with Words. Oxford: Clarendon Press.

[9] *Searle John R.* 1976: "A classification of illocutionary acts". Language in Society 5, 1-23.

[10] *Grice H. Paul* 1975: "Logic and Conversation". P. Cole, J. Morgan, Syntax and Semantics 3: Speech Acts. New York: Academic Press, 41-58.

[11] *Chomsky Noam* 1965: Aspects of the Theory of Syntax. Cambridge, Mass.: The M.I.T. Press.

[12] *Levinson Stephen* Pragmatics. Cambridge textbook in Linguistics, 1983:35-36.

[13] *Schiffrin Deborah* 1987: Discourse Markers. Studies in Interactional Sociolinguistics 5, Cambridge. Cambridge University Press.

[14] *Labov William* 1972: Sociolinguistics Patterns. Oxford: Basil Blackwell.

[15] *Hymes Dell* 1972: "Models of Interaction of Language and Social Life". J.J. Gumperz, D.H. Hymes, Directions in Sociolinguistics: The Ethnography of Communication. New York: Holt, Rinehart & Winston, 35-71.

[16] *Taylor Talbot J.,* Cameron Deborah 1987: Analyzing Conversation. Oxford: Pergamon Press.

[17] *Fairclough Norman L.* 1989: Language and Power. London/ New York: Longman.
*Fairclough Norman L.* 1992: Discourse and Social Change. Cambridge: Polity Press.
*Fairclough Norman L.* 1995: Critical Discourse Analysis. London: Longman.

[18] *Stubbs Michael* 1983: Discourse Analysis. The Sociolinguistic Analysis of Natural Language. Language in Society 4, Oxford: Blackwell.

[19] *Լևինսոն* 1983, գլ. 6, Ստաբս 1983. 1, 10, Բրաուն և Յուլե 1983

[20] *Petofi Janos* 1971: Transformationsgrammatiken und eine Ko-Textuelle Texttheorie. Frankfurt: Atheneum.

[21] *Van Dijk Teun,* 1972եSome Aspects of Text Grammars. The Hague: Mouton.

[22] Halliday M.A.K., Hasan Raqaiya 1976: Cohesion in English. London: Longman. Hoey Michael 1991: Patterns of Lexis in Text. Describing English Language, Oxford: Oxford University Press.

[23] Beaugrande Robert-Alain, Dressler Wolfgang Ulrich 1981: Introduction to Text Linguistics. London: Longman.

[24] *Swales J.* 1990: Genre Analysis: The Sociolinguistic Analysis of Natural Language. Language in Society 4, Oxford: Blackwell.

---

## EDUCATION AS A PHENOMENON OF WORD ANALYSIS. GENERAL SURVEY

ARMEN HAKOBDJANYAN

Summary

In the given article there is presented the repetition as a phenomenon of speech analyses. The goal of the given investigation is to define concrete show of repetition in dialogue, in general structure of communication, as well as to find out its characterizing criteria, forms, which it can get, and its functionality.

## ОБРАЗОВАНИЕ КАК ЯВЛЕНИЕ АНАЛИЗА СЛОВА: ОБЩИЙ ОБЗОР

АРМЕН АКОПДЖАНЯН

Резюме

В данной статье представлен повтор, как явление анализа речи. Цель данного исследования - выявить конкретные проявления повтора в диалоге, в главной структуре коммуникации, а так же выяснить характеризующие его критерии, формы, которые он может получить, его функциональность.

ԳՈՌ ՍԱՐԳՍՅԱՆ

# ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԱԼՄԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԽՆԴՐԻ ՄԻ ՔԱՆԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆՆԵՐ

Ժամանակակից դարաշրջանը հանրակրթական դպրոցից պահանջում է մարդու բազմակողմանի դաստիարակում: Մարդն ապրում է մի աշխարհում, որտեղ հոգևոր և նյութական, գեղագիտական և խոհական արժեքները, որոնք ձեռք են բերվել մարդկության պատմության ողջ ընթացքում, միահյուսվում են: Դրանք անհատի մոտ առարկայական էական արժեքներ դարձնելը յուրաքանչյուրի, այդ թվում նաև դպրոցի ուսուցչի նպատակն է: Տվյալ նպատակի նվաճման համար մանկավարժությունը հիմնվում է մի շարք գիտությունների վրա, որոնք պայմանականորեն կարելի է բաժանել երկու հիմնական խմբերի՝ գիտություններ, որոնք ուսումնասիրում են մշակութային արժեքները, և գիտություններ, որոնք ուսումնասիրում են առարկայական արժեքների փոխանցման բնութագիրը: Այս վերջին խմբում առաջնային տեղ է զբաղեցնում մարդու հոգեկանի մասին գիտությունը, նրա ձևավորման առանձնահատկությունները: Հատկապես հենց դրա համար համարյա ցանկացած մանկավարժական խնդիր և դրա լուծում որոշարկվում է հոգեբանության մեջ համապատասխան խնդրի կազմակերպմամբ, այլ խոսքով ասած՝ մանկավարժության մեջ այս կամ այն խնդրի մշակման բնութագիրը մեծ մասամբ որոշարկվում է հոգեբանության մեջ համապատասխան խնդրի աստիճանով: Այսպիսի կախվածություն, անկասկած, գոյություն ունի նաև գեղագիտական ընկալման խնդրի կազմակերպման դեպքում:

Տվյալ դեպքում մեզ հետաքրքրում է այս խնդրի հոգեբանական տեսանկյունը:

Գեղագիտական խնդրի լուծումն ընդհանուր առմամբ ենթադրում է ձևատեսական այն համակարգի որոշարկումը, որի օգնությամբ մարդու մոտ ձևավորվում է իրականության հանդեպ գեղագիտական վերաբերմունք: Հոգեբանական տեսանկյունից դա ենթադրում է հոգեբանական այնպիսի երևույթի կազմավորման որոշարկումը, ինչպիսին հանդիսանում է աշխարհի հանդեպ գեղագիտական վերաբերմունքը (այս գործոններն արդյունքում կարող են դառնալ հիմք՝ վերը նշված ձևատեսական համակարգի ստեղծման համար): Բայց մինչ փորձարարությամբ հաստատել, թե ինչ գործոններ են որոշարկում աշխարհի հանդեպ գեղագիտական վերաբերմունքի բնութագիրը, անհրաժեշտ է որոշարկել, թե փորձարարության ընթացքում հոգեբանական որ գործոնները մենք պետք է փնտրենք: Հետևաբար, իրականության հանդեպ գեղագիտական վերաբերմունքի հոգեբանական էության որոշարկումը հանդիսանում է այն խնդիրը, որը գեղագիտական ընկալման խնդրի լուծման մեջ հանդիսանում է հիմնական:

Հոգեբանական տեսանկյունից ինչն է հանդիսանում աշխարհի հանդեպ գեղագիտական վերաբերմունք: Այս հարցին պատասխան տալու համար պետք է նկատել, որ ընդհանուր հոգեբանության մեջ առարկայի հանդեպ անձի «վերաբերմունքը» նշվում է այնպիսի բառեզրերով, ինչպիսիք են «միտում», «հաստատում», «հարմարեցում», «դիրքորոշում» և այլն:

Գիտակցության ցանկացած վարք և գործողություն միջնորդավորվում է անձի կողմնորոշմամբ: Կողմնորոշումը հանդիսանում է մարդու հոգեբանական վիճակների ամբողջական որոշակիության վերաբերմունքն աշխարհի հանդեպ: Հետևաբար, աշխարհի հանդեպ գեղագիտական վերաբերմունքի դեպքում կարելի է խոսել նաև համապատասխան կողմնորոշումների յուրահատկության մասին, երբ մենք խնդիրը դիտարկում ենք կողմնորոշման տեսության տեսանկյունից:

Բայց կողմնորոշումը ոչ միայն աշխարհի հանդեպ «անգործունյա վերաբերմունքն է», այլ նախևառաջ որոշակի գործունեության հանդեպ դիրքորոշումը: Գործունեության ո՞ր դեպքում է ենթադրվում կողմնորոշում, որն իրենից ներկայացնում է գեղագիտական վերաբերմունքի հիմք: Տվյալ դեպքում, անշուշտ, պետք է առանձնացնել գործունեության երկու հիմնական ձևեր՝ գեղագիտական ընկալում և գեղարվեստական ստեղծագործություն: Հետևաբար, մարդկային գործունեության այս երկու ձևերը հիմնավորվում են յուրահատուկ կողմնորոշումների կենսունակությամբ, տվյալ դեպքում հոգեբանական խնդիրը կողմնորոշման տեսության տեսանկյունից հանդիսանում է այդ յուրահատուկ կողմնորոշումների բնութագրի որոշարկումը: Որպեսզի քննարկվող հարցից (գեղագիտական ընկալման հոգեբանական խնդիրները) չհեռանանք, մենք կսահմանափակվենք այն պահերի դիտարկմամբ, որոնք կապված են գեղագիտական ընկալման հետ, քանզի հանրակրթական դպրոցում գեղագիտական ընկալման նպատակ է հանդիսանում հիմնականում ոչ թե արհեստավարժ նկարչի, երգչի կամ բանաստեղծի, այլ գեղագիտական ընկալողականության ընդունակություններով մարդու դաստիարակում:

Հոգեբանության և մանկավարժության մեջ բազմիցս ցուցադրվել է, որ կողմնորոշման տեսությանը տրված է որակավորում, որը որոշարկում է գեղագիտական ընկալման տեղն իբրև հոգեբանական փաստ:

Տվյալ տեսության մեջ դիտարկվում են պահվածքի երկու հիմնական ձևեր՝ գեղագիտական և բնատուր: Ինչպես վկայում են այս ձևերի անվանումները, նրանք բաժանվում են կողմնորոշման նույնացման բնույթով: Արտաքին կենսունակությունը նույնացվում է գործուն ներքին մղումով: Էկստերոգեն կենսունակության գործառնությունը կայանում է մարդու կենսականորեն անհրաժեշտ պահանջմունքների բավարարման մեջ: Սակայն մարդու մոտ կա նաև բնական, բայց ոչ կենսականորեն անհրաժեշտ պահանջ: Այդպիսի պահանջներն ընկած են բնատուր կենսունակության հիմքի վրա (խաղ, հաճույքներ, երազներ, ստեղծագործություն, գեղագիտական ընկալում և այլն): Այս պահանջմունքը հասկացվում է իբրև գործողության մեջ գործունեության և իրականացման կողմնորոշման սեփական ներքին մղում: Կողմնորոշման ներքին մղումներն անվանվում են գործառնական միտումով: Հետևաբար, բնատուր կենսունակությունը նույնացվում է կողմնորոշման ներքին մղումով, որի միջոցով հիմնավորվում է հենց կենսունակությունը:

Ինչպիսին են բնատուր կենսունակության և համապատասխան կողմնորոշումների առանձնահատկությունները: Բնատուր կենսունակության մեջ մարդն ունենում է զգացմունքներ հենց կենսունակության գործընթացի մեջ, քանզի նրա պահանջմունքների առարկա է

հանդիսանում միայն որոշարկված գործունեությունը: Դրա համար մարդու մոտ ավելի նշանակալի է հանդիսանում գործունեության գործընթացը, քան դրա արդյունքը: Ինչպես հայտնի է, գեղագիտական ընկալման մեջ նշանակալի է հանդիսանում նաև ընկալողականության գործընթացը, այլ ոչ թե այդ ընկալողականության արդյունքը (իմացություն), ինչպես, օրինակ, սովորական ընկալման դեպքում: Բնատուր կենսունակության մեջ բավարարվածության զգացողությունը առաջանում է այն բանից, որ տվյալ կենսունակության դեպքում «դատարկվում», իրականացվում են անձի անիրականանալի ամրագրված կողմնորոշումները: Մարդուն հաճելի է նախկինում չիրականացված հնարավորությունների իրականացումը: Ինչպես հայտնի է, գեղագիտական ընկալման մեջ նաև մեծ դեր է խաղում գեղագիտական երևույթի նորույթը և նրա կապը անձի ձգտումների հետ: Բայց անձի չիրականացված կողմնորոշումները կարող են իրականանալ ինչպես ներքին դիտարկման կենսունակության, այնպես էլ ընկալման աստիճանով: Չիրականացված կողմնորոշումները նույնպես կարող են լինել բացառապես ընկալողական բնույթի, ամրագրված կողմնորոշումներ՝ վերամշակելով ներզգայական և իմաստաբանական տեղեկատվություններ: Հետևաբար, գեղագիտական ընկալումը կարելի է հասկանալ իբրև բնատուր կենսունակություն, մարդու գործառնական ըմբռնողական հնարավորություններ: Այլ կերպ ասած՝ գեղագիտական ընկալումը մարդու բնատուր ըմբռնողական կենսունակությունն է, որտեղ իրականացվում են նրա ինչպես չիրականացված կողմնորոշումներն ընդհանրապես, այնպես էլ մասնավորապես նրա չիրականացված ըմբռնողական ամրագրված կողմնորոշումները:

Ինչքան ամուր լինի կողմնորոշումների գործառնական միտումների ներքին մղումը, այնքան ուժեղ կլինի անձի ձգտումը՝ դրանք իրականացնել: Ինչի՞ց է կախված գործառնական միտումների մեծությունը: Ի պատասխան այս հարցի՝ հոգեբանության մեջ կա որոշարկված ստեղծագործական և փորձով հաստատված նյութ:

Գործառնական միտումը հանդիսանում է իրականացման հանդեպ կողմնորոշման ամրագրված միտում: Իրականացման հանդեպ կողմնորոշման ամրագրված միտումները բացատրվում են ամրագրված կողմնորոշման մեջ ընկալման պատրանքով: Հետևաբար, կարելի է թույլ տալ, որ նշված ձևատեսությամբ կողմնորոշման ուսումնասիրման ժամանակ գործառնական միտումը հետազոտվի փորձարարությամբ ամրագրված կողմնորոշմամբ: Ամրագրված կողմնորոշման շահագրգռվածության աստիճանը կարող է ծառայել որպես գործառնական միտման շահագրգռվածության ցուցիչ, իսկ պատրանքների քանակը՝ որպես ոչ կանոնավորության ցուցիչ:

Արդյունքում որոշարկվում է, որ ամրագրված կողմնորոշման մեջ պատրանքների առավելագույն քանակը տվյալ կողմնորոշման ամրագրման է հասնում որոշակի առավելագույն մեծությամբ: Այլ կերպ ասած՝ կողմնորոշման ամրագրված միտման առավելագույն ուժեղացումը հասնում է առավելագույն արդյունավետության, և նրանց ամրագրումը շատ թե քիչ նվազեցնում է գործառնական միտումը:

Գեղագիտական դաստիարակության մեջ պետք է հաշվի առնվի գեղագիտական առարկայի ամրագրման հաճախականության գործոնը:

Որոշարկված արդյունավետության շրջանակում կողմնորոշման կարգավորման մեջ գործում է միանմանության գործոնը:

Գեղագիտական դաստիարակման հոգեբանությունը գեղագիտական հարաբերությունների գործոնների որոշարկման կարիք ունի, և այս տեսանկյունից կողմնորոշման տեսությունը հեռանկարային է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Выготский Л. С.* Психология искусства.- М., 1968.
2. Художественное восприятие. - Л., 1971.
3. Эстетическое воспитание в современном мире. - М., - 1991.

SOME ASPECTS OF PSYCHOLOGICAL PROBLEM OF ESTHETIC PERCEPTION

GOSH SARGSYAN

Summary

Modern society demands harmonies and through development from secondary school, the most important role in it belongs to the problem of aesthetic education, which supports also the serving some psychological problems which are described in the article.

НЕКОТОРЫЕ АСПЕКТЫ ПСИХОЛОГИЧЕСКОЙ ПРОБЛЕМЫ ЭСТЕТИЧЕСКОГО ВОСПРИЯТИЯ

ГОШ САРГСЯН

Резюме

Современное общество от общеобразовательной школы требует гармоничного, всестороннего развития личности, в которой важнейшее значение имеет проблема эстетического воспитания, которая предпологает также решение некоторых психологических вопросов, которые освещены в данной статье.

# О НЕКОТОРЫХ ПСИХОЛОГИЧЕСКИХ КРИТЕРИЯХ ОБУЧЕНИЯ РУССКОМУ ЯЗЫКУ КАК ИНОСТРАННОМУ ДЕТЕЙ-АРМЯН 5 - 6 ЛЕТ

ГАЯНЕ ОГАНЕСЯН

*Диссертант кафедры русского языка и методики АГПУ*

Особую актуальность в настоящее время приобретает проблема определения общих принципов начального, в том числе дошкольного обучения русскому языку детей - армян.

Ныне существует многовариантное дошкольное образовательное пространство. Каждое ДОУ (дошкольное учреждение) руководствуется своими авторскими программами, вводит свои инновационные (развивающие) методы обучения, реализует экспериментальные методики за счет эффективных нововведений. Здесь важно осознавать, что дошкольное образование - сложная педагогическая категория. Обучение в этот период, как в никакой другой, должно быть обусловленно возрастными и личностными особенностями ребенка. Традиционно ученые, методисты придерживались единой модели дошкольного образования.




Центральную часть дошкольного образования безусловно составляет обусловленный возрастом эмоциональный компонент, с чем, следовательно, связаны все последующие составные образования. Эмоциональный аспект в широком смысле слова представляет собой одно из звеньев психологических особенностей данной возрастной группы (в нашем случае детей 5 - 6 лет). Содержание эмоционального аспекта включает в себя две стороны. Собственно-эмоциональное развитие - ряд взаимосвязанных направлений, каждое из которых имеет свои определенные способы воздействия на эмоциональную сферу, соответственно, механизмы включения эмоций. Сюда входит развитие эмоционального реагирования, эмоциональной экспресии (мимики, жестов, речевой интонации и т.д.), формирования представлений об эмоциях и пр. Опосредственно-эмоциональное развитие - преднамеренное воздействие на эмоциональную сферу детей с целью осуществления и совершенствования процесса познания окружающего мира, интеллектуальных действий, деятельности в целом.

Нет оснований сомневаться в том, что обучение дошкольников любому иностранному языку, в том числе русскому, должно быть построено с учетом эмоционального компонента. Исследователи психологической природы усвоения иностранных языков (Д. Б. Эльконин, Л. Выготский, А. Закарян, Э. З. Петрова, С. М. Минасян и др.) не раз говорили о том, что к началу изучения иностранного языка словесная память обучаемого уже располагает прочно закрепленными единицами родного языка, в основе чего лежит автоматизированная двусторонняя связь между:

1. Словесными, звуковыми, вербальными, зрительными и моторными единицами.

2. Соответствующими им единицами – понятиями. Если принять, что слово родного языка в сознании ребенка представляет собой неделимую единицу, возникшую на основе давно проложенной двусторонней связи между словом и понятием, то иноязычное слово, либо понятие усваивается посредством трехсторонней связи, поскольку понятие связано с одной стороны с обязательным образом лексемы родного языка, с другой стороны – с лексемой изучаемого языка. При установлении двусторонней связи между понятием и иностранным словом избежать опосредованного воздействия родного языка очень трудно. Но об этом далее.

На первоначальном этапе обучения дошкольников иностранному языку проблему составляет отношение учащихся к изучаемому языку. Так, например, существует тип занятий, на котороых дети тянутся к приобщению к языку, что мы и наблюдаем в нашей практике. Что касается занятий, на которых дети сдержанно и порой даже негативно настроены, то мы думаем, что низкий уровень мотивации здесь связан со статичной, малоинтересной организацией процесса урока, с отсутствием разнообразия приемов, характерных для данной возрастной категории.

Для эффективного обучения русскому языку детей-армян необходимо находить методы и приемы, активно и спонтанно вовлекающие в речевую деятельность всех учащихся. Важнейшей задачей учителя или методиста является выработка у 5-6-летних детей первых навыков лингвистического наблюдения и анализа, образного ассоциирования, ситуативной догадки и т.д. Достижению выше указанных задач способствует предельное внимание учащихся на каждом уроке. Особенности внимания детей дошкольного возраста зависят от уровня и специфики развития их нервной системы. Смена процессов возбуждения и торможения в коре больших полушарий у 5-6-летних с развитым образным мышлением детей протекает сравнительно быстро. Этим объясняется то, что дети очень чутки к внешним впечатлениям, легко обращают внимание на каждый раздражитель. Возникший в коре головного мозга новый очаг возбуждения заставляет ребенка отвлечься от того, на чем он был сосредоточен. Возникает некоторая неустойчивость внимания, непроизвольное переключение его с одного предмета на другой.

Детская впечатлительность приводит к тому, что

внимание 5-6-летнего ребенка вызывается прежде всего ярким, образным, наглядным учебным материалом, живостью и эмоциональностью изложения. Лишь побуждающий детей к действию, стимулирующий их активность урок будет способствовать развитию спонтанной речемыслительной деятельности на иностранном языке.

Какие бы понятия ни формировали мы у детей, какие потребности и мотивы ни определяли бы их деятельность, устойчивыми, внутренне действенными они становятся лишь в том случае, если им удастся войти в сферу эмоциональных отношений, закрепиться в ней. Ребенок живет эмоциями, руководствуется ими при выборе способов поведения в том числе и речевого. Эмоции сопровождают ощущения ребенка, практические действия активизируют каналы восприятия, регулируют мыслительную деятельность, делают окружающий мир многоликим.

Игнорирование эмоциональных проявлений детей дошкольного возраста, в процессе обучения иностранным языкам чаще всего приводит к мыслительной, двигательной и речевой пассивности учащихся.

Особую проблему составляет отношение учащихся к своему статусу. Взрослые (и воспитатели, и родители) зачастую смотрят на детей дошкольного возраста как на школьников, требуют от них норм поведения, характерных больше для младших школьников, нежели для дошкольников. Вот почему наряду с практическими потребностями обращения к психологическим особенностей детей 5-6-и лет возникает необходимость обращения и к теоретическим предпосылкам, ибо нужно иметь в виду, что 5-6 лет — это переходный возраст между дошкольным и младшим школьным периодами развития. Своеобразие изучаемого периода несводимо к закономерностям психического развития только дошкольников или же применительно только к младшему школьному возрасту. На наш взгляд, это общая проблема, однако до настоящего времени специфика этого переходного периода мало исследована.

Еще в начале XX века Л. С. Выготский отмечал в поведении 7-летних детей своеобразные черты — манерничанье, кривлянье и другие на первый взгляд немотивированные действия, что дало ему основание говорить о “кризисе 7-и лет” как закономерном явлении в психическом развитии ребенка.

В последние годы переход к обучению детей 5-6-летнего возраста заставляет по-новому взглянуть на проблему “кризиса 7-и лет”. Существует ли этот кризис на самом деле? Если допустить его существование, то в этом случае, определяется ли он временем начала школьного обучения или внутренней логикой развития ребенка, т.е. остается ли он “кризисом 7-и лет” или же превращается в “кризис 5-и лет” либо в “кризис 6-и лет”. От верного ответа на этот вопрос зависит понимание задач воспитания и обучения детей 5-6-летнего возраста, общее направление разработки форм и методов учебно-воспитательной работы. Между тем, имеющиеся в психологической теории представления, касающиеся этой проблемы, чрезвычайно неопределенны, экспериментальные данные малочисленны и случайны. Несмотря на то, что в литературе можно найти немало рекомендаций, адресованных педагогу, они нередко противоречат друг другу и основаны в большей мере на “здравом смысле”, нежели на серьезных научных исследованиях.

Л. Выготский отмечал, что любые кризисы рассматриваются как внутренне необходимые этапы развития, как качественные скачки, в результате которых психика ребенка поднимается на новый уровень. Негативные проявления кризиса - это оборотная сторона его положительных новообразований, свидетельствующая о распаде, разрушении прежней системы отношений ребенка со взрослыми. В работе “Проблема возраста” (1984, т. 4) он показал, что кризисы - это переходные периоды развития, которые, в отличие от стабильных, характеризуются прежде всего не количественными, а качественными изменениями в психике ребенка.

Многие ведущие методисты работали над проблемой “психологического барьера на уроках иностранного языка на начальном этапе обучения” (А. И. Захаров, Б. М. Есаджанян, Дж. Мелик-Нубарова и др.). На основе разработанных концепций и с учетом актуальности данной задачи и по сей день считаем целесообразным обращение к этой проблеме.

Овладение детьми умениями общения на неродном языке в условиях ограниченной языковой среды, как считают специалисты, возможно лишь в том случае, если уроки во всех своих структурных частях будут характеризоваться интенсивностью умственной деятельности учащихся, стимулирующей, в свою очередь, их речевую деятельность. Умственная, мыслительная напряженность стимулирует речевые интенции, способствует возникновению потребности в говорении. Сочетание интересов детей с активной речевой деятельностью в большой степени гарантирует результативность процесса обучения.

На уроках иностранного языка и русского, в том числе, речевую активность чаще проявляют ученики, активные по характеру, уверенные в себе, с хорошей языковой подготовкой. Те же дети, которые не могут быстро реагировать и испытывают трудности, связанные либо с содержанием высказывания, либо с его языковым оформлением, обычно предпочитают отмалчиваться. Стремясь выполнить предъявленные к нему требования, 5-6-летний ребенок сомневается в том, что не сможет этого сделать. Эмоциональная заторможенность, невозможность полноценной реакции в процессе коммуникации, неуверенность в своих силах, застенчивость, временами даже растерянность - все это зачастую перерастает в страх, который как бы парализует волю ребенка и его способность думать. Дети начинают замыкаться в себе, способом деятельности, способом “существования” на уроке становится лишь пассивность, даже тогда, когда ребенок уверен в своих силах. Страх возникает на почве недостатка стимулирующих внешних воздействий и чрезмерных запретов, вследствие чего развитие познавательной активности и любопытства может тормозиться” (Захаров А. И., Как преодолеть страх у детей, - М., Педагогика, 1986г., с. 29).

Возможность возникновения чувства подавленности, страха у дошкольников на уроках необходимо исключить. Дети должны находиться в состоянии эмоциональной, духовной раскрепощенности, в противном случае в их сознании сформулируется негативное отношение к уроку, к изучаемому языку, которое уже не покинет его на протяжении всей жизни.

Ведущие исследователи психологической природы усвоения иностранных языков (Э. З. Петрова, С. М. Минасян и пр.) не раз отмечали, что, являясь своеобразным комплексным раздражителем, иностранное слово оказывает сложное по своей структуре воздействие, поэтому усвоение слова всегда является функцией многих переменных, в том числе психологических, возрастных, лингвистических и др.

Обзор исследований свидетельствует о том, что наиболее важным из переменных для запоминания является семантика слова и методический прием его введения и закрепления, а также его языковые особенности.

Формирование в сознании учащихся младшего возраста грамматических понятий неродного языка требует особых форм анализа и синтеза, приводящих к языковым абстракциям и обобщениям, на основе которых образуются связи, ассоциации между звуковыми или графическими формами иноязычных явлений и их языковыми значениями.

Нужно иметь в виду, что речевая деятельность на неродном языке формируется в решающей степени на основе речевых автоматизмов родного языка. Последние способствуют механизмам формирования речевых операций и действий на изучаемом языке уже с самого начала обучения, так как неродной язык обычно изучают после того, как у детей сложились первичные речевые механизмы.

Механизм функционирования первичного речевого навыка выступает при этом в качестве и положительного, и отрицательного фактора, облегчая выработку новых, вторичных речевых навыков, если они идентичны базовым, и тормозят этот процесс в случае их различия. В соответствии с этим различаются процессы транспо-

зиции (положительного процесса навыков, которые не приводят к нарушениям изучаемой языковой системы), и интерференции (отрицательного переноса), проявления действия которой вызваны отклонением от норм родного языка и приводит к нарушениям внутри изучаемой речевой системы, следовательно, затрудняют овладение лексико-грамматической системой неродного языка.

Отрицательное влияние родного языка на процесс формирования иноязычных навыков во многих случаях помогает понять природу как орфоэпических, так и лексико-семантических ошибок, например, в случае с произношением звука [ы] или мягких согласных, или шипящих и др.

Исходя из комплекса трудностей при усвоении иностранных языков и с учетом возрастных особенностей 5-6-летних детей, методисты указывают на идеальную форму активизации речемыслительной деятельности, предотвращающей появление скованности, закомплексованности - игру. Игровая деятельность как важнейший фактор развития (в том числе и речевого) дошкольников создает благоприятную почву для образовательной среды, способствует познавательному развитию детей.

Характерные качества дошкольного возраста - познание окружающего мира через образное мышление и воображение, повышенная двигательная активность, взаимосвязь эмоциональной и сенсорной сфер (Л. С. Выготский, А. В. Запорожец, Н. Н. Поддьяков и др.) проявляются, реализуются в игре. Игрой в широком смысле слова можно назвать любые действия по заранее известным правилам. Игры на уроках иностранного языка, участниками которых являются сами дети, дают учащимся реальный опыт, которого бы не дали рассказы, картинки, мультфильмы и т.д.

Учитывая возрастные особенности, возможности данной группы обучаемых, учитывая особенности лексико-грамматического материала и пр., творчески работающие педагоги и воспитатели разрабатывают десятки игр, способствующих преодолению трудностей в общении на неродном языке. Правильно организованная игра сама организует, направляет обучение.

Говоря об обучении в ДОУ вообще, мы не можем не остановиться на некоторых актуальных проблемах современного состояния развития дошкольного образования в Армении:

1. Резко чувствуется недостаточное дидактическое оснащение педагогического процесса играми, пособиями, наглядными материалами в соответствии с программами дошкольного образования;

2. Не существует на практике конкретная подготовка кадров по современным программам, а также методическое обеспечение данных программ (сколько нужно педагогов, сколько нужно программ, какие методики, что не реализует идею преемственности ДОУ и школы);

3. Неразработанность механизмов управления инновационными процессами в ДОУ, отсутствие критериев, обеспечивающих качество дошкольного образования и пр.

## ЛИТЕРАТУРА

1. *Байбуртян Н. А.,* Геодакян И.М. - “Еще раз о специфике обучения шестилетних детей русскому языку”, “Русский язык в национальной школе”, 1987, N 1
2. *Барикян Г. Г.* - “Преодоление психологического барьера на уроках русского языка в младших классах”, “Русский язык в армянской школе”, 1987, N 6
3. *Б. В. Беляев* - “Психологические основы обучения русскому языку в национальных школах”. “Русский язык в национальной школе”, 1962, N 3
4. *Есаджанян Б. М.* - “К вопросу об основном методе обучения русскому языку в национальной школе”. “Русский язык в национальной школе”, 1972, N 6
5. *Жуйков С. Ф.* - “Психологические основы повышения эффективности обучения младших школьников родному языку”, М., “Педагогика”, 1979.
6. *Минасян С. М.* - “Психологические предпосылки порождения лексико-семантической интерференции”, “Русский язык в армянской школе”, 1992
7. *Рубанович Б. А.* - Грамматические игры, “Иностранные языки в школе”, 1965, N 6
8. *Шахкамян Г. Г.* - “Научные основы и практическая организация обучения грамматике русского языка в начальной армянской школе (I класс)”, Ереван, 1982.

---

### ՀԻՆԳ-ՎԵՑԱՄՅԱ ՀԱՅ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒՆ ՈՐՊԵՍ ՕՏԱՐ ԼԵԶՈՒ ՈՒՍՈՒՑԱՆԵԼՈՒ ՄԻ ՔԱՆԻ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԳԱՅԱՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
*ՀՊՄՀ*
*Ռուսաց լեզվի և մեթոդիկայի ամբիոն*

Ամփոփում

Հայ հանրակրթության բնագավառում, մասնավորապես նախադպրոցական հատվածում, այսօր առանձին հրատապություն է ձեռք բերել նախադպրոցական տարիքի երեխաներին օտար լեզու ուսուցանելու հիմնախնդիրը: Հոդվածում մասնավորաբար խոսվում է ռուսաց լեզվի ուսուցմանն առնչվող մի քանի հոգեբանական չափանիշների մասին, կատարվում են հոգեբանամանկավարժական վերլուծություններ, արվում եզրահանգումներ:

### ON SOME PRINCIPLES OF TEACHING OF 5-6 YEAR CHILDREN RUSSIAN AS A FORIGN LANGUAGE

GAYANE HOVHANNESYAN
*Competitor of the Chair of Russian Language and Methods*
*ASPU*

Summary

In Armenian general education and especially in its pre-school sector today the problem of teaching foreign languages children of pre-school age became actual. In the article the author speaks in details about some psychological criterions, connected with teaching Russian language, psycho-pedagogical analysis, conclusions are drawn.

# ՄԱՐՏԱԿԱՆ ԱՐՎԵՍՏՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԱՐԱ ՍԱՐԳՍՅԱՆ

*ԵՊՀ*
*Փիլիսոփայության պատմության ամբիոնի հայցորդ*
*N զորամասի հրամանատար, փոխգնդապետ*

*արտական արվեստ* (չինարեն *ուշու,* ճապոներեն *բու-ձյուցու,* կորեերեն *թեկվոն-դո,* վիետնամերեն *վո-դաո*) հասկացությունը ներառնում է մարտական և ռազմական գործին առնչվող բազմաթիվ իրողություններ, այդ թվում՝ մենամարտ առանց զենքի և զենքի տարբեր տեսակներով, ֆիզիկական-տեխնիկական ու ակրոբատիկական տարբեր հնարքներ, մարտ վարելու ռազմավարական ու մարտավարական սկզբունքներ, հոգեֆիզիոլոգիական ու հոգեթերապևտիկ վարժանքներ, փիլիսոփայական հիմնադրույթներ, մեդիտացիա, հոգեբանական ու բարոյական պատրաստվածություն և այլն: Չինարեն *ուշու* հասկացությունը բառացիորեն թարգմանվում է որպես մարտական կամ ռազմական տեխնիկա, արվեստ, ռազմական պատրաստվածություն: Հարկ է նշել, որ այդ հասկացությունը շրջանառության մեջ է մտել 20-րդ դարի սկզբներին, իսկ նախկինում օգտագործվել են «ցզիցզի», «ցզիցյաո», «ցզիյուն», «ցյուանշու», «ցյուանյուն» տերմինները, որոնք համապատասխաբար թարգմանվում են՝ «հարվածների տեխնիկա», «տեխնիկայի արվեստ», «տեխնիկայի հերոս», «բռունցքի տեխնիկա», «բռնցքային հերոսներ»[1]:

Մարտական արվեստները արևելյան քաղաքակրթության ծնունդն են: Ինչո՞ւ հենց Արևելքում ձևավորվեցին մարտական արվեստի դասական ձևերը, այլ ոչ թե Արևմուտքում: Այդ երևույթի պատճառը ընդհանուր առմամբ պետք է փնտրել Արևելյան և Արևմտյան քաղաքակրթությունների, արևելյան և արևմտյան մտածելակերպի ձևավորման ու զարգացման առանձնահատկությունների մեջ: Դրանցով են պայմանավորված նաև մարդու, տիեզերքում նրա տեղի ու դերի, նրա կյանքի իմաստի և նպատակի վերաբերյալ պատկերացումների յուրահատկությունները, որոնք իրենց արտացոլումն են գտել մարտարվեստների փիլիսոփայության մեջ:

Եթե արևմտյան ավանդույթում մարտական արվեստը ուներ սոսկ կիրառական-գործնական ուղղվածություն և նպատակ էր հետապնդում պաշտպանել առանձին մարդու արժանապատվությունը և հասարակության (պետության) շահերը, ապա արևելյան ավանդույթում դրա հետ մեկտեղ կարևոր նշանակություն ուներ հոգևոր կողմը: Մարտարվեստը դիտվում էր որպես կեցության բարձրագույն իդեալին հասնելու եղանակներից մեկը: Այստեղ մարտական արվեստը դարձավ անհատի ինքնակատարելագործման և տիեզերական ներդաշնակության մեջ ներառնվելու միջոց: Արևելյան մարտական արվեստներում, որոնք անմիջականորեն խարսխվում էին փիլիսոփայական և բարոյագիտական որոշակի սկզբունքների վրա, մենամարտի հնարքները դիտվում էին որպես անձի հոգեֆիզիկական ուժերի կարգավորման և կեցության բարձրագույն նպատակին հասնելու միջոցներ: Արևելյան փիլիսոփայությունը մարդուն դիտում էր որպես համաշխարհային ամբողջի՝ տիեզերքի համակարգում, իսկ մարտական արվեստը համարում էր այդ համակարգի բաղկացուցիչ մաս: Ի շարս մյուս արվեստների, մարտական արվեստները կոչված էին զարգացնել մարդու ֆիզիկական ու հոգևոր ունակությունները: Այսպիսով, արևելքում ի սկզբանե մարտական արվեստների գերագույն նպատակը ոչ միայն ինքնապաշտպանությունն էր, այլև մարդու հոգևոր ու ֆիզիկական ուժերի համատեղման միջոցով կատարելության հասնելը: Մարտական արվեստների միջոցով բավարարվում են մարդու երեք հիմնական պահանջմունքները՝ կենսական (կենսաբանական), սոցիալական և հոգևոր: Կենսական պահանջմունքների բավարարումը ապահովվում է մարդու՝ որպես կենսաբանական էակի գոյությունը. դրանում դրսևորվում է ինքնապաշտպանության բնազդը: Մարտը հնարավորություն է տալիս մարդուն ինքնադրսևորվելու, հաղորդակցվելու ուրիշների հետ, ցուցադրելու իր ֆիզիկական ու մտավոր կարողությունները և, դրանով իսկ, բավարարելու մարդու սոցիալական պահանջմունքները: Վերջապես, մարտի միջոցով բավարարվում են մարդու հոգևոր պահանջմունքները. մարտարվեստները միջոց էին հասու լինելու բարձրագույն ճշմարտության, գեղեցկությանն ու բարիքին, իմաստավորելու մարդու կյանքը: Հոգևոր կողմը կապված է նաև անհատի ինքնակատարելագործման, հոգևոր արժեքների ձեռք բերման հետ:

Այս առումով բնութագրական է ***կեմպոն*** (մարտարվեստների ընդհանրական անվանումը), որը, լինելով հոգևոր և ֆիզիկական մշակույթի մի բարդ ամբողջություն, սոսկ մարտարվեստ չէ, այլև Արևելքում տարածված փոքր տիեզերքի (մարդու) և մեծ տիեզերքի միասնության իրականացման ուղի, աշխարհի և ինքն իր հետ ներդաշնակության հասնելու արվեստ: Կեմպոյի տեսական ակունքներից կարելի է առանձնացնել հետևյալները.

- Դաոսական փիլիսոփայությունը, հատկապես Դաոտարկության, Ին և Յան ուժերի պայքարի, հինգ տարրերի (հող, ջուր, կրակ, մետաղ, փայտ) փոխներգործության, Անգործության, Մեղմության, Բնականության և Կերպարանափոխության գաղափարները:
- Յոգան՝ որպես հոգեվարժանքի, մարդու ֆիզիկական ու հոգևոր կատարելագործման ուսմունք: Ընդ որում, խոսքը վերաբերում է Յոգայի ազգային երեք ձևերին՝ հնդկական, տանտրիկական-բուդդայական (չինական, տիբեթյան, ճապոնական) և դաոսական (չինական):
- Ցի կենսական էներգիայի շրջապտույտի, օրգանիզմի էներգետիկայի զարգացման վերաբերյալ չինական-տիբեթյան բժշկության գաղափարները:
- «Բիոնիկական» ուսմունքները, որոնք հիմնվում էին կենդանիների վարքի ուսումնասիրության վրա: Դրա հիման վրա ձևավորվեցին մարտարվեստի կենդանական ոճերը:
- Տարբեր ցեղերի և ժողովուրդների ձեռնամարտերի և ծիսական մարտական պարերի համակարգերը:
- Հին Չինաստանի ռազմական գիտությունը, որը հիմնված է դաոսականության գաղափարների վրա: Դրանում ձևակերպված են պատերազմելու ու մենամարտելու ռազմավարության և մարտավարության սկզբունքները:
- Ձեն բուդդայական հոգետեխնիկան, որը հնարավորություն է տալիս բացառիկ արդյունքների հասնելու կենտրոնացման ու ինքնաներշնչանքի գործընթացում:
- Անձի ձևավորման կոնֆուցիոսական բարոյագիտական նորմերը:
- Մանրամասն մշակված ուսուցման մեթոդիկան, որն ընդգրկում է մարմնի նախապատրաստությունը, հոգեկանի վերակառուցումը, հինգ տարրերի հետ աշխատելու կարողությունը և այլն:

Պայքարի բազմազան հնարքների զինանոցի առ-

կայությունը[2]:

Մարտական արվեստների տարրերը ձևավորվել են խոր հնադարում: Մարդը պետք է դիմակայեր արտաքին բնական արհավիրքներին, պայքարեր թշնամական շրջապատի դեմ, սնունդ հայթաթելու համար «մարտի» բռնվեր գազանների հետ: Հնադարում մարդն իրեն անհրաժեշտ սնունդը հիմնականում ձեռք էր բերում որսորդությամբ: Իսկ դա վտանգներով լի մի գործ էր, ուստի մարդը պետք է գործեր զգույշ, անհրաժեշտության դեպքում կիրառեր ֆիզիկական ուժ, հանդես բերեր դիմացկունություն, տոկունություն, ճարպկորեն օգտագործեր հարձակողական և պաշտպանական զանազան շարժումներ ու գործողություններ:

Այս ճանապարհով աստիճանաբար ձևավորվում են մենամարտ վարելու նախնական ձևեր (զենքի տարբեր տեսակների կամ բնատուր ֆիզիկական ուժի օգտագործմամբ), որոնք հետագայում պետք է կատարելագործվեին և վերածվեին արվեստի: Հնադարյան մարդու օգտագործած հնարքները, որոնք դրսևորվում էին նաև պարերում, ընդամենը պարզունակ ձևեր էին, որովհետև մարտական արվեստին բնորոշ են այլ կողմեր (ծիսական, փիլիսոփայական, գեղագիտական, առողջարարական, հոգեկարգավորիչ, միստիկական և այլն):

Դժվար է մատնանշել մարտական արվեստների առաջացման մի կոնկրետ ժամանակահատված կամ տարեթիվ, սակայն տվյալներ կան այն մասին, որ դրանք երևան են եկել Արևելքի հնագույն քաղաքակրթությունների ձևավորման ժամանակ: Մասնավորապես, հնագիտական պեղումները վկայում են, որ Չինաստանում այն գոյություն է ունեցել Ք.ա. երրորդ հազարամյակի վերջերում և երկրորդ հազարամյակում: Շանյան դարաշրջանում գոյություն են ունեցել մարտական արվեստների մարզարաններ, որտեղ պատրաստում էին ռազմիկներ: Ք.ա. 7-րդ դարից մեզ հասած աղբյուրներում հիշատակվում է ոտքով և անզեն ձեռքով գոտեմարտ վարելու չինական արվեստի մասին: Ավելի ուշ շրջանի (3-րդ դար) աղբյուրներից հայտնի է, որ տոների ու արարողությունների ժամանակ անցկացվում էին նետաձգության ու ըմբշամարտի մրցումներ: Մարտական արվեստների վարպետներն իրենց ունակությունները ցուցադրում էին մրցույթների, ծիսակատարությունների և տոնական արարողությունների ժամանակ, թեև մարտարվեստի գաղտնիքները խնամքով պահվում էին և հասու չէին մեծամասնությանը:

Մարտական արվեստների առաջացման գործում կարևոր դեր են խաղացել մի շարք գործոններ, որոնցից են ռազմական ծիսական պարերը: Պարից ծնված մարտը սրբազան (սակրալ) բնույթ ուներ. մարտիկը, իրեն նույնացնելով որևէ աստվածության հետ, ի վիճակի էր կարգավորելու տիեզերական քաոսը, այսինքն՝ կատարելու աշխարհակարգավորիչ գործառույթ: Աստիճանաբար պարերից առանձնանում են պար-մարտերը, որոնցում կիրառվում են բավականին բարդ ֆիզիկական վարժություններ՝ զենքով և առանց զենքի:

Մարտական արվեստների ձևավորման գործում անգնահատելի է ռազմական տեսության ավանդը: Բոլոր մարտարվեստների դպրոցում ուսուցանվում էին արևելյան ստրատեգների՝ ռազմական արվեստի խոշորագույն ներկայացուցիչների հիմնարար աշխատությունները: Դրանցից է նշանավոր զորավար Սյուն ցզիի (Ք.ա. 6-րդ դ.) աշխատությունը («Սյուն-ցզի»), որում շարադրված են ոչ միայն պատերազմ (մարտ) վարելու ռազմավարական, այլև բարոյահոգեբանական սկզբունքները: Դրանցից կարելի է առանձնացնել հետևյալները՝ ա) սեփական ուժերի ճանաչում և նախապատրաստում, բ) հակառակորդի ուժի ճիշտ գնահատում, գ) ժամանակի հաշվարկում, տեղանքի և մարտի պայմանների ուսումնասիրություն: Ըստ Սյուն ցզիի՝ պատերազմում և մենամարտում հաղթանակ տանելու կարևորագույն նախապայմանը թե՛ սեփական անձը և թե՛ հակառակորդին ճանաչելու կարողությունն է: «Եթե գիտես նրան (հակառակորդին) և գիտես քեզ, կռվիր թեկուզև հարյուր անգամ, վտանգ չի լինի: Եթե գիտես քեզ, իսկ նրան չգիտես, ապա մի անգամ կհաղթես, իսկ մյուս անգամ կպարտվես: Եթե չգիտես ոչ քեզ և ոչ էլ նրան, ապա ամեն անգամ, երբ կկռվես, կկրես պարտություն»:

Մարտական արվեստների առաջացման հարցը դիտարկելիս սովորաբար անդրադառնում են Չինաստանին, քանի որ, նախ, չինական մարտական արվեստներից են սերել արևելյան մյուս մարտական ձևերը, այսինքն՝ արևելյան մարտական արվեստը ծագումնաբանորեն կապված է չինականի հետ, երկրորդ, Չինաստանում են ըստ էության համակողմանիորեն զարգացել, կատարելագործվել մարտաձևերի ամբողջական համակարգերը՝ իրենց ոճերով, տեխնիկայով և փիլիսոփայությամբ:

Չինաստանում մարտական արվեստների (դպրոցների տեսքով) ձևավորումը կապվում է բուդդայականության առաջին պատրիարք ***Բոդհիդհարմայի*** անվան հետ: 495թ. հիմնվում է Շաոլին վանքը, որին վիճակված էր կարևոր դեր խաղալու մարտական արվեստների զարգացման գործում: Վանականներից առանձնացավ մի խումբ, որի գլխավոր խնդիրը ուշուի ուսուցանումն էր: Նրանք մշակեցին ոչ միայն ձեռնամարտի հնարքները, այլև զենքի հետ աշխատելու սկզբունքները: 7-րդ դարում գավազաններով զինված տասներեք վանականներ կարողացան փրկել Տան հարստության կայսր Լի Շիմինին, որից հետո վանքին թույլատրվեց պահել հատուկ վանական զորք: Վանականները սկսեցին զբաղվել ոչ միայն ձեռնամարտով, այլև սրամարտով և զինվորականներին հատուկ այլ զենքերով: 13-րդ դարում վերջնականապես հանրագումարի է բերվում մարտ վարելու այն հնարքները (թվով 173), որոնք հայտնի են որպես շաոլինյան դասական ոճի հնարքներ: Հետագա դարերում շաոլինյան տեխնիկան հղկվել է, հարստացել նորերով: 1928թ. քաղաքացիական կռիվների ժամանակ ավերվում է Շաոլին վանքը, կրակի ճարակ են դառնում մարտական արվեստին վերաբերող բազմաթիվ տրակտատներ:

Միջնադարում Արևելքի երկրներում ձևավորվում է մարտական արվեստների երկու հիմնական ուղղություն՝ դաոսական և բուդդայական: Բացի այս երկու հիմնական ուղղություններից՝ ժամանակի ընթացքում ձևավորվել են այնպիսի ուղղություններ, որոնք համատեղում են ներքին և արտաքին ոճերի տարբեր կողմեր: Առհասարակ, հարկ է նկատել, որ մարտական արվեստների դասակարգումը բավականին դժվար խնդիր է: Գոյություն ունեն դասակարգման տարբեր սկզբունքներ, որոնցից ոչ մեկն էլ լիովին չի արտացոլում մարտական արվեստների բազմազանության հանգամանքը: Այսպես, մարտական արվեստները դասակարգում են ըստ դրանցում օգտագործվող տեխնիկական հնարքների, ըստ արտաքին և ներքին ոճերի, ըստ առաջացման վայրի, ըստ աշխարհագրական միջավայրի և այլն:

Ավելի մանրամասն դիտարկենք ըստ արտաքին և ներքին ոճերի դասակարգման սկզբունքը, քանի որ դա անմիջականորեն կապված է մարտական արվեստի փիլիսոփայության և մարդու հիմնահարցի հետ: Այս դասակարգման կողմնակիցների կարծիքով՝ ներքին ոճերը հիմնվում են *ցի* ներքին էներգիայի կառավարման վրա, իսկ արտաքինները՝ մարտ վարելու կոշտ մեթոդների, հակառակորդի վրա ուժային հարձակողական գործողությունների օգտագործմամբ: Սակայն հայտնի է, որ ներքին ոճերին պատկանող մի շարք դպրոցներ նույնպես օգտագործում են մարտ վարելու կոշտ մեթոդներ (ուղղագիծ շարժումներ, կտրուկ հարվածներ), իսկ ար-

տաքին ոճերին պատկանող մի շարք դպրոցներում մեծ ուշադրություն են դարձնում օրգանիզմում ***ցի*** էներգիայի կարգավորման եղանակների կատարելագործմանը և այլն: Որոշ հետազոտողներ մարտական արվեստների բաժանման հիմքում դնում են փիլիսոփայական ուսմունքները: Ըստ այդմ, ներքին ոճերը կապում են դաոսականության, իսկ արտաքինը՝ բուդդայականության (հիմնականում՝ ձեն բուդդայականության) հետ: Դաոսական ուղղության մեջ տիրապետողը ներքին (մեղմ, փափուկ) ոճն էր, իսկ բուդդայականում՝ արտաքինը (կոշտ ոճ): Ներքին ոճի ***(նեյ-ցզի)*** դեպքում շեշտը դրվում է օրգանիզմի էներգետիկ կարողությունների զարգացման, ***ցի*** կենսաէներգիայի կառավարման վրա: Այդ ոճը ձևավորվել է Խուբեյ նահանգի Ուդան լեռան շրջակայքում (որտեղ ապրում էին դաոսական վանականները), որի պատճառով ներքին ոճով առաջնորդվող մարտական արվեստները կոչվում են նաև ***Ուդան-պայ***՝ Ուդանի ուղղություն:

Արտաքին ոճի (վայ-ցզի) դեպքում շեշտը դրվում է մարմնի կոփման, ուժա-արագային որակների զարգացման վրա: Այդ ուղղությունը այսօր առավելապես հայտնի է կուն-ֆու և կարատե անուններով: Այս կապակցությամբ հարկ է նկատել, որ, ***նախ,*** գոյություն չունի մեկ միասնական դաոսական կամ բուդդայական տեսություն, ***երկրորդ,*** ներքին ոճերի հիմքում ավելի շուտ ընկած են Անսահմանի, Մեծ սահմանի, աշխարհում Դաոյի ծավալման վերաբերյալ կոնֆուցիոսականության ու դաոսականության գաղափարները, ինչպես նաև չան բուդդայականության հայեցողական պրակտիկան: Ներքին ոճերի տեսությունն ու պրակտիկան խարսխված են ոգու կերպափոխության սկզբունքների վրա: ***Երրորդ,*** մինչև 17-րդ դարը մարտական արվեստները միանշանակորեն կապված չէին մեկ փիլիսոփայական ուղղության հետ, և որոշակի անջրպետ գոյություն ուներ մի կողմից ձեռնամարտի և զենքով մարտ վարելու եղանակների, իսկ մյուս կողմից՝ մտասևեռման (մեդիտացիայի), կյանքը երկարացնելու ներքին պրակտիկայի որոնման մեթոդների միջև: Ներքին ոճերը ձևավորվել են ավելի ուշ՝ արտաքին ոճերի հիման վրա, երբ տեղի ունեցավ մարդու ներքին բնության դաստիարակության և մարտական մարզումների սկզբունքների միավորում: Նման դեպքում ամեն մի արտաքին գործողություն դիտվում էր որպես մարդու ներքին բնության անտեսանելի ուժի արտածում: Իսկ ամեն մի շարժում, հնարք կապված էր մարդու բնության մեջ առկա տիեզերական ուժերի և սկզբների հետ: Ներքին և արտաքին ոճերը իրարից կարելի է զանազանել ուսուցման եղանակներով: Սակայն, ամեն դեպքում դրանց բաժանումը հարաբերական ու պայմանական բնույթ ունի:

Մարտական արվեստները անխզելիորեն կապված են արվեստի տարբեր ճյուղերի, հատկապես պարարվեստի, երաժշտության, գեղագիտության հետ: Պարային տարրերը մարտական արվեստներում դրսևորվում են մասնագիտական վարժությունների կատարման ժամանակ, որոնք իրենցից ներկայացնում են երևակայական մարտ՝ մեկ կամ մի քանի հակառակորդների դեմ: Այդ մասնագիտական վարժությունները կազմում են պարային կոմպոզիցիաներ, որոնցում խաղակցվում են տարբեր հնարքների և տեղափոխումների կիրառմամբ մարտական գործողությունների տարբեր իրավիճակներ: Մարտական արվեստների ուսուցման գործում կարևոր տեղ է հատկացվում նաև երաժշտությանը: «Երաժշտությունը օգնում է ռիթմավորել, ներդաշնակ դարձնել մարզման գործընթացը՝ աշակերտների գիտակցությունը ազատելով քարացած մտքերից՝ խթանելով ֆիզիոլոգիական և հոգեկան ակտիվությունը: Պարային տարրերը միահյուսվում են մարտական տեխնիկայի տարրերի հետ, օգնում են ուժով և նպատակասլացությամբ լեցուն բնական ու նրբագեղ շարժումների մշակմանը: Արևելքում միշտ բարձր է գնահատվել շարժումները ղեկավարող, գիտակցությունը վերակառուցող, ինտուիցիա առաջացնող, նյարդային լարվածությունը հանող և մարտական ոգին ամրապնդող երաժշտության համակցությամբ պարապմունքների կազմակերպումը»[3]: Մարտական արվեստներում իրականության գեղագիտական յուրացումը իրականանում է մարտի, ավելի ստույգ՝ մարտի իդեալական պատկերի միջոցով: Երբեմն այդ պատկերում հակառակորդը ֆիզիկապես առկա չէ, սակայն ենթադրվում է:

Մարտը ենթադրում է մեկից ավելի միանման կամ իրարից տարբեր մարտի իդեալական պատկերների միաժամանակյա իրականացման փորձ, որի ժամանակ կողմերից յուրաքանչյուրը հետապնդում է որոշակի նպատակներ:

Մարտի պատկերը կազմված է տեխնիկայից, մարտավարությունից (տակտիկայից) և մարտի նպատակից (ռազմավարությունից, ստրատեգիայից): Նպատակին հասնելու համար առաջին հերթին հարկավոր է չթողնել հակառակորդին իրականացնելու մարտի սեփական պատկերը, խանգարել նրան հասնելու իր նպատակին և կիրառելու իր տեխնիկան:

Մարտը հարկավոր է տարբերել սովորական կռվից և ծեծկռտուքից: Սովորական կռվի նպատակն է՝ բոլոր հնարավոր միջոցներով որքան հնարավոր է շուտ ծնկի բերել հակառակորդին: Կարող ենք ասել, որ ծեծկռտուքը վերածվում է մարտի, երբ դրանում դրսևորվում են որոշակի տեխնիկական, մարտավարական հնարքներ ու մտահղացումներ: Տիրապետել մարտի տեխնիկային խիստ կարևոր է, սակայն տեխնիկան առանց փիլիսոփայական աշխարհայացքի դեռևս բավարար չէ, որպեսզի այն վերածվի մարտարվեստի: Կարելի է մի քանի ամսվա ընթացքում սովորել որևէ դպրոցի տեխնիկան, ոճը, հնարքները, սակայն թափանցել այդ արվեստի խորքը, հասկանալ դրա հոգևոր բովանդակությունը, հնարավոր է չհասնել նույնիսկ ամբողջ կյանքի ընթացքում:

Որքան նվազ է դրանում գեղագիտական ու փիլիսոփայական տարրը, այնքան օգտապաշտական ու բովանդակապես աղքատիկ է մարտիկի աշխարհայացքը: Օրինակ, Ճապոնիայում սամուրայները սկզբնական շրջանում աչքի էին ընկնում իրենց կոպտությամբ, բռիությամբ ու դաժանությամբ: Նրանցից պահանջվում էր կույր հավատարմություն տիրոջը և արիություն մարտում: Սակայն ժամանակի ընթացքում պարզվեց, որ դա քիչ է: Երբ ռազմական գործը դարձավ մասնագիտական զբաղմունք, ծառայության սանդուղքով առաջ գնալը պահանջեց գրագիտության որոշակի մակարդակ: Սամուրայները աստիճանաբար հաղորդակից դարձան միջնադարյան արևելյան մշակույթին, հատկապես ձեն բուդդայականությանը, որի մեջ նրանք գտան ինքնակատարելագործման հնարավորություն[4]:

Մարտարվեստի փիլիսոփայությունը որոշակի փիլիսոփայության կիրառությունն է թե՛ մարտում և թե՛ առօրյա կյանքում: Դրանց միջոցով մարդիկ սովորում են ոչ այնքան մարտ վարելու կամ ինքնապաշտպանվելու արվեստը, որքան ճիշտ ապրելակերպ: Ճիշտ է, դարերի ընթացքում այդպես էլ չմշակվեց մարտական արվեստների ինքնուրույն, առանձին փիլիսոփայական ուսմունք, այնուհանդերձ, այդ փիլիսոփայությունն իր սկզբունքները փոխառեց արևելյան հոգևոր մշակույթից ու փիլիսոփայական դպրոցներից, հատկապես՝ կոնֆուցիոսականությունից, դաոսականությունից և բուդդայականությունից: Այլ խոսքով, մարտական արվեստների փիլիսոփայությունն ունի համադրական բնույթ, հենվում է փիլիսոփայական տարբեր ավանդույթների վրա: Այսպես, կոնֆուցիոսականությունից այն փոխառել է բարոյական դաստիարակության, հասարակության մեջ անհատի

մասնակցության, մարդասիրության, ծնողապաշտության, ավագապաշտության, ծիսապաշտության սկզբունքները: Այս փիլիսոփայության մեջ պարտքը դիտվում է որպես բարոյականության բարձրագույն դրսևորում: Դաոսականությունից այն փոխառել է բնականության, մարդու ու բնության ներդաշնակության, «անգործության» և «դատարկ գիտակցության» գաղափարները: Մարդու խնդիրն է հետևել բնության օրենքներին. մարդը հետևում է Երկրին, Երկիրը` Երկնքին, Երկինքը` Դաոյին, իսկ Դաոն` բնականությանը: Դաոսականության իդեալական մարդը իր արարքներով ու մտածումներով իրագործում է Երկնքի կամքը, հետևում Դաոյին, ուստի կարիք չունի ծիսական արարողությունների:

Արևելյան մարտարվեստների ձևավորման ու զարգացման վրա էական ազդեցություն է ունեցել նաև հին հնդկական փիլիսոփայության առաջատար ուղղություններից մեկը` բուդդայականությունը: Սակայն բուդդայականությունը կարևոր դեր է խաղացել ոչ թե հնդկական, այլ չինական մարտական արվեստների ձևավորման գործում, ընդսմին, դաոսական ու կոնֆուցիոսական փիլիսոփայության հետ միասին: Բանն այն է, որ 3-րդ դարում բուդդայականությունը սկսվում է տարածվել Չինաստանում, որտեղ տիրապետող էին կոնֆուցիոսական ու դաոսական ուսմունքները: Դա բնականաբար դժվարացնում էր բուդդայական գաղափարների տարածումը: Չինական հզոր ավանդույթներ ունեցող մշակութային տարածքում բուդդայականությունը աստիճանաբար չինականացվում է և ձեռք բերում յուրահատուկ գծեր: Դաոսականության և բուդդայականության հիմքի վրա ձևավորվում է մի նոր ուղղություն, որը կոչվում է ***չան*** բուդդայականություն: Դրա հիմնադիրն է համարվում 6-րդ դարի մտածող ***Բոդհիդհարման***` բուդդայականության քսանութերորդ և չան բուդդայականության առաջին պատրիարքը: Չան բուդդայականությունն անվանում են նաև մեդիտատիվ բուդդայականություն, քանի որ դրա կենտրոնական հասկացությունը մեդիտացիան է: *Չան* բառը ծագում է սանսկրիտերեն ***դհյանա` հայեցողություն, մտասևեռում, խորհրդածություն*** (մեդիտացիա) բառից:

Չան բուդդայականությունը և դրա վրա հիմնված մարտարվեստի ձևերը ավելի մեծ տարածում գտան միջնադարյան Ճապոնիայում, որտեղ այդ ուսմունքը ստացավ ձեն բուդդայականություն անվանումը: ***Ձեն*** հասկացությունը չինական ***չան*** հասկացության ճապոնական տարբերակն է: Թեև ճապոնացիները հակված են ձենը համարելու զուտ ազգային երևույթ, այնուհանդերձ, ակնհայտ է դրա ծագումնաբանական աղերսները չինական բուդդայականության հետ: Այլ բան է, որը ձեն բուդդայականությունը, միախառնվելով ազգային որոշ ավանդույթների հետ, այնքան խորն է արմատավորվել ճապոնացիների կյանքում, որ այն դարձել է ազգային ինքնության վկայականներից մեկը:

Ձեն բուդդայականությունը Ճապոնիայում ձևավորվել է 12-րդ դարում, իսկ ծաղկում ապրել` 14-15-րդ դարերում, հատկապես սյոգունների իշխանության տարիներին: 12-րդ դարում ուսուցիչ Էյսայը Չինաստանից վերադառնալով` հիմնում է Ռինձայի դպրոցը: 13-14-րդ դարերում ձենը մեծ տարածում է ստանում ճապոնական իրականության մեջ` դառնալով ճապոնական կենսակերպի բաղկացուցիչներից մեկը: Դրան նպաստեց նաև այն հանգամանքը, որ միջֆեոդալական երկպառակությունների շրջանում կենտրոնական իշխանությունը խիստ շահագրգռված էր այդ ուսմունքի տարածման գործում, քանի որ դրա հիմքում ընկած էին կարգապահության, հավատարմության, ինքնանվիրումի գաղափարները: 1324թ. հիմնադրվում է ***Դայկունձիի*** վանական համալիրը (դրա մեջ մտնում էին 23 վանքեր), որը անմիջականորեն ենթարկվում էր կենտրոնական իշխանությանը:

Չան բուդդայականության «գիտակցության պայծառացման» պրակտիկան իր արտացոլումը գտավ մարտական արվեստների մեջ: Չան բուդդայականությունը հաստատում էր դատարկ-պայծառացած գիտակցության իդեալը, որը հենց Բուդդան է (տվյալ դեպքում Բուդդան ոչ թե անձնավորություն է, այլ` հոգու վիճակ): Գործունեության յուրաքանչյուր տեսակ դիտվում էր որպես Բուդդայի վիճակին հասնելու եղանակ: Դրա համար անհրաժեշտ էր կիրառել դաստիարակության համապատասխան կանոններ ու մեթոդներ:

Մարտարվեստների փիլիսոփայության ձևավորման գործում կարևոր դեր են խաղացել նաև հին չինական բնափիլիսոփայական, հատկապես ին և յան, հինգ տարրերի, մեծ ու փոքր տիեզերքների նմանության, ցի էներգիայի վերաբերյալ ուսմունքները: Օրինակ, չինական փիլիսոփայության մեջ ***ին*** սկիզբը մարմնավորում է իգականը, բացասականը, մեղմը, մութը, ցուրտը, իսկ ***յանը***` արականը, դրականը, կոշտը, լուսավորը, տաքը: Մարտարվեստներում հարձակողական, ագրեսիվ բոլոր գործողությունները դիտվում էին որպես ***յանի*** դրսևորումներ, իսկ խուսանավումները, պաշտպանական թեթև գործողությունները` ***ինի*** դրսևորումներ:

Այսպիսով, մարտարվեստի յուրաքանչյուր դպրոց (լինի դա ժողովրդական, վանքային թե զինվորական) հենվում էր հոգևոր մշակույթի և փիլիսոփայության տարբեր ավանդույթների վրա` դրանք համապատասխանեցնելով սեփական դպրոցի ավանդույթներին:

Մարտական արվեստները ձևավորվում ու զարգանում էին դպրոցների ձևով: Յուրաքանչյուր դպրոց ուներ իր մարտական ոճը, պատմությունը, առասպելները, ծեսերը և արարողակարգերը: Դպրոցները ավելի շուտ ունեին հոգևոր նշանակություն. դրանք հոգևոր հաղորդակցության մեջ գտնվող մարդկանց միություններ էին, ուստի բացառվում էր պատահական մարդկանց առկայությունը: Դպրոցի դարպասներից ներս ոչ բոլորը կարող էին մտնել: Ընդ որում, ընտրելով աշակերտներին, Ուսուցիչը հաշվի էր առնում ոչ միայն դիմորդի ֆիզիկական տվյալները, այլև հոգեկան հատկությունները:

Դպրոցների կառուցվածքը նման էր չինական ընտանիքի, դաոսական և բուդդայական վանական միաբանությունների կառուցվածքին: Դպրոցը համարվում էր մի ընտանիք, իսկ նրա անդամները իրար անվանում էին «եղբայրներ»: Դպրոցում ուսուցումը տևում էր շուրջ տասնհինգ տարի: Առաջին հինգ տարիների ընթացքում հիմնականում սովորեցնում էին մարտ վարելու տեխնիկայի հիմնային տարրերը, շարժումների ու հնարքների ձևերը, մեծ ուշադրություն էր դարձվում հոգեմարմնական հատկությունների կոփմանը: Եթե հիմա մարտիկը կարող է մեկ տարվա ընթացքում ձեռք բերել սև գոտի, ապա ավանդական դպրոցներում այդ ժամանակահատվածում հազիվ հասցնում էին աշակերտներին սովորեցնել ճիշտ կանգնել, քայլել, շնչել, քնել և այլն: Այլ խոսքով, շտապողականությունը չէր խրախուսվում, որովհետև դա ոչ միայն վտանգավոր էր օրգանիզմի համար, այլ չէր համընկնում մարտարվեստի վերջնական նպատակի հետ:

Հաջորդ հինգ տարիների ընթացքում աշակերտներին սովորեցնում էին կատարելապես տիրապետել ստանդարտ հնարքներին, մարտ վարելու ռազմավարական ու մարտավարական սկզբունքներին, զենքի տարբեր տեսակներով կռվելու ձևերին: Իսկ վերջին հինգ տարիների ընթացքում ուշադրություն էր դարձվում օրգանիզմի էներգետիկական ներուժի բացահայտմանը և դրա ռազմա-կիրառական կողմի վրա, ինչպես նաև աշակերտներին ծանոթացնում էին դպրոցի գաղտնի ավանդույթներին (բարդ տեխնիկական հնարքներին, ճշգրիտ հարվածներ հասցնելու արվեստին, մեդիտացիայի

գաղտնիքներին և այլն): Ուսուցիչները դպրոցի գաղտնիքները փոխանցում էին միայն լավագույն մարտիկներին:

Հարկ է նշել, որ ուսումնական գործընթացը ոչ միայն երկարատև էր, այլև բավական դժվարին: Առաջին տարիներին նորակոչիկն անցնում էր բարդ փորձությունների միջոցով. նա պարտավոր էր տանել ոչ միայն Ուսուցչի, այլև «ավագ եղբայրների» ծաղր ու ծանակը, ֆիզիկական ու բարոյական պատիժները: Դրանք հիմնականում ուսուցողական բնույթ էին կրում, որոնց ընթացքում ստուգվում էին նորակոչիկների բարոյահոգեբանական պատրաստվածության մակարդակը:

Առհասարակ, դպրոցներում ուսուցումը բազմակողմ էր: Օրինակ, շաոլինյան վանքում ուսուցանվում էին հետևյալ առարկաները.

ա) փիլիսոփայություն. ուսումնասիրվում էին ինչպես բուդդայականության, այնպես էլ կոնֆուցիոսական ու դաոսական ուսմունքները, վանական օրենքները և մեդիտատիվ պրակտիկայի հիմունքները.

բ) մարտական արվեստ. ուսումնասիրվում էին մարտական արվեստների պրակտիկան՝ մարտավարությունն ու ռազմավարությունը.

գ) բժշկագիտություն. ուսումնասիրվում էին մերսումի, ասեղնաբուժության հիմունքները և բուժիչ յուղերի ու դեղերի պատրաստման ձևերը.

դ) քաղաքացիական գիտություններ. ուսումնասիրվում էին գեղանկարչություն, վայելչագրություն (կալլիգրաֆիա), քերթողական արվեստ, երաժշտություն:

Շաոլին վանքում ուսուցման հիմնական մեթոդը մարմնավորման մեթոդն էր. մարտիկը մտովի իրեն նույնացնում էր անցյալի որևէ հերոսի, կենդանիների, առարկայի, երևույթի (փայտ, քամի, կրակ, ջուր և այլն): Ուսուցման ընթացքում վանականները ներկայացնում էին հետևյալ պարտադիր պահանջները՝ *աստիճանականություն, անընդհատություն, չափավորություն, ինքնավերահսկում ու ինքնազսպում, հաշվենկատություն:*

Աշակերտների ֆիզիկական ու հոգեկան ունակությունների զարգացումը համատեղվում էր շրջապատի առանձնահատկությունների, կենսառիթմերի, մեծ տիեզերքում կատարվող փոփոխությունների և մարդու վրա դրանց հնարավոր ազդեցությունների հետ: Այդ է պատճառը, որ գրեթե բոլոր դպրոցներում մեծ տեղ էր հատկացվում հինգ տարրերի՝ ջրի, կրակի, հողի, փայտի և մետաղի հաղթահարման արվեստի ուսուցմանը: Դա նշանակում էր, որ աշակերտը պետք է կարողանար կյանքին նայել ոչ միայն հինգ տարրերի տեսանկյունից, այլև դիմանար ցրտին, շոգին, անտանելի պայմաններին: Ուսուցման գլխավոր նպատակներից էր հասնել տվյալ աշակերտի համար օպտիմալ հոգեֆիզիկական մարզվածության և տեխնիկական վարպետության մակարդակի:

Մարտական արվեստի ոճերը մշակվում էին դպրոցների ներսում, որոնք հետագայում դպրոցից հեռացած աշակերտների ջանքերով կատարելագործվում էին՝ ձեռք բերելով նորանոր երանգներ: Այս ճանապարհով տարիների ընթացքում ի հայտ էին գալիս մարտական արվեստի նոր ոճեր, ձևեր և դպրոցներ, որոնք ունեին ընդհանուր արմատներ, բայց իրարից տարբերվում էին ոչ միայն իրենց տեխնիկական զինանոցով ու ուսուցման մեթոդներով, այլև գիտելիքների փոխանցման եղանակներով: Սովորաբար բոլոր դպրոցներում պարապմունքները սկսվում էին նստած մեդիտացիայով, որի ժամանակ ձեռք էր բերվում հոգևոր և ֆիզիկական ուժերի կենտրոնացման անհրաժեշտ մակարդակ: Այնուհետև անցկացվում էին նախապատրաստական մարզումներ, որոնց ընթացքում մեծ տեղ էր հատկացվում շնչառական վարժություններին ու օրգանիզմում ցի էներգիայի շրջանառության կարգավորմանը:

Մարտական արվեստի ոճը կոնկրետ տեխնիկական հնարքների և մարզման մեթոդների համալիր է: Ոճը հիմնվում է մի շարք առանցքային սկզբունքների վրա, որոնք կազմում են ողջ տեխնիկայի միջուկը: Յուրաքանչյուր ոճ ունի կանոնական հնարքների իր զինանոցը:

Ըստ տեխնիկական զինանոցի դպրոցների ոճերը բաժանում են երկու խմբի. առաջինում (որը կոչվում է ***տաոլու)*** ուսուցանում են հակառակորդի հետ մշակվող հնարքներ (մրցակցային ոճ), որի գլխավոր նպատակն է գործնականում հղկել զենքով և առանց զենքի այն շարժումներն ու հնարքները, որոնք մարտի ժամանակ պետք է ապահովեն հաղթանակը: Այս ոճի միջոցով իրականանում է կապը նախնիների հոգևոր ավանդույթների հետ: Իսկ երկրորդ ոճը ***(կատա)*** ենթադրում է տարրական, ձևական վարժությունների կատարման հնարքների ամբողջություն, որի ընթացքում աշակերտը կրկնում է ուսուցչի գործողությունները, շարժումներն ու խոսքերը և, դրանով իսկ, կարծես թե հաղորդակից է լինում հնուց եկող ավանդույթի խորհուրդին: Այդ վարժությունների կատարման ընթացքում աստիճանաբար փոխվում է աշակերտի աշխարհընկալումը. նա կարողանում է կենտրոնացնել իր հոգևոր ուժերը և հոգեբանորեն նախապատրաստվել մարտին: Այս երկու ոճերի համար ընդհանուրը մարտիկի հոգեֆիզիոլոգիական կենտրոնացումն է, նախապատրաստվածությունը իրական մարտին:

Արևելյան մարտական արվեստներում գոյություն ուներ Ուսուցչի պաշտամունք: Ուսուցիչը մարմնավորում է մարտական արվեստը: Նա ուսուցանում է ոչ այնքան գրված, հայտնի կանոններով, որքան ինքնուրույն, անձնական շփումների ու հոգևոր հաղորդակցության ընթացքում: Դաոսականները Ուսուցչին նմանեցնում են հայելու, որն օբյեկտիվորեն արտացոլում է իրականությունը, սակայն ինքը մնում է անփոփոխ: Աշակերտը, նայելով նրան, տեսնում է ոչ թե հայելու մակերևույթը, այլ իր արտացոլանքը: Իսկ դա նշանակում է, որ նրա իսկական կերպարն անհայտ է մնում մեծամասնության համար: Ուսուցիչը իմաստունն է: Նրա վարքագիծն անբռնազբոսիկ ու բնական է: Մեռցնելով իր կրքերը, հասնելով հոգեկան հանգստության, ձեռք բերելով «դատարկ գիտակցություն»՝ նա միաձուլվում է Դաոյի հետ: Դրանից հետո նրա յուրաքանչյուր գործողություն առանձնակի արժեք է ձեռք բերում, քանի որ դրանցից ամեն մեկը դիտվում է որպես Դաոյի դրսևորում: Մարտական արվեստի ուսուցանումը նրա համար նշանակում է ճշմարիտ ավանդույթի փոխանցում: Ուսուցիչը տվյալ դպրոցի հիմնադրի մարմնացումն է, որի միջոցով փոխանցվում են կուտակված գիտելիքները, փորձը և ավանդույթները: Այդ փոխանցման համար անհրաժեշտ է, որ Ուսուցչի ու աշակերտի միջև հաստատվեն վստահելի հարաբերություններ: Ուսուցիչը և աշակերտը պետք լինեն անկեղծ, սրտակից ընկերներ: Ուսուցիչը իր աշակերտի մեջ պետք է տեսնի ապագա Ուսուցչին: Չէ որ բոլոր ուսուցիչները ժամանակին եղել են աշակերտներ և տքնաջան, համառ աշխատանքի շնորհիվ ֆիզիկապես ու հոգեպես վերածնվել են և իրավունք ձեռք բերել իրենց փորձը հաղորդելու ուրիշներին: Օրինակ, սամուրայները մեծ հարգանքով էին վերաբերվում իրենց ուսուցիչներին՝ առաջնորդվելով «ծնողներս ինձ կյանք են տվել, իսկ ուսուցիչս՝ մարդ դարձրել» նշանաբանով: Աշակերտն անվերապահորեն պետք է հավատա Ուսուցչին, այլապես չի կարող հասու լինել նրա գաղափարներին, մարտական արվեստի ոճին և իմաստնությանը: Այդպիսի հավատքը ճշմարիտ ուղուց չշեղվելու երաշխիք է: Միայն նրանք, ովքեր անմնացորդ նվիրվում են Ուսուցչին և նրա մարտական արվեստի ոճին, կարող են դառնալ ճշմարիտ ավանդույթի ժառանգորդներ:

Մարտական արվեստներում ճշմարիտ ավանդույթի փոխանցումը էական նշանակություն ունի, քանի որ արժեքավոր է համարվում ոչ միայն մարտ վարելու տեխնիկան, հնարքներին տիրապետելը, այլև նախնյաց իմաստունների հոգևոր ժառանգության յուրացումը: Այդ նպատակին են ծառայում մեդիտատիվ մի շարք վարժություններ, որոնք ապահովում են անցյալ-ներկա սերունդների հոգևոր հաղորդակցությունը:

Մեդիտացիան մարտական արվեստների կարևորագույն բաղկացուցիչներից է: Մեդիտացիայի գաղափարը հանգամանորեն մշակվել է ձեն բուդդայականության կողմից: Այդ ուսմունքի հիմքում ընկած է հանկարծակի, ակնթարթային պայծառացման ***(սատորի)*** գաղափարը: Սատորին ձենի էությունն է, առանց որի ձենը չի կարող ձեն լինել: Ով հասու չէ սատորիին, նա չի կարող հասկանալ ձենի գաղտնիքները[5]: ***Սատորի*** նշանակում է սեփական Ես-ի մեջ Բուդդայի ճանաչումը: Ձեն բուդդայականության հետևորդները ոչ միայն փնտրում էին ամենակարճ ուղիները պայծառացման հասնելու և իրենց մեջ Բուդդայի բնության ճանաչման համար, այլև ձգտում էին խորասուզվել այն ամենի մեջ, ինչով զբաղվում էին` լինի դա թեյախմություն, այգեգործություն թե մարտական պարապմունքներ: Պայծառացման հասնելու և սեփական հոգու մեջ Բուդդայի բնությունը ճանաչելու համար հարկավոր է հրաժարվել նպատակադիր գործունեությունից և դառնալ վանական կամ անապատական: Սակայն ոչ բոլորը կարող են հետևել այդ ուղուն: Ուստի, շատերի համար ձենը հոգեֆիզիկական հավասարակշռության հասնելու ուղի է: Նրանք օգտագործում են ձենի մեթոդները հոգևկան ինքնակարգավորման համար: Գիտակցության հետ աշխատելու հիմնական մեթոդներն են` կենտրոնացում օբյեկտի վրա և պասսիվ հայեցողություն: Այդ մեթոդներն իրար հետ փոխկապակցված են և միասին հնարավորություն են տալիս ակնթարթորեն հակադարձելու արտաքին աշխարհից եկող ազդակներին: Կենտրոնացումը թույլ է տալիս ի մի բերելու, հավաքելու մարդու ֆիզիկական ու հոգևոր ուժերը և դրանք ուղղորդել անհրաժեշտ օբյեկտի վրա: Հընթացս վարժում են ինչպես երկար ժամանակ ուշադրությունը մի օբյեկտի վրա պահելու, այնպես էլ մի օբյեկտից մյուսին ակնթարթորեն անցնելու կարողությունը: Այս կապակցությամբ նշանավոր բուդդայական վանական Տակուանը (1573-1645) գրում է հետևյալը. «եթե դուք շրջափակված եք չորս կողմից, և հակառակորդներից յուրաքանչյուրը փորձում է ձեզ հարվածել սրով, ապա դուք պետք է պաշտպանվեք` առանց «կանգառի» անցնելով մեկ սրից մյուսին: Այդ դեպքում ձեր հնարավորությունները կլինեն հավասար: Իսկ եթե ձեր ուշադրությունը կանգ առնի մեկ սրի վրա, ապա դուք կհայտնվեք թշնամու իշխանության տակ: Ոգի-բանականությունը երբեք չպետք է կանգ առնի մեկի վրա, որպեսզի կարողանա պահպանել իր բնական շարժունակությունը»[6]:

Կենտրոնացման պահին բազմապատկվում է մարդու էներգետիկական ներուժը, քանի որ առկա ուժերին միանում են թաքնված, «քնած» ուժերը: Մարտարվեստներում կենտրոնացումը նշանակում է կարողանալ սեփական էներգիան ճիշտ ու նպատակային ուղղորդել և ապահովել ցանկացած ուժային շարժման ներքին բովանդակությունը: Եթե կենտրոնացումը հիմնված է գիտակցության լարված աշխատանքի վրա, ապա հայեցողությունը ենթադրում է գիտակցության լրիվ թուլացում: Մեդիտացիայի ընթացքում նույնպես տեղի է ունենում կենտրոնացում, սակայն ոչ թե օբյեկտների, այլ զգայությունների, ընկալումների, պատկերացումների և մտքերի վրա: Այլ խոսքով, արտաքինը փոխարինվում է ներքինով, և հայեցողությունը վերածվում է սեփական ներքին բնության երևույթների ճանաչողությանը: Մտածողությունը չի բացակայում, սակայն բացակայում է տրամաբանական վերլուծությունը և վերահսկողությունը:

Ձենի կողմնակիցները մերժում են ռացիոնալ ու վերբալ, հասկացություններով ճանաչողությունը: Ռացիոնալ և վերբալ ճանաչողությունը հատվածական և սահմանափակ բնույթ ունի: Հասկացությունները ամրագրում են իրերի առանձին կողմերը, հետևաբար դրանք չեն կարող ապահովել ճանաչվող առարկայի ամբողջական արտացոլումը գիտակցության մեջ:

Մեդիտացիայի մեջ միստիկական ոչինչ չկա (անշուշտ, կան մեդիտացիայի էության տարբեր ըմբռնումներ, այդ թվում այնպիսին, որը փորձում է դա միստիֆիկացնել, պարուրել խորհրդավորության քողով). դա պարզապես մարդուն հոգեբանորեն նախապատրաստում է անհրաժեշտ քայլեր կատարելու համար: Մեդիտացիայի ընթացքում տեղի է ունենում ֆիզիկական և հոգևոր ուժերի կենտրոնացում, մարդու հոգեկանի վերակառուցում, ֆիզիկական ու հոգևոր ուժերի ինքնակարգավորում: Մարդն ազատվում է ավելորդ, տվյալ պարագայում ոչ կարևոր մտածմունքներից ու ուշադրությունը բևեռում է իր առջև դրված խնդրի լուծման վրա: Մարտական արվեստներում ձևավորվել է հետևյալ նշանաբանը` *բանականություն - ինտուիցիա - իրականություն:* Այսինքն` ուշադրության կենտրոնացում հակառակորդի վրա, ես-ի միաձուլում հակառակորդի անձի հետ և բնազդային հակազդում հակառակորդի ցանկացած գործողության հանդեպ:

Իրավիճակի ամբողջական ընկալումն ու գնահատումը հնարավորություն է տալիս արագորեն մշակել տեղեկատվությունը և նպաստել որոշումների արագ ու տարերային ընդունմանը: Պատմում են, որ նշանավոր սուսերամարտիկ Կամիձումին (16-րդ դար) մի անգամ գիշերը անցնում էր մութ փողոցով: Հանկարծ նախազգացումը նրան հուշեց սպասվող վտանգի մասին: Կանգ չառնելով, նա ակնթարթորեն հանեց սուրը, վճռական շարժումով շրջան գծեց սրով, և դարանակալված չորս հոգի փռվեցին գետնին:

Օրինակ, այկիդոյի մեջ մեծ ուշադրություն է դարձվում կենտրոնացմանը, հատկապես այն ձևին, որ ուշադրությունը բևեռվի որովայնի ներքին մասի վրա (արևելյան պատկերացումների համաձայն` մարմնի այդ մասը համարվում է մարմնի և հոգու փոխհամաձայնեցման կենտրոն): Իսկ կարատեի մեջ կարևոր ուշադրություն է դարձվում շնչառության գործոնին: Որոշ իմաստով կարող ենք ասել, որ կարատե մարզաձևի բոլոր գործողությունները կապված են շնչառության հետ: Օրինակ, կենտրոնացված, ուժեղ արտաշնչումը, որն ուղեկցվում է ճիչով, օգնում է կարատեիստին հարվածի պահին կենտրոնացնել ամբողջ ուժը ձեռքի կամ ոտքի անհրաժեշտ կետում: Ճիչը հնարավորություն է տալիս հարվածի մեջ կենտրոնացնել ոչ միայն ֆիզիկական ուժը, այլև մարմնի էներգիան: Դա միևնույն ժամանակ որոշակի ազդեցություն է թողնում հակառակորդի վրա` խախտելով նրա հոգեբանական հավասարակշռությունը:

Շնչառության հիմունքներին տիրապետելը բարերար ազդեցություն է թողնում մարդու ոգու և մարմնի վրա: Առանց ճիշտ շնչառության հնարավոր չեն ոչ ուշադրության կենտրոնացում, ոչ դինամիկ կամ ստատիկ մեդիտացիա, ոչ էլ ներքին էներգիայի կառավարում: Սխալ շնչառությունը առաջ է բերում ուժերի կորուստ, հոգեկան անկայուն վիճակ: Շնչառության տիրապետողը կարող է հանգիստ վերականգնել շնչառությունը երկարատև թեժ մարտից հետո, պահպանել հոգեկան հաստատուն վիճակ: Ճիշտ շնչառությանը տիրապետելը գիտակցության բարձր վիճակի հասնելու կարևորագույն պայմաններից է: Պատահական չէ ձենի պասսիվ, նստած մեդիտացիայի առաջին պայմանը. դա շնչառությունն ու ճիշտ կեցվածքն է: Չնայած այս պասսիվ մեդիտացիայի մեթոդը չունի անմիջական կապ մարտական

արվեստների հետ, բայց նրա կիրառման պասսիվ սկզբունքներն աստիճանաբար վերածվում են ակտիվ, շարժուն մեդիտացիայի: Շնչառության տիրապետումը իր հետ բերում է պրակտիկ հնարավորություններ, որոնք անհրաժեշտ են մարտիկին կռվի ժամանակ: Դա հարվածների առավելագույն ուժին հասնելն է՝ առանց ցավ զգալու հակառակորդի հարվածներից[7]: Մարտի ժամանակ շնչառության ռիթմի խանգարումը հղի է մահացու վտանգով, քանի որ դա մարտիկին հանում է հոգեկան հավասարակշռությունից:

Այսպիսով, վերոգրյալից կարող ենք եզրակացնել. մարտարվեստները ֆիզիկական ու հոգևոր երևույթների (տեխնիկայի, ուսուցման մեթոդիկայի, հոգեմարմնական կարգավորման մեխանիզմների, արվեստի, փիլիսոփայության) համախմբություն են, որոնց նպատակը ոչ միայն ինքնապաշտպանությունը կամ հարձակումն է, այլև մարդու բարոյական կատարելագործումը, հոգևոր պահանջմունքների բավարարումը: Դա գերազանցապես վերաբերում է ավանդական (արևելյան) մարտարվեստներին, որոնց միջոցով մարդը ձգտում էր հասնել կեցության բարձրագույն նպատակին:

[1] Տե՛ս *Գևորգյան Վ. Ժ.,* Մարտարվեստների բացատրական բառարան, Երևան, 2003, էջ 233:
[2] Այդ մասին տե՛ս *Долин А. А., Попов Г. В.* Кэмпо-традиция войнских искусств. М., “Наука”, 1990, стр. 14-15.
[3] *Գևորգյան Վ. Ժ.,* Կարատե մարտարվեստ, Երևան, 2004, էջ 64:
[4] Տե՛ս *Պրոննիկով Վ. Ա., Լադանով Ի.Դ.,* Ճապոնացիները: Ազգահոգեբանական ակնարկներ, Երևան, «Հայաստան», 1989, էջ 155:
[5] *Судзуки Д. Т.* Основы дзен-буддизма. В кн.: “Буддизм: Четыре благородных истины”. М., Изд-во “ЭКСМО”, 2002. стр. 414-415.
[6] Մեջբերումն ըստ՝ *Долин А. А., Попов Г. В.* Кэмпо - традиция войнских искусств. М., “Наука”, 1990, стр. 218.
[7] Տե՛ս *Գևորգյան Վ. Ժ.,* նշվ. աշխ., էջ 89:

---

## CHARACTERISTIC FEATURES FIGHTING ARTS

ARA SARGSYAN

*Applicant of the Yerevan State University*
*Chair of the History of Philosophy*
*Commander, Vice-Colonel Military Unit N*

Summary

The outline of the formation and development of the fighting art as well as the origin of the fighting art and its principles are presented in the given article. So the following point of view is defined: fighting art is the combination of physical and psychological (technics, teaching methods, physical-psychological regulation mechanism, art, philosophy) phenomena, having the aim not only of self-defence or attack but the moral improvement of the individual, the satisfaction of psychological requirements and the achievement of the highest goals of existense.

## ОБЩИЕ ЧЕРТЫ БОЕВЫХ ИСКУССТВ

АРА САРГСЯН

*Истец Кафедры истории философии ЕГУ*
*Командир N войсковой части, подполковник*

Резюме

В статье общими чертами представляется источники и идейно-философские основы, история формирования и развития боевых искусств.

Обосновывается точка зрения, согласно которому боевые искусства являются совокупнстью психических и физических (техники, методики обучения, механизмов психофизических урегулирований, искусств, философия) явлений, целью которых не только самозащита или нападание, а в основном моральное совершенствование человека, удовлетворение духовных потребностей, достижение высочайшей цели бытя.

ԷԴՈՒԱՐԴ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

*Փիլիսոփայական գիտությունների թեկնածու*

# ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՏԵՍԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տրամաբանության ուսուցումը՝ որպես մանկավարժական գործընթաց, փիլիսոփայության տերմինաբանությամբ ասած, սուբյեկտի և օբյեկտի փոխհարաբերության ու փոխազդեցության, հաղորդակցման և ընկալման ինքնատիպ գործընթաց է: Այն ոչ թե չի բացառում, այլ անհրաժեշտորեն ենթադրում է փոփոխման, տրանսֆորմացիայի և արդյունքի արժեքավորման ու գործադրման՝ գիտելիքի միջոցով նոր գիտելիքի ստացման ռեալ հնարավորությունը: Այնպես որ մանկավարժությունը, յուրահատուկ գործունեություն կամ, ավելի ստույգ, իմացական գործունեության ինքնուրույն տեսակ դիտարկելը, մեր համոզմամբ, խոցելիության տեղիք չի կարող տալ[1]: Հավելենք միայն, որ հիշյալ գործընթացի կառուցվածքային տարրերը՝ սուբյեկտ, օբյեկտ, հաղորդող, ընկալող, դասախոս, ուսանող, խիստ տարանջատված բնույթ չեն կրում: Համոզեցուցիչ չի թվում այն մոտեցումը, ըստ որի՝ դասախոսը, ուսուցիչը հաղորդակցական, մանկավարժական գործունեության սուբյեկտն է, իսկ ունկնդիրը՝ հակառակը: Մանկավարժական գործընթացը երկու կողմից էլ ակտիվ է, սուբյեկտ ⇆ օբյեկտ (դասախոս ⇆ ուսանող) բնույթ է կրում: Այլ կերպ՝ մատուցվող նյութի յուրացման արդյունավետությունը պայմանավորված է հիշյալ տարրերի երկուստեք ակտիվությամբ: Այս իմաստով էլ ասել, թե դասախոսը, ուսուցիչը հաղորդակցական, մանկավարժական գործունեության միակ սուբյեկտն է, իսկ ունկնդիրը՝ միակ օբյեկտը, համոզեցուցիչ լինել չի կարող: Հենց սուբյեկտ ⇆ սուբյեկտ հարաբերության շնորհիվ է հնարավոր հաղորդվող նյութի, թեմայի արտահայտության լսողական պատկերի առաջացումը միաժամանակ և՛ հաղորդողի, և՛ ընկալողի մոտ, ինչը, մեր համոզմամբ, դասավանդման գործընթացի վճռական գործոններից մեկն է: Ասվածն էլ դարձյալ հաստատումն է այն փաստի, որ դասավանդման գործընթացը, ի հակադրություն զուտ սուբյեկտ, զուտ օբյեկտ հարաբերության, առավել ակտիվ (ռեակտիվ) բնույթ է կրում, և նրա կառուցվածքային տարրերը՝ սուբյեկտն ու օբյեկտը, միաժամանակ և՛ օբյեկտ են, և՛ սուբյեկտ: Այդ երկու տարրերն էլ երկխոսության բնույթ կրող հաղորդակցման ու ընկալման ժամանակ նպատակաուղղված են: Հաղորդողը ձգտում է հասկացնելու, ընկալողը՝ հասկանալու հաղորդվող նյութը: Այս առումով էլ սխալ չի լինի մանկավարժությունը դիտարկել որպես սոցիալական-իմացաբանական գործունեություն, որպես ճանաչման (հարստանում են ուսանողի գիտելիքները ոչ միայն տվյալ գիտության գործառութային առանձնահատկությունների, այլև նրա իսկ կողմից ուսումնասիրվող ոլորտի օրինաչափությունների մասին), վերափոխման (հաղորդողի նպատակը ընկալողի վերափոխումն է, որի արդյունքում վերափոխվում է նաև ինքը՝ հաղորդողը), արժեքավորման (որոշակի պահանջներ բավարարելու հատկության ամրագրում) միասնական համակարգ: Հետևաբար մանկավարժությունը, որպես սոցիալական գործունեության յուրահատուկ ձև, սուբյեկտ ⇆ սուբյեկտ բնույթ է կրում, և «...իրականանում է ոչ թե մեկ մեկուսացված սուբյեկտի (դասախոսի կամ ուսանողի, հաղորդողի կամ ընկալողի՝ Է. Ա.), այլև տարբեր սուբյեկտների ակտիվ, միասնական և կոորդինացիոն ջանքերի շնորհիվ»[2]: Բացառություն չի կարող լինել տրամաբանություն առարկայի դասավանդման գործընթացը, ուր ևս դասախոս սուբյեկտի աշխատանքն ուղղված է ուսանող սուբյեկտին, իսկ վերջինիս ուշադրությունն ուղղված է դասախոսին՝ հանուն նրա կողմից հաղորդվող նյութի հասկացման ու ընկալման:

Այն, մեր կարծիքով, համահունչ է Մարքսի «աշխատանքային գործունեությունը մարդու կողմից բնության և միաժամանակ ուրիշ մարդկանց վերափոխելու անհրաժեշտ իրողություն է» մտքի երկրորդ կողմի հետ միայն: Մանկավարժի աշխատանքը ուսանողի, սովորողի հոգևոր կարողությունների, հոգևոր աշխարհի վերափոխմանն ուղղված գործընթաց է: Հենց այդպիսի՝ (մարդ ⇆ մարդ) սուբյեկտ ⇆ սուբյեկտ փոխհարաբերության արդյունքում են փոխվում ուսանող սուբյեկտի մտավոր հարստությունն ու կարողությունները, ընդարձակվում և խորանում է նրա աշխարհայացքը, լիարժեք նախադրյալ է ստեղծվում բխեցման, հարադրման ու բաղդատման միջոցով նոր գիտելիքներ ձեռք բերելու համար: Մարդկային գիտելիքների գերակշռող մասը տեսական բնույթ է կրում: Տրամաբանական իմացությունը հիմնականում իրականանում է բխեցման, մտահանգման ձևով: Ճանաչողության հիշյալ տիպի գործունեության միջոցն ու օբյեկտը մարդկային մտածողությունն է, նրա ծավալաբովանդակային հարաբերությունները և բխեցման եղանակով նոր գիտելիքի ստացման օրինաչափությունները: Այնպես որ, եթե չկա բխեցում, չկա նաև գիտելիք: Այսպես. «Այս տունը երկհարկանի է» դատողություն - նախադասությունն ինքնին հնարավորություն է տալիս բխեցնելու, ստանալու նոր գիտելիք այն մասին, որ «այս տունը միահարկ կամ բազմահարկ չէ»: Ասվածի հաստատում կարող է լինել այն միտքը, որ սուբյեկտ ⇆ սուբյեկտ հարաբերության, մանկավարժական գործունեության համատեքստում երկու սուբյեկտներն էլ միաժամանակ գործող անձինք են (գործունեության լիիրավ սուբյեկտներ ու «օբյեկտներ»): Նույն սկզբունքը կարելի է արձանագրել նաև այն դեպքում, երբ ճանաչողությունը դիտարկում են ինքնաճանաչողության կտրվածքով: Այս պարագայում, փաստորեն, տեղի է ունենում սուբյեկտի, մարդու, անձնավորության երկփեղկում՝ ճանաչողի և ճանաչվողի փոխհարաբերություն, որտեղ սուբյեկտը բառի բուն իմաստով և՛ սուբյեկտ է (ճանաչող ես), և՛ օբյեկտ է (ճանաչվող ես): Այնպես որ, ինչպես վերը նշեցինք, ամեն մի գործունեության օբյեկտ չէ, որ կարող է հանդես գալ որպես սուբյեկտ, բայց ցանկացած գործունեության սուբյեկտ օբյեկտ դառնալու թեկուզ պոտենցիալ հնարավորություն ունի: Մարդ-բնություն ճանաչողական գործունեության ընթացքում օբյեկտը երբեք չի կարող սուբյեկտի վերածվել: Նման առանձնահատկությամբ օժտված է միայն մարդ-սուբյեկտի կողմից ուրիշ մարդկանց ճանաչման, ինքնաճանաչման գործընթացը, ինչն էլ առավել քան ակնառու է դասավանդման ընթացքում: Նման երևույթի առկայությունը, անշուշտ, ուղեցույց և նպատակ պետք է լինի մանկավարժի (դասախոս, ուսուցիչ և այլն) համար, մասնավորապես գործնական և սեմինար պարապմունք-

ների ժամանակ, որը հաճախ երկխոսության բնույթ է կրում:

Այսպիսով, ուսուցման, դասավանդման գործընթացը այնպիսի մակարդակ է, որտեղ գործ ունենք երկուստեք ակտիվության, երկու համակարգերի այնպիսի փոխհարաբերության հետ, որտեղ հարաբերակցող համակարգերից մեկը (տվյալ դեպքում՝ ունկնդիրը) որոշակի քանակի և որակի ինֆորմացիա է ստանում մյուսից, և նրա վարքն աստիճանաբար ստանում է նոր ուղղվածություն: Այստեղ առաջին պլան է մղվում ոչ թե գիտելիքի օբյեկտիվ բովանդակության, շրջապատող միջավայրի իրերի ու առարկաների փոխհարաբերության, այլ դրանց արտացոլումը հանդիսացող լեզվայնացած մտքերի, տվյալ դեպքում՝ տրամաբանական կատեգորիաների էության (հասկացություն, դատողություն), նրանց փոխադարձ կապի (հասկացություն ⇆ բառ, նախադասություն ? դատողություն, մտահանգում ⇆ սիլլոգիզմ) և տրամաբանական գործունեության ընթացքում ունեցած դերի և գործառութային հարաբերությունների հարցը: Հավելենք, որ նմանատիպ գործընթացը ինքնին նշանակում է պատրաստի գիտելիքների, աքսիոմատիկ ասույթների տեղեկատվություն, մտահանգման միջոցով նոր գիտելիքների ստացման նախադրյալների կուտակման, արժեքավորման և գործադրման գործընթացի առկայություն:

Ահա թե ինչու դասավանդման գործընթացն իրենից ներկայացնում է անցում պատրաստի գիտելիքներից նոր գիտելիքի: Այս պարագայում սխալ չի լինի, եթե դասախոսը հղում կատարի, վկայակոչի Ֆ. Էնգելսի այն միտքը, համաձայն որի՝ մտահանգման գործողության ընթացքում «եթե մեր նախադրյալները ճիշտ են, և եթե մենք դրանց վերաբերմամբ ճիշտ ենք կիրառում մտածողության օրենքները, ապա հետևանքը պետք համապատասխանի իրականությանը»[3]: Այնպես որ, մտահանգման ժամանակ, ըստ Էնգելսի, նոր ստացված գիտելիքի ճշմարտությունը պայմանավորված է մտահանգման համար նախադրյալներ հանդիսացող մտքերի (դատողությունների) բովանդակությամբ: Անհրաժեշտ է շարունակել միտքը՝ ընդգծելով, որ տեսական մտածողության, մտահանգման եղանակով ստացվող մտքերի, նոր գիտելիքի ճշմարտությունը պայմանավորված է ոչ միայն բազիսային գիտելիքների, մտահանգման նախադրյալներ հանդիսացող դատողությունների ճշմարտությամբ, այլև նախադրյալների փոխադարձ կապով, մտահանգման կառուցվածքային առանձնահատկություններով ու բխեցման կանոնների ճիշտ կիրառմամբ: Այսպես.

Բոլոր մետաղները պինդ նյութեր են
Սնդիկը պինդ նյութ չէ
———————————————
Սնդիկը մետաղ չէ:

Բոլոր մարդիկ մահկանացու են
Փիղը մահկանացու է
———————————————
Փիղը մարդ է:

Դժվար չէ նկատել, որ մտահանգման եղանակով ստացված նոր մտքերը («Սնդիկը մետաղ չէ» և «Փիղը մարդ է»)՝ տրամաբանական եզրակացությունները, չեն համապատասխանում իրականությանը, ճշմարիտ չեն: Հետևաբար սխալը պետք է փնտրել եզրակացության և նախադրյալների տերմինների (եզրույթների) միջև եղած փոխհարաբերության և փոխադարձ կապի մեջ: Բացի դրանից՝ սիլլոգիզմի տեսքի բերված օրինակներից առաջինում նախադրյալներից մեկը՝ «Բոլոր մետաղները պինդ նյութեր են», կառուցվածքային առումով հստակ է, ճիշտ ձևակերպված, բայց բովանդակային առումով ճշմարիտ չէ: Մինչդեռ, ինչպես նշել ենք, միայն ճշմարիտ նախադրյալներից կարող ենք ճշմարիտ եզրակացության հանգել: Երկրորդ օրինակում միտումնավոր ընդգծված է ստացված եզրակացությունը և մտահանգման նախադրյալներց մեկը՝ «Փիղը մահկանացու է» դատողություն-նախադասությունը, ինչը, անշուշտ, ճշմարիտ չէ թեկուզ այն պատճառով, որ միայն մարդու նկատմամբ է ամրագրված մահկանացու լինելու հատկությունը: Մի խոսքով, միշտ չէ, որ երկու ճշմարիտ դատողություններից տրամաբանական անհրաժեշտությամբ բխում է ճշմարիտ դատողություն: Մանկավարժի վարպետությունն էլ կայանում է հենց հիշյալ բարդույթի պարզաբանման, ուսանողին հասկացնելու մեջ: Հասկանալն ու հասկացնելն էլ, անտարակույս, դասախոսի և ուսանողի, հաղորդողի և ընկալողի ինֆորմացիայի, գիտելիքների համարժեքացմանը հանգելու իրողությունն է ենթադրում[4]:

Դասավանդման գործընթացի առանցքը մատուցվող նյութի յուրացումն է, արդեն իսկ դասախոսի իմացածի՝ ուսանողի կողմից իմանալը: Այն, անկասկած, ինտելեկտուալ կարողությունների դաստիարակությանը և, հետևաբար, զարգացմանն ուղղված գործընթաց է, որը կարելի է դիտարկել նաև որպես ստացվող ինֆորմացիայի հետագա օգտագործման նախապատրաստման փուլ: Այն լեզվատրամաբանական այնպիսի համակարգ է, իմացաբանական գործունեության այնպիսի մակարդակ, որտեղ առաջին պլան է մղված ոչ թե լեզվամտային միավորներին (բառ-հասկացություն, նախադասություն-դատողություն և այլն) համապատասխանող օբյեկտների, նյութական աշխարհի իրերի ու առարկաների կապերն ու հարաբերությունները, այլև հաղորդվող ինֆորմացիան հիշելու, հասկանալու, հետագայում օգտագործելու սկզբունքը: Նշենք, որ հաղորդվող ինֆորմացիայի հասկացման ու ընկալման արդյունավետությունն ու որակը պայմանավորված են ոչ միայն ուսանողի ունեցած գիտելիքների քանակով և դրանց գործադրման յուրահատկություններով, այլև մանկավարժի վարպետությամբ, նրա կողմից օգտագործվող մեթոդների բազմազանությամբ: Աներկբա է, որ ոչ մի ինֆորմացիա, դասավանդվող և ոչ մի թեմա հասկացվել չի կարող առանց նախնական գիտելիքների. գործիք արտադրելու համար գործիք պետք է ունենալ: Այլ կերպ ասած՝ մանկավարժական գործընթացի որակը պայմանավորված է դասախոսի և ուսանողի, հաղորդողի և ունկնդրի միաժամանակյա ակտիվության, նպատակասլացության, որոշակի գիտելիքների և հմտությունների, նոր մտքի բխեցման ունակությունների, ինչպես նաև բնորոշ հարցադրումների ծագման առկայությամբ: Այնպես որ, հարցադրումը ոչ միայն նոր խնդիրների ու պրոբլեմների լուծման, այլև դասավանդման ընթացքում հաղորդվող ինֆորմացիայի, պատրաստի գիտելիքների յուրացման ու հասկացման գործընթացի անհրաժեշտ գումարելիներից մեկն է: Ուստի տրամաբանության դասավանդման ընթացքում նույնպես ցանկացած նյութի, նոր թեմայի հաղորդումը ցանկալի և մեթոդապես արդյունավետ կլինի սկսել որոշակի հարցադրմամբ: Այսպես. «Տրամաբանությունը որպես գիտություն, նրա առարկան և սահմանները» թեմայի դասախոսության ժամանակ, ինչն առավել հաճախ սկսվում է «Տրամաբանությունը գիտություն է մտած-

դության մասին» նախադասությամբ, անհրաժեշտ է հարցով դիմել ուսանողներին և կատարել հետևյալ հարցադրումը՝ ի՞նչ է գիտությունը: Անկախ ուսանողների տված պատասխանների բնույթից, պետք է հստակեցնել, հիմնավորել, որ այն գիտելիքների ամբողջական համակարգ է, հետազոտական, իմացաբանական յուրահատուկ գործունեություն, որն ունի ուսումնասիրության առարկա և իրականացնում է մի շարք ֆունկցիաներ: Կասկած չի հարուցում այն փաստը, որ նմանատիպ հարցադրման և պատասխանի արդյունքում ուսանողի մոտ ևս կառաջանան հստակ պատասխան պահանջող հարցեր: Ասենք, եթե ֆիզիկայի ուսումնասիրության առարկան բնության, իրերի և առարկաների ֆիզիկական հատկությունները, գոյության և գոյատևման սկզբունքներն են, իսկ տրամաբանության ուսումնասիրության առարկան՝ մտքի ձևերը, նրանց կառուցվածքային ու ծավալային առանձնահատկությունները, ապա ուսանողը, դեռևս հստակ պատկերացում չունենալով միտք և նյութական գոյ իրողությունների ու դրանց տարբերությունների մասին, ելնելով այն բանից, որ երկուսն էլ գիտության ուսումնասիրության առարկա են, կարող է հարցնել. «Տրամաբանությունը և ֆիզիկան ունե՞ն ուսումնասիրության նույն առարկան»: Հարց, որի պատասխանը համոզմունք դարձնելու համար հմտություն ու վարպետություն է պահանջվում: Ահա և մանկավարժական գործունեության էֆեկտիվությունն ու էֆեկտը ապահովող մեկ կարևոր գործոն ևս: Հավելենք, որ ուսանողի կողմից ստացված նախնական ինֆորմացիան, մակերեսային գիտելիքները առավել հիմնավորման կարիք են զգում: Մանկավարժական փորձը ցույց է տալիս, որ առավել նպատակահարմար և արդյունավետ է դրանք մեկնաբանել սեմինար և գործնական պարապմունքների ընթացքում: Այսպես. «Բարդ դատողություններ» թեմայի դասավանդման ընթացքում տրամաբանության լեզվով ներկայացվող բարդ ասույթները, ինչպիսիք են իմպլիկացիան՝ A(s-p)⇆B(s-p), դիսյունկցիան A(s-p) v B(s-p) և այլն, առավել պարզ ու հասկանալի դարձնելու համար խորհուրդ է տրվում բերել հնարավորինս շատ օրինակներ, դրանով իսկ՝ տրամաբանության լեզվով արտահայտված մտքերը «թարգմանել» բնական լեզվի: Այսպես. A(s-p)⇆B(s-p) բարդ ասույթին կհամապատասխանեն «Եթե տագնապ է հայտարարվել, ապա պետք է թաքնվել ապաստարանում», «Եթե անձրև է եկել, ապա գետինը թաց է» և նման մտքեր: A(s-p) v B(s-p) v C(s-p) բարդ ասույթին կհամապատասխանի՝ նյութերը լինում են կամ հեղուկ, կամ գազային, կամ պինդ, անկյունը լինում է կամ ուղիղ կամ սուր կամ բութ և այլն: Հաղորդվող նյութի հասկացումը, գրում են Ս. Ս. Գուսևն ու Գ. Լ. Տուլչինսկին, «...ընտրողականության, նպատակաուղղվածության գործընթաց է, ոչ միայն հաղորդակցության ուղղվածություն, որքան ինֆորմացիայի յուրացման (նաև հիմնավորման՝ Է. Ա.) առումով՝ ենթադրվում է ոչ այնքան այն «ինչ տրված է», որքան այն, ինչը պետք է հասկանալ»[5]:

Կրթադաստիարակչական պահանջների ներկա մակարդակում, սակայն, հաղորդվող նյութի որակը, ընկալման արդյունավետությունը պայմանավորված են ոչ այնքան հաղորդվող ինֆորմացիան հիշելու կամ ամրագրելու (մեխանիկական կամ ասոցիատիվ), որքան նոր ինֆորմացիա ստանալու սկզբունքով: Ասվածն էլ, ամենայն հավանականությամբ, կարող է լինել հաստատումն այն մտքի, ըստ որի՝ դասավանդումը պետք է ուղղված լինի ոչ միայն ինֆորմացիայի հաղորդմանը, այլև վաղ թե ուշ նոր ինֆորմացիայի ստացմանը կամ նրա համար որոշակի նախադրյալների նախապատրաստմանը: Փաստորեն, հիշյալ գործընթացը նպատակաուղղված բնույթ կկրի և կոչված կլինի ինչ-որ չափով պատասխանելու ի՞նչ սովորել, ինչո՞ւ և ինչպե՞ս սովորել հարցերին: Այս առումով ուսուցումը ամենից առաջ լեզվամտային գործունեության այնպիսի մակարդակ է, որն անհրաժեշտորեն ենթադրում է հստակ մեթոդական ուղղվածություն: Այսպիսով՝ ցանկացած առարկայի նյութի դասավանդման անհրաժեշտ և բավարար գործոններ պետք է համարվեն մատուցվող գիտելիքների, սկզբնական էտապում հաղորդվող ինֆորմացիայի քանակն ու որակը և դասավանդման մեթոդը:

Բուհում առավել դյուրին է այն առարկաների դասավանդումը (հաղորդողի և ընկալողի համար միաժամանակ), որոնց, թեկուզ մակերեսային չափով, ունկնդիրը ծանոթացել է դպրոցական ծրագրերի շրջանակում: Իսկ ահա տրամաբանության դասավանդման ընթացքում հաղորդողն ու ընկալողը առնչվում են ավելի շատ բարդությունների, քան, ասենք, լեզվաբանության, կենսաբանության, առավել ևս՝ պատմության դասավանդման ժամանակ: Ամբողջ հարցն այն է, որ առաջին կամ երկրորդ կուրսի ուսանողը տրամաբանությունից քիչ բան գիտի (դպրոցներում ինչ-ինչ պատճառներով տրամաբանություն առարկան ներառված չէ ծրագրեր), ծանոթ չէ գոնե ձևական կամ դասական տրամաբանության տարրերին, բնական և գիտության լեզվի ֆունկցիոնալ առանձնահատկություններին և կիրառման նպատակներին: Այս իմաստով տրամաբանության ծրագրային առաջին թեմայի (ներածության) մատուցումը պետք է բացատրական բնույթ կրի, այսինքն՝ պետք է բացատրվի անծանոթ, տրամաբանության լեզվով արտահայտված տերմինների համառոտ բովանդակությունը: Այս ընթացքում չի բացառվում նաև. «Եթե մարդը մտածող, տրամաբանող էակ է, ապա առանց տրամաբանություն իմանալու, ուսումնասիրելու էլ հնարավոր է մտածել, տրամաբանել», ուրեմն ավելորդ է ծանրաբեռնել ուսանողի առանց այդ էլ ծանրաբեռնված մտածողությունը: Հարցադրումը միանգամայն տրամաբանական է: Ուստի խորհուրդ է տրվում պարզաբանել՝

ա) Բոլոր մարդիկ՝ սովորողներն ու սովորեցնողները, նաև երեխաները, տրամաբանում են, բայց չգիտեն, որ տրամաբանում են: Սովորեցնողի, տվյալ դեպքում՝ դասավանդողի առաքելությունն այն է, որ կոնկրետ օրինակով ապացուցի դա: Որպես օրինակ կարող է ծառայել հետևյալ փաստը. Բոլոր չափահաս մարդիկ գիտեն, որ մակերեսը չափելու համար պետք է տվյալ տարածքի երկարությունը բազմապատկել լայնությամբ (անկախ իրենց կրթական մակարդակից և հիշյալ ոլորտի վերաբերյալ գիտելիքներից): Իսկ եթե տվյալ տարածքն այնպիսին է, որ չունի հստակ ընդգծված լայնություն և երկարություն (փակ կոնտուր), ապա նոր հարց է առաջանում՝ տվյալ մարդը կարո՞ղ է հաշվել այդ տարածքի մակերեսը: Շատերը կհաշվեն՝ այդ տարածքը բաժանելով առանձին՝ երկարություն ու լայնություն ունեցող մասերի, կչափեն դրանց մակերեսները և հետո միացնելով դրանք՝ կստանան եթե ոչ բացարձակ, ապա ճշմարտությանը շատ մոտ միավոր: Այդպիսի գործողությունը մաթեմատիկայում համապատասխանում է դիֆերենցիալի և ինտեգրալի գաղափարին: Ի՞նչ է ստացվում: Ստացվում է, որ տվյալ անձը գիտեր, ծանոթ էր դիֆերենցման և ինտեգրման գաղափարին, բայց չգիտեր, որ գիտեր: Ճիշտ նույն ձևով էլ մարդիկ տրամաբանում են, բայց չգիտեն, որ տրամաբանում են և, հատկապես, ինչպես են տրամաբանում: Մեկ այլ օրինակ՝ կապված մտա-

հանգման հետ: Ունենք երկու աքսիոմատիկ բնույթի մտքեր կամ լեզվաբանության կարևոր միավորի՝ նախադասության տեսքով արտահայտված միտք-դատողություններ՝

ա) Ոչ մի մարդ գիշատիչ չէ
բ) Ոչ մի հնդիկ չի շնչում խռիկներով

---

⇆

Եթե տրված այս երկու մտքերից բխեցման սկզբունքով փորձենք ստանալ նոր միտք (մտահանգումը մտային գործունեության ձև է, եղանակ, որի դեպքում ճշմարիտ մտքերից ստանում ենք նոր, դարձյալ ճշմարիտ դատողություն), ապա նոր ստացված միտքը երբեք ճշմարիտ լինել չի կարող, որովհետև խախտված է, չի պահպանված տրամաբանության այն պահանջը, կանոնը, ըստ որի՝ երկու ժխտական մտքերից նոր միտք չի բխում և այլն:

բ) Բոլոր մարդիկ տրամաբանում են, կամ նրանց մտածողությունը տրամաբանակերպ է, բայց ոչ տրամաբանված: Նույն անալոգիայով՝ մարդ կարող է խոսել մի քանի լեզվով, բայց չիմանալ այդ լեզուն, այլ իմանալ տվյալ լեզվի անմիջական իրողությունը հանդիսացող խոսքը: Տվյալ լեզվին բազմակողմանի տիրապետելու համար ամենից առաջ պետք է իմանալ լեզվի տրամաբանությունը՝ քերականությունը: Ստացվում է, որ ճիշտ մտածելու, մտքերը հստակ արտահայտելու, ճշմարիտ մտքերից նոր, նույնպես ճշմարիտ միտք ստանալու համար անհրաժեշտ է իմանալ մտքի քերականությունը՝ տրամաբանության պահանջներն ու կանոնները: Այսինքն՝ եթե լեզվի տրամաբանությունը քերականությունն է՝ ապա մտքի քերականությունը տրամաբանությունն է: Տրամաբանության դասավանդման առաջին դասերին, մասնավորապես «Ներածություն» թեմայի դասավանդման ժամանակ, անհրաժեշտություն է ծագում պարզաբանելու, տարբերակելու նշված բարդույթը:

գ) Տրամաբանել, տրամաբանական և տրամաբանություն հասկացությունների իմաստը: Այն, որ տրամաբանել, նշանակում է՝ կշռադատել, մտածել, մտքերը բաղդատել միմյանց հետ, իսկ տրամաբանական նշանակում է՝ ճշմարիտ և հստակ ձևակերպված, լեզվի ու մտածողության պահանջներին համապատասխան կառուցված, առավել քան ակնհայտ է: Այսուհանդերձ, շատ հաճախ ճիշտ ու հստակ կառուցված միտքը, հատկապես նախադասությունները, կարող են լինել ճիշտ, տրամաբանական, բայց ոչ ճշմարիտ: Այսպես. «Ռետինե տղամարդու կոշիկներ» լեզվական միավորը լիարժեք բառակապակցություն է, բայց որպես միտք ինչ-որ չափով արատավոր է, ոչ ճշմարիտ, որովհետև ռետինե տղամարդ, որպես այդպիսին, գոյություն չունի, կա ռետինե կոշիկ: Հետևաբար՝ տվյալ միավորը «տղամարդու ռետինե կոշիկներ» ձևակերպմամբ միայն կլինի ճշմարիտ և ճիշտ կառուցված լեզվատրամաբանական միավոր: Ինչ վերաբերում է «տրամաբանություն» բառ-մտքին, ապա անհրաժեշտ է ընդգծել, որ այն գիտություն է, որը, որպես այդպիսին, որպես գիտելիքների համակարգ, նոր գիտելիքների ստացման միջոց, ունի ուսումնասիրության ոլորտ, գործունեության հստակ մշակված մեթոդներ և ամրագրված կատեգորիալ ապարատ: Այնպես որ այս կամ այն ոլորտում, այս կամ այն կոնտեքստում գործածվող կատեգորիաների, միավորների, բառերի ստուգաբանությունը դեռևս նրանց բուն բովանդակության մեկնությունը չէ: Այսպես. «տրամաբանություն» բառ-տերմինը առաջացել է հունարեն logos բառից, որն էլ նշանակում է «միտք, բառ», «բանականություն», «օրինաչափություն» և օգտագործվում է որոշակի փաստեր և գործողություններ նշանակելու համար: Միայն այն բանից հետո, երբ ունկնդիրը լսում է, որոշակիորեն ընկալում նշված բառ-կատեգորիաների առանձնահատկությունը, նրա մոտ գերիշխող է դառնում, որ «տրամաբանություն», «տրամաբանել», «տրամաբանական» բառ-հասկացությունները հոմանիշներ չեն, նրանք բովանդակային և ծավալային առումով չեն գտնվում համիմաստ հարաբերության մեջ, որ տրամաբանության դասավանդումը նշանակում է ոչ թե տվյալ կատեգորիայի ստուգաբանում, այլ՝ տրամաբանության գիտության ուսումնասիրում: Տվյալ կոնտեքստում յուրացման համար առավել արդյունավետ կլինի, եթե ընդգծվի, որ տրամաբանություն գիտությունը չի բացառում համիմաստ կամ նույնության հարաբերության մեջ գտնվող լեզվատրամաբանական միավորների, բառ-հասկացությունների առկայության և գործածելիության փաստը, ինչին պետք է անդրադառնալ «Հասկացությունների տեսակներն ըստ նրանց ծավալային հարաբերությունների» թեմայի շրջանակներում: Տվյալ պարագայում անհրաժեշտ է հավելել միայն, որ համիմաստ կամ նույնական բառ-հասկացությունները տրամաբանության մեջ քննարկվում են ոչ թե բովանդակային, այլ ծավալային հարաբերությունների ասպեկտով, ըստ որի՝ դրանք ծավալով նույնն են, բովանդակությամբ՝ տարբեր: Այնպես որ տրամաբանություն գիտության կատեգորիալ ապարատի ցանկացած միավոր խիստ միանշանակ է՝ անկախ իր ծավալային յուրահատկություններից: Այսպես, «Ժակ Շիրակ» ու «Ֆրանսիայի Հանրապետության նախագահ» բառ-հասկացությունները ծավալային առումով նույնական են, համիմաստ, բայց հոմանիշներ չեն, նույն իմաստն ունեն, բայց տարբեր իրողություններ են նշանակում[6]: Հովհաննես Թումանյան և «Անուշ» պոեմի հեղինակ բառ-հասկացությունները ծավալային առումով հավասարաչափ են, բայց տարբեր են բովանդակային առումով: Մի դեպքում գործ ունենք Հովհ. Թումանյան մարդու հետ, մյուս դեպքում՝ պոետ, գրական ստեղծագործության հեղինակ մարդու հետ: Նույնատիպ, համիմաստ հարաբերության մեջ են գտնվում նաև Ջ. Բայրոն-«Շիլիոնի կալանավորը» պոեմի հեղինակ, Երևան քաղաք-ՀՀ մայրաքաղաք բառ-հասկացությունները:

Ընդհանրացնելով վերը շարադրվածը՝ նշենք, որ հաղորդակցական, դասավանդման (մանկավարժական) գործունեության նպատակը պատրաստի գիտելիքների, ինֆորմացիայի հաղորդումն ու մտապահումը չէ միայն: Կրթադաստիարակչական համակարգի համատեքստում սովորողի ինտելեկտուալ կարողությունների զարգացման հիմքը, նպատակը և ուղղվածությունը պատրաստի գիտելիքներից նոր գիտելիքի բխեցումն է, այսինքն՝ ոչ թե հիշյալ գործունեության սուբյեկտի (դասավանդող) իմացածը մյուս սուբյեկտներին (աշակերտ, ուսանող, ունկնդիր) իմանալի դարձնելն է, այլև վերջինների կողմից ձեռք բերված գիտելիքների հիմքի վրա, դրանց անմիջական մասնակցությամբ, բխեցման միջոցների, տրամաբանական պահանջների և կանոնների կիրառման շնորհիվ նոր եզրահանգումների, նոր գիտելիքների ստացումը: Հենց այս առումով է դասախոս սուբյեկտը դառնում մյուս սուբյեկտների (ուսանող, աշակերտ) հոգևոր, ճանաչողական կարողությունների դրսևորման վճռական գործոն[7]: Այստեղ առկա է նաև հակադարձ գործընթացը: Սովորող սուբյեկտները, թեկուզ իրենց հարցադրումներով, ստիպում են դասավանդողին կատարելագործելու դասավանդման վարպետությունը,

հարստացնելու գիտելիքների որակական ու քանակական բազան: Հետևությունն աներկբա է. ոչ միայն դասախոսն է սովորեցնում ուսանողին, այլև վերջինս է դասախոսին դասախոս դարձնում: Տրամաբանության դասերին հարցադրումը ևս արդեն իսկ պարունակում է որոշակի ելակետային, բազիսային ինֆորմացիա և նպատակաուղղված է հարցադրման կատարելության, այդ հիմքի վրա էլ՝ նոր եզրահանգումներ կատարելու օրինաչափությունների մեկնաբանությանը, նոր տեսական գիտելիքների ստացման անհրաժեշտությանը: Նման գործունեության պրոցեսում բխեցման միջոցով նոր գիտելիքների ստացումը, հիմնավորումը, դրանց տեսականացումը անհրաժեշտորեն պահանջում է մեթոդական միջոցների հարստացում ու կատարելագործում: Հետևաբար՝ դասավանդման գործընթացի արդյունավետությունն ընդհանրապես, տրամաբանության դասավանդումը մասնավորապես, պայմանավորված է ոչ այնքան պատրաստի գիտելիքների հաղորդմամբ ու մտապահմամբ, որքան նոր գիտելիքների ձեռքբերմանն ուղղված գործելակերպի, մեթոդների, նոր մտածելակերպի սերմանմանը, ուսանողի իմացաբանական-ստեղծագործական կարողությունների ձևավորմանը: «Ստեղծագործորեն մտածել սովորելը (նաև սովորեցնելը՝ է. Ա.),- ինչպես նշում է Ա. Սպիրկինը,- նույնքան դժվար է, որքան հայտնագործություն կատարելը»[8]: Նշենք նաև այն, որ հիշյալ բարդ գործընթացի, նոր մտածելակերպի ձևավորման մեթոդիկան, մանկավարժական, կրթադաստիարակչական համակարգի գործառութային առանձնահատկությունը ցույց են տալիս և հաստատում, որ առկա է Homo sapiens (Մարդ բանական) ➔ homo education (մարդ սովորող) փոխադարձ կապն ու փոխհարաբերությունը: Մարդը վերածվում է սովորող մարդու, և վերջինս էլ գիտելիքների հարստացման շնորհիվ վերափոխվում է առավել բանական մարդու:

Տրամաբանության դասավանդման ընթացքում ևս օգտագործվում են իմացաբանական, մանկավարժական, այլևայլ կոնկրետ մեթոդներ ու հնարներ: Այսպես՝ բխեցման եղանակով նոր գիտելիքների ստացման գործընթացը իրականանում է ինդուկտիվ և դեդուկտիվ եղանակներով, որոնք անհրաժեշտ է մեկնաբանել, բացատրել «Մտահանգում» թեմայի շրջանակներում:

Գիտենք, որ մտահանգումը տրամաբանական իմացության այնպիսի ձև է, որի դեպքում պատրաստի գիտելիքներից, մտահանգման նախադրյալ հանդիսացող ճշմարիտ դատողություն-նախադասություններից ստանում ենք դատողություն-նախադասության տեսքով արտահայտված նոր միտք, նոր գիտելիք:

Հաստատելու համար բերենք այնպիսի օրինակներ, որոնք առնչվեն տվյալ խմբի ուսանողների ընտրած մասնագիտության հետ: Այսպես, պատմության բաժնի ուսանողների համար՝

1) Բոլոր հնագետները պատմաբաններ են
Ղաֆադարյանը հնագետ է
______________________________
Ղաֆադարյանը պատմաբան է:

2) Պատմագիտությունն ունի ուսումնասիրման առարկա
Ֆիզիկան ունի ուսումնասիրման առարկա
Քիմիան ունի ուսումնասիրման առարկա
______________________________
Բոլոր գիտություններն ունեն ուսումնասիրման առարկա:

3) Բոլոր բանաստեղծները գրողներ են
Սևակը բանաստեղծ է
______________________________
Սևակը գրող է:

4) Լրագրող Պողոսյանն ունի բանասիրական կրթություն
Լրագրող Իվանովը ունի բանասիրական կրթություն
Լրագրող Եգանյանը ունի բանասիրական կրթություն
______________________________
Բոլոր լրագրողները ունեն բանասիրական կրթություն:

Վերը նշված օրինակներից 1-ինը և 3-րդը դեդուկտիվ մտահանգման օրինակներ են: Դժվար չէ տեսնել, որ տվյալ դեպքում ընդհանուրի մասին ունեցած գիտելիքների հիման վրա բխեցման եղանակով կոնկրետի մասին ևս ստանում ենք նմանատիպ գիտելիք: Նման տիպի գործընթացը, ավելի ճիշտ՝ բնական լեզվի միջոցով արտահայտված մտքերը թարգմանելով տրամաբանության լեզվով՝ կստանանք՝

M-P
S-M
______
S-P

M-P՝ համապատասխանում է «Բոլոր հնագետները պատմաբաններ են» ընդհանուր մտքին, S-M՝ համապատասխանում է «Ղաֆադարյանը հնագետ է» կոնկրետի մասին ունեցած միտք-գիտելիքին, և S-P՝ համապատասխանում է «Ղաֆադարյանը պատմաբան է» կոնկրետի մասին ունեցած մտքին, գիտելիքին:

2-րդը և 4-րդն ինդուկտիվ մտահանգումներ են: Այստեղ արդեն մեր միտքը, լեզվամտային գործունեությունը հիմնված է ինդուկցիայի սկզբունքի վրա. եզակիի մասին ունեցած գիտելիքներից բխեցման սկզբունքով հանգում ենք ընդհանուրի մասին նմանատիպ գիտելիքի: Իմացաբանական, բնական լեզվի միջոցով արտահայտված այդ միավորը «թարգմանելով» տրամաբանության լեզվի՝ կստանանք՝

$S_1$-P
$S_2$-P
$S_3$-P
______
S–P

Ընդ որում՝ $S_1$-P-ն համապատասխանում է «Լրագրող Պողոսյանը ունի բանասիրական կրթություն», $S_2$-P-ն համապատասխանում է «Լրագրող Իվանովն ունի բանասիրական կրթություն», $S_3$-P-ն համապատասխանում է «Լրագրող Եգանյանն ունի բանասիրական կրթություն», իսկ S-P-ն համապատասխանում է «Բոլոր լրագրողներն ունեն բանասիրական կրթություն» մտքին: Դժվար չէ համոզվել, որ բխեցման եղանակով նոր գիտելիքի ստացման գործընթացը ինդուկտիվ բնույթ է կրում. միտքը կոնկրետից ընթանում է դեպի ընդհանուրը: Անհրաժեշտ է նշել և այն, որ բխեցման եղանակով նոր գիտելիքի ստացման ու արժեքավորման համար կարևորը ոչ միայն մտքի շարժման ուղղվածությունն է (ընդհանուրից դեպի մասնավորը և մասնավորից դեպի ընդհանուրը), այլև մտահանգման նախադրյալներ հանդիսացող դատողություն-նախադասությունների (պատրաստի գիտելիքների) և նոր ստացված դատողություն-նախադասության (նոր գիտելիքի) միջև եղած տրամաբանական կապի բնույթի պարզաբանումը: Այնպես որ, մեթոդաբանական և իմացաբանական առումով տրամաբանության միջոցներով նոր գիտելիքի ստացման, գործադրման և արժեքավորման գործընթացը բավարար մակարդակով

ընկալելու և հասկանալու անհրաժեշտ և բավարար միջոցները մտքի շարժման ուղղությունը, նախադրյալների կառուցվածքային առանձնահատկությունները և նախադրյալների ու եզրակացության (հնի և նորի) միջև եղած կապի առկայությունը բացահայտելն է[9]:

Ի մի բերելով վերը շարադրվածը՝ փաստենք, որ տրամաբանություն առարկայի դասավանդումը հատկապես ենթադրում է առավել շատ տեսամեթոդական հնարքների կիրառում, քանի որ այն ուսանողի համար միանգամայն նոր երևույթ է, բանաձևված մտածողություն, որի փաստարկումը, առավել ևս հասկացումն ու ընկալումը, վերաբերում է ոչ նյութական ոլորտին:

---

[1] Գործունեության էության և տիպաբանության մասին մանրամասն տե՛ս *М. С. Каган.* Человеческая деятельность, М., 1974; *И. С. Кон.* Социология личности, М., 1967; *А. Н. Леонтев.* Деятельность, Сознание, личность, М.,

[2] *М. С. Каган.* Человеческая деятельность, М., 1974, стр. 47

[3] *Ֆ. Էնգելս,* Անտի-Դյուրինգ, Ե., 1967, էջ 452:

[4] Հարցի փիլիսոփայական և հոգեբանական մեկնությունների մասին տե՛ս նաև՝ *Гусев С. С., Тульчинский Г. Л.,* Проблема понимания в философии, М., 1985; Проблемы речевого воздействия на аудиторию в зарубежной социально-психологической литературе, Л., 1973; Смысловое восприятие речегого сообщения, М., 1976.

[5] *С. С. Гусев, Г. Л. Тульчинский.* Проблема понимания в философии, М., 1985, стр. 136-137.

[6] Մանկավարժական երկարատև աշխատանքային փորձը ցույց է տալիս, որ հիշյալ բնույթի հարցեր առավել հաճախ տրվում են բանասիրական ֆակուլտետի ուսանողների կողմից: Ուստի խորհուրդ է տրվում, և մեթոդական առումով էլ անհրաժեշտ է, այդ հարցերին ավելի շատ ուշադրություն դարձնել «Հասկացություն և բառ», «Դատողություն և նախադասություն» թեմաների դասավանդման ընթացքում: Օգտակար կլինի նաև նաև ուսանողական գիտական կոնֆերանսներում զեկուցելու համար ռեֆերատներ հանձնարարելը:

[7] Տե՛ս նաև *Հ. Գ. Շաքարյան,* Փիլիսոփայությունը ստեղծագործության գաղտնիքների որոնումներում, Ե., 2002, էջ 182:

[8] *А. Г. Спиркин* Сознание и самосознание, М., 1972, стр. 206.

[9] Բնական է, որ մեկ հոդվածի շրջանակներում բոլոր խնդիրները մեկնաբանել հնարավոր չէ: Ուստի խորհուրդ է տրվում անդրադառնալ հետևյալ աշխատություններին՝ *Գ. Ա. Բրուտյան,* Տրամաբանություն, Ե., 1989; *Гетманова А. Д.* Логика, М., 1986.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. *Բրուտյան Ա.,* Տրամաբանություն, Ե., 1989:
2. *Շաքրյան Հ. Գ.,* Փիլիսոփայությունը ստեղծագործության գաղտնիքների որոնումներում, Ե., 2002:
3. *Лихачев Б. Т.* Пелагогика, М., 1996.
4. *Сластенин В. А.,* Исаев И. Ф., Шиянов Е. Н. Общая педагогика в двух частях, часть 1, М., 2003.
5. *Коган М. С.* Человеческая леятельность, М., 1974.
6. *Кон И. С.* Социология личности, М., 1967.
7. *Леонтьев А. Н.* Леятельность, сознание, личность, М., 1975.
8. *Гусев С. С.,* Тульчинский Г. Л. Проблема понимания в философии, М., 1985.
9. Проблемы речевого воздействия на аудиторию в зарубежной социально-психологической литературе, Л., 1973.
10. Смысловое воспиятие речевого сообщения, М., 1976.
11. *Спиркин А. Г.* Сознание и самосознание, М., 1972.
12. *Гетманова А. Д.* Логика, М., 1986.


---

## SOME THEORETIC-METHODOLOGICAL PECULIARITIES OF TEACHING LOGIC


EDWARD ALAVERDIAN
*Condidate of Philosophy*


Summary


The goal of teaching the subject of Logic is not only making the lecturer's knowledge understandable to other people (students, etc.), but also mastering of new linguological methods and information based on their former knowledge.

In the given process the necessity of linguological methods simultaneous usage is conditioned by simultaneous use of symbolic means of natural and formal languages.

In short in higher school the main difficulties of teaching Logic, perception and comprehension are connected with the following problems:

1. The subject of Logic isn't taught in Secondary Schools so why the first, second-
year students don't have the slightest idea of it,
2. The category apparatus of Logic and all the operations realized via Logic take a symbolic turn and are expressed also in the formalized language way.


## НЕКОТОРЫЕ МЕТОДИКО-ТЕОРЕТИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ПРЕПОДАВАНИЯ ЛОГИКИ


ЭДУАРД АЛАВЕРДЯН
*Кандидат философских наук*


Резюме


Целью преподавания предмета "Логика" является не только передача знаний от одного субъекта (преподаватель, лектор) другим субъектам (студент, слушатель), но и подготовка у последних предпосылок, основанных на имеющейся информации, готовых знаниях, для получения новых знаний, овладения инновационными и логико-лингвистическими методами, правилами, позволяющими прийти к новым мыслям.

Необходимость одновременного использования смешанных логико-лингвистических методов в данном процессе обусловлено одновременным применением знаковых средств естественных и формальных языков.

Одним словом, трудности восприятия и понимания во время преподавания логики в вузе связяны с тем, что:

а) в общеобразовательной школе предмет "Логика" не преподается, студенты первого или второго курсов не имеют элементарного представления о нем:

б) категориальный аппарат логики как теории правильного мышления, а также действия, осуществляемые его посредством, носят также символический характер и могут выражаться в виде формализованных языков.

ԱՐՄԵՆՈՒՀԻ ԴԵՄԻՐՃՅԱՆ

# ՀԱՄԻԴՅԱՆ ՋԱՐԴԵՐԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ԱՆԴՐԱՆԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆԻ «ԴԵՊԻ ՄԱՅՐԱՄՈՒՏ» ՎԵՊՈՒՄ

Հայ գրականության վերջին հարյուր տարին ընդգծված ազգային-ազգասիրական նկարագիր ունի, որ 19-րդ դարավերջի ազգային զարթոնքից բացի մեծապես պայմանավորվում է նաև հայոց համազգային զույգ ողբերգություններով, որոնք հայ գրականության ղեկը թեքեցին դեպի հայրենասիրական թեման՝ զորացնելով նպատակամետ, ծրագրային ուղղությունը: Գեղարվեստի զգայական աշխարհում սա միանգամայն հասկանալի դիրքորոշում է, որովհետև պատմական տվյալ ժամանակահատվածում հավերժական թեմաներից ավելի կարևորվում է կորուստների վիհը այդ կերպ լցնելու, ազգի հավաքականությունը պահպանելու ներքին բնազդը, որ, անկախ քաղաքականությունից, մեր գրականության մեջ կգերիշխի այնքան ժամանակ, քանի դեռ չի հաստատվի պատմական արդարությունը վերականգնելու միջազգային որոշումը:

Այսպիսի ծրագրային գրականության ցայտուն օրինակ են ամերիկահայ արձակագիր Անդրանիկ Անդրեասյանի «Դեպի մայրամուտ» (1989), «Գերեզման և հարություն» (1985) վեպերը, որոնցից առաջինը պատմում է 1895-96թթ. համիդյան ջարդերի, իսկ երկրորդը՝ 1915թ. հայոց ցեղասպանության մասին: Նկատենք, որ հայ գրականության մեջ նման մոտեցում չի դրսևորել ուրիշ ոչ մի գրող՝ գեղարվեստի լեզվով հաստատելու միմյանց հաջորդող պատմական ողբերգությունները և միաժամանակ գեղարվեստը դարձնելու վավերագրություն: Այս իմաստով, Անդրեասյանի զույգ վեպերը ճանաչողական մեծ նշանակություն ունեն և բացահայտում են շատ հարցեր, որոնց պատասխանը հնարավոր չէ ստանալ միասնական մեկ այլ աղբյուրից:

Սույն հետազոտության շրջանակներում կփորձենք քննել հեղինակի «Դեպի մայրամուտ» գիրքը, որ ներկայացնում է Արևմտահայաստանի մի փոքրիկ քաղաքի՝ ընդհանրական անվամբ՝ Ավանի պատմությունը՝ 19-րդ դարավերջից մինչև 1915 թիվը:

Վեպի նյութը բարձրացել է գրողի ընտանիքի պատմության հիման վրա, և գլխավոր հերոսներից երեքը նրա հարազատ ընտանիքի անդամներն են՝ տատը՝ Մարթան, հայրը՝ Վահանը, մայրը՝ Լուսինը (այստեղ փոխված է միայն Սառա տատի անունը): Գեղարվեստականացված է պապի՝ Դավթի կերպարը (իրական անվամբ՝ Խաչ ամու), որ գրքում ներկայացվում է որպես նահատակ, իսկ իրականում ապրել է երկար:

Գիրքը սկսվում է երիտասարդ պանդուխտի՝ Վահանի վերադարձով, որին ծնողները, ծանր մտավախությունից դրդված, հեռացրել էին տնից, ուղարկել Ամերիկա: Բայց վերադարձի ուրախությունը մթագնվում է ծանր եղելությամբ. տղան միանգամից չորս հոգի պակաս է տեսնում իրենց տանը: Այլևս չկային հայրը, ավագ ու կրտսեր եղբայրները, հարսը: Ավանի գլխով անցել էր համիդյան ալիքը, որ գրքում անվանված է Մեծ դեպք: Բայց մինչ բուն իրադարձություններին անցնելը գրողը ներկայացնում է Ավանի հիմնադրման պատմությունը կործանված Անիից հեռացող մարդկանց ձեռքով և հայ մարդու 700 տարվա դաշն գոյությունը գեղեցիկ բնության գրկում: Այնուհետև գետի մյուս ափին հայտնվում է գորշ ու մութ երանգի մի նոր թաղ: Երանգ, որ իր հետ բերում է տագնապ, անհանգստություն, խզում՝ մարդ-բնություն, մարդ-մարդ հարաբերություններում. «Ս. Գէորգ վանքին հնագոյն Աստուածաշունչը ուրիշ պատմական դէպքերու շարքին արձանագրեր էր, թէ 1-ին թուրք ընտանիքը, 9 անդամներով, Աւան մտեր էր 1746-ի ամառը: ...Յետո, թրքական թաղերուն գորշ հարթութեան վրա կառուցուեր էին կարմիր աղիւսէ երկու մզկիթներ...»[1]:

Հեղինակը չի մոռանում ասել, որ թուրք ու քուրդ տարրի հայտնվելու պահից հայ ընտանիքները շտապում են փոխադրվել մյուս ափ՝ ապահով լինելու ավազակային հարձակումներից, որ դարձյալ փրկություն չէր. «...Արդէն սովորական պատահարներ էին թուրքերու եւ քիւրտերու կողմէ գործուած առեւանգումի արարքները» (էջ 23):

Բայց ուր է թե միայն «սովորական պատահարներով» սահմանափակվեր թուրքերի ախորժակը, և հայ քահանաները բարեխոսությամբ ու կաշառքով ետ բերեին նյութական ու մարդկային կորուստները: Ամերիկայից տուն դարձած գլխավոր հերոսը՝ հյուսնի որդի Վահանը, բախվում է դառն իրականությանը: Նա քաղաքի գերեզմանատանը տեսնում է հազարավորների թարմ շիրիմներ, եղբայրական երկար գերեզմաններ և հասկանում, որ արնախում գազանի ձեռքերն այլևս ազատ են արձակվել: Հասկանում է, որ թուրքերը սանձազերծել են երևակայության սահմանները և սկսել կոտորածների քաղաքականություն, որոնց պետք կլինի դիմագրավել նաև հետագայում: Թե ինչպե՞ս, ի՞նչ կերպ, հուշում է հարազատ հոր օրինակը, որ որսորդական հրացաններով կազմակերպել էր ավանցիների ինքնապաշտպանությունը: Նահատակ հոր որդին հստակորեն գիտակցում է զինվելու անհրաժեշտությունը, բայց բնակչությունը, ցավ ի սիրտ նկատում է հեղինակը, անգամ դեպքերից հետո իր առջև այդպիսի խնդիր չի դնում:

Հեղինակն իր տարբեր հոդվածներում հաճախ ասում է, թե ազգովի կալանավորի վիճակում լինելը աշխարհում եզակի երևույթ չէ, և քիչ ժողովուրդներ չեն տառապել անկախության կորստից, բայց մեզ համար խնդիրը շատ ավելի ցավալի է մնում պատրաստ պահված յաթաղանի հիշողություններից: Գրքում ասվածի գեղարվեստական վավերացումը տալով՝ հեղինակը վերակերտում է պատմությունը, որ լավ չի յուրացվում միայն դասագրքերով: Քայքայված առողջությունը վտանգելով (65 տարեկանում նա արդեն ենթարկվել էր սրտի ու երիկամների ծանր վիրահատության) գրում է տողեր, որոնք, ով գիտի, ի՞նչ են արժենում մարդուն, բայց չգրելը ավելի դժվար էր:

Այսպիսով՝ ի՞նչ էին համիդյան ջարդերը, ինչպե՞ս կազմակերպվեցին, ի՞նչ ծավալներ ունեցան:

Հարցի արմատը տնտղելիս՝ տեսնում ենք, որ ամեն ինչ ունի իր նախապատմությունը: Գետի այն ափին աճող գորշ թաղամասի մասին ակնարկելիս հեղինակն ասում է, որ թուրքերն իրենց շնչից այս ափն էլ անմասն չթողին: Ցարական բանակի կողմից 1878թ. Երևանի գրավման պատրվակով զինվորական հսկողության վերցրին Ավանը և շուկայի մոտ կառուցեցին եռահարկ ոստիկանատուն. «Անոր ներսը դրուեցան թնդանօթներ, որոնց պողպատէ կլափները ուղղուած կը մնային լեռնակողի հայոց թաղերուն» (էջ 22):

Սակայն պետությունը անհիմն ծախսեր չի հանդուրժում: Սուլթանի հոգածությամբ չի ուշանում թնդանոթները գործի դնելու օրը: Շուտով Ավանում լուր է տարածվում, թե Բարձր դռնից հայերին կոտորելու հրաման է եկել: Գույժը հայտնում է Դավթի թուրք վերակացուն՝ չմոռանալով տիրոջ բազմաթիվ լավությունները. «Ֆերման եկեր է Եըլտըզէն, և հայերուն թալան ու ջարդ պիտի

ըլլա… Փախեք լեռները եւ պահուեցեք, մինչեւ փոթորիկը անցնի» (էջ 23):

Ծանր մտատանջության մեջ՝ Դավիթը վճռում է քաղաքի երևելիների հետ միասին որոշել անելիքը: Ոմանք միամտորեն կարծում են, որ ազդեցիկ մարդկանց միջամտությամբ կկանխեն դեպքերը, մանավանդ եթե խուժանը տարվի առաջին պատահած տների ու խանութների կողոպուտով: Ոմանք՝ հակառակը, մտածում են, որ նախահարձակ լինելով՝ կգրավեն թուրքական կայազորը և զենքը կուղղեն նրանց դեմ, բայց պարզվում է, որ ամբողջ քաղաքում «Հայութեան քով 22 որսի հրացան, 4 ատրճանակ եւ մոտ 450 գնդակներ կային» (էջ 27):

Ահա 19-րդ դարավերջի հայության բնորոշ պատկերը, որ բնութագրում է ժողովրդի ոչ միայն անպաշտպան, այլև անհեռատես լինելը:

Ի վերջո, Ավանի ժողովականներից մտքի սթափությամբ առանձնանում են վարպետ Դավիթը, վարժապետ Արամն ու ս. Սարգիս եկեղեցու հովիվ տեր Մեսրոպը: Նրանց պնդումով սկսում են լեռնաբնակ քրդերից հրացան ու փամփուշտ գնել, որ դիմակայեն հարձակումներին: Աղետը չի ուշանում: Շաբաթը չանցած՝ Ավանի եկեղեցիների զանգերը գուժում են թուրք ու քուրդ խուժանի հարձակումը, ժողովուրդը սկսում է փախչել դեպի ապաստանները, բայց կատարվում է անսպասելին. թիկունքից «կարգ ու կանոն» հաստատող զորքը կասեցնում է նրանց փախուստը, ստիպում վերադառնալ դեպի առաջացող խուժանը:

Անթերի է գծված թուրք ոստիկանապետի՝ պետական պաշտոնյայի վարքագիծը, որ ամեն ինչով մատնում է բարձր ատյանների դիրքորոշումը և անպատժելի մնալու վստահությունը: Նա չքմեղորեն արգելում է հայերի ելքը շուկայից՝ անամոթաբար ստիպելով բացել խանութները հարձակվողների դիմաց. «Իրենց աւրուած զենքերն ու գործիքները ձեզի կը բերեն որ նորոգեք… եւ դուք կը մերժե՞ք ծառայել Ալլահին ճշմարիտ զավակներուն…» (էջ 30):

Թուրքական ցինիզմի այսպիսի պատկերներ շատ կան գրքի տարբեր գլուխներում, որոնք ցուցադրում են քաղաքակրթությունից հեռու ցեղի ոչ միայն ստորակարգ հակումները, այլև հրճվանքն արյան ու բռնության հանդեպ: Գրողի սուր գրիչը ճիշտ է որսացել հրոսակի ցեղային բնավորության առանձնահատկությունները և առանց դույզն չափազանցության ներկայացրել թալանչու տեսակը, որին խորթ են մարդկայինն ու արժանապատիվը: Հրոսակ, որի ապականող շնչին այժմ էլ բախվում է աշխարհը, գուցե որովհետև անծանո՞թ է այս վեպերին...

Այսպիսով՝ դեպքերի զարգացումից պարզվում է, որ վերին հրամանով պետական զորքն ու ոստիկանությունը չպիտի խառնվեին իրադարձություններին, քանի դեռ չկար «անհրաժեշտությունը»: Ամեն ինչ պիտի սկսվեր տարերայնորեն, խուժանի երևակայության ու ախորժակի չափով, ինքնադատաստանի օրենքներով: Սեփական ժողովրդին հանցավորության մղելու ահավոր քաղաքականություն, որ հազվադեպ է հանդիպում այլ ազգերի պատմության մեջ:

Սուլթան Համիդը, փաստորեն, լավագույնս կարողացավ գնահատել ու օգտագործել թուրքական բնավորության անմարդկային գծերը՝ այլոց հաշվին հեշտ ապրուստի հնարավորություն ընձեռելով ցեղակիցներին: Նրա ճիշտ հաշվարկը աշխատեց նաև հետագայում՝ շատ ավելի ահավոր չափերով: Իսկ թե ինչպես պետական զորքը միացավ խուժանին, և ինչպես կայացավ հաշվեհարդարը պայքարողների դեմ, պատմում է «Մեծ դեպքը» գլուխը, ուր ամփոփված են գրքի ամենածանր տեսարանները:

Խուժանի անզուսպ մոլուցքը, թալանելու, առևանգելու, այլասերելու, լլկելու ու սպանելու ճիվաղային արարքները հերթով ներկայացնելուց հետո հեղինակը ցույց է տալիս, թե ինչպես է աճում վայրենու ախորժակը՝ է՛լ ավելի հեռուն գնալու, է՛լ ավելի շատ փչացնելու ու ապականելու: Մոլուցք, որ հրճվանքի է վերածվում կործանելու, զավթելու, ամեն ինչ իրենը դարձնելու հեռանկարից:

Այստեղ ևս մի անգամ բախվում են ազգային մտածողության տարբերությունները: Հայերի միամիտ պատրանքը, թե թուրքերը կկշտանային հարուստ շուկայի ու առաջին պատահած տների կողոպուտով, ի դերև է ելնում: Պարզորոշ երևում է, որ թուրքը սպասում է ինքնադրսևորման՝ ներքին անզսպությունը ի հայտ բերելու, իսկ հայն իրենից հեռացնում է իրականության պատկերը՝ չուզենալով հավատալ մարդկային հոգու ապականությանը: Բայց հավատային թե ոչ, հեղեղն արդեն հորձանք էր տվել ու շարժվում էր առաջ՝ ղեկավարվելով գազանային բնազդով. «Թուրքեր կարծես գինովցեր էին կողոպուտի վայելքէն ու դիակներէն հոսած արիւնին համէն եւ երջանիկ խանդով կը պոռչտային ու կը հայհոյէին: …Յետոյ երկար ժամերու իրենց տաժանքէն յոգնած՝ խուժանը պահ մը դադար առավ: Հայերու փուռերէն ու նպարեղէնի կրպակներէն վերցուցին ինչ որ գտան, եւ այդ ուտելիքները արիւնի հոտով համեմելու եւ իրենց ախորժակը աւելի գրգռելու համար՝ սպաննեցին նաեւ անոնց տէրերը: Երբ կշտացան ու հանգչեցան, նոր արշաւի ելան լեռնակողէն վեր, ճամբուն վրայ կողոպտելով իրենց բնակիչներէն լքուած հայոց տուները» (էջ 33):

Այստեղ պատահում է անսպասելին: Դավթի տնից ինչում են առաջին կրակոցները: Խուժանն ընկրկում է, ապա նորից հորձանք տալիս, բայց ամեն անգամ դիակներ է թողնում դիպուկ գնդակներից: Դավիթը որդուն՝ Տրդատին, հորդորում է խնայել փամփուշտները՝ աղոտ հույս փայփայելով, թե հոգևոր հայրերը գուցե կստանձնեն թուրքերին հաշտեցնելու գործը. «…Թերեւս հիմա երկու քահանայ այրերը, իրենց տարած ոսկի եւ արծաթ պարգեւներով ինկեր էին ոստիկանապետ Հասանին ոտքերը…» (էջ 35): Բայց բնազդը հուշում էր հակառակը: Լավ ճանաչելով Հասանի հայատյացությունը՝ վարպետը զգում է, որ սուլթանի թողտվությամբ գազանի համար եկել է պահը՝ հարվածելու իրենց մինչև վերջ: Այդպես էլ լինում է. խուժանին փոխարինելու է գալիս թնդանոթով զինված զորքը: Համազարկից տունը փլվում է, որդին ու հարսը զոհվում են փլատակներում: Ինքը՝ Դավիթը՝ վիրավոր ու արնաքամ, դուրս է սողում թաքստոցից և հայտնվում Հասանի առջև: Ոստիկանապետը հրամայում է քառատել 46 «բարեպաշտ մահմեդականների» սպանած հանդուգն հային՝ անարգելու նպատակով նախ զրկելով այրության անդամից: Միաժամանակ հայտնում է, թե ինքը գիտի, որ ամեն ինչի մեղավորը Դավիթն է, և որ իրենք արդեն դաժանաբար սպանել են գաղտնիքը մատնած թուրքին՝ փորոտիքը բաց՝ շներին կեր թողնելով: Դրանից հետո նա զորքին առաջնորդում է վերին թաղերը:

«Յաջորդ մի քանի օրերուն կողոպուտ ու կոտորած շարունակուեցան Աւանին մեջ: Հովիտէն մինչեւ ապառաժէ բարձունքները թուրքեր ողողեցին մարախի նման եւ ծուատեցին որեւէ պիտանի ապրանք, որ փախչող ընտանիքներ լքեր էին ետեւ: …Երբ ամայութիւն տիրեց բոլոր թաղերուն մեջ ու ցամքեցան աւարի աղբիւրները, խուժանը, տակավին անհագ եւ արիւնի ծարավ, պաշարեց Ս. Սարգիս ու Ս. Աստուածածին եկեղեցիները եւ Ս. էորգ վանքը, որոնց ամրաշեն որմերէն ներս ահագին բազմութեամբ այրեր, կիներ ու մանուկներ ապաստանած էին» (էջ 37),- պատմում է հեղինակը:

Սկսվում են նոր գրոհները, բայց եկեղեցիներն ու վանքը պաշտպանիչ ամրոցի դեր են կատարում, մինչև որ այլ պետությունների միջամտությամբ սպանդը կանխվում է: «Օգոստոսափառ կայսրը» ներու՜մ է շնորհում հպատակ հայերին «ըմբոստ արարքների դիմաց» և հրամայում վերադառնալ աշխատանքի՝ «ապահով և երջանիկ Օսմանեան գահին ողորմած հովանիին տակ: Եվ թող անոնք գոհություն մատուցանեն Սուլթանին անոր

արեւշատության համար» (էջ 37-38):

Ահա ցինիզմի ևս մի օրինակ, որ ցուցադրում է պետական դռան անպատկառությունը. օրինանք պահանջել սպանության դիմաց: Այս ստոր վարքագիծը հետագայում յուրացրին նաև երիտթուրքերը, ովքեր աքսորի ուղարկելը ներկայացնում էին որպես պետական վերին հոգածություն, սեփական երկրից տարհանելը՝ ռազմաճակատի գծից հեռացնելու ապահովություն:

Մարդասպանության մեջ թուրքական հնարագիտության հավասարը չունեցող երևակայությունը ըստ ամենայնի է երևում ոստիկանապետ Հասանի կերպարում: Հակառակ արդեն հայտարարված ներումի՝ նա իր ձեռքով գլխատում է Ավանի ազդեցիկ մարդկանցից ս. Սարգիս եկեղեցու հովիվ տեր Մեսրոպին: Վախենալով վանահոր գալիք քարոզներից՝ Հասանը բոլորի աչքի առաջ գլխիվայր կախել է տալիս քահանային, մեղադրում եկեղեցիների զանգերը հնչեցնելու համար. «Մեր արևափառ փատիշահին դէմ զէնք վերցնել տուիր... Հիմա պիտի քաւես ատ մեղքերդ» (էջ 38-39):

Սա հայ բնակչության սերուցքը վերացնելու, կազմակերպիչ ուժերին ասպարեզից հանելու փորձված քաղաքականությունն է, որ հետագայում ավելի ու ավելի լայնորեն կիրառվեց Թուրքիայում՝ ընդհուպ մինչև 1915թ. ապրիլի 24-ը: Քաղաքականություն, որի պատճառով Պոլսի հայ մտավորականներից գրեթե ոչ ոք չփրկվեց: Իսկ 1896-ի փրկվածների արձանագրությամբ՝ «աւառներու մէջ թուրքեր ու քիւրտեր իրենց կատարած թալանին հետ 300 հազար անմեղ հայեր ջարդեր էին, սոսկալի տանջանքներով» (էջ 55):

Ավանի 12 հազար հայերից սպանվածների թիվը հաշվվում է 3116՝ բնակչության մեկ քառորդից ավելին: Նրանց հուղարկավորությունը աշխարհի ամենատխուր պատմություններից է, որ հեղինակը ներկայացնում է անհուն կսկիծով, բայց և գեղագետի մեծ վարպետությամբ՝ զուսպ, առինքնող գրչով: Այստեղ ընթերցողը հանդիպում է սարսափելի տեսարանների կուտակումների, որոնք ավելի աղաղակող են, քան բուն գործողությունների թվարկումը: Համայնական գերեզմանների երկար շարքերի նկարագրություն. խրամներ, ուր թաղվում են խեղված ու տանջամահ արված մարդկանց դիեր՝ հաճախ անձեռք, անոտք ու անգլուխ: Դիեր, որոնց բզկտված մարմիններին միայն վաղեմի բարեկամները՝ շներն են հսկումի մնացել՝ «զանոնք պաշտպանելով օտար շուներու քաղցած երախներուն դէմ» (էջ 40):

Նկատենք, որ կինեմատոգրաֆիայի համար սա կլիներ գտնված տեսարան, հայոց անլուր վիշտը ցուցադրող չտեսնված պատկերավորման միջոց, որ, ցավոք, մինչ օրս չի օգտագործվել որևէ ռեժիսորի կողմից: Պատճառը գուցե այն է, որ այժմեական մտածողությամբ համիդյան ջարդերը մեծ եղեռնի ֆոնին «թեթև» կորուստ են համարվում: Այս իմաստով, Անդրեասյանը տարբերվում է թե՛ իր, թե՛ մեր ժամանակակիցներից, որովհետև արժանվույնս գնահատեց երկու եղելությունները և թողեց այնպիսի ժառանգություն, որով կարելի է վերարթնացնել պատմությունը՝ փոքր ու մեծ բոլոր մանրամասներով: Հեղինակի վաստակը, հուսանք, մոտ ապագայում նյութ կդառնա հզոր շնչով ստեղծվող կինոնկարների, որոնք վերջապես դեր կխաղան պատմական արդարությունը վերականգնելու ճանապարհին:

Վերադառնալով գրքին՝ ասենք, որ կոտորածների պատմությունը «Դեպի մայրամուտ» գրքում ավարտվում է Պոլսի պատրիարքարանի մասնավոր նվիրակ Դանիել եպիսկոպոսի գործունեությամբ: Ընթերցողի համար խիստ սրտառուչ, սրբի աստիճանի բարձրացող կերպար, որ միաժամանակ իրական անձնավորության հաջողված դիմանկար է: Մարդ, որ գավառեգավառ շրջելով՝ կազմում էր մահացածների ցուցակները, պայքարում առևանգվածներին ետ վերադարձնելու համար և չնայած ամեն քայլափոխի բախվում էր դաժան համազգեստավորների, հիմնականում հաջողում էր իր ձեռնարկներում: Հեղինակը հատուկ մանրամասնությամբ է ներկայացնում զրույցը ոստիկանապետ Հասանի հետ՝ իբրև սուրբ մարդուն բաժին հասած ծանր փորձություն:

Առևանգված 34 աղջիկների ու 18 պատանիների վերադարձը պահանջելիս սրբազանն անպատկառ պատասխան է ստանում, իբր ոչ ոք այլևս չի կամենա վերադառնալ հայրական օջախ, քանի որ բոլորն արդեն ընդունել են «Մուհամմեդի ճշմարիտ կրոնը», աղջիկներն ամուսնացել են, իսկ պատանիները՝ թլփատվել: Բացի այդ՝ ակնարկվում է նաև, որ աղջիկներից շատերը հղի են, և դժվար թե հայերն իրենք ուզենան ապօրինի երեխաներ պահել:

Եպիսկոպոսը, ի փառս իրեն, մնում է անդրդվելի: Նա ստիպված հիշեցնում է, որ նման խնդիրները լուծվում են կամովին, և որ ամեն ոք ազատ է՝ ընտրելու իր հարկը՝ մնալ նոր տիրոջ մո՞տ, թե՞ վերադառնալ հայրական ընտանիք: Ապա «ի միջի այլոց» ավելացնում է. «Մենք այս մասին ստիպուած ենք հեռագրել Պոլիս... և արդիւնքը հայտնել մեծ պետութեանց դեսպաններուն...» (էջ 44):

Վերջին բառերը Հասանին ստիպում են զբաղվել խնդրով: Թե ինչպես է ավարտվում ածանցյալ այս պատմությունը, հեղինակը չի մանրամասնում, բայց հստակորեն ներկայացնում է եղեռնագործության շարունակություն եղող մի այլ ողբերգություն, որին ժողովուրդը նույնպես պիտի կարողանար դիմակայել. մեծահոգաբար ետ ընդունել սեփական զավակներին՝ թեկուզ օտար ու թշնամի համարվող նորածիններով: Սակայն որքան էլ սառը տրամաբանությունը հուշում էր հանդուրժողության մասին, որոշակի դեպքի առիթով հեղինակը, միևնույն է, հերոսուհու ձեռքով հակառակ լուծում է տալիս խնդրին՝ թույլ չտալով, որ համայնքը երերա խառնածնության բերելիք վնասներից: Այս պատմությանը նա վերադառնում է գրքի մեկ այլ գլխում, որին զոհ է գնում ավանի գեղեցկուհիներից մեկը՝ դեռատի Սրբուհին:

Այսպիսով՝ փակելով համիդյան ջարդերի էջը՝ Անդրեասյանը սկսում է պատմել Ավանի վերազարթոնքի մասին, ուր երևում է համայնքի ողջ անցուդարձը՝ ծեսերով ու արարողություններով, հարսանիքներով ու կրթական ձեռնարկներով, թույլերի ու միայնակների հանդեպ համայնքի մտահոգությամբ, մինչև կգա 1908 թիվը՝ Համիդի գահընկեցությամբ և «Երիտասարդ թուրքեր» կուսակցության իշխանության գալով:

Հեղինակն այստեղ պատմում է, թե հայությունն ինչպես է ցնծում «ազատություն, արդարություն, հավասարություն, եղբայրություն» կարգախոսներից, ինչ աշխուժություն, հյուրասիրություն է տիրում փողոցներում, ինչպես է թուրքերից առաջ ընկնելով՝ ավելի եռանդուն խոսում-վերլուծում, որը չի վրիպում թուրքերի ուշադրությունից. «Աս մեր դրացի հայերը մեզմէ աւելի իրական թուրքե՞ր են, ի՛նչ է: Ուրախութեամբ գինովցածի պէս կ՛երգեն ու կը պարեն, նոր հրովարտակը կը տօնախմբեն, կարծես անոր բոլոր բարիքները իրենց համար են» (էջ 194):

Անդրեասյանը, նախանձի բարդույթը շեշտելով, ցույց է տալիս, թե ի տարբերություն հայ «քաղաքագետների»՝ ինչպես են իրենց դրսևորում թուրք պաշտոնյաները՝ դավ որոճալով ատամների արանքից: Նրանց օրավուր աճող ատելությունը մասնավորապես ներկայացվում է քաղաքապետի աստիճանի բարձրացած Հասանի ու զինվորական վերնախավի գաղտնագրույցի ժամանակ, ուր ոմանք վախ են հայտնում, թե խեղճ թուրքերն այլևս ինչո՛վ պիտի ապրեն, եթե չգողանան ու չթալանեն: Բայց այդ մտահոգությունը խամրում է ավելի «վատ» կանխագուշակումներից. «...Հայերը պիտի շփանան: ...Քիչ մը տիրական դիրքերու ելլեն, պիտի պահանջեն, որ մեր թրքական վաթանին հողերուն վրայ անջատ «էրմենիստան» մը ստեղծուի» (էջ 195):

Բոլորի մտահոգությունը կանխում է ջարդերի համար ոսկե շքանշանով հպարտացող քաղաքապետը, որ վստահեցնում է, թե նորագույն կարգախոսները հրա-

պուրիչ խոստումներ են Եվրոպայի ականջին, իսկ հայերը պիտի հաշվի նստեն կայսրության շահերի հետ. «Այո՞, հայերը կամ կը հալին, կը սուզուին այդ կայսրութեան ովկիանոսին մէջ, քիւրտերուն ու արաբներուն պէս՝ կամ արմատական հաշվեյարդարի մը կ՛ենթարկուին, ատոր նախափորձը անշուշտ տեսաք Ատանայի մէջ, ուր 30 հազար հայեր ճէհէննէմը ղրկուեցան...»(էջ 196):

Սրանով լիովին երևում է թուրքերի ներքին անհանդուրժողությունը հայերի հանդեպ՝ սկսած միմյանց ներըմբռնելուց մինչև երիտթուրքերի ձեռնարկները խրախուսելը, որ արտահայտվեցին 1909-ի Ադանայի և Զմյուռնիայի ջարդերով: Այս մասին վեպում խոսվում է կարճ, բայց շեշտված տոնով: Վեպի հերոսներից շատերը դեռ մինչև առաջին համաշխարհայինի սկսվելը գլխի են ընկնում, որ սրանք նախազգուշական այն կոտորածներն էին, որ փորձարկվեցին երիտթուրքերի՝ իշխանության գալուց անմիջապես հետո՝ հայերի աչքը հերթական անգամ վախեցնելու, «չափավորություն» հաստատելու նպատակով: Պատերազմի սկսվելուց հետո իշխանությունների ձեռնարկած գործողությունները, սկսած հայերին զինաթափելուց մինչև թշնամական բացահայտ ակնարկները, վերստին հաստատում են հին մտավախությունը. «Թուրքերը ի՛նչ շապիկ ալ փոխեն, սուլթան ունենան թէ նախագահ, ի՛նչ սահմանադրութիւն ալ փառաբանեն՝ բոլորի տակ նոյն վաղեմի ծրագիրը կը հետապնդեն- յօշոտել եւ ընդմիշտ յափշտակել Հայաստանը» (էջ 264):

Այս գիտակցումը համախմբում է շատերին Վահանի շուրջ՝ վերստին զինվելու և դեմ կանգնելու մոտալուտ վտանգին, որի ուրվականը նորից սկսում է թափառել հայության գլխավերևում: Թուրքերը բացահայտ ատելություն են դրսևորում ռուսական զորքում կռվող կամավորների հանդեպ և շարունակ բացատրություն պահանջում արևմտահայերից: Վիճակը դառնում է տագնապալից:

Այս մթնոլորտում՝ թուրքերի՝ նորից կրճտացող ատամների վտանգի տակ, անցնում է Ավանի վերջին ուխտագնացությունը, որ ավանդաբար կազմակերպվում էր ամեն սեպտեմբերի՝ սուրբ Գևորգի հիշատակին: Հեղինակն ամենայն մանրամասնությամբ նկարագրում է հազարավոր մարդկանց հետիոտն ու սայլերով տեղաշարժը, ճանապարհի աշխույժ եռուզեռը, վանքի բակում վրաններ զարկելը, տաճարի ժամերգությունը, պատարագը, մատաղի, օրհնության, շնորհավորանքի տեսարանները, մրցախաղերն ու երգ-պարը, որին մասնակցում է ամբողջ ժողովուրդը՝ ռամիկից մինչև հարուստ: Ազգագրական նյութի իսկական մի շտեմարան, որից կարելի է քաղել ցանկացած տեղեկություն՝ սկսած տարազից ու ճաշկերույթից մինչև հոգևոր զրույցներ: Նկարագրությունները ցուցադրում են հայերի ճոխ ու բարեկեցիկ կյանքը: Տղամարդիկ օսլայած օձիքներով ճերմակ վերնաշապիկներով են, գունագեղ բաճկոնակներով՝ գրպանում բաբախող ոսկե ժամացույցներ: Կանայք ասեղնագործ, ծաղկատիպ զգեստներով են, մեջքներին՝ արծաթե գոտի, գլխներին՝ շղարշե քող: Հարուստ է նաև ուխտավորների կերակրացանկը՝ մատաղի բերված հորթեր, գառներ, աքլորներ ու աղավնիներ, որ եփվելուց հետո նախ բաժանվում են աղքատներին, ապա միայն դրվում սեղանին:

Եռօրյա զվարճանքի արարողություններից գեղեցիկ է ներկայացված տղաների շուրջպարի տեսարանը, որ Խարբերդում կոչել են թևպար: «Տղոց ուսերն ու իրանները, կը թուէր թէ լուծուեր էին իրարու եւ կազմեր էին մարդկային յարածուփ յորձանք մը... Ամբողջ մարդկային պարիսպը կը թօթուըտէր ուժգնորեն ու բոլոր ոտքերը կը տոփէին գետին, թերեւս խիզախ գրոհի մը խոյանալու համար» (էջ 243):

Վեհապանծ այս պատկերը ամբողջանում է լարախաղացի տեսարանով, որի առաջ բերանբաց է մնում նաև քաղաքապետ Հասանը: Նա տեր Ներսեսի միջոցով մի ոսկի է նվիրում շքեղ կազմվածքով երիտասարդին, բայց նախանձի թույնը սկսում է կրծել քաղաքապետի հոգին, մինչև կներկայանար «նվերի» տոկոսները ետ առնելու պահը: Ընդամենը մի քանի ամիս անց, երբ ազդարարվում է աքսորի սկիզբը, Հասանը հրամայում է բերել լարախաղաց Մարտիկին, հանել է տալիս շորերը և սկսում նույնատիպ կտտանքը, ինչի ենթարկել էր վարպետ Դավթին 19 տարի առաջ. «Հայերու հանդէպ իր վաղեմի թշնամանքին ծարավը յագեցնելու համար... ան արմատէն հերձատել տուաւ Մարտիրոսին առնութեան անդամն ու ամորձիքները... Յետոյ երկու զինուորներ իրենց սուրերը հանեցին եւ Մարտիկի թեւերը անջատեցին անոր ուսերէն... -Ատոնք աս կեավուր հայերուն չեն վայելեր,- մռնչեց Հասան» (էջ 252):

Քաղաքապետի մռնչոցը շուտով տարածվում է աբողջ Ավանի վրա. ժողովուրդը կանգնում է դաժան փաստի առաջ: Վահանի կոչով շատ թե քիչ զինվածները պատրաստվում են անհավասար մարտի, իսկ բնակչության մեծ մասը, այնուամենայնիվ, անպատրաստ էր և ենթարկվում է տարագրման:

Գիրքն ավարտվում է աքսորի սկզբնավորման տեսարանով, ուր դեռևս պարզ չէ, թե ինչ է սպասում մեկնողներին կամ մնացողներին. միայն պարզ է, որ միամիտ հավատավորությունը մինչև վերջին րոպեն էլ չի լքում շատերին: Այս ամենի մասին հեղինակը պատմում է «Գերեզման և հարություն» վեպում, որի վերջակետը, բարեբախտաբար, դրվում է ուրախ նոտայի վրա, որտեղից կյանքը պիտի շարունակվեր...

---


## THE REFLECTION OF HAMID SLAUGHTER IN ANDRANIK ANDREASYAN NOVEL "ON THE SUNSET"

ARMENUHI DEMIRTCHYAN

Summary

The article is a literary-critical description of one of the famous foreign Armenian writers (On the Sunset), in which a tragic history of one of Armenian villages in the time of Turkish joke is shown on high art level and at the same time with documental authentic.



## ОТРАЖЕНИЕ ГАМИДОВСКОЙ РЕЗНИ В РОМАНЕ АНДРАНИКА АНДРЕАСЯНА "НА ЗАКАТЕ"

АРМЕНУИ ДЕМИРЧЯН

Резюме

Данная статья литературно-критическое исследование одного из романов известного армянского писателя ("На закате"), в котором на высоком художественном уровне и одновременно с документальной достоверностью представлена трагическая история одной из армянских поселений при турецком иге.

ՎԱԼԵՐԻ ՓԻԼՈՅԱՆ

*Բանասիրական գիտությունների թեկնածու*

# ՇԱՀՆՈՒՐ՝ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆԳՈՒՅՑ

20-րդ դարասկզբին վաղվա գրականության շուրջ Արտաշես Հարությունյանի սկզբնավորած բանավեճը սրվեց և ըստ էության շարունակական է ցայսօր: Հակադրվեցին արևմտահայ գրականության երկու ուղղությունները` Պոլսի և գավառական, և այնուհետ դրանք դարձան սփյուռքի գրականության երկու հիմնական թեմաների` նահանջի և կարոտի գրականությունների հիմքն ու արմատը: Սրանց ներկայացուցիչներն էլ ժամանակ առ ժամանակ իրար էին հակադրվում (հիշենք Շահնուրի վերաբերմունքը գյուղագրությանն ու, մասնավորապես, Ռ. Զարդարյանին, Թլկատինցուն, Համաստեղին, այլոց և կամ Վ.Շուշանյանի վերաբերմունքն առ Շահնուրը), սակայն վերջնական արդյունքում այս ամենը դրսևորվում է հայ գրականությունը նոր աստիճանի տեսնելու, գրականության մեջ նոր որակ արձանագրելու ցանկությունից, և այս ընթացքում սուբյեկտիվորեն անձին ու նրա գործին տված գնահատականը ստորադասվում է անձնականին: Ի մասնավորի Շահնուրի մոտ չկա բացարձակ ժխտում, թվացյալ ժխտումը ծնվում է նրա պահանջ-ցանկությունից. *«Գիտեմ թե ոմանք այպանած են զիս, մեր գրականությանը քիչ հարգ ընծայած ըլլալուս համար: Այդ է սակայն իմ դատումս, ճիշտ թե ոչ (անշուշտ թե ճիշտ): Բայց զմայլելի քնարերգակներե և բանաստեղծներե, որ ինքնեկ են երբեմն և ինքնաբույս (Անտունիները) և որ միշտ սիրելի պիտի մնան ինձի, հայ գրականությունը զիս այնքան քիչ կգրավե և կզբաղեցնե, որքան շատ կզբաղեցնե բուն իսկ հայուն առօրյան, անոր պատմությունը և մասնավորաբար վերջին հարյուր տարվան պատմությունը: Ան եղած է իմ հետաքրքրությանս և մշտանորոգ մտալլկումիս առարկան: Եվ կշարունակե այդպես մնալ» (Շ. Շ., 2,177):*

Բազմաթիվ ենթադրությունների կարելի է հանգել այս դիտարկումից, սակայն փորձենք առանձնացնել մի քանիսը.

ա) Դրսևորվել ու նկատվել է «մեր գրականությանը քիչ հարգ ընծայած ըլլալու» հանգամանքը,

բ) Հակադարձ համեմատական են հայ գրականության և հայ մարդու հանդեպ վերաբերմունքին տված գնահատականները,

գ) Շահնուրի գրականության հիմնական թեման ու առարկան մարդն է, հայ մարդը:

Եղեռնից, նրան նախորդածի և հաջորդածի («վերջին հարյուր տարվան պատմությունը») պարտադրանքով ձևավորվեցին սփյուռքն ու սփյուռքահայը: Սրանց նկատմամբ հոռետես է Շահնուրը և կարծում է, որ հարալեզներն անգամ անզոր են փրկելու, կենդանություն պարգևելու նրանց (կամ նրան` սփյուռքահային): Նա արձանագրում է «հարալեզներու դավաճանություն»: Սակայն հենց այդ պահին ծնվում է հակասությունը. որպես արտահայտման միջոց մեջտեղ է գալիս հայոց միֆոլոգեմը` դրսևորված հա՛յ գրականության մեջ, և չկա «հայ գրականությանը քիչ հարգ ընծայած ըլլալու» իրողությունը: Նաև` կարոտի գրականության վերաբերմամբ:

Կարոտի գրականության հիմքում ընկած է կորուստների հավաքական հիշողության` մենք-ի հանգամանքը` հիշել մեր հայրենիքը, մե՛ր տունը, մեր գյուղն ու մերոնց, մե՛զ: Սակայն սփյուռքում հայտնված մարդը սթափության մի պահի հանկարծ գիտակցում է, որ ինքն այլևս հավաքական ամբողջության մաս չէ սուբյեկտիվ ու օբյեկտիվ հանգամանքների պարտադրանքով (ինքն օտարության մեջ է, և եղել է եղեռնը), և իր ես-ն արդեն դիմակայել չի կարողանում իրեն անծանոթ ու անհայտ դարձող մենք-ին: Ինքնամոլորումի ու ինքնափնտրումի այս պահին էլ ծնվել է նահանջի գրականությունը: Սակայն այս տեսակետից հետաքրքրական է կարոտի ու նահանջի գրականությունների ժառանգորդության հանգամանքը, սուբյեկտիվ զգացողություններից օբյեկտիվ ռեալություններին անցումը: Կարծում ենք` անհնար է անգամ նույն հեղինակի գործում (գործերում) տեսնել այն սահմանաբաժանը, որ իրարից զատում է այս թեմատիկ զարգացումները: Համաստեղյան գյուղի համապատկերում կան Կար ամու և Վարդան, Երանոս աղբար, որ իրենց գոյության հնարավոր շարունակականով ահազանգում են նահանջի իրողությունը: Շահնուրյան Պետրոսի կերպարաստեղծման անտրոհելի բաղկացուցիչն են ծննդավայր Պոլսի մասին հիշողությունները: Եվ օբյեկտիվ դատողությունների շղթա տեսնելով Շահնուրի «Դրախտ կորուսյալ» ծրագրային հոդվածում` չենք կարող ժխտել, որ Շահնուրն ինքը ծնունդն է այդ կարոտի: Եվ եթե կարոտի գրականությունը ծնվեց եղեռնի արդյունքում, ապա նահանջի գրականությունը ծնվեց եղեռնի հետևանքով: Շահնուրն այսպիսի բանաձևում ունի գրականության վերաբերմամբ. «Գրականությունը միայն մտադրություն չէ, այլ նաև իրականացում» (2,97): Նույն հոդվածում թերևս ամենախիստ ձևակերպումը հետևյալն է.

«1.Երջանկություն մը կար:

2.Դեպք մը պատահեցավ:

3.Երջանկություն չկա այլևս:

Ի փոխարեն կա ողբ ու կոծ, ափսոսանք և աղավաղում» (Շ. Շ., 2,83):

Փաստորեն այն բանից հետո, երբ «երջանկություն չկար այլևս», Շահնուրն ինքը գրեց այն մասին, որ «կա... աղավաղում», ասել է` հայի էության աղավաղումը, նահանջը հայկականությունից` սրանով իսկ դառնալով շարունակություն և ոչ բացառում: Ու թե չէր ապրում «լեցուն կարեկցությամբ կորսված երեկին համար» (Շ. Շ., 2,57), ապա ուներ կորսվելիք վաղվա օրվա մեծագույն տագնապը: Թերևս շահնուրյան կարոտի «մտադրությունը» դարձավ նահանջի իրականացում: Ու հայոց Ժամագրքի Զղջումն է համարյա բառացի կրկնակի ալիքվում բարձրաձայն. «Քանզի մեղայ խորհրդով, բանիւ և գործով, կամայ և ակամայ, գիտութեամբ և անգիտութեամբ, մեղայ Աստուծոյ» (Ժամագիրք, Նյու Յորք, 1986, էջ 7): Համարյա բառացի, քանզի հայի Աստված Շահնուրի մոտ վերանվանվել է Արարատ. «Կնահանջեն ծնողք, որդի, քեռի, փեսա, կնահանջեն բարք, ըմբռնում, բարոյական, սեր: Կնահանջե լեզուն, կնահանջե լեզուն, կնահանջե լեզուն: Եվ մենք դեռ կնահանջենք բանիվ և գործով, գիտությամբ և անգիտությամբ, կամա և ակամա, մեղա՜, մեղա՜ Արարատին:

Եղան հայեր, որոնք իրենց մորթը փրկելու համար վճարեցին ոսկի, եղան ուրիշներ, որոնք տվին հավատք, կուսություն, եղան անոնք, որոնք լքեցին տուն,տեղ, երկինք, եղան դեռ վատեր, որ ուրացան ազգ ու լեզու, և հերոսներ, որ տվին արյուն, կյանք, օր ու արև: Իսկ մե՛նք, կվճարենք իբրև վերջին փրկագին այն, որ պիտի գա: Իբրև վերջին փրկագին` մանուկներ, որոնք կրնային

մեծնալ, ապագայի սերունդներ, որոնք մեզնե վերջ պիտի գային: Որովհետև այն, որ պիտի գա, պիտի ըլլա օտար, բանիվ և գործով, կամա և ակամա, գիտությամբ և անգիտությամբ, մեղա՛, մեղա՛ Արարատին»: Արարատի խորհուրդն անտեսողներին Շահնուրն անվանում է նախկին հայ: Այնինչ նույն Շահնուրը ծայրահեղ մի տրամաբանությամբ ժամանակին որակվեց «մարդ մը, որ Արարատ չունի իր հոգվույն խորը»:

Զարմանալի է գրականության զարգացման տրամաբանությունը, որ հաճախ ներառում է նաև անտրամաբանականն ու անկանխատեսելին, որոնք վերլուծումներից հետո գիտակցվում են ամենատրամաբանականն ու ամենականխատեսելին: Այս տեսակետից սփյուռքում հայի կողմից արարվող գրականությունն ասես հաստատում է «դարձ ի շրջանս յուր»-ի հավերժահունչ ճշմարտությունը: Այսպես. կարոտի գրականությունն արդեն իսկ դարձ էր դեպի անցյալ կորուսյալը, սակայն պահ անց դրսևորվելու էր անխուսափելի ուծացումը, որի արդյունքում ձևավորվեց ու շարունակական է նահանջը: Այսօր էլ մեծադղորդ խոսքերով սիրաբանում ենք հայոց պատմության ու մեծերի հետ, բայց և կասկած ենք ապրում սփյուռքահայ զարմի գոյության համար: Չնայած ջանքերին՝ ցայսօր նրանց վաղվա չգոյությունը դառնում է առավել իրական: Թվում է, թե Արտավազդ արքան արդեն 2000 չգիտեմ քանի տարի անց կարող է խոսքն իր վերաձևել՝ ասելով.

«Երբ դուք չծնվեցիք և երկիրը ձեզ հետ տարաք,
Ես այս ավերակներին ո՞ւմ թագավորեմ»:

Եվ 20-ականների վերջին Շ. Շահնուրի ասած զարհուրելի խոսքը դեռ արձագանք է տալիս Թումանյանի հոգեհանգստյան կարգի պես: Սակայն այս նահանջն էլ չի կարող վերջնական ու անդարձ լինել, քանզի կա ու գործում է անառակ որդու բարդույթը, ինչ դրսևորվեց նաև՛ Շահնուրի անձով ու գործով: Երեսնականների կեսերից մինչև հիսունականների կեսերը շահնուրյան հայերենի լռությունն իսկ օտարում ու նահանջ էր հայրենական գրականությունից, բայց ոչ հայրենի արմատներից: Եվ եղավ վերադարձ, զի Արարատի ոգեղեն մագնիսը զորեղ է. «Մեղա՛, մեղա՛ Արարատին»: Եվ Արարատն էր, որ արթնացրեց մեկ սերունդ ընդհատված Մ. Առլեն Կույումջյանի գենետիկ հիշողությունը՝ ուղղորդելով դեպի Արարատ: Թող որ հայ գրականության փաստ չգիտակցվի վերջինիս գործը, սակայն պարզում է ճշմարտությունը. եղեռնն էր ծնելու անհայրենիք հայի կարոտը, կարոտին հաջորդելու էր նահանջը, սրան էլ հաջորդելու էր վերադարձի թեման: Շահնուրի գործում ևս դրսևորվեց ֆիզիկական տեղատվության և ոգեղեն մակընթացության այս բարդույթը, որ ի վերջո հայ գրականությա՛նը նվիրաբերեց Շահնուր գրագետին ու նրա ամեհի վեպը՝ 20-րդ դարի հայոց վեպի բարձրակետերից մեկը: Ի դեպ, ինձ համար գոնե, 20-րդ դարի հայոց վեպի պատմության մեջ առանձնանում է Չարենցի «Երկիր Նաիրի», Դեմիրճյանի «Վարդանանք» և Շահնուրի «Նահանջը առանց երգի» եռանկարը: Եթե Նաիրի երկրի, հայոց ոգու ու ոստանի փրկության ճանապարհն է Վարդանանց ու հայոց կռիվը, ապա այդ ոգի-ոստանի և վաղվա օրվա պարտությունն է ցուցանում «Նահանջը»: Սա հայի ոգու և ոգեղեն հայրենիքի ժխտումը չէր՝ դրսևորված արվեստով: «Սփյուռքի գրագետին գոյությունը կարդարանա այն չափով, ինչ չափով որ ան կհաջողի չտարբերիլ ոգեկան հայրենիքեն - այսինքն ինքն իրմե: Խնդրին կեդրոնական հանգույցը հետևյալն է. այնպես մը ընել, որ անտարբերությունը չիմանկե մեզ և թե ամուր մնա կապը ընդմեջ իրեն, գրագետին և իր այսօրին: րականությունը կապրե գրագետին այսօրով, իր անձնական կյանքով, իր առօրյա փորձառությամբ: ... Ամեն ինչ ներկա է, այսօր է ու հոս է» (Շ. Շահնուր, 2, 224-225): Ուրեմն նաև ոգին է ներկա, այսօր է ու ամենուր է, ուր կա հայ, և այդ ոգին է հայրենիքը, այսինքն ինքը՝ հայը:

Իսկ Շահնուրն իր անձնական կյանքում և գրական փորձառության մեջ շարունակում էր թրծվել հակասությունների հրում: Հայկական միջավայրում մեծացած, բայց ըստ էության եվրոպական, մասնավորապես ֆրանսիական, գրականությամբ դաստիարակված ու կրթված հեղինակը հակադրվել էր փորձում կամ ցուցադրում հայ գրականության շատ ու շատ արժեքների (Նարեկացուց մինչև Ահարոնյան ու Շանթ, Համաստեղ), սակայն նրա նպատակը նոր որակի գրականությունն էր, որի փնտրտուքի ընթացքում էլ ապրվեց ու գեղարվեստորեն մարմնավորվեց նահանջը:

«Տարագրվում ենք՝ ու չենք տագնապում... Հատնում ենք անհոգ, անփույթ, անտարբեր, գնում ենք անդարձ՝ ու չենք սթափվում, գերեվարվում՝ ու չենք էլ զգում այդ...» և «Մատյան ողբերգության», Բան ՇԵ, և,- հազարամյա հեռվից իր տագնապն է բարձրաձայն բանաձևում մեր ժամանակի մեջ Գրիգոր Նարեկացին՝ հաստատելով, որ հանճարը հավերժության մեջ ներկա է: Իսկ շահնուրյան պահվածքում պարտադրվող կրկնությունների հակադրվելու, դրսևորվող նահանջականությունը սթափորեն գնահատելու իրողությունը կա, ասել է՝ Նարեկացուց էության ու հոգու ժառանգորդությունը, և կա պարտադրված տարագրությունից հետո նահանջի ճիչը՝ «այդ հին, շատ հին մեղեդին, բոլորին ծանոթ»: Սրանով իսկ նարեկացիական տագնապի զարմանալի ու ամենաուղղակի շարունակողն է Շահնուրը:

Ինչքան էլ ժխտական թվա նրա վերաբերմունքն առ հայրենի գրականությունը, Շահնուրն առաջին հերթին արևմտահայ ռեալիստական արձակի ավանդների շարունակողն ու զարգացնողն է: Ուշադիր քննության դեպքում նրա վեպում և պատմվածքներում Պարոնյանի ու Զոհրապի, նաև Համաստեղի արվեստի ինչ-ինչ որակներ կարելի է տեսնել: Բայց էականը ոչ թե ազդեցություններն ու ստեղծագործական յուրացումներն են, այլ գեղարվեստական մտածողության այն որակը, որի ամենաբնորոշ հատկանիշը շարժման զգացողությունն է: Նահանջ բառն արդեն իսկ շարժում է ենթադրում՝ զուգորդությունների որոշակի աստիճանում հարաբերվելով հույն զորավարի «Անաբասիս»-ի հետ: Շարժումը մի դեպքում արագ է, մի այլ դեպքում որոշակիորեն ավելի է արագանում, ապա դանդաղում՝ ի վերջո հասնելով տեղապտույտի: Այս շարժումն է մարմինն ու էությունը զատում իրարից, օտարում իր ինքնությունից, իր ես-ից: Աղճատված գիտակցությունը աղճատված գոյակցության արդյունքն է, և սա այլևս ինքը չէ և իրենը չէ: Ինչպես «մայրիկին կարած քսե» -ի մեջ տեղ է գտել օտարուհու «ոսկե մազերեն առատ խուրձ մը», այնպես էլ «հայու լակոտի», «հայկական ծագումով գաղթականի» մարմնում բնավորվել է այլափոխված հոգի, որ Պետրոս չէ այլևս: Հակադրության մի արտահայտություն էլ վեպի երկու՝ հայկական ու ֆրանսիական, սյուժետային զարգացումներն են: Հակադրությունների այս սինթեզն է գեղարվեստական այն նոր որակը, որ կա և ունենք այսօր: Ավանդական հայը, հայի միֆոլոգեմը կորսվում է իր համար օտար պայմանականության մեջ: Այն, ինչ դրսևորվում է նաև հայրենիքում ստեղծվող գրականության մեջ, այն տարբերությամբ միայն, որ օտարը նոր պայմանականությունն է:

Բայց Շահնուրի խոսքը հիշենք.«Հոգին միշտ նույնն է, դար մը ավելի, դար մը պակաս»: Հայոց զարմի մանչ որդիների բնութագրական մի հատկանիշը կա, որ արձագանք ունի «Սասնա ծռեր» դյուցազներգության մեջ և հատուկ է նաև մերօրյա հայերին՝ օտար կնոջ առաջ խաթրագերի լինել ու մնալը. Սանասարս խելքը կորցրեց ճնճղոց թևով տեղ հասած սիրագիր-հրավերի պատճառով և գնաց իր բախտի հետևից, Մհերս դարձավ Իսմիլ խաթունի տուն ու անկողնու յոթնամյա կենվորը, Դա-

վիթս կուլ գնաց Չմշկիկ Սուլթանին... Չի փոխվել հայի որակը, փոխվել է որակական հատկանիշի արտահայտությունը: Եվ ազգային այս փաստված որակը մինչ օրս շարունակական է ֆրանսիական փողոցներում, ռուսական տափաստաններում, ամերիկյան պրերիաներում: Ահա և Շահնուրի՛ տեսած ու պատկերած պայմանականության մեջ մայրական կամ քրոջական կամ ազգային սաստող կապանքներից (կամ հորդորներից) ազատ հայորդիները դառնալու էին օտարի տանը տնփեսա և անբարո կնոջը բարոյական կնոջ վերածող (Յրաչ) կամ օտարուհիներ Լիզի ու Նեննեթի հրապույրին ու քմայքին գերի (Պետրոս-Պիեր): Այլ ելակետով քննելիս դրսևորվելու է Արա Գեղեցիկի բարդույթը. պարտվելու է կա՛մ մարդը, կա՛մ արքան (հայ գաղափարը): Մարդու պարտությունը նաև գաղափարի պարտությունն է, բայց մարդու հաղթանակը դեռ գաղափարի հաղթանակը չէ: Այս տեսակետից Պետրոսի Պիեր-անալը (հիշենք կոմեդիա դել արտի Պիերոյին) արդեն իսկ պարտություն է լեզվի, հայրենիքի, ոգու և աղոթքի առաջ:

Սակայն Շահնուրը նպատակ չունի մերկապարանոց հայրենասիրություն պատկերելու: Առաջնայինը մարդն է, և նրա կեցության արդյունքն առանց երգի նահանջն է: Նահանջի ողբերգ է թվում վեպի վերջին ակորդը,«մինչև հոս» հնչող «այդ հին, շա՜տ հին մեղեդին, բոլորին ծանոթ»:

Թերևս այսպես է իրականանում հայի պանդուխտ տեսակի աքսորը: Նաև՝ Շահնուր հայորդու: Սակայն Շահնուրն ի վերջո հանգելու էր նրան, որ դառնալու էր իր չմերժած, բայց մի պահ կորցրած հայրենիք. «Ոչ ոք չըսեր պատանիին, թե պիտի գա օր մը, երբ մենք ալ պիտի ըլլանք պանդուխտ: Եվ պիտի կանչենք կռունկը, և պիտի ըլլանք ծառա անոր ձայնին, և պիտի ունենանք Երկիր Յեռավոր»:

Այստեղ է, որ ժամանակներն ասես խառնվում են իրար, և ձևավորվում է մի նոր, կամակոր պայմանականություն, և 800 տարվա հեռավորությունից, բայց ասես այսօր, հնչում է Յովհաննես Սարկավագ Իմաստասերի աղոթքը, հայի համար արդ ցանկալի մեղեդին. «Ցրուեալ մանկունս ժողովեա յուրախութիւն, զվարատեալս տրտմութեամբ և արտասուաց բղխմամբ փրկութեան մերոյ բաշխող»:

---

## SHAHAN SHAHNUR AS A KNOT OF CONTRADICTIONS

VALERY PILOYAN
*Candidate of Filology*

Summary

In Shahnur's literary-theoretical articles and public speeches some critical attitude towards Armenian Literature and to its many representatives is expressed, which very often has become a ground for contradiction and fatal chance. Though his work of art and the novel "The Retreat with No Song", in particular, reveals the fact that the author's creation is coming directly from Armenian Literature and the very "inspiring presence" of Armenian folklore and sacred literature and Epos, "The Book of Lamentations" by Grigor Narekatsi, as well as Western Armenian Prose becomes viseble.
As a matter of fact Shahnur's orientation is expressed not by the refusal of our literature but rather by the preoccupation to see it at a new qualitative degree.

## ШАГАН ШАГНУР: УЗЕЛ ПРОТИВОРЕЧИЙ

ВАЛЕРИЙ ПИЛОЯН
*Кандидат филологических наук*

Резюме

В литературно-теоретических статьях и публичных выступлениях Ш. Шагнура проявляется критическое отношение к армянской литературе и к ее многим представителям, что часто становилось причиной противостояний и даже рокового инцидента. Однако его художественное творчество, в частности роман “Отступление без песни”, открывает обстоятельство неподсредственного унаследования творчества автора от армянской литературы, и становится очевидным “душевное присутствие” армянского фольклора и духовной литературы, эпоса, “Книги скорбных песнопений” Гр. Нарекаци, западноармянской прозы...

Фактически, точка зрения Ш. Шагнура объясняется не отрицанием армянской литературы, а озабоченностью видеть нашу литературу на качественно новом уровне.

А. КИРАКОСЯН

*Кандидат педагогических наук*

# ЭСТЕТИКА КАК НАУКА О ЧУВСТВЕННОМ ПОЗНАНИИ

В программе развития общества все более значительное место отводится эстетической культуре. В этой связи на первый план выступает и эстетика как теоретическая дисциплина. Интерес к ней постоянно растет, ибо человек хочет осмыслить сущность своей культуры и с теоретической стороны.

Сегодня мы довольно часто слышим термины "эстетика", "эстетический", "эстетическая культура", "эстетическое воспитание" и т. п. Однако не каждому ясно содержание этих понятий и не все употребляют их в одинаковом смысле.

Впервые термин "aesthetica" ввел немецкий философ Александр Готлиб Баумгартен .

До Баумгартена вопросы эстетики рассматривались в пределах общих философских концепций как органическая часть, и только он выделил эстетику в рамках философии как самостоятельную дисциплину, занимающую место рядом с другими философскими дисциплинами - логикой, этикой, гносеологией и т. д. Однако само название -

эстетика,- введенное еще Баумгартеном, входит в употребление лишь в XIXвеке.

Баумгартен заложил основы эстетики как науки о чувственном познании. В отличие от логики, науки о законах высшей ступени познания, он выделил эстетическое восприятие как низшую ступень познания, как восприятие чувственное, которое в своей специфической сфере - в познании прекрасного - полноправно с иными видами познания.

Лейбниц различал три вида познания: так называемое интуитивное познание, то есть полностью смутное и неясное; познание неотчетливое, то есть частично неясное, и познание чистое - рациональное. Истинным познанием он считал только "чистое", рациональное познание. Интуитивное познание и неотчетливые представления, как полагал Лейбниц, есть лишь некая предварительная ступень для познания истинного. Интуитивное познание, каковым, по его мнению, является и эстетическое восприятие, ограничивается переживанием действительности, ощущением красоты вещей. Таким интуитивным познанием Лейбниц считает, например, музыку, которая дает лишь эмоциональное представление о внутренней гармонии мира. Эту гармонию музыка познает и измеряет только качественно, но не количественно.

Однако содержание понятия "эстетика" менялось. Хотя эстетика и после Баумгартена оставалась наукой о прекрасном, но уже в ином смысле, чем у него: она больше не считалась наукой о совершенстве чувственного познания. Теории, объясняющие сущность отдельных эстетических явлений на основе диалектической взаимосвязи сознания и действительности, являются диалектическими эстетическими теориями.

Типичные образцы субъективистской эстетики - эстетические учения кантианского типа. По убеждению Канта, человек не может преодолеть границы своей субъективности и воспринимать объективную действительность. И хотя он признавал существование "вещи в себе", то есть реальной действительности (и в этом был материалистом), однако теоретически "допускал возможности преодоления субъективности человеческого познания (и в этом остался субъективным идеалистом). Вот почему в эстетических учениях кантианского типа эстетическое качество является не объективным свойством действительности, а лишь следствием определенного человеческого отношения к ней. Один из эстетиков-кантианцев профессор Сорбонны Виктор Баш в своей публикации "Главная проблема эстетики" писал, что "эстетический характер какого-либо предмета не есть свойство самого предмета, а результат деятельности нашего "я", наша точка зрения по отношению к данному предмету..."

Эстетическое качество и эстетическую ценность вещи мы не можем целиком ставить в зависимость от нашей позиции. И хотя говорится, что "de gustibus non est disputan-dum" , все же необходимо допустить существование определенных объективных свойств вещей, которые человек воспринимает как эстетические. И эстетические ценности и эстетические качества имеют объективный характер. Если бы они не имели такого объективного характера, был бы вполне оправдан вопрос: какой вообще смысл в художественном творчестве, если человека могут удовлетворить лишь его собственные представления и переживания.

С другой стороны, объективистские эстетические учения интересуются лишь источником, предметом эстетического восприятия, лишь тем, что существует независимо от сознания, лишь объективной структурой предмета. Изучается построение, конструкция, техника, технология и тому подобные его свойства. Сам источник восприятия не становится еще полно-ценным эстетическим явлением, он ожидает смысловой эстетически-качественной и идейной реализации в человеческом сознании - эстетического восприятия. Таким образом, объективный предмет реализуется как эстетическое качество лишь в человеческом сознании.

Гармония сфер - следствие движения небесных тел в определенном порядке. Однако эту гармонию человеческое ухо уловить не способно, ибо для ее восприятия оно недостаточно чувствительно. Но как говорит Аристотель, музыка, которую никто не слышит и которая не может быть услышана, вообще не существует. Эстетические качест-

ва - тоже следствие субъективного человеческого восприятия, диалектический результат взаимодействия объекта и субъекта восприятия. Эстетические феномены объяснимы лишь на основе такой диалектики.

Эстетические теории, которые в понятиях сущности эстетических явлений исходят из объективной сферы, занимаются построением так называемой индуктивной эстетики, или эстетики снизу. Напротив, эстетические учения, выводящие сферы эстетических явлений из высших идей, принципов и философских концепций, занимаются построением так называемой дезуктивной эстетики или эстетики сферу. Индуктивные "эстетики снизу" имеют преимущественно эмпирический характер и в истории эстетики представляют так называемое аристотелевское направление, тогда как дедуктивные "эстетики сферху" исходят из общих философских концепций. Первые исследуют объективную структуру предмета эстетического восприятия, которые не выводят из априорной концепции. Идеально было бы достичь единства этих двух воззрений. Оба рассмотренных случая представляют собой крайности: эстетика без идейной интерпретации вырождается в элепиризм; с другой стороны, голая дедукция, не опирающая на эмпирические знания, остается априорной.

Мы уже упоминали, что Баумгартен порой отождествлял эстетической восприятие с чувственным познанием и чувственное восприятие с переживанием прекрасного. Такие взгляды недостаточно учитывают, что кроме прекрасного существуют и другие виды эстетических качеств: изящное, возвышенное, трагическое, патетическое, гротескное, комическое и т. д.

Они представляют собой оценочную квалификацию действительности человеком и выражают эстетическое качество вещи. Однако категория прекрасного занимает среди них привилегированное положение. Не случайно, что среди различных эстетических категорий, прекрасное - первое между равными. Хотя эстетический мир, возникающий с помощью корреляции сознания и действительности, не ограничен миром прекрасного и внутренне бесконечно диффиринцирован.

Прекрасное, бесспорно доминирует в нем ибо человек воспринимает окружающее эстетически, исходя из своих представлений о прекрасном.

ЛИТЕРАТУРА


1. *Соболев Г. С.* "Теория эстетического воспитания", СНТ М. 1978.
2. *Шацкая В. И.* "Музыкально-эстетическое воспитание", М. 1975.
3. *Лабковская Г. С.* М. Просвещение, 1983.
4. *Толстых В. И.* "Эстетическое восприятие", М. 1970


[1] Александр Готлиб Баумгартен (1714-1762) двухтомный труд "Aesthetika" (1 том-1750г., 2 том-1758г.).
[2] Немецкий философ-рационалист Г. В. Лейбниц (1646-1716).
[3] Прага, "Орбис", 1924, с. 35.
[4] О вкусах не спорят.

ԳԵՂԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԶԳԱՑՄՈՒՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՉՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ


Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
*Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ*



Ամփոփում

Ի հայտ են եկել գեղագիտության տարբեր հայեցակարգեր, որոնք իրարից տարբերվում են արվեստի նկատմամբ ունեցած մոտեցումներով: Կախված այն բանից, թե դրանք արվեստի որ ասպեկտն են մղել առաջին պլան, ձևավորվել են գեղագիտական գիտությունների տարբեր ձևեր:


AESTHETICISM AS A SCIENCE ABOUT EMOTIONAL RECOGNITION


A. KIRAKOSYAN
*Candidate of Pedagogical Sciences, Assistant Professor*



Summary

Various conceptions of aestheticism have appeared which differ from each other by their approaches to arts. Depending on which aspect of arts they give importance to, various types of aesthetic sciences have been formed.

ГЕВОРГ ШАХВЕРДЯН

*Кафедра общего физвоспитания ВГПИ им. Ов. Туманяна*

# МЕТОДИКА ПРИМЕНЕНИЯ УПРАЖНЕНИЙ, НАПРАВЛЕННЫХ НА РАЗВИТИЕ ВЫНОСЛИВОСТИ У ДЕТЕЙ МЛАДШЕГО ШКОЛЬНОГО ВОЗРАСТА

Накопленный к настоящему времени экспериментальный материал свидетельствует о больших возможностях развития основных двигательных качеств у детей младшего школьного возраста. Значительное место в системе физического воспитания детей должно быть отведено развитию выносливости: до последнего времени ее совершенствование отставало от тех возможностей, которыми располагает организм ребенка. Это было вызвано главным образом недооценкой двигательных ресурсов младших школьников. В результате очень благоприятный период для развития данного двигательного качества в значительной мере не использовался, что явилось большим отступлением в системном воздействии. Большим недостатком является то, что в программе по физическому воспитанию для общеобразовательной школы недостаточное место отводится физическим упражнениям, воспитывающим выносливость у детей. Воспитание общей выносливости должно стать важной составной частью всесторонней физической подготовки детей младшего школьного возраста.

В связи с этим была поставлена задача разработать методику развития выносливости и показать возможность и эффективность ее применения у детей 7-10 лет на уроках физической культуры.

Программа по развитию выносливости включала ходьбу в ускоренном темпе, бег различной интенсивности и многочисленные упражнения статического и динамического характера. Подбор упражнений, построение комплексов и реализация их в процессе уроков осуществлялась нами совместно с учителями начальных классов.

Как известно, основным упражнением, развивающим выносливость у детей школьного возраста является бег, поэтому большое внимание следует уделить разработке беговых нагрузок для детей 1-3 классов. Дозировка нагрузок в беге - важнейший аспект эффективной методики развития выносливости. Основным критерием, по которому судили о допустимой мере физической нагрузки, являлась реакция сердечно - сосудистой системы на предлагаемую работу. В эксперименте использовались в основном такие беговые нагрузки, чтобы максимальное увеличение частоты сердечных сокращений не превышало уровня 160 - 170 уд/мин (исключение - нагрузки предельной интенсивности).

Разработанная экспериментальная методика включает медленный продолжительный бег в равномерном темпе. Оптимальная частота пульса при этом методе составляет 145 – 150 уд/мин., восстановительный период не более 3 минут. Обьем нагрузки увеличивался не за счет повышения скорости бега, а главным образом за счет удлинения пробегаемой дистанции.В 1-ом классе беговые упражнения умеренной интенсивности выполнялись непрерывно от 50 сек.до минуты при средней скорости – 2,3 м/сек. Во 2-ом классе длительность беговых нагрузок составляла от 2,5 мин. до 8,5 мин., средняя скорость – 2,4м/сек. и в 3-ем классе соответственно от 3 до 12 мин. при средней скорости 2,5 м/сек.

Роль лидера выполнял хорошо подготовленный ученик.

Метод стандартно - повторного упражнения включает и нагрузки предельной интенсивности. Частота пульса здесь достигает уровня 170-180 уд/мин., но восстановление происходит быстро : за 1 - 2 мин., количество сердцебиений снижается до 120 - 130 уд/мин.

Повторно - интервальный метод развития выносливости применялся попеременно с бегом умеренной интенсивности, нагрузка определялась с таким расчетом, чтобы к концу работы частота сердечных сокращений была достаточно высокой - около 160 - 170уд/мин. Для этого применялись следующие средства: 1-ый класс - повторный бег на 10 - 15 м., 2-ой класс - бег на 15-20м. и 3-ий класс - бег на 20-30м. Нагрузка в каждом классе постепенно увеличивалась за счет удлинения дистанции и количества повторений 10+3 до 5 раз. Интервалы активного отдыха в 1-2 мин.

Экспериментальная методика включала и метод переменного упражнения, который для детей является более трудным, так как в отличие от повторно – интервального состоит из непрерывного движения.Однако применение данного метода у младших школьников является целесообразным, потому что он не предьявляет больших требований к анаэробно-гликолитическим возможностям организма.

На всех занятиях с детьми экспериментальной группы широко применялись разнообразные эстафеты, подвижные игры, требующие проявления выносливости. Во время учебного процесса соблюдался строгий контроль за состоянием детей по внешним признакам реакции организма на физические нагрузки, а также по показателям частоты пульса и дыхания.

В контрольной группе все уроки физической культуры проводились в соответствии с существующей учебной программой по общепринятой методике. Результаты педагогического эксперимента показывают, что разработанная методика преимущественного развития выносливости способствует более благоприятным изменениям в двигательной подготовленности по сравнению с общепринятой методикой учебных занятий в школе. В экспериментальной группе уровень двигательной подготовленности возрос значительно выше, повысилась физическая работоспособность организма. Упражнения, направленные на развитие выносливости, не только повысили уровень данного двигательного качества, но и более весомо воздействовали на различие других.

В результате учебных занятий по двум сравниваемым методикам произошли качественные изменения, однако прирост процента выполненных нормативов в экспериментальной группе выше, чем в контрольной.

Так, суммарный прирост в контрольной группе равен 12,5 %, а в экспериментальной группе - 37,5%. В работе решался вопрос, как предложенный обьем двигательной активности влияет на умственнуюрабо-

тоспособность, функциональное состояние сердечно - сосудистой системы и укрепление здоровья младших школьников.

Анализ успеваемости учащихся 1 - 3 классов также свидетельствует, что разработанная методика является доступной и может быть рекомендована к использованию, так как не ограничивает возможности детей в проявлении учебной активности.

Изучение состояния здоровья у учащихся контрольной и экспериментальной групп показало повышение у последних устойчивости организма к заболеваниям проступного характера, уменьшение средней продолжительности одного случая заболевания. Также было установлено, что разработанная методика с преимущественным развитием качества выносливости способствует созданию более высокого уровня всесторонней двигательной подготовленности детей младшего школьного возраста, чем общепринятая методика развития двигательных качеств. Следовательно, упражнение с направленностью на развитие выносливости для детей данной возрастной группы является целесообразным и их следует шире включать в содержание занятий физической культуры.

ЛИТЕРАТУРА

1. *Качашкин В. М.* “Физическое воспитание в начальной школе” Москва. Просвещение. 1983г.

2. *Минскин Е. М.* “Игры и развлечения в группе продленного дня” Москва. Просвещение. 1985г.

---

## ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԴԻՄԱՑԿՈՒՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԱՑՄԱՆԸ ՈՒՂՂՈՐԴՎԱԾ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ

ԳԵՎՈՐԳ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

*ՎՊՄԻ ընդհանուր ֆիզդաստիարակության ամբիոն*

Ամփոփում

Հետազոտություններից կարելի է եզրակացնել, որ կրտսեր դպրոցական տարիքի երեխաների դիմացկունության նպատակաուղղված զարգացման մեր փորձարկված մեթոդիկան առավելապես նպաստում է շարժողական որակների բազմակողմանի զարգացմանը, որը և անհրաժեշտ է լայնածավալ ընդգրկել ֆիզիկական կուլտուրայի պարապմունքներին:

## THE METHODOLOGY OF USING TRAININGS CONCERNING TO THE PROGRESS OF THE DURABILITY OF CHILDREN AGE OF JUNIOR SCHOOL

GEVORG SHAHVERDYAN

*State Teachers' Training Institute of Vanadzor, Common department of physical training*

Summary

The investigations can show, that the experimented methodology, concerning to the progress of the durability of children age of junior school, mainly promotes the comprehensive progress of the moving qualities, which itself needs to be widely included in the trainings of the physical culture.

# ՀՈՒՇԱԳԻՐ ՀԵՂԻՆԱԿԻՆ

## Հոդվածների ընդունման կարգը

*«Վասն արդարութեան»* հանդեսում տպագրության համար ներկայացվող գիտական հոդվածները`

1. խմբագրությանը հանձնվում են էլ. փոստի միջոցով կամ պնակիտով (floppy disk).
2. ունենում են համապատասխան ամփոփումներ (անգլերեն, ռուսերեն, հայերեն լեզուներից որևէ երկուսով` կախված այն բանից, թե հոդվածն ինչ լեզվով է).
3. պարունակում են գրականության ցանկ.
4. բովանդակում են անհրաժեշտ հղում-ծանոթագրություններ.
5. խմբագրությանն են ներկայացվում` հնարավորինս զերծ համակարգչային մուտքագրման սխալներից.
6. ռուսերեն հոդվածները համակարգիչ մուտքագրված են լինում ռուսական տառատեսակով (font) (չօգտագործել Times New Roman, Arial, Courier և այլ բազմալեզու տառատեսակներ).
7. գրաֆիկական ֆայլերը (նկարներ, գրաֆիկական օբյեկտներ և այլն) ունենում են նվազագույնը 300 dpi կետային խտություն.
8. և տառը ներկայացվում է մեկ գրանիշով` *և* (եւ-ի փոխարեն).
9. հոդվածները կից ունենում են անհրաժեշտ տվյալներ հեղինակ(ներ)ի մասին (այդ թվում` հեռախոսահամար):

## Հոդվածների ընտրության կարգը

*«Վասն արդարութեան»* հանդեսի խմբագրությունում ստացված հոդվածների նախնական ընտրությունը կատարում է հանդեսի գլխավոր խմբագիրը, այնուհետև հոդվածը հնարավոր միջոցներով ուղարկվում է հանդեսի գիտական խմբագրական խորհրդի համապատասխան անդամ(ներ)ին` գրախոսության:

Տպագրվում են դրական գրախոսության արժանացած հոդվածները:

Գրախոսության համար խմբագրությունը կարող է դիմել նաև այլ` ոչ խմբագրական խորհրդի անդամ գիտնական-մասնագետի: Ընդունելի են նաև հոդվածի հեղինակի ուղարկած` իր հոդվածին վերաբերող գրախոսություններ, եթե վերջիններիս հեղինակը գիտությունների դոկտոր կամ թեկնածու է:

Գիտությունների դոկտորների և թեկնածուների հոդվածները կարող են չգրախոսվել:

Տպագրության նախատեսված հոդվածները, հեղինակների հետ նախապես համաձայնեցնելով, խմբագրվում են: Խմբագրված վերջնական տարբերակի` իր կողմից ընդունելի լինելը հավաստում է հոդվածի հեղինակը: